ԷԼԻԶԷ ՌԵԿԼԻՒ

ԼԱԶԻՍՏԱՆ, ՀՈՅԱՍՏԱՆ

ԵՒ

ՔՈՒՐԴԻՍՏԱՆ

ԿԻԼԻԿԻԱ՝ ՓՈՔՐ ԱՍԻԱ՝ ՄԻՋԱԳԵՏՔ՝ ԱՍՈՐԻՔ

ԵՒ

ՊՈՂՍՏԻՆ

ԹԱՐԳՄԱՆԵԱ
Մ Ի Ք Ա Ե Ա Ն

(Առաջաբան վարարաց ամսագրիցս)։

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ
ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ՏՊԱՐԱՆՈՒՄ
1893

9(47-925)
Հ-30

ԷԼԻՋԷ ՌԵԿԼԻՒ

ԼՈՋԻՍՏԱՆ, ՀԱՅԱՍՏԱՆ

ԵՒ

ՔՈՒՐԴԻՍՏԱՆ

ԿՈՂՄԻԿԱ, ՓՈՔՐ ԱՍԻԱ, ՄԻՋԱԳԵՏՔ, ԱՍՈՐԻՔ

ԵՒ

ՊԱՂԵՍՏԻՆ

ԹԱՐԳՄԱՆՆԱԾ

Մ Ի Ա Ր Ա Ն Ց

(Արտատպած «Արարատ» ամսագրից)։

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ
ՄԱՅՐ ՏՊԱՐԱՆԻՒՄ
1893

Հ6437
ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ ՄԱՅՐ ՏՊԱՐԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ
ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԱԱ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԳՐԱԴԱՐԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆ
ԲԱԶՄՈՏԵՂԱ
ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԱԱ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Ի ՀԱՅԵՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ

Տ. Տ. ՄԿՐՏՉԻ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ

ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ

ԱՄԵՆԱՑՅՆ ՀԱՑՈՑ.

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ

ԱՄԵՆ. ՏԵՂԱԿԱԼ

Տ. ԵՐԵՄԻԱ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ.

(Լիզպոնա «Ազատ» Տպարանում)

1893

ՅԱՌԱՋԱԲԱՆ.

1890—91 *Թուին մենք հրատարակեցինք մի փոքրիկ գրքուկ Ռուսական Հայաստան վերտառութեամբ, որի առաջաւմ գրուած էր հետեւեալ «ազգը»։ —«Գրանսիայի հռչակաւոր աշխարհագիր Էլիզէ Ռէկլիւի բազմահատոր «Նոր Ընդհանուր Աշխարհագրութիւնից», որ դեռ ամբողջացած չէ և շարունակւում է հրատարակուել, օգտակար համարեցինք հայերէն թարգմանութեամբ ի լոյս ընծայել գոնէ այն գլուխները, որոնք վերաբերում են մեզ, մեր հայրենիքին և մեր հարեւան ազգութիւններին. Առ այժմ թարգմանուած և պատրաստ են տպագրութեան համար հետեւեալ գլուխները. «Լազիստան, Հայաստան և Քուրդիստան» կամ մի խօսքով ասած՝ Ճաճկահայաստան «Ռուսական Հայաստան կամ Արաքսի աւազանը», Ուրմիա լիճ, «Ցառաչակողմեան կամ Առաջաւոր Ասիա (ընդհանուր նկատողութիւններ)», «Փոքր Ասիայի, Ասորիքի, Պաղեստինի և Միջագետքի բնակիչներն ու կրօնները», Եթէ հիւանդութիւնը մեզ արդելք չլինի, մտադիր ենք սրանց վրայ աւելացնել և «Կուրի աւազանը», «Ճորոխի, Ռիոնի և Ինգուրի աւազանները», «Պաղեստան» և «Պարսկաստանի բնակիչներն ու կրօնները», Այսպիսով կունենանք թարգմանական յօդուածների մի ամբողջացած շարք մեր հայրենիքի և մեր հայրենակից և դրացի օտար ազգերի վերաբերութեամբ, Գլուխները անկախ են միմեանցից և քաղուած Էլիզէի ֆրանսերէն բնագրի VI և IX հատորներից, Այս առաջին տետրակի բովանդակութիւնն է «Արաքսի աւազանը», «Ուրմիա լիճ» և «Առաջաւոր Ասիա», — Այս ծրագրի մի մասն է, որ ահա այժմ հրատարակւում է երկրորդ հատորով, Երրորդ հատորը պիտի պարունակէր Անդրկովկասի հիւսիսային մասը, այն է՝ Կուրի ձորոխի, Ռիոնի և Ինգուրի աւազանները, Դաղստանի և Պարսկաստանի մասին տեղեկութիւններ, Այդ երրորդ հատորը լոյս չի տեսնի, որովհետև Անդրկովկասի մասին կատարուած գիտական հետազօտութիւնները և մանաւանդ պաշտօնական ժողովածուները այնչափ շատ են և օր աւուր այնչափ արագ ճոխանում, որ երեկ հրատարակուած Էլիզէի աշխատութիւնը, այսօր արդէն շատ մասերում կարելի է հնացած համարել, ուստի և չարժէ՝ այն էլ մեզ մօտ ծանօթ երկրի վերաբերեալ հնացած աշխատութիւն թարգմանել.*

Այս Թարգմանութեանց ձեռնարկելիս մենք առաջնորդուել ենք այն մտքով, որ նոր կրթուող սերնդին պէտք է տալ մատչելի գնով և թեթև լեզուով գրուած գրքեր հայրենագիտութեան վերաբերեալ։

Մենք ունինք ճոխ և բազմահատոր գրուածքներ այդ ճիւղից, ինչպէս օրինակ՝ Հայր Ալիշանի մեծ երկերը, սակայն գրանք թէ իրենց գնի և թէ իրենց լեզուի ու բովանդակութեան (գլխաւորապէս հնախօսական) պատճառով շատ և շատ քչերին են մատչելի։

Պարբերական հրատարակութեանց մէջ լոյս տեսած պատահական յօդուածները՝ թէև բաւական յաճախ այս վերջին տարիներս, սակայն մի ամբողջութիւն չեն կազմում և առանձին գրքուկներով տպուած էլ չլինելով, յարմար չէին ընթերցող հասարակութեան մէջ տարածուելու և ըստ յարմարութեան՝ միշտ ձեռքի տակ լինելու իբրև ընթերցանութեան գիրք։

Հայրենագիտութեան դասագրքեր գրեթէ չկան, եղածներն էլ խեղճ բաներ են։

Այս մեծ պակասը լրացնելու յաւակնութիւնը չունինք այս երկու փոքրիկ հատորներով, այլ յոյս ունինք միայն նոր աճող սերնդի մէջ քիչ թէ շատ հետաքրքրութիւն յարուցանել՝ ծանօթանալու հայրենիքին, ճանաչելու այն երկիրը, որի մէջ ապրում ենք մենք և մեր ցեղակիցներն ու մշտական գրացիները։

Կարելի է գրեթէ գրապէս պնդել, թէ ով չէ ճանաչում իւր հայրենիքը, նա չէ կարող և նրան սիրել։

Մ Ի Ք Ա Ե Ն։

1892 թ. Դեկտեմբեր 21. Պարիզ։

ՎՐԻՊԱԿՆԵՐ

Թարգմանչի բացակայութեան պատճառով և սրբագրողների անուշադրութեամբ մտել են այս հրատարակութեան մէջ բազմաթիւ կէտադրական սխալներ և բառերի վրիպակներ, որոնցից գլխաւորները նշանակում ենք։

—

էջիս	սխալ	ուղիղ
8	Էրզրում	Էրզրում
18	է 5 մետր	էր 5 մետր
19	մշուշը	մշուշ
39	քարայրերին	քարայրներին
56	ամբողջին	ամբողջովին
74	երես 74—89	« 73—88
«	Անատոն	Անատոլ
«	ծեռքով	ձեռքով
«	Սասունցի Դաւիթ	Սասունցի Դաւթի
77	ֆրանսայի	Ֆրանսիայի
78	քան թէ նորանց	քան թէ նրա
80	խուզու, խազու	Խուզու, Խազու
«	պատմական աշխատհագիրները	պատմաբան աշխատհագիրներ
81	միջագետքի	Միջագետքի
«	Ափերին	ափերին
84 և 83	պրամանցային	տրամանցային
85	ներապոլիսներից	Հերապոլիսներից
86	կիրաճկներ	կիպրաճկներ
«	ձեռքով են գրծուած	. . . փորուած
«	դրամանցային	տրամանցային
«	կէս—ստանակեաց	կէս—նստակեաց
87	բարձրութեան	բարձրութեան

երես	սխալ	ուղիղ
«	Միջագետքի	Միջագետքի
88	աթոռանիստն	աթոռանիստն
«	խաբուրի	Խաբուրի
«	բնակիչներ	բնակիչ
89	կէզ—հիսար	Կըզ—հիսար
«	լարանդայով	Լարանդայով
«	հիտտիտեան	հիտտիտեան
90	Աւելի Զալինդրե	Աւելի հեռուն . . .
«	կղզին հեռուն	կղզին
«	սինաշարերը	սիւնաշարերը
«	110=000	110՝000
91	Դիրեկլի դաշտը	Դիրեկլի—դաշտը
«	ափում՝	ափում՝
«	նաւարկիլ	Նաւարկելի
«	իրենց գիտութիւն	իրենց գիտութիւնը
92	փոքքիկ	փոքրիկ
«	բնակուեցին «հօթը ննջողները»՝	ննջեցին «հօթը Մանկունքը»՝
«	Մմառը	Ամառը
«	Դօնիւկ—տաշի	Դեօնիւկ—դաշի
93	բարձրութիւնը	բարձրութիւնը
«	դարեթիւը	տարեթիւը
94	ասորիքում՝	Ասորիքում՝
«	աենդային	տենդային
«	շքքակայ	շրջակայ
«	գիւղաքաղաքը՝	գիւղաքաղաքը
95	Պարաեզ	Պարտեզ
96	քաղաք է·	քաղաք է՝
«	Սսի եպիսկոպոսներին	Սսի եպիսկոպոսապետին
«	մուսուլմաններին	մուսուլմաններին
97	Պիւռամիոսի	Պիւռամոսի
«	Թուրմն՝	Թուրմն են՝
98	արևելքի	արևելքից՝
«	500	5000
99	դեպի Պրոպանդիտը (առաջածովը խոնարուած	դեպի Պրոպոնդիտը (Առաջածովը) խոնարհուած

երես	սխալ	ուղիղ
«	Գեգերացիայով	Գեգերացիայով
100	Վաչկատներին·	վաչկատներին
101	օտարական աշնելիս	օտարականն անցնելիս
104	Կըզըլբաշերը	Կըզըլբաշները
106	գիւղերում»	գիւղերում՝
107	(աստիճանաւորներ	(աստիճանաւորներ)
108	Աստըծուց»՝	Աստըծուց»
109	monufacture	manufacture
«	անդիմատրելի	անդիմագրելի
«	Փոքր Ասիայ	Փոքր Ասիա
110	արժանաւորութիւններով	արժանաւորութիւններով
111	Հելլենական	Հելլենական
«	Հայաստան	Հայաստանի
111	ռոմացիք	ռոմանիք
«	Կոմայում՝	Կոմանայում՝
112	Կարոլիդեսը	Կարոլիդիսը
«	մահմեդական	մահմետական
113	Կոստանդնուպօլսին	Կոստանդնուպոլսին
«	գաղափարով·	գաղափարով»
«	մեծ գործը՝	մեծ գործը՝
115	Թեկնոցակը	Թիկնոցակը
118	Լևանդացիք	Լևանտացիք
«	ընտրվում՝	ընտրւում՝
119	Իտալական	իտալական
«	Պրովանսալ	պարովանսալ
«	գործ են ածում՝	գործ է ածում՝
«	կաստելացիներից	կաստիլացիներից
122	բարեյուսոյ	Բարեյուսոյ
«	բաղդադ	Բաղդադ
123	Անդի—Կովկասի	Անտի—Կովկասի
«	Դերբէ—բէյերի	Դերբէ—բէյերի
«	դրկեցները	դրկիցները
«	երիտասարդական	երիտասարդական
124	ոսոխութեամբ	ոսոխութեամբ և
«	պաժանելի	տաժանելի
125	գրուած	տրուած

Երես	սխալ	ուղիղ
126	մենհերներ	մենհիրներ
«	միմեանց	միմեանց հետ
127	ներկայացնումեն	ներկայանումեն
129	չափազանց չափազանցօրէն	չափազանցօրէն
130	մաղերվ	մազերով
131	սոյնչափ	այնչափ
133	սակաւապետ	սակաւապէտ
«	չէ տալիս	թոյլ չէ տալիս
137	գամկանկարներով	տամկանկարներով
138	գիմռումեն	դիմռումեն
143	կառաւարութեան	կառավարութեան
«	երիգասարա	երիտասարդ
«	Զարբի	Զաբի
144	աւերակները	աւերակներ
145	,քրիստոնեայ	քրիստոնեայ,
146	որ այնչափ	ուր այնչափ
147	պաշտպան սուրբ	պաշտպան սուրբն
148	Հաւաւ	Հասաւ

ԼԱԶԻՍՏԱՆ, ՀԱՅԱՍՏԱՆ ԵՒ ՔՈՒՐԴԻՍՏԱՆ

Ինչպէս եւրոպական Թուրքիան, նոյնպէս և Ասիայի այն մասը, որ կառավարուում է Կոստանդնուպոլսի սուլթանից՝ է մի անդամատուած քաղաքական աշխարհ, կայսրութեան մի մընացորդ, որի շատ տեղերը կիսով չափ են միայն պատկանում իրեն և այն իրրև թէ թոյլատուութեամբ եւրոպական մեծ տէրութիւնների։ Նորերս Ռուսիան Հիւսիս-արևելքում ուղղեց սահմանը իւր օգտին, տիրելով ջրբաժան կատարների ռազմագիտական կէտերին։ Առաջուց կարելի է նշանակել այն ճանապարհները, որով նրա բանակները իջնելու են դէպի Եփրատ և դէպի Հայկական և քրդական գաւառները, որն և միացնելու է իւր միւս տիրապետածներին։ Անգլիան՝ առանց կարողանալու արգիլել այս քաղաքական փոփոխութիւնները և անխոհեմաբար միջամտած լինելով Թուրքիայի ասիական նահանգների պաշտպանութեան յանձնառութեամբ (1), իւր բաժինը կամեցաւ առնել աւարից և տիրեց Կիպրոս կղզուն, որտեղից կարող է նա գոնէ հսկել պատահարներին։ Մինչև անգամ Ծովափի Յոյները՝ Սամսոի փոքրիկ իշխանութեան հաստատութեամբ Դրան պաշտօնական գերիշխանութեան ներքոյ, սկսել են Օսմանցիներից երկիրների յետ պահանջման գործը։

Եւ միևչդեռ սահմաններում և Ծովափներում Թուրքական ասիական կայսրութիւնը վտանգուած է իւր ամբողջութեան մէջ թէ օտարներից և թէ իւր հպատակներից, որոնք ձեռք են բերում նորից իրենց իրաւունքները, ներքուստ էլ կորցնում է նա իւր յարակցութիւնը ցեղերի և դասակարգերի վէճերով և ընդհարումներով։ Քանդւում է ճակատը և ամբողջ շինութիւնը ներսից ճաքճաքւում է։ Յոյն և Թուրք, Լազ, Քուրդ, Հայ, Մառոնի,

Դրուզ և Անսարի շարժուում են այնպէս, կարծես թէ նրանց միաւորող քաղաքական կապերը շուտով պէտք է խզուին: Շատ երկիրներ, որոնք նշանակուած են քարտէսներում իբրև փոքրշահին պատկանող, բնակուած են իրապէս անկախ ցեղերով: Միւս կողմից՝ անապատ և ամայացած տարածութիւնները բաժանում են միմեանցից կայսրութեան նահանգները: Հարաւային կողմում պէտք է ամբողջ օրեր անցնել ամայութիւնների միջով՝ Լիբանանի մշակուած հովիտներից Եփրատի ափերն հասնելու համար: Հռոմայեցիների ժամանակներից սկսած՝ անմշակ տարածութիւնները աւելի էլ ընդարձակուել են: Պալմիրի և ուրիշ քաղաքների շուրջը երևում են միմիայն թափառականների վրանները. օձերն են սողում տաճարների խախտուած քարերի մէջ: Թէև ոչ մի ճշգրիտ վիճակագրութիւն չկայ հաւաստիութեամբ հաստատելու համար [1]), սակայն ճանապարհորդների մեծագոյն մասը համաձայն են, որ մեր օրով էլ բնակիչների թիւը պակասում է: Այս դարի կիսից սկսած՝ գիւղերը մասամբ դրկուել են իրենց բնակիչներից, շատ գաւառներում սովի պատճառով, ուրիշ տեղեր՝ պանդխտութեան և բոլոր մեսոպոտամեան երկիրներում՝ յաճախ ղինուորագրութեան պատճառով: Ղինուորների մեծագոյն մասին վիճակուած է այլ և այս բնաւ չտեսնել իրենց ծննդավայրը:

Ցարմար է ուրեմն առանձին առանձին խօսել Ասիական Թուրքիայի բոլոր այն երկիրների մասին, որոնք մի որոշ ուրոյնութիւն ունին իրենց աշխարհագրական սահմաններով, իրենց պատմութեամբ կամ բնակիչների ծագումով, առանց ուշք դարձնելու պաշտօնական վարչական բաժանումներին: Վանի պարփակեալ աւազանը, Թուրդիստանի և Հայաստանի լեռնային շրջակայքները, Անդրկովկասի և վերին Եփրատի միջև, կազմում են այս բնական ինքնուրոյն աշխարհներից մէկը: Միջագետքի դաշտը, ուր կազմե-

1) Թուրքական Ասիայի տարածութիւնը և բնակիչները, Սամսոն և Կիպրոս կղզիների հետ միասին, մօտաւորական թուերով ըստ Բէմի և Վագների. տարածութիւն 1900000 քառ. քիլոմետր. բնակիչների հաւանական թիւը 16350000, իւրաքանչ. քիլոմ. վրայ 9 բնակիչ:

կերպուեցին զօրել աերութիւններ և կանգնեցան համբաւաւոր քաղաքներ, է նոյնպէս այն երկիրներից, որ ունեցել են յաւուրս պատմական զարգացում, և կազմում է լաւ սահմանաւորուած աշխարհագրական մի ամբողջութիւն: Նոյնպէս է և փոքր-Ասիայի թերակղզին, որի ծովափը՝ շրջապատուած կղզիներով և կղզեակներով, տարածում է իր մշակութեան և գիւղ ու յարմարաւոր ափագին գօտին սարահարթի շուրջը. մինչդեռ սարահարթը նուազ է բնակիչներով և մասամբ էլ ծածկուած է աղտոտուածներով (աղային դաշտերով): Կիպրոսը, որ այժմ Մեծ-Բրիտանիայի վիճակի տերութեան մասն է կազմում, պէտք է նոյնպէս ուսումնասիրուի առանձին. իր պատմութեամբն էլ նա ինքնուրոյն նշանակութիւն է ունեցել իրեև միջնորդ փիւնիկէի և յունաստանի միջև: Վերջապէս՝ Ասորիքն ու Պաղեստինը, այդ երկայնաձիգ լեռնային աշխարհը, որի մի կողմը փակում են Միջերկրականի ջրերը, միւս կողմը՝ անապատի աւազները, է մի աշխարհագրական ամբողջութիւն: Աշխարհի պատմութեան մէջ այս երկրի բնակիչները մեծ մասն և ազգեցութիւն են ունեցել իրենց գիւտերով, գաղափարների փոխանակութեամբ և փոխանցմամբ: Իսկ ինչ վերաբերում է Արաբիայի ծովափում թուրքիայի ունեցած կալուածներին, այդ պէտք է ուսումնասիրել Արաբիա թերակղզու հետ միասին, որի և մասն են կազմում նրանք:

ՊՈՆՏՈՍԻ ԾՈՎԱՓԸ, ՎԱՆ ԼՃԻ ԵՒ ՎԵՐԻՆ ԵՓՐԱՏԻ ԱՒԱԶԱՆՆԵՐԸ:

Եթէ Ասիական Թուրքիայի այժմեան քաղաքական սահմանագծերը չեն համապատասխանում բնական սահմաններին, գոնէ անկիւնի սահմանագլուխը՝ որ բաժանում է երեք պետութիւն՝ ռուսաց Ցառի, պարսից Շահի և օսմանցիների Սուլթանի երկիրները, ամենայարմարն ընտրուածն է՝ որ է Մասիս սարը (2): Երեք պետութիւնների սահմանագիծը անցնում է Մասիսի Մեծ և Փոքր կոների լերանցամէջքով: Այս կէտից սկսած Թուրքիայի քաղաքա-

կան սահմանն անցնում է 150 քիլոմետր երկայնութեամբ դէպի արեւմուտք՝ Ախաքսի և Եփրատի աւազանների ջրբաժան գծով։ Հարկաւ ամենքն էլ գիտեն, որ այս աւժանմանակեայ սահման է։ Այս երկրում ամեն ուղղութեամբ շրջող ճանապարհորդների մէջ ուսանների թիւը սակաւ չէ, սակայն նրանց քարտէզները և ուրուագծերը մեծ մասամբ նուիրուած են սպայական ուսումնասիրութեան։ Իսկ եթէ գաւեռնք անցեալ պատերազմների յիշատակով — սէտք է ենթադրել որ երկու տէրութեանց ընդհարումները վերջանալու են նոր տիրապետութեամբ։ Էլբրուսը կարող է կրկնել Թանդուրակ սարին, Բիւրակնեանին (Բինգէօլ-դաղ), Արգէոս լեռանը, ինչ որ նա երբեմն ասում էր Կազբէկին Լերմոնտովի բերանով. «Դուք, ես տեսնում եմ հեռուն, մշտապատ հիւսիսում, մի ինչ-որ, որ լաւ բանի նշան չէ։ Ուռալից մինչև Դանուբ բանակները շարժւում են. թնդանօթների շարքերը՝ պղնձապատ կողերով, յառաջ են շարժւում չարագուշակ դղրդիւնով, ծխով պատրոյգները պատրաստւում են պատերազմների համար։»

Մասիից արեւմուտք՝ հրաբխային կոնուսներով ծածկուած մի լեռնագօտի, որի գագաթները շատ քիչ բարձր են շրջապատից, իւր գահավէժ պարապով սահմանակում է Էջմիածնի կանաչագեղ դաշտերը։ Մի քանի գագաթներ միայն, ինչպէս օրինակ՝ Զինգիլ, Փեռլի-դաղ և ևն, անցնում են 3000 մետր բարձրութիւնից, որ անում է 1500 մետր բարձր դաշտավայրից։ Այս մանուածապատ լեռնաշղթան՝ ձգուելով դէպի արեւմուտք, յետոյ դէպի հարաւ—արեւմուտք, աստիճանաբար ցածանում է, մինչդեռ իւր ստորոտում վառուած Ախաքսի հոլիսը բարձրանում է հետզհետէ։ Գետերի ակունքների մօտ այս լեռնաշղթան նորից բարձրանում է և ուրիշ ծայրաբոլոր (convergent) շղթաների հետ կազմում է Բիւրակնեանը—Բինգէօլը—«հազար լճով սարը» (3752 մետր), որի ամեռնային և գարնանային ձիւները անուն են տալիս ամեն կողմ հոսող ջրերին. արեւելքում՝ Ախաքսին, հիւսիսում և հարաւում՝ Եփրատի երկու գլխաւոր ճիւղերին, որ են Ախածանի (Մուրադ) և Սև-Ջուր (Գարա-սու)։

Բիւրակնեան հանգոյցի այն կողմը՝ լեռնային բնագաւառը, որի գլխաւոր շղթան դուգահեռական է Սև-ծովի ափին, շարունակւում է դէպի արեւմուտք 250 քիլոմետր և ցածանալով գարնանդից գարնանդ վերջապէս անցք է տալիս Սև-Ջրին, որը յանկարծակի ծռուելով դէպի հարաւ—արեւելք միանում է Եփրատի միւս ճիւղին։

Մի բարձր գագաթ, որ ձգուած է դէպի հիւսիս, միացնում է Բիւրակնեան լեռնակոյտը Էրզրումի սարերին և Սև Ջրի առաջին վտակների ժողովուած կրկէսի արեւելքում կազմում է մի մանուածապատ և բաղմախոռոչ ջրբաժան լեռնակատար։ Այդ տեղումն է անցնում Էրզրում—Կարսի ռազմագիտական մեծ ճանապարհը։ Փաշմիթէօքանը, որ գտնուում է Էրզրումից ուղղակի հարաւ, ջրբաժան գծով պարփակուած այդ լայնածաւալ շրջանի ամենաբարձր գագաթն է (3145 մետր)։ Բայց՝ աւելի դէպի արեւմուտք՝ Նալի—դաղի կոմնական լեռնագօտին, որ շրջապատում է Սև Ջրի առաջին մեծ պատյատը, ունի աւելի բարձր կատարներ։ Էրզրումի աւազանից հիւսիս՝ մի ուրիշ շատ բարձր լեռնակոյտ—Գեաուր-դաղը կամ «Անհաւատների սարը» մի այլ լեռնահանգոյց է կազմում, որն և Բիւրակնեանի նման ջրերի ճառագայթաձև բաժանման կենդրան է։ Այս լեռնահանգոյցի հիւսիսային զառիվայրերիցն է իջնում Թորթում—գետը և ուռչելով բազմաթիւ վտակներից՝ կազմում է մի հիանալի ջրընկէց, մինը «Հին Աշխարհի ամենասիրուն» ջրընկէցներից։ Թորթում—գետը դիմելով դէպի ձորոխը, որը թափւում է Սև ծովը, սուզւում է անդընդախոր կիրճերում, որոնց լաւագոյն պատերը 300 մետր[1]) բարձրութիւն ունին։ Հարաւ—արեւելքում հեղեղատները պատկանում են կասպիական աւազանին, Ախաքս և Կուր գետերով։ Հարաւում՝ Դումլի—դաղի՝ որ Անհաւատների լեռան հանդիպագօտին է, զառիվայրերից ըմպում է Եփրատի մայր-ակը, 2570 մետր ծովի մակերևոյթից բարձր։ Եփրատը գնում է և թափւում Պարսից ծոցը։ Գրեթէ բոլոր մեծ ազբերակները կազմակերպւում են կրային լեռների խոռոչներում,

1) Hamilton, Researches in Asia Minor.

խակ Եփրատի ակը ծնում է պորփիւրների և խաւաքարերի (դրախխա) մէջ [1]։ Պաղ, գրեթէ սառցային ջուրը (3°,3), որ դուրս է ցայտում ժայռի բացուածքից, նշանաւոր է հայկական աւանդութիւններում։ Ա. յդ առաւ աղբիւրի բղխած ակում է պահուած եղել «իսկական խաչափայտը» կոստանդնուպոլիս տեղափոխուելուց առաջ։ Ա. ին լոպէին երբ խաչափայտը հանեցին հողից՝ ըստ աւանդութեան, յատակ ջրի երակը դուրս ցայտեց։ Շրջակայ մարգագետիններից բղխում են ուրիշ քանի աղբիւր, աւելացնելով իրենց առուակները գլխաւոր վտակին։ Թուրքերն անգամ մեծարում են Եփրատի ակունքը և ասում են որ նրա ջուրը սրբում է սոխրական մեղքերը, սակայն սպանում է այն մարդկանց, որոնց հալածում է Աստծի բարկութիւնը [2]։ Միանալով ուրիշ վտակների հետ, որոնցից մէկը իւր ջրի քանակութեամբ հաւասարւում է Եփրատին, սուրբ ջուրը իջնում է Էրզրումի դաշտը, ուր գարնանը ձիերի հալոցի ժամանակ վատում է լայնածաւալ Սազի (Սազլիկ) ճահիճներում, որոնք ծածկուած են եղեգնաբոյսերով և լիքն են սագերով, վայրի բադերով և ուրիշ ջրային թռչուններով։ Դուրս գալով այս ճահիճներից՝ Եփրատի պղտոր ջուրը ընթանում է դանդաղութեամբ ոլմուտ հունով և արժանանում է իրաւամբ Մեջուր—կարասու անունը, որ տալիս են նրան Թուրքերը։ Շատ հետաքրքրական է որ Սազի ճահիճները մնացորդ են մի նախկին լճի, որ երբեմն ծածկում էր Էրզրումի դաշտը, սակայն Ռադդէն չկարողացաւ գտնել այդտեղ լճային ժժմանկների և ոչ մի տեսակ, չնայած իւր երկարատև խուզարկութիւններին [3]։ Բուսական մնացորդները, որոնք կազմել են դաշտի երեսին սև ահողի մի հաստ շերտ և հրաբխային մոխրի շերտերը՝ դուրս ժայթքելով հրաբուխներից, նախկին լճի յատակը ծածկել են։

1) Moritz Wagner, Reise nach dem Ararat und dem Hochlande Armenien.

2) Strecker, Zeitschrift der Geselschaft für Erdkunde, vol. IV.

3) Извѣстія Кавказскаго Отдѣла т. V, 1878.

Էրզրումի նախնական լճի դաշտը պարփակող լեռները մեծ մասամբ հրային ծագումն ունին և շատ տեղեր արտևանների վրայ երևում են հրաբխային չէչաքարի ամենախանձաւոր կոնուսներ, բայց լաւայի հոսանքները հազուագիւտ են։ Ա. յս բանում այստեղի հրաբուխները չեն կարող համեմատուել արևելեան Հայաստանի հրաբխներին՝ Ա.րարատին, Թանդուրեակին, Սիփանին և մանաւանդ Ա.րագածին, որի լաւայի ծածկոյթը ունի 150 քիլոմեար շրջագիծ։ Էրզրումին շատ մօտիկ, դաշտի հարաւային մասը շրջապատող լեռների մօտ, բարձրանում է մի հրաբուխ, որի բաժակը երբեմն լցուած է եղել ջրով, բայց հեղանիւթի ճնշումից վտլ է եկել բաժակի հիւսիսային կողը և կազմուել է մի խոր ձոր դէպի հիւսիս՝ Սև ջրի ճահիճների ուղղութեամբ։ Ա. յս հրաբուխներից ամենաբարձրը և ամենանշանաւորը իւր գեղեցիկ կոնաձևութեամբ, որ յիշեցնում է Վեզուվը և Սիշլիկը, որ Էրզրումի հիւսիս—արևմտքումն է բարձրանում՝ Գեաւուր—դաղի լեռնաշղթայում, և ունի 1100 մետր դաշտից և 3181 մետր ծ. մ. բարձրութիւն։ Դա ամբողջապէս կազմուած է շլաքից, որն և շատ գեղատեսիլ է։ Բաժակի մէջ, որ շատ աւելի մեծ է քան թէ Վեզուվի այժմեան խառնարանը (բաժակը), բարձրանում է հրաբխային չէչաքարի մի կոնուս, գորշ ու սև մի զանգուածի, շրջապատուած օզակաձև մարգագետնով, որ գարնանը ծածկուում է ծաղիկներով։ Լաւ պահպանուած հիւսիսի քամիներից, որ ուշացնում և ապքառացնում են շրջակայ լեռնակատարների բուսականութիւնը, Սիշլիկի բաժակի արտաքին պատերի և կեդրոնական կոնուսի մէջ տարածուող օզակաձև դաշտագետինը ունի մի բուսականութիւն, որ ամենահարուստն է տեսակներով և ամենաիայլալունը գոյներով այդ ամբողջ գաւառում [1]։

Շղթայաձև լեռներ, որոնց գլխաւոր ուղղութիւնը զուգահեռական է Սև ծովի եզերքին, հիւսիսից ուղեկցում են Սև ջրի հովտին, ձգուելով դէպի արևմուտք և անհետանալով Սեբաստիայի (Սըւազ) սարահարթում։ Բազմաթիւ կատարներ, որոնցից իւ-

1) Moritz Wagner, արդէն յիշուած։

բաքանչիւրը առանձին անուն ունի, բարձրանում են այս լեռնաշղթայի վրայ: Հները Պարիադրէս (Պարիսար) էին անուանում, իսկ այժմ այս շղթան յայտնի է կոպ-դաղ ընդհանուր անուամբ, առնուած մի գագաթից (3300 մետր), որի շրջապտոյտն է անում արևելքից և հիւսիսից՝ էրզրում—Տրապիզոնի կառքերի ճանապարհը: Լեռնանցքը, որով անցնում է այս ճանապարհը, 2700 մետր բարձրութիւն ունի ծովի մակերևոյթից, գրեթէ հաւասար Սաիր'հօ'ին՝ կեդրոնական Ալպերում: Եւ այս ճանապարհը ամենանշանաւորն է իրրև ճարտարապետական գործ ամբողջ Թուրքիայում: Հիւսիսում բացւում է Ձորոխի հովիտը, որ Բարշուսի կամ Գիւմիշ-խանէի գետի հովտի հետ կազմում է մի զարմանալի կանոնաւոր կիսաշրջանաձև գոգաւորութիւն: Բաթումի նաւահանգստից, որի մօտ Ձորոխը թափւում է Սև ծովը, մինչև Տրիպոլի, որ գտնւում է Բարշուսի գետաբերանում, կարելի է անցնել ինչպէս մի ընդարձակ պողոտայով, որի երկու կողմն շարուած են սրածայր գագաթներ: Մի լերանցամէջք կայ միայն 1900 մետր բարձրութեամբ, վաւուգ գիւղի մօտ, երկու գետերի ափերակների միջև: Այս գետերի ընթացքով պարփակուած լայնարձակ կիսաշրջանը բռնուած է մի կարգ բարձր սարերով՝ Պոնտական Ալպերով, որոնց մի գագաթը, Ինդէի Հարաւ—արևելքում՝ Խաչքարը, անցնում է 3600 մետրից: Մերձակայ մի լեռնանցք ունի 3268 մետր բարձրութիւն՝ ըստ Կոխի: Լազիստանի այս գաւառում կածանները սարին վեց ամիս վախւում են ձիւնով. «Թռչուններն անգամ», ասում են բնիկները, «չեն կարող անցնել սարի վրայով[1])»: Բարշուսից արևմուտք՝ ծովափով դէպի Կիղիլ—Իրմաք ձգուող լեռները այնքան բարձր չեն որչափ Պոնտական Ալպերը, այսուամենայնիւ նրանք բաւական բարձր են հաղորդակցութիւնը մի կողմից դէպի միւսը դժուարացնելու համար և տեղ տեղ էլ դէպի ծովը արձակում են բարձր սարաւանդներ, կտրատելով ծովափի դաշտը: Այս բնական սահմանակէտերից մէկն է Եազուն—Բուռունը, որ է «Յասոնի հրուանդանը»:

1) Strecker, արդէն յիշուած:

Այս ժայռը կրում է դեռ մինչև այսօր առասպելական նաւազի անունը, որ իբր նաւը վարեց դէպի խորհրդաւոր Կոլքիս: Պոնտական Ալպերի վերին հովիտներում երևում են բազմաթիւ հեթանոսական սուրբ տաճարների, քայքայուած և ախօսացած քարակարկառների և սեպագիր քերթերի: Հրահոսանքները, պորփիւրն ու այլ տեսակ հրաբխային ժայռերն են կազմում այս լեռները և այն լեռները՝ որոնք ձգւում են Բարշուսից արևմուտք դէպի Գերմիլի կամ նախկին Դայլ գետը (Լիկոսը) և որոնք ախօսաձև պատառուածներ են կրում, որ գահավիժոյ առուգրաններից մնացած հետքեր են: Այս ամբողջ լեռնագաւառում հրաբխային գործունէութիւնը տեղի է ունեցել, ինչպէս երևում է, առուցային շրջանից առաջ: Սաորերկրեայ կրակեղէների արտաքին միակ նշաններն են յաճախակի երկրաշարժը և բազմաթիւ ջերմուկները, որոնք բղխում են լեռների ստորոտներում, նաև կողերի վրայ[1]): Ըստ Սարեկերի՝ Կոլատ—դաղի գագաթը (2900 մետր), որ բարձրանում է գլխաւոր շղթայի կատարի վրայ՝ Տրաբիզոնից 50 քիլոմետր դէպի հարաւ, պիտի լինի Թէքէս լեռը, որտեղից Բաենոֆանի առաջնորդած Քիւրը տեսան վերջապէս ծովը և ողջունեցին նրան ուրախութեան աղաղակներով, իրրև վախճան իրենց նեղութիւնների: Բայց այս պատմութիւնը դիւրամատչելի չէ մի ամբողջ բանակի համար, որ ունի իւր բեռներն և պաշարի սայլերը և հիւսիսային կողմից էլ Կոլատ—դաղի էջքը անհնարին է: Հներից այնչափ յաճախ յիշուած վայրը, որտեղից յոյները տեսան իրենց ծովի տակ կանաչագեղ ծովախոնքը և ջրերի պայծառութիւնը, պէտք է որոնել ծովից աւելի մօտիկ, մի լեռնանցքում, որտեղով ձգուելիս լինի մի ճանապարհ կամ շաւիղ: Սակայն Կոլատ—դաղից դատ՝ վաւուգ լերանցամէջքից հարաւ, բոլորովին մօտ այն ճանապարհին որով անցնելու էին յոյները, կայ մի սար 2100 մետր բարձրութեամբ ծ. մ., որի գագաթից կատարելապէս երևում է ծովը և որի ամենաբարձր պատևանի վրայ կանգնեցրած է պորփիւրի քարակարկառ՝ մօտ տասը մետր բարձրութեամբ և շրջապատուած

1) Palgrawe, Essays on Eastern Questions.

քարաշեղջով՝ ծայրակուռ (յասպաւած) կոնուսի ձեւով։ Պարոն Բռիօն (Briot), որ գոնաւ այս յիշատակարանը, համարում է նրան յոյներից կանգնեցրած յուշարձան և արուեստը՝ որի վրայ բարձրանում է սա, լինելու է Թէքէս սարը[1]։

Հայկական Ալպերի կամ Անոթի-կովկասի անսահման լաբիրինթոսը, որ բռնում է անդրկովկասեան կուրի, Սև ծովի և վերին Եփրատի միջև եղած բոլոր աշխարհը, տարածւում է նաև Արարատից հարաւ և հարաւ—արևմուտք՝ վան լճի ընդարձակ ջրաւազանի վրայ և նրա շուրջը, մինչև պարսկական սահմանը։ Այս երկիրների գետինը ամենայն տեղ շատ բարձր է։ Փերլի—դաղից հարաւ՝ սարաւանդի մի գոգաւորութեան մէջ ամփոփւում է մի լիճ Բալիղ—գեօլ կամ «Ձիների լիճ» (Դայլասաւ ծովակ կամ Դայլասաղ լիճ), որի բարձրութիւնը ծ. մ. 2237 մետրից պակաս չէ։ Ջրի աւելցուկը մի վտակով թափւում է Արաքսի օժանդակներից մինի մէջ։ Արածանին (Մուրադ) կամ հարաւային Եփրատը, որ հոսում է այս լճային լեռնագաշտի հարաւում՝ անցնում է 2000 մետր բարձրութեան վրայ մի աւազալար հովտով, որ սեղմուած է հրահոսանքների ափափանների մէջ։ Այս լաւայի հոսանքը իջած է մերձակայ հրաբխային բաժանիներից և խոռոչներից։ Երկ ապառաժներն ու քերծերը, սրածայր գագաթների պատառուածքներն ու փլուածքները այս քարքարուտ ամայութիւններին տալիս են մի վայրենի, ահարկու կերպարանք։ Հիւսիսում բարձրանում է հզօր Արարատի զանգուածը՝ սև ժայռերով և ձիւնի շերտերով, հարաւում ձգւում է մի աւելի ցած լեռնագօտի, ահեղ զառիվայրերով։

Ալա-դաղը կամ «խայտաբղէտ գագաթը»[2] որտեղից բլխում են Եփրատի ամենաբարձր ակերը, հասնում է 3518 մետրի (3)։ Աւելի հպարտ է ուղիղ արևելքում բարձրացող Թանդուրակի գագաթը, որ իւր ձուաձև խառնարանի ամենաբարձր կէտում ունի 3565

1) Briot, ձեռագիր։

2) Այս անունով սարերը շատ բազմաթիւ են Թրքաստան երկրներում։ Իսկ Ալլահ-դաղ նշանակում է «Աստուածային լեռն»։

մետր բարձրութիւն։ Հայկական բոլոր հրաբուխներից Թանդուրակը (Թանդրիկ) կամ Թանդուրլուն նախկին գործնէութեան ամենաշատ հետքեր պահպանած սարն է։ Թանդուրակ նշանակում է «հնոց» (Թոնիր, Թոնդրակ, Թնդիր) որ անուանւում է նաև Սանդերլիկ-դաղ կամ «կրակարան-լեռն» և ուրացած առաջին քարտէզների վրայ նշանակուած է «խուր» կամ «խորի» անունով։ Գլխաւոր խառնարանը, որ մի ահագին խոռոչ է 2000 մետր շրջապատով և 350 մետր խորութեամբ, չունի այլ եւս ոչ հրահոսանք, ոչ գոլորշի, և մի փոքրիկ լճակի ջրերն են պապղում վհի յատակում, մինչդեռ մի հարիւր մետրի չափ աւելի ցածում՝ լերան ճեղքուածքներից ծուխ է դուրս ժայթքում։ Հարաւային կողի վրայ կայ մի այր, որտեղից գոլորշիներ են բարձրանում 100 աստիճան տաքութեամբ (հարիւրաստիճանեան ջերմաչափի), բայց ծծմբային չեն։ Վհի յատակից շարունակ լսւում է մեղրիւն։ Անդրկովկասեան պատերազմներից մինի ժամանակ ուսները և թուրքերը, որ բանակուած էին միմեանց մօտիկ՝ թանդուրակի մի հանդիպագօտու երկու հակադիր կողերի վրայ, կարծեցին լսել հեռաւոր թնդանօթաձգութիւն և երկու բանակումն էլ ապագնալի նշանը տուին։ Թանդուրակի հիւսիս—արևմտեան ոտքում՝ քարայրից, գլխաւոր խառնարանից և մի ուրիշ երկրորդական վիժման բաժակից անցնող առանցքի շարունակութեան վրայ դուրս են ցայտում Դիագինի աւատաբուխ ծծմբային ջերմուկները, ծածկելով գետինը իրենց կրային ծեփով, որ լինում է զանազան ձևի և գոյնի։ Այս ջրերից կազմւում է մի ջերմկային վտակ, որ շոգելից ջրընկէցներով թափւում է Արածանու պաղ ջրերին մէջ։[1] 1859-ին գլխաւոր ազբիւրը աւելի ցածումն էր, բայց մի ուժգին ցնցումն, որ շարժեց երկիրը մինչև Էրզրում, ցամաքացրեց այդ ազբիւրը, ապակոյն ջրերը բացին իրենց համար նոր ճանապարհ։ Եւ այսպիսի յաճախակի փոփոխութիւններ պէտք է որ յատուկ գան աղբերակների շրջավայրում, իրրև հետևանք կեղևի թանձրացման, որ մեծ արագութեամբ կերպարանափոխում է երկրի մակերևոյթը։ Տայլորը ան-

1) Jaubert, Voyage en Arménie.

սաւ բազմաթիւ փոքրիկ գէյսէրներ (շատրուան), որ նետւում էին հողից 2—3 մետր բարձր և յանկարծակի նորից կորչում, կարծես ստրատականների պար լինէր [1]: Մի քանի տարի յետոյ Ա-բիխը չգտաւ այլ եւս այս ընդհատուող ջրի ցայտումները [2]: Ջերմուկներից ներքև Արածանին անհետանում է բազալտ քարի ներքնոտղու մէջ, որ մի խորին պատուանաձք է, երկու ուղղահայեաց հանդիպակաց ափափանների միջև:

Թանգուրակը խոստոքաձեայ լեռնագօտիների մի հանգոյց է: Սրանից դէպի հիւսիս-արևմուտք ձգւում է մի ողնաձև հիւղ և միանում է փերլի-դաղի հետ, այստեղով է անցնում հնձաղարհը էրզրումից դէպի Թաւրիզ: Ըստ ինքեան այս լեռնային ողնաշարը պիտի լինէր Թուրքիայի և Պարսկաստանի սահմանը, սակայն արեւելեան բարձր հովիտը, ուր գտնւում է Բալիղ-լիճը և որտեղից դուրս է գալիս նոյնանուն հեղեղատը, յատկացրած է Օամանեան պետութեան: Թանգուրակից դէպի արևելք անընդմիջապէս սկսուղ լեռնաշղթան, դէմ առ դէմ Արարատի երկու գագաթներին, իր ամբողջութեամբ մի բնական սահմանագիծ է և շնորհիւ անկախ քրդերի, որ բռնած են նրա երկու կողերն էլ, մնում է ազատ դրակից երկու պետութիւններից: Արևելեան կողերի վրայ ձգւում են դէպի Ուրմիա լիճը փոքրիկ և կարճ գօտիներ, որոնք վերջանում են յանկարծօրէն՝ սարաւանդներով, մինչդեռ արևմուտքում՝ դէպի Վան լիճը, բազմաթիւ հանդիպագօտիներ են ձգւում հեռու հեռու և գնում կորչում են սարահարթում, որի միջին բարձրութիւնը մ. Մ. 2000 մետր է: Լեռնաշղթան ինքն էլ հազիւ 3000 մետրի է հասնում իր մի քանի սրածայր գագաթներով: Հաբարի լեռների ողնաշարը, որ հարաւում բոլորւում է Վան լճի հարաւային ափին ուղեկցելու համար, երևում է որ աւելի բարձր գագաթներ չպիտի ունենայ, թէև ըստ Մոռից Վագների և Ռիխի պիտի գտնուին այնտեղ «սառցարաններ», այսինքն՝ հետևանականաբար՝ ամրացած ձիւնի շերտեր խոշոր քարերի յատակում: Հիւսիսում և հիւսիս—

1) Mittheilungen von Petermann, 1869, XI.

2) Записки Кавказскаго отдѣла, 1873.

արևմուտքում մի ուրիշ բարձրութիւն լրացնում է լեռներն և բարձր երկիրների շրջանը, որ պարփակում է լճային գոգաւորութիւնը և որի արևելեան վրայ կանգնած է մի հին հրաբուխ՝ Սէյբան կամ Սիփան, 3600 մետր բարձրութեամբ ըստ Ֆանտեա Տողերի, որն և ծածկուած է ձիւնով տարին տասն ամիս: Լինելով առանձնացած, սպիտակ կոնաձև գագաթով, կապտագոյն սիլուետաձև արուտներով՝ այս հրաբուխը թւում է աւելի մեծ քան թէ ուրիշ բազմաթիւ աւելի բարձր լեռներ, բայց որոնք գտնւում են լեռնակոյտների մէջ ուրիշ գագաթների մօտ: Շիլը (Shiel) համեմատում էր սրան Պլմաւէնդի հետ և նոյն բարձրութիւնն էր տալիս երկու հրաբուխներին, որոնք սակայն տարբերւում են միմեանցից առնուազն 2500 մետրով: Սիփանն համարուել է նաև Արարատի ախոյեան և աւանդութիւնը պատմում է, որ երբ Ջրհեղեղի ջրերը իջան՝ նախ և առաջ վարեցին նոյեան տապանը Սիփանի վրայ, յետոյ բերելով նրան դէպի հիւսիս՝ վերջնականապէս հանգչեցրին նրան Մասիսի վրայ: Հնումն հայերը բերում էին Սիփանի խառնարանի եղրը մի ամբիծ ոչխար՝ մատաղ անելու [1]: Ամենաւերին խառնարանը, որ 150 մետր խորութիւն ունի և ձմեռը ձիւնով է լեցուն, ամառը ծաղիկներով, երբեմն էլ ամիսներում է իր մէջ մի փոքրիկ լճակ, շրջապատուած է սպիտակագոյն չէչաքարի կանգուն ժայռերով: Սրա այս գագաթնակէտերից, որոնք պարսպում են խառնարանը, կարելի է տեսնել հիւսիսում Հայաստանի լեռների անսահման հորիզոնը, որ ձգւում է կամարաձև 300 քիլոմետր երկարութեամբ Բիւրակնեանից մինչև Մասիս: Հարաւում երևում է կոմնական խառնարանը, որ լցուած է Աղիր-գէօլով, այն է՝ «անշարժ (ծանր) լճով»: Աւելի հեռուն սիլուետած է Վան լճի աւազանը՝ իր խորշերով, ծոցերով, լճեր երկարաձգող ճախճախուտներով, և լեռների ամիսներ տարանը, որ շրջապատում է նրան: Հրաբխի ստորոտում տարածուած է փոքրիկ Նազիկ լիճը, որ քաղցր ջրի աւազան է՝ պետեղուած Վան լճի և Եփրատի ջրբաժան բարձրութեանց վրայ, և որը դէպի երկուսն էլ ուղարկում է, գոնէ անձրևային եղանա-

1) M. Wagner, արդէն յիշուած։

կին, մի մի վտակ[1]: Հարաւ արեւմուքում միւուլը միախառնւում է դաշտերի անորոշ գետագրութեան հետ: Հայաստանի բարձրաւանդակութեան վերջին աստիճանները սպառւում են Միջագետքի դաշտերի վերեւում՝ առատնաւոր քարաժայռերի մի շարքով, գետերից և հեղեղատներից փորփորուած խորխորատներով, բայց որը իւր ամբողջութեամբ ունի մի կանոնաւոր ուղղութիւն հարաւ-արեւելքից դէպի հիւսիս-արեւմուք, իբրև շարունակութիւն Լուռիստանի եզերական լեռնաշղթայի: Լճից դէպի արեւմուք ներմուծ սարը, որ գրեթէ ամբողջապէս բազկացած է մխրճից, դէպի ջրերն է հակում իւր ահագին խառնարանը, որի լայնութիւնը ասում են որ շուտ քիլոմետրերի է հասնում[2]: Իսկ հարաւային լճափում երեւում է մի թերատաձեւ (էլիպտաձեւ) նեղաբերան ծովախորշ, որ մեսամբ խորասուզուած հրաբխի խառնարանն է: Ամբողջ բարձր Հայաստանը մի հրաբխային երկիր է, յաճախակի երկրաշարժներով գրգռուած: Ջերմուկներն այնտեղ աւելի բազմաթիւ են քան թէ Արեւմուքի ամենահարուստ լեռներում, ինչպէս օրինակ՝ Պիրենէում և Օվերնում:

Վանի լիճը՝ Հայերի Տօսպը, — որից և Թոսպիտիս անունը՝ որ տալիս էին նրան նախնիք, — 336 մետր աւելի բարձր է քան թէ Ուրմիայինը, իսկ ծովի մակերեւոյթից բարձրութիւնն է 1625 մետր: Խաւարը հաշուած է 3690 քառակուսի քիլոմետր, որ փոքր ինչ պակաս է Ատրպատականի ծովի (Ուրմիայի) տարածութիւնից, բայց անհամեմատ աւելի խորն է[3]: Վանից 3 քիլոմետր դէպի արեւմուք խորտակիը հասնում է յատակին 25 մետրից աւելի խորութեամբ[4]), իսկ աւազանի հարաւային մասում յատակը դեռ աւելի էլ խոր է: Վան լճի ամբողջ բովանդակութիւնը անկասկած աւելի մեծ է քան Ուրմիայինը: Իսկ ինչ վերաբերում է հիւսիսային-արեւելեան ծովախորշին, որ ձգւում է 60 քիլոմետր երկա-

1) Layard, Nineveh and Babylon.—Millingen, Wild Life among the Koords.

2) Fanshawe Tozer, Turkish Armenia and Eastern Asia Minor.

3) Monteith, Journal;—Carl Ritter, Asien, vol. IX.

4) Millingen, արդէն յիշուած:

րութեամբ դէպի երկրի ներսը, գա մի ծանծաղուտ է, ուր գարնանը հեղեղները սիկաղոլի (ալիւխան) ընդարձակ դելտաներ են կազմում: Ըստ տեղական աւանդութեան՝ այս խորշը մի ժամանակ եղել է բերրի հովիտ, որտեղ սազսակում էին երկու գետ, որ և հարաւային արեւմուքում անընդհատ ձգւում էին դէպի Բաղէշ (Բիթլիս): Ժօբէրի, Հայ Ներսէս Արգսեանի, Օրիէմայի, Լոֆտուսի և Սարեկէրի ժողոված տեղեկութիւնները չեն թոյնում ոչ մի կասկած այն մեծամեծ փոփոխութիւնների մասին, որ կրել է այս ներքին ծովի մակերեւոյթը: 1838-ից մինչև 1840 թ. բարձրացաւ նա 3—4 մետր: Ափի բնակիչները պատմեցին Լոֆտուսին՝ որ տասնեօթներորդ դարի սկզբին ջուրը բարձրացել էր նոյն ձեւով մի քանի տարի շարունակ և յետոյ նորից ցածացել: Բացատրիկ երաշտ տարիները կանգնեցնում են ջրերի յառաջադիմութիւնը, բայց ժամանակաւոր յետադիմութիւնից յետոյ ջրերն սկսում են աւելի մեծ ուժով աճել: Ծովափի շատ լճերը ծածկուել են ալիքների տակ, նախկին թերակղզիները՝ այժմ ցամաքից անջատուած՝ փոխարկուել են կղզիներին, որոնք օրից օր աւելի և էլ փոքրանում են: Հիւսիսային ափամէն անցնող ճանապարհը՝ սերունդից սերունդ տեղատած են եղել տանել դէպի երկրի աւելի ներսը: Արձէշ քաղաքը՝ որ գտնւում է հիւսիս-արեւելեան ծովախորշի ափում, գրեթէ ամբողջապէս անհետացել է ջրի տակ, իսկ Ադելթիւազ գիւղաքաղաքը, որ աւազանի հիւսիսումն է, տանգի մէջ է ջրի յորդանալուց: Նոյնպէս է և արեւելեան ծովափում. լիճը բարձրանում է գէպի Վան քաղաքը, որը նոր է շինուած, հնագոյն Վանը ջրի տակ մնացած լինելով: Խակէլէ (Նաւամատոյց) գիւղը մասամբ ամայացած է. նաւավարները իրենց մակոյկները կապում են ծառերի բներին, որոնք այժմ ափից հեռու գտնւում են ջրի մէջ: Ջրհորները լցուած են ծովից ծորուած ջրով, և տալիս են միայն աղտաղի հեղուկ: Թերևս ծովի այս արշաւանքին պէտք է վերագրել ջրի տակ թաղուած մեծ քաղաքների մասին եղած աւանդութիւնները: Ի՞նչն է այս յորդութեան պատճառը. երևոյթ, որ հակառակ է Ասիայի միւս գրեթէ բոլոր լճային աւազաններում նկատուածին: Կամ տեղական մթնոլորտի հոսանքներն են ձգում

այժմ աւելի շատ անձրեւային ամպեր դէպի այս գաւառները, քան թէ այդ լինում էր առաջ, և կամ՝ պէտք է ընդունել ծովեզերեայ բնակիչների տուած մեկնութիւնը, այն է՝ որ ստորերկրեայ ճեղքուածները, որտեղով յորդառատ հոսանքներ սուզուելիս են եղել դէպի Տիգրիսի վերին օժանդակները, այժմ մասամբ խափանուած պէտք է լինին, ուստի և լճի ջրամբարը՝ սառնալով ձիւներից և անձրեւներից աւելի շատ հեղուկ, քան թէ գոլորշիացածը և ստորերկրեայ դուրս սուզուածը, աճում է և տարածւում, մինչև որ հաւասարակշռութիւնը վերահաստատուի և կամ ջրի աւելցուկը հարաւ-արեւմտքում ճանապարհ բանայ և թափուի Բաղէշի գետակը: Բնիկների ասելով թափառական հովիւները գտած են եղել մի մեծ քար ստորերկրեայ անցքերի մէկի ճագարի մէջ, — այդ անցքերը նման պէտք է լինին Յունաստանի լճերի կապա-ոլըներին, — և այդ ժամանակից սկսած մակերեւոյթը բարձրանում է աստիճանաբար և անընդհատ: Շատ հետաքննական է մտից վերաքննել տեղացիների հաւաստածը ստորերկրեայ վէների խափանման մասին և նախ և առաջ տեսնել թէ այն աղբիւրները, որոնք համարւում են լճի սուզմունք, նմանո՞ւմ են արդեօք նրան իրենց աղի պարունակութեամբ: Վանից արեւելք մի ուրիշ ջրամբար՝ Արջակ լիճը մեծանում է նոյնպէս [1]): Այս երկու հարեւան լճերի միանուագ յորդութիւնը մեծ հաւանականութիւն է տալիս կլիմայի փոփոխութեան: Արջակը նմանում է Վան լճին նաև իւր աղային պարունակութեամբ, միայն թէ՝ ըստ Միլլինգէնի՝ սա պարունակելիս պէտք է լինի նաև շատ մեծ քանակութիւն մինդեղի. սրա յորդութեան ջրերով ողողուած դաշտերը անբեր են դառնում երկար տարիներ(4):

Այսպէս կամ այնպէս, սակայն այն հաստատ է որ Վան լճի ջրերը իրենց օժանդակների բերած աղը ամիսներով, թէև ոչ այնչափ մեծ քանակութեամբ որչափ Ուրմիա լիճը, անընդհատ են դառնում թէ մարդկանց և թէ անասունների համար: Նախիրները գետաբերաններն են գնում ջուր խմելու, իսկ ձկնորսները

1) Strecker, Mittheilungen von Petermann, № VII 1863.

իրենց ընդելի ջրի պաշարը նորոգում են ծովի խորից դուրս ժայթքող մի աղբիւրից, որի ջրերը զեռում են մակերեւոյթի վրայ: Այս հայկական ծովի ջրերը այնչափ աղի չեն, որչափ Ատրպատականի լճինը և ձկների աւելի շատ տեսակներ ունին: Գետաբերաններում որսւում է մի տեսակ ձուկ՝ ահագին քանակութեամբ, որի մասին ձօքերը կարծում է սխալմամբ թէ նոյնը լինի, ինչ որ է Սև ծովի անձրուկը (անշա, անշուա), որ այնչափ առատ է Տրաբիզոնի առաջ: Այս ձուկը սպիտակի (փոքր սպիտակ ձուկ= able) մի տեսակն է՝ (տառեխ, cyprinus tarichi), ինչպէս որ այդ որոշեց բնագէտ Դէյրոլը: Այս էլ պէտք է նկատել՝ որ այս ձուկը չէ կարող ապրել լճի աղի ջրերում [1]): Միմիայն մարտ ամսից մինչև մայիսի սկիզբները երեւում է նա ջրի վերին շերտերում, այն ժամանակ՝ երբ հալած ձների քաղցր ջրերը սիրւում են լճի աղտային և ծանր ջրերի երեսին: Տարւայ մնացած միւս մասերում և ոչ մի տառեխ չէ երեւում լճի մէջ: Բոլոր այն ձկները որոնք չեն դիմանում անթիւ ջրագնացներից՝ ապաստան են գտնում օժանդակ վտակներում: Մի ժամանակ կարծում էին թէ տառեխը պահ է մնում ջրի խորքերում [2]): Նպղիկի աւազանի ջուրը թէև քաղցր է, բայց այնտեղ նկատուած է ձկների նոյն՝ տարին մի անգամ՝ անհետանալը [3]): Վան և Արջակ լճերի աղային դիրքը, որ նստում է ծովափին, կիսով չափ ածխաթթու (կառբոնատ) է, կիսով չափ կալցաքարի ծծմբատ (sulfade de soude), որը գործ են ածում ապակու շինելու և արտահանում են մինչև Ասորիք [4]):

Վան լճի վրայ նաւերը սակաւաթիւ են, այսուամենայնիւ նորերս Տոզէր ճանապարհորդը անցաւ այդ լիճը ձկնորսական նաւով և հինգ բեռնակիր լաստերով: Վանի ամերիկական քարոզիչները 1879-ին ծովն իջեցրին սի կտրծուն շոգենաւ, որի ամեն մի կտորը պոլսից

1) Ernest Chantre, ձեռագիր, — Fanshawe Tozer, արդէն յիշուած:

2) A. Jaubert, Voyage en Arménie et en Perse; — Millingen, յիշուած:

3) Layard, յիշուած:

4) Deyrolle, Tour du Monde, 1-er Semestre, 1876.

2637

էր ուղարկուած ուղտով, բայց չէ երևում որ այդ գործը յաջողուած լինի[1]։

Վան, Սևան և Ուրմիա լճերի, Թիֆլիսի և Կարսի միջև՝ Ասիայիայի բարձրաւանդակութեան բազմաթիւ լճային գոգաւորութեանց գոյութիւնն արդէն իսկ ապացուցանում է այն առաւելութիւնը, որ հայկական բարձրաւանդակները ունին պարսկական բարձրաւանդակութեանց վրայ, լինելով աւելի խոնաւ(5)։ Ամբողջ Լաղիստանը և այն լեռնագաւառը, որ նախնիքներից կրում էր Պոնտոս անունը, գտնուում են իսկապէս Սև ծովի ազդեցութեան տակ օդերևութաբանական տեսակէտից։ Այդտեղում տիրում են արևմտեան և հիւսիս-արևմտեան հողմերը՝ բերելով առատութեամբ ամառուայ փոթորիկների ժամանակ անձրև, ձմեռը՝ ձիւն։ Այդտեղում թափուող խոնաւութիւնը այնչափ մեծ չէ, որչափ Կովկասի հարաւային կողերում, Մինգրէլիայում և Իմերէթիայում է, ուր անձրևի տարեկան շերտը անցնում է 2 մետրից, սակայն Լաղիստանում կան յաջող դիրքով հովիտներ, ուր ամպերից թափւում է մէկ մետրից աւելի անձրևային ջուր։ Ամերիկական մի քարտէզի ասածին նայած՝ Բաղէշում եկած ձիւնի քանակութիւնը՝ վան լճի հարաւային ափին իշխող լեռների հարաւային կողերի վրայ լինելու է 5 մետր և կէս 1858 և 1859 թուականների ձմեռները։ Այս ձիւնի թանձրութիւնը հաւասար է 40 հարիւրամետրից աւելի ջրի։ Թէ և ոչ մի ճշգրիտ հետախուզութիւն թոյլ չէ տալիս դրական պնդելու, սակայն Հայաստանի բարձրաւանդակութեանց տարեբոլոր ընդունած խոնաւութեան միջին քանակութիւնը կարելի է կէս մետրաչափ համարել։

Կան գաւառներ, ինչպէս օրինակ Օլթու (Ուխտիք) բարձրաւանդակը, որոնց բարձր լեռները իրրև պատսար են խոնաւ հովմերի դէմ, գաւառներ, որոնք հազիւ են ստանում իրենց մշակութեան համար կարևոր եղած անձրևները։ Այսպիսի տեղերում պէտք է

1) Fanshawe Tozer, արդէն յիշուած։

լինում առուներ վերառնել և ճիւղաւորել նրանց մշակուած հողերում հազարաւոր ակօսներով, ինչպէս այդ անում է Անդրկովկասի կասպեան աւազանի սահմանում գտնուած գաւառներում։ Բայց Հարաւային Հայաստանի մեծագոյն մասը չնայած պոնտական ալպերի պատուարին, գտնուում է արևմտեան անձրևաբեր հոսանքների ազդեցութեան տակ, որոնք ծովից փչում են դէպի Սբ. Աղի բարձրաւանդակը և յետոյ ներս են թափանցում դէպի արևմտեան՝ ձագարաձև բացուած հովիտները։ Այսպիսով Սև ծովի ամրողջ վերին հովիտը՝ Էրզրումի աւազանի հետ միասին ընդունում են Սև ծովի քամիները։ Այս քամիները փչում են գլխաւորապէս ձմեռը և ծածկում են թանձր ձիւնով Եփրատի ակունքների շուրջը լեռների ամփիթատրոնը։ Ամառը՝ հիւսիսի և արևելքի քամիները, որոնք ասիական մայրցամաքը անցնող բևեռային մեծ հոսանքի ճիւղաւորութիւնն են, բերում են չոր օդ, որից ցրւում են ամպերը։ Բայց պատահում է նոյնպէս որ արևմուտքից եկող յանկարծական փոթորիկները փոխւում են կատաղի տեղատարափ անձրևների։ Միւս կողմից՝ Միջերկրականի ուղարկած հողմերը բերում են իրենց բաժին խոնաւութիւնը և ընդհարուելով պատառում են իրենց թուխքերը զառիվերների վրայ։ Գեղեցիկ եղանակին մինչև անգամ մի թեթև մշուշը մեղմում է լեռների գծագրութիւնը և գունաւորում է դաշտանկարները նուրբ երանգներով[1]։ Հայկական ալպերի հիւսիսային կողերի վրայ իջած խոնաւութիւնը վերագառնում է ձորերն և գարշուտ գետերը, որոնց ջրի ծաւալը շատ մեծ է համեմատած իրենց սուզանիին։ Նոյն լեռների հարաւային կողերի վրայ սկիզբն են առնում Եփրատն ու Տիգրիսը, որոնց ալիքները միանալով Շատ-էլ-Արաբում՝ գերազանցում են բոլոր միւս գետերին, որոնք գտնուում են Ինդոսի և Դանուբի միջև, և մինչև իսկ երկու անգամ աւելի են Եղոսից։ Մթնոլորտային և գետային շրջանառութեամբ Սև ծովը իւր անձրևներով և Եփրատը իւր հոսանքով անընդհատաբար թափւում են Պարսկական ծոցը։

1) Radde, Извѣстія Кавказскаго Отдѣла, 1878.

Եւքսինեան Պոնտոսի ափում քաղաքները վայելում են բաւական քաղցր և բարեխառն օդ։ Շատ հաղիւ է պատահում որ այդ ծովափի ցրտերը 6 աստիճան ցած իջնեն սառուցման կէտից, իսկ ծովի բարեխառնող ազդեցութիւնը արգելում է ամառնային շոգերին անցնել 25 աստիճանից [1]։ Թուրքական Հայաստանի բնակիչները նեղւում են փոփոխակի սաստիկ ցրտից և սարսափելի շոգերից, գանուելով տարուայ կլիմայի ծայրայեղութիւնները մեղմող ծովից հեռու։ Էրզրումում գարուն չկայ, այնտեղ ձմեռուայ ձիւները մի քանի օրուայ մէջ հալւում են՝ փոխարկելով հեղեղատները լայնածաւալ գետերի։ Ծայրայեղ կէտերը տարուայ ամենաշոգ և ամենացուրտ օրուայ են՝ — 25 և + 44 աստիճան։ Երկարատև զննութիւններով միայն կարելի կլինի հաստատապէս համեմատել այս կլիման Եւրոպայի և Ասիայի կլիմաների հետ, որոնք արդէն լաւ ծանօթ են օդերեւութաբանական տեսակէտից [2]։ Այստեղում տեսնուած է 33 աստիճան տարբերութիւն արշալոյսի և կէսօրուայ մէջ [2]) Ձմեռնային սառնամանիքը, գարնանային եղեամները ուշացնում են բուսականութիւնը, բայց ամառը բոյսերը արագութեամբ են ածում և հասունանում. բնութիւնը կարծես պայթիւն է գործում մայիս և յունիս ամիսներին։ Ցորենը անցնում է իր աճեցողութեան բոլոր աստիճանները՝ սկսած տերեւաւորութիւնից մինչև հասունութիւնը՝ երկու ամսուայ ընթացքում։ Բայց ամառնային արեգակը կկիզէր նրան ծաղկած ժամանակ, եթէ ջրաքաշական առուակները հարկաւոր եղած խոնաւութիւնը չմատակարարէին։ Մինչև 1800 մետր լարձրութեան վրայ մշակում են ցորեն

1) Տրաբիզոնի կլիման զանազան եղանակներում, 6 տարուայ հետախուզութեանց համեմատ. 6°8 յունուարին, 24 3 օգոստոսին, 15°5 տարեբոլոր։ Ամիների ծայրայեղութիւնները. 29°9 — 2°6։ Անձրեւ՝ 566 հաղարամետր։ (Hann, Behm's Jahrbuch, IX, 1882.)

2) Էրզրումի կլիման զանազան եղանակներին (1987 մետր բարձր).

	ձմեռ	գարուն	ամառ	աշուն	տարեբոլոր
Ըստ Շիխաչեւի (3 տարի).—	10,°8	9,°9	24,°3	10,°3	8,°45
» Պալամայի (3 տարի).—	4°	10,°8	24,°2	7,°9	9,°72

3) Malama, Vilayet d'Erzeroum (ռուսերէն); — Radde՝ արդէն յիշուած։

և 2100 մետրի վրայ դեռ տեսնւում է գարին, թէև այս բարձրութեան վրայ ցանքսերին սպառնում է սառնամանիքների յանկարծական վերադարձը աշնան սկիզբներին։ Մինչի թուով հայկական լեռներում մշակութեան շերտը չէ այնչափ բարձր, որչափ վրաստանում, կովկասի զառիվերների վրայ, թէև վերջինս աւելի հիւսիսում է գտնւում։ Դրա պատճառը հաւանականաբար լեռների ձևն է։ Մինչդեռ Հայաստանի լեռները իրենց բազմաթիւ խրամատներով թոյլ են տալիս հիւսիսային քամուն ներս մտնելու, կովկաս սարերի միապաղաղ պատուարը պաշտպանում է իր հարաւային կողերի վրայ ածող բուսականութիւնը։ Բուսական գօտիները իրար են խառնւում տեղական կլիմայի համեմատ։ Այսպէս՝ Վանի դաշտերում դեռ ածում է նարնջենին և կիտրոնենին, մինչդեռ ձիթենին այնտեղ չէ կարող ապրել [1]։ Ֆրանսիայում ձիթենու գօտին ընդհակառակն այդ բոլորից աւելի շատ է բարձրանում դէպի հիւսիս։

Սև ծովի մօտերը պոնտական բուսականութիւնը նման է Մինգրէլիայի բուսականութեան, առանց հաւասարուելու նրան իր տեսակների ճոխութեամբ և գոյների վայելով [2]։ Հայաստանը փոքր Ասիայի այն երկիրներից մէկն է, ուր պողատու ծառերը տալիս են ամենահամեղ միրգ և ուր բուսաբանները կարծում են գտած լինել շատ տեսակների հայրենիքը, ինչպէս օրինակ՝ խաղողի որթի և սանձենուները։ «Լազիստանը, ասում են բնիկները, պտուղների հայրենիքն է.» [3]։ Ասիական Թուրքիայում չկայ մի ուրիշ երկիր աւելի կանաչագեղ, քան Տրաբիզոնի շրջակայքը։ Ողջից գլուխ բլուրները ծածկուած են բուսական հողով։ Պատնէշների վրայ յեցուած աստիճանաւոր դարաւտակները զարդարուած են կանաչ պարտէզներով, մարգագետիններով, մշտատերև կամ տերեւափոխիկ ծառերով։ Կիտրոնենիները, ձիթենիները շրջապատում են ծովափի

1) Statkovskiy, Problèmes de la climatologie du Caucase.

2) A. Jaubert; — Carl Ritter, Asien, vol. X.

3) Koch. Wanderungen in Orient; Carl Ritter, Asien, vol. XVIII.

քաղաքներն ու գիւղերը։ Աւելի բարձրում երևում են ստուարաճիւղ ընկուզենիներ, շագանակենիներ, կաղնիներ։ Աւելի հեռուն՝ բացուած լեռնալարդերը (ազալէ) և միւռագալաթ մրտալարդերը (rhododendron) կարծես կարմիր սիւռոյներ լինին լեռների զառիվայրերի վրայ փռուած։ Լեռնալարդի ծաղիկներին են վերագրում մեղրի այն թիւնաւոր յատկութիւնը, որ գինովացրեց և գժուացրեց Քսենոփոնի զինուորներին։ Կոխ բուսաբանը չկարողացաւ այս մեղրից գտնել կովկասեան երկրներում, սակայն այդ մեղրը ծախսւում է Բաթումի և Օրլու՛ի միջև եղած պոնտական ծովափի բոլոր վաճառանոցներում։ Բնիկները եփում են նրան և շաքարի հետ խառնում՝ անթոյն դարձնելու. համար[1]։

Հայաստանի սարերը երկրի ներսում գրեթէ բոլորն էլ զրկուած են ծառային բուսականութիւնից. մարդ տեսնում է միմիայն ժայռեր և արօտներ։ Այս երկրում՝ որ կարող էր նորից ծածկուել անտառներով, շատ տեղերում ուրիշ վառելիք չունին բացի կովի աղբարից։ Թռչունները սակաւ են, բացի նրանցից, որոնք բուն են դնում ժայռերի ճեղքերում։ Վայրի կենդանիները, որոնք պատկանում են նոյն տեսակներին, ինչ որ կան Անդրկովկասի սարերում, այս լերկ և արօտատաս սարաճութեանց վրայ ապաստան տեղ չեն գտնում։ Լեռների բոլոր կողերին տիրում են հովիւները և նրանց մեծադիմակ ոչխարները, պահպանուած կիսավայրենի շներով, որոնք յաճախ աւելի վտանգաւոր են քան թէ արջերն ու գայլերը։ Անտի—Կովկասի և Պոնտոսի մարգագետիններում արածող ձիերը գեղեցիկ ցեղից են, բայց չեն հատասարում թիւրքմէն ձիերին իրենց ուժով, և ոչ էլ պարսկականներին՝ իրենց շնորհալի շարժուածքներով. թէև ամուր կրակոտ, սակայն չափազանց քաղցրաբարոյ են։ Այս էլ կայ, որ քուրդերը, ինչպէս նաև փոքր Ասիայի ու Հայաստանի միւս բնակիչների մեծ մասը, աւելի լաւ են համարում վարել իրենց անասունները ձայնով, քան թէ

1). Hamilton, Researches in Asia Minor; — Zeitschrift der Geselschaft für allgemeine Erdkunde, Band IV; — Mahé, Géographie médicale, Dictionnaire encyclopédique des sciences médicales.

մտրակով։ Այլը քաշող գոմէշը առաջնորդւում է երգով, երբ որ սայլորդը լռում է՝ կենդանին կանգնում է[1]։ Օդի աւելի մեծ խոնաւութեան և աղբիւրների առատութեան պատճառով Հայաստանի արօտները աւելի խոտաէտ են քան Պարսկաստանինը և անուշանում են մի քանի անասուններ, որոնք իբրև կերակուր են ծառայում կոստանդնուպոլսին և փոքր Ասիայի բազմաթիւ քաղաքներին։ Միլինգէնը կարծում է որ Ախարատի և Պարսկական ծոցի միջև եղած արօտատեղիների վրայ ցրուած ոչխարների թիւը պակաս չէ 40 միլիոնից։ Դալխ սկզբում ժողէրը 150 հազար էր հաշւում ոչխարների թիւը, որ տարեկան ստանում էր կոստանդնուպոլիսը Հայաստանի սարերից։ Հազար հինգ հարիւր—երկու հազար գլխով ճանապարհ էին ընկնում ոչխարների հօտերը, անդնելով դարեւանդից դարեւանդ՝ միտապէս հետեւելով արօտատեղիների գօտուն և հասնում էին Վոսփորին ճանապարհ դուրս գալուց 17 կամ 18 ամիս յետոյ։ Հալէպը, Դամասկոսը, մինչև անգամ Բէյրութը իրենց մսի պաշարն ստանում են Հայաստանի և Քուրդիստանի հովիւներից, իսկ պատերազմների ժամանակ թուրք բանակները ուտեստի պաշարի կողմից ամբողջապէս կախուած են վերին Եփրատի բնակիչներից[2]։

Պոնտոսի, Թուրքական Հայաստանի և Քուրդիստանի բնակիչները, որոնք հաշւում են մօտ երկու միլիոն հոգի[3], մեծ մասը պատկանում են նոյն ցեղերին, ինչ ցեղերի որ պատկանում են Անդրկովկասի բնակիչները։ Թէ ցեղաբանական և թէ աշխար-

1) Millingen, Wild Life among the Koords.

2) Jaubert, A. Voyage en Arménie et en Perse.

3) Տրապիզոնի, Էրզրումի և Վանի վիլայէթների (նահանգների) բնակիչների մօտաւորական թիւը, ըստ Երիցովի, Մորգոմանի և այլն.

Թուրք և Թուրքմէն	800000	Լազ	100000
Հայ	600000	Չերքէզ	50000
Քուրդ	450000	Թուրք	50000

Ասլ և այլք — 20000

հագրական տեսակէտից այս երկու սահմանակից երկիրները մի միութիւն են կազմում: Երկու երկրումն էլ բնակւում են տարբեր ներ, թէև տարբեր անուանակոչութեամբ: Թուրք էրզրումը հայկական է, ինչպէս որ է ռուս Երևանը: Քուրդ հովիւները արածացնում են իրենց հօտերը ինչպէս Սևանի նոյնպէս և վանի լճի եզերքներում: Քաղաքական սահմանը ազգերի համար բնական սահման չէ: Այս էլ թէև ճիշտ է որ հակադարձ գաղթականութիւններ տեղի ունեցան մի երկրից դէպի միւսը, ոչ բոլորովին հնքնաբերաբար, Ռուսիայի ամեն մի նոր յաղթութեան ժամանակ: Այսպէս՝ 1828-1830-ին հարիւր հազարից աւելի հայ, յուսալով քրիստոնեայ երկրում ազատութիւն գտնել, Թուրքիայից և Պարսկաստանից գաղթեցին, ապաստան խնդրելով ռուս կառավարութիւնից և ստացան Թուրք ու քուրդ գաղթողների թողած երկիրները: Իսկ այս վերջիններն քաշւում էին մահմեդական երկիրներ: Նմանապէս էլ 1877-ին՝ ժողովրդի փոխանակութիւն տեղի ունեցաւ Թուրքական Հայաստանի և ռուսական Անդրկովկասին միացրած նահանգների միջև: Արտահանի և Կարսի Թուրքերը իրենց նահանջող բանակներին հետևեցան դէպի էրզրում և Սըւազ: Արդուինի Թուրքերը գնացին դէպի վանի բարձրաւանդակը, մինչդեռ վերին Ճորոխից, էրզրումից և վանից Հայերը եկան բռնելու ռուսական ամրոցների շուրջը բաց մնացած տեղերը: Օսմանեան կայսերութիւնը, ընդհանուր առմամբ, աւելի օգտուեց այս փոխանակութիւնից[1], որովհետև մուսուլմանները չեն կամենում այլ և այլ ապրել ռուս տիրապետութեան տակ և գնում են միանալու իրենց եղբայրներին, մինչդեռ Թուրքիայի Հայերից շատերը աւելի քիչ են վախենում փաշաների բարբարոսութիւնից, քան Մոսկուեան վարչութեան բծախնդրութիւնից(6): Ռուսական արշաւանք-

1) Գաղթական շարժումը Ռուսիայի միացրած երկիրներում, 1878-ից մինչև 1881:

Եկաւորների թիւը	21890
Գաղթողների »	87760
Կորուստ	65870

ների գլխաւոր հետևանքն եղաւ այն, որ Հայաստանը Թուրքաստան դարձաւ[1]:

Այսուամենայնիւ՝ այս ահագին փոփոխութիւնները ցեղաբանական տարրերի հաւասարակշռութեան մէջ,—փոփոխութիւններ, որոնց ընթացակից էր սարսափելի մահացութիւնը՝ պատճառած սովից, ջերմախտից, հայրենիքի կարօտից,—ամենևին չկարողացան ճշտել և յարմարացնել ցեղաբանական սահմանները պայմանական քաղաքական սահմանագծի հետ: Հասկանալի է թէ նոյնացել ժողովուրդների սահմանակցութիւնը ինչ մեծ առաւելութիւն է տալիս ռուս կառավարութեանը, եթէ սա Դրան հետ ընդհարումն ունենայ: Ցանուն իր հպատակների՝ անդրկովկասեան վրացիներին, կարող է նա միջամտել Տրաբիզոնի վրացիների գործերին: Իրրև քուրդ հովիւների իշխողի՝ դիւրին է նրան պահանջել այդ թափառականների վրայ հսկելու իրաւունքը՝ մի երկրից միւսն անցնելիս: Բայց մանաւանդ իրրև Հայերին պաշտպան, իրրև սուրբ էջմիածնին տիրոջ, բոլորովին իւր քաղաքական դերում կլինի նա՝ պահանջելով վարչական ինքնավարութիւն և բարենորոգումներ իւր հպատակների եղբայրների համար: Եւրոպական Թուրքիայում կարողացաւ նա բարձրացնել իւր հզօր ձայնը ի նպաստ Բուլգարներին և նրանց տալ տուեց մի երկիր, որ տարածւում է մինչև Սալոնիքի ծոցը: Սոյնպէս էլ, երբ յարմար առիթը գայ, նա դինուած կլինի միջամտելու յօգուտ Հայ հասարակութեանց, որ սիրուած են էրզրումի հովից մինչև Ալեքսանդրէտ խորշի ծովահայեաց ափերը, հիշտ դէմ առ դէմ Անգլիայի նոր տիրած կիպրոսին: Իսկ ինչ վերաբերում է Մեծ-Բրիտանիային, նա անկարող կլինի անխախտ պահպանել Թուրք պետութեան այժմեան սահմանները ընդդէմ ռուսների: Եթէ ստիպում է նա Թուրք կառավարութեանը կարգ ու կանոն պահել իւր անատոլեան նահանգներում՝ այդ մի պատրուակ ունենալու նպատակով է, որ յետ առնէ իւր պաշտպանութեան անխոհեմ խոստումը: Սպառնում է, որովհետև չէ կարող գործել:

1) Palgrave, Notes on Eastern Questions.

Տիտար է մնաճել, որ մի այսչափ հարուստ երկիր, բարեխառն գօտու ամենագեղեցիկ և ամենաբերրի երկիրներից մեկը, որ իբր տարածութեան համեմատութեամբ ամենաշատ թիւն է տուել հայոցբոյսերի, այսօր շատ անկատ է մշակուած: Հաղիւ 6 բնակիչ կարելի է հաշուել մի քառակուսի քիլոմետրի վրայ և այն էլ շատ հաւանական է, որ պակասում է օրից օր: Սակայն տիրող ազգը՝ թուրքերը կամ աւելի ճիշտ՝ թուրքմաննները, — որովհետև դեռ մինչև այսօր էլ նրանք բաժանուած են առանձին առանձին ցեղերի, — ունին մեծ բարեմասնութիւններ, որով հատանական է թէ ապագայում կարող են մեծ մասն ունենալ ազգերի ընդհանուր գործնէութեան մէջ: Աշխատասէր, համբերող, սկսուած գործում տոկուն, թուրքմաննները նորից նոր սկսում են, առանց ձանձրանալու, օտարների արշաւանքներով ընդհատուած գործը: Իրենց նախնեաց՝ կարա-Կոյունլի և Ակ-Կոյունլի, այն է՝ «Սև ու Սպիտակ Հոլիւնների» վառքին գիտակից՝ թուրքմէնները պահպանել են ազգային միութեան զգացումը, որ պակասում է իրենց հարևանների մեծ մասին և ցեղերի խառնուրդի ժամանակ գլխաւորապէս սրանց օգտին է կատարւում այդ ձուլումը: Շատ գաւառներում լազերը, չերքէզները, քուրդերը վերջ ի վերջոյ ձուլւում են սրանց հետ, մանաւանդ այն տեղերում, ուր թափառաշրջիկ ապրելակերպը տուել են տուել երկրագործական կեանքին: Այս թուրքմանների ուժեղ ժողովրդի մէջն է որոնելու Թուրքիան իր «վերածնդեան» տարրերը և ոչ թէ դաշնակցութեանց, պատերազմական անհատատ բազդի և կամ «եւրոպական դրամագլուխների» օժանդակութեան մէջ [1]:

Բաթումի և Տրաբիզոնի միջև՝ Ճոլափի լազերը և եղերական լեռների ճամարները մահմեդական վրացիներ են, ոչ պակաս վայելչ, շնորհալի և գեղեցիկ քան իրենց Վրաստանի եղբայրները: Նրանց բարբառը, որ շատ մերձաւոր է Մինգրելիայում խօսուած գաւառաբարբառին, խառն է թուրք և յոյն բառերով [2]: Կրօնի, քաղաքական—վարչական ձևի տարբերութիւնը, մանաւանդ ժա-

1) Palgrave, արդէն յիշուած:

2) Rosen, Ueber die Sprache der Lasen.

մանակաւոր պանդխտութեան սովորութիւնը, որ ընդհանուր է Լազիստանում, աստիճանաբար աւելի մեծ տարբերութիւն են առաջացնում թուրքահպատակ լազերի և ռուսահպատակ վրացիների խօսակցական լեզուի մէջ: Մի քանի գաւառներում, մինչև անգամ վերին և միջին Ճորոխի վրայ, թուրքերէնն է գարձել սովորական խօսակցական լեզու: Լազերը ճարտար են արհեստների և ամեն տեսակ ձեռնարկութեանց մէջ, այլ և արկածախնդիր են: Կար ժամանակ որ նրանք մեծ հաճոյքով պատրաստում էին ծովահինութեամբ և նրանց փոքրիկ մակոյկները՝ առանց ուշ դնելու մրրիկների վտանգին, ընկնում էին վաճառականական նաւերի յետևից, իսկ այժմ զբաղւում են ձկնորսութեամբ և ապրանքներ կրելով: Հազարաւոր պանդուխտներ դիմում են կոստանդնուպոլիս բեռնակրութեամբ, նաւաբարձութեամբ և կաթնայգործութեամբ պարապելու [1]: Տանը մնացողները հոլիւներ են կամ երկրագործ, և մարդ հիանում է այն հոգածութեան վրայ, որով նրանք հատատում են իրենց մշակութեան լանջերը (տեռասս) լեռների կողերի վրայ: Բուն Լազիստանի գաւառում, որի արևմտեան սահմանն է Քէմէր Հրուանդանը (Քէմէր բուռնու), բնակիչները գրեթէ ամբողջապէս լազեր են: Դրանից այն կողմը՝ դէպի Տրաբիզոն և աւելի հեռու մինչև Պատանա, հետզհետէ պակասում են դառնում նրանց հատարակութիւնները և խառն բնակուած թուրքերի և յոյների հետ: Լազերից յետոյ այս երկրում ցեղական ամենանշանաւոր տարրը կազմում են չերքէզները, աբխազները և կովկասից ուրիշ զանազան գաղթականներ, որոնց տարեկան եկատորութիւնը հատնում է մօտ վեց հազարի: Սրանք յօժարութեամբ ձուլւում են բնիկների հետ ի մի ազգութիւն, տեղացի ազդիկների գեղեցկութեան շնորհիւ, որոնց նորեկները մեծ յօժարութեամբ իրենց կին են խնդրում [2]: Հայերը ունին միմիայն գիւղերի մի փոքրիկ խումբ Կոպի'ի շրջանը, Բաթումի գաւառի սահմանագծի վրայ, իսկ յունական գաղութը բաղկացած

1) Извѣстія Кавказскаго Отдѣла, tome V. 1877—1878.

2) Palgrave, յիշուած:

է միմիայն ծովեղերեայ քաղաքներում և գիւղաքաղաքներում առանձնացած մի քանի ընտանիքներից։ Ներքին մի քանի հովիտներում, մանաւորապէս Ընկուզատում (Ջևիզլիք), Տրաբիզոնից դէպ-հիւս-հանէ տանող ճանապարհի վրայ, գտնւում են Ղզլլն բնակիչներ (կէսկէսներ)—«Մէցցօ-մէցցօներ», որ մարդ չգիտէ մուսուլման թուրքերի հետ դասել թէ քրիստոնեայ յոյների հետ։ Աւանօտեան խօսում են նրանք թուրքերէն և գնում են մզկիթ, երեկոյեան խօսում են յունարէն և կատարում են քրիստոնէական խորհուրդները [1]։ Ծագած յոյներից, բայց Լազերի հետ խառնուած յոյներից, և տասնեօթներորդ դարում ընդունած իսլամից, այս երկկեղծ և երկկրօն գիւղացիները ծածկում են օսմանցիներից իրենց քրիստոնէական ծէսերը, թէև այդ գաղտնիքը յայտնի է ամենքին և արհամարհանքով թոյլատրուած։ Այս էլ կայ, որ նրանց մահմեդականութիւնը զուտ կեղծաւորութիւն չէ։ Երկու կրօնքի արարողութիւններն էլ սովորութեամբ անհրաժեշտ են դարձած նրանց համար հաւատարապէս(7)։ Թերևս սրանց մէջ պէտք է տեսնել այն Մակրոնների սերունդը, որոնց մասին իւսում է Շերոդոտը, իբրև թլփատութիւն գործածողների վրայ։ այդ դէպքում սրանք «մուսուլման» եղած կլինին յառաջ քան Իսլամի դիմաւորների այս երկիրներին տիրելը [2]։

Ոչ մի տեղ, ոչ Թուրքիայում և ոչ էլ Անդրկովկասում, Հայկեանները կամ Հայերը չեն ապրում իբրև մի միաձոյլ ազգային մարմին, սակայն Հորոսի հովտի հարաւային զառիվայրերում նմանապէս և վերին Եփրատի գլխաւոր ճիւղերի վրայ նրանք են տիրող ժողովուրդը։ Փոքր Ասիայում՝ Ջիհունի աւազանում բնակուած են նրանք բացառապէս մի քանի վերին հովիտներում։ Ա.յսպիսով՝ Սև ծովից հեռուած մինչև Միջերկրականը՝ ամենալաւ կերպով այս տեղերում են պահպանել Հայաստանի թագաւորութեան աւանդութիւնները։ Հայերի թիւը յայտնի չէ։ Նրանց քաղաքական դրութիւնը դառնալով առիթ ոտոտիկ վիճաբանութիւնների, երկու

1) Hamilton, Researches in Asia Minor;—Eli Smith;—Flandin;—Palgrave, etc.

2) De Gobineau, Trois ans en Asie.

կողմից էլ չափազանցութիւններ են տեղի ունեցել, նայելով պայքարի շահերին։ Մի կողմին նայած՝ Թուրքիային մնացած նահանգների հայերի թիւը լինելու է երկուսից երեք միլիոն, միւսների ասելով—միմիայն հինգ հարիւր հազար։ Պաշտօնական վիճակագրութիւնները, որ կազմուած են իբրաքանչիւր տեղի բնակիչների թուի մօտաւորական ենթադրութեամբ, մշտապէս չեն պահում իբրաքանչիւր ազգութեան կանոնաւոր հաշիւը, սակայն ճանապարհորդների հետազօտութիւններով զանազան ցեղերի յարաբերական չափը յայտնի է մօտաւորապէս, ուստի և կարելի է թուրքական հայերի մօտաւոր թիւը հանել, որ հաւանականաբար լինելու է ութից ուրի հարիւր հազար, այն է՝ ամբողջ հայ ազգութեան մի երրորդը բնակուելիս պէտք է լինի Օսմանեան Հողի վրայ (8)։ Արդարմամբ ինչպէս և կոստանդնուպոլսում՝ հայերը տարբերւում են թուրքերից աւելի բայ և աղատամիտ ոգով, ուսման աւելի մեծ սէր ունին, վաճառականութեան և արուեստների մէջ աւելի մեծ ձեռներեցութիւն։ Վանի վիլայէտում չկայ տուն, որ նրանց ձեռքով շինուած չլինի, չկայ տեղական կտոր որ նրանց գործածը չլինի, չկայ պատուղ, որ նրանց պարտէզներից չլինի։ Նրանք դիմում են պանդխտութեան մեծ յօժարութեամբ։ Չհաշուելով վաշխառութիւններից և աւազակ քուրդերի ասպատակութիւններից փախածները, հազարաւորներ կան նրանցից Ստամբոլում, Անատոլիայի և Եւրոպական Թուրքիայի միւս քաղաքներում։ Այս տեղերում բանում են նրանք իբրև որմնադիր, մշակ, բեռնակիր։ Կոստանդնուպոլսում Վան-էրմէնիախ, «Վանեցի հայ» անունը գործ է ածում ինչպէս «Օվերնա» բառը Ֆրանսիայի մեծ քաղաքներում։ Ամբողջ գիւղեր բնակուած են միմիայն կանանցով, որոնց այրերն ու եղբայրները պանդխտութեան մէջ են, իսկ իրենք մնացել են ընտանիքի տուն ու տեղին հսկելու։

Մինչդեռ հայ ժողովրդի ծանրութեան կեդրոնը գտնւում է ուուս հողի վրայ՝ Արարատ սարի ստորոտում, քուրդերինը [1]՝ ընդհակա-

1) Թրքական հողում սրանց ցեղական անունը հնչւում է քիւրդ կամ քիւրտ, Արաբները այս ազգն անուանում են քարտ, յոգնակի էքրատ, իսկ իրենք իրենց կոչում են՝ քարտմանչէ։

ռակը թուրք հոգի վրայ է, ուր և գտնուում են նրանց ամենաբազմամարդ գեղերը։ Նրանց բնակութեան բուն կեդրոնը գտնուում է Վանի բարձրաւանդակութեան վրայ, բայց նրանց թափառած աւօտատեղիները անասմանն են։ Հաշուելով քուրդերի թուում նրանի եզերական լեռնագօտիների Լուռիներին և Բախտիարներին, նաև այն զանազան ցեղերին, որոնց պարսիկ թագաւորները տեղափոխել են Խորասանի և Բալուջիստանի սահմանների վրայ, այն ժամանակ շատ քիչ ազգ կլինի Ասիայում, որ այդչափ ընդարձակ երկիրներում սփռուած լինի, ինչպէս քուրդերի տիրած գօտին, որ գրեթէ անընդհատաբար տարածուում է Համադանի մօտերից մինչև Ս. ինթաբ՝ 1000 քիլոմետր երկարութիւն ունի, 250 քիլոմետր միջին լայնութեամբ։ Նրանք բաժանուած են երեք պետութեան մէջ, բայց Ռուսաստանում եղածները համեմատաբար շատ սակաւաթիւ են և շրջապատուած են հայերով, վրացիներով ու թաթարներով ու ոչինչ յարակցութիւն չունին իրենց գլխաւոր ցեղերի հետ։ Քուրդ ցեղերի մեծամասնութիւնը ճանաչում է Դրան գերիշխանութիւնը, արևելեանները կախում ունին Պարսկաստանից, իսկ զանազան գժուարակոխ գաւառների ցեղեր, մանաւորապէս Դէրսիմ տարերինը, որ Էրզրումի Հարաւ—արևմուտքում է, ապրում են փոքրիկ անկախ տէրութիւններով[1]։ Ա. ին հովիտներում ապրում են խիտ առ խիտ, մանաւորապէս մեծ Զաբ գետի աւազանում, նրանք կազմում են մի բաւական հզօր ազգայնութիւն, այնպէս որ թուրքերի և պարսիկների դիմաց մի անկախ պետութիւն կազմելու վճռաւորութիւնը կարող են ունենալ։ Այս դարի կիսից սկսած, մանաւորապէս վերջին ռուս արշաւանքից յետոյ տեսի ունեցած ապստամբութիւններից շատերը անշուշտ իրենց նպատակ ունէին ձեռք բերել քաղաքական անկախութիւն։ Մինչև անգամ փորձեր

1) Քուրդ ժողովուրդները մօտաւորապէս հաշուած։ Թուրքական Քուրդիստան և Թուրքական Ասիայի ուրիշ երկիրները։ 1300000 բնակիչ։
Պարսկաստան (Լուռիները և Բախտիարները չհաշուած)։ 500000 »
Աղուանիստան և Բալուջիստան 5000 (?) »
Ռուսական Անդրկովկաս 13000 »

եղան հիմնելու մի «քրդական դաշնակցութիւն»։ Չաղիւ է պատահում որ զանազան քուրդ ցեղերի մէջ անհամաձայնութիւններ ծագին, նրանք ընդհանրապէս յարձակում են այլազգի ցեղերի վրայ։

Քուրդերը ցրուած լինելով այսպիսի մի մեծ տարածութեան վրայ՝ չունին բնաւ միևնոյն ֆիզիքական տիպը և անհատական տարբերութիւնները ծագումից են։ Ոմանք խառնուրդ են թուրքմէնների կամ թուրքաթաթարների, ուրիշները խառնուած են հայերի կամ պարսիկների հետ։ Մի քանի ցեղեր, որոնք համարւում են մաքուր հայկական ծագումից, նկատուած են իբրև սերուած նախկին քրիստոնեայ հասարակութիւններից, որոնք ընդունել են Իսլամը։ Քրդական տարեթուում զօրանիստ ունեցող գրեթէ բոլոր թուրք զինուորները ամուսնանում են տեղական աղջիկների հետ[1]։ Վէմքի տարբերութիւնը համապատասխանում է ծագման տարբերութեան, քրդերը տգեղ են և անճոռնի, բայց կան և այնպիսի քրդեր, որոնք կարող են մրցել ամենագեղեցիկ չերքէզների հետ ուժեղութեան և շնորհքի մրցանակը տանելու համար։ Վան և Ուրմիա լճերի աւազաններում ապրող քրդերը, որ համարւում են Պերսեպոլսի արձանագրութեանց մէջ յիշուած Քսերքսեսների սերունդ, կամ սերուած կարդուքներից և գորդիացիներից, որոնց մասին խօսում են Հին յոյն հեղինակները, միջահասակ են և թիկնաւէտ, խոշոր և հպարտ գծագրութեամբ։ Իսկ պարսկական սահմանի քրդերը ունին ընդհանրապէս գէպի յետ փախած ճակատ, լայն և որոշակի բաժանուած կոպեր, երկայն արտևանունք, մեծ բերան, դուրս ցցուած կզակ, սատիկ արծուաքունգ քիթ, որ սրածայր է և մեռած պինչերով[2]։ Շատ քուրդ ցեղեր պարսիկների նման սև կամ կարմիր են ներկում իրենց թանձր մօրուքը և մազերը։ Յատկապէս կարելի է հանդիպել այնպիսիներին, որոնք բնականից ունին շէկ մազեր և կապոյտ աչքեր, կարծես գերմանացիներ լինին[3]։ Մ. Դիւհուսէի չափած հինգ

1) Millingen, Wild Life among the Koords.
2) Duhousset, Etude sur les populations de la Perse, Revue orientale et Américaine, 1863.
3) Polak, Persien, Das Land und seine Bewohner.

քրդական գանգերը նշանաւոր կերպով կարճագլուխ (բռախիսեֆալ) էին[1]), և աչքի ընկնելու չափ տարբերուում էին արևելեան պարսիկների, աղուանների և հնդիկների գանգերից։ Սակայն քրդերի մեծ զանազանութիւնը միմեանցից ֆիզիքական տեսակէտից թոյլ չէ տալիս այս մի քանի չափածութեան մէջ մի ընդհանուր իրողութիւն տեսնել։ Ամերիկական քարոզիչները, որ շատ բազմութիւն են քրդական երկրներում, այդտեղերի բնակիչներին նմանեցնում են կարմրամորթերին։ Քրդական դէմքի ընդհանուր գծագրութիւնը, ասում է Դիւհուսէն, յիշեցնում է «գիշակեր գազանը», բայց զուրկ չէ գեղեցկութիւնից։ Մանուկները սիրուն են, և թաղառականների նկարչական կարաւաններում ոչ մի պատկեր չէ այնչափ շնորհալի, որչափ թամբերի եռևը, ձիերի գուսակների վրայ ամրացրած թեռների (խուրջինների) միջից դուրս ցցուող փոքրիկ ժպտող գլխիկները[2]։ Կանայք երբէք չեն քօղարկում իրենց երեսը, ունին ընդհանրապէս խիստ կանոնաւոր գծագրութիւն, մեծ աչքեր, արծուային քիթ, խոշոր կազմուածք, երկայն հիւսած մազեր, որի մնաք սև գոյնը գաղնաւորւում է կաշու թեթևակի մրային գունաւորութեան հետ։ Բայց ցաւալին այն է, որ շատ ցեղերում կանայք իրենց ապերախտում են, ինչպէս հնդկուհիները՝ անգկայնելով ուռնգներից ոսկի օղ (նզմայ) (9)։ Ա.յր մարդկանց պէս քաջ և հարկ եղած ժամանակ զէնք գործածող սիրում են նրանք զարդարանքներ և գեղեցիկ զգեստներ, բայց հազիւ է պատահում որ դրանցով զարդարուին, որովհետև այդերը այդ իրենց են վերապահում։ Փուրգը սիրում է թանկագին և խայտաճամուկ զգեստներ, վառ վայրուն գոյներ, բարձր գլխարկներ՝ վարթաթուած շքեղ շալերով։ Իր զգեստի ծանրութեանը աւելացնում է նաև իր գօտու զինուրանը՝ սարճանակներ, դանակներ, եաթագաններ, հրացանն ուսընդունելի անցկացրած, յենուած երկայն և ժապաւէններով զարդարուն սրածայր նիզակի վրայ։ Բայց պատերազմի համար աշխատում է նա

1) Քրդերի գանգային նշանաչափը՝ 0,86, Մէջին նշանաչափը ըստ Ռուենէսա Շանտրի = 0,81։

2) James Creagh, Arméniens, Koords and Turks.

թեթև զինուել։ Հազուադէպ է գալիս քրդական սարերը բամբու եղեգնի ցօղունը՝ նիզակների համար և ընգեղջիւղի կաշի՝ վահանների համար[1]).

Մ. Դիւհուսէն իւր ճանապարհորդութեան ժամանակ՝ քրդական բարձրաւանդակն անցնելիս չնկատեց ֆիզիքական տարբերութիւն քուրդ մեծերի և երկիր մշակող ամբոխի մէջ, բայց հետախոյզ ճանապարհորդները և քարոզիչները, որոնք երկար ժամանակ ապրել են այդ ցեղերի մէջ, միաբան վկայում են, որ քրդական շատ ցեղերում՝ պարսկաստանում թէ Ասիական Թուրքիայում, կայ երկու բոլորովին որոշ գասակարգ, որ հատանականօրէն պատկանում են երկու տարբեր ցեղաբանական բնի (ծագումի)։ Ա յս երկու դասակարգն են՝ էլմանի կամ ասուլէթա (աշիրէթ), այն է՝ աղնուականները և գոռոզները — գիւղացիները։ Չարաւային Քուրդիստանում վերջիններս չորս կամ հինգ անգամ աւելի բազմաթիւ են քան առաջիններն և նկատուած են՝ հատանօրէն մեծ իրաւամբ, իբրև սեռուն մի յարգուած և սորկացած ազգի[2]։ Ասիական Թուրքիայում դրանց անուանում են ռայա, ինչպէս և միւս ճորտերին։ Մի քանի գաւառներում նրանք իսկապէս սորուկներ են՝ պարտական հողը մշակելու իրենց տէրերի համար, որ համարում են կեանքի և մահի իրաւունք ունեցող նրանց վրայ։ Ոչ մի դէպքում այդ ճորտ հողագործը չէ կարող բարձրանալ մինչև պատերազմիկ գասակարգը, նրան մնում է միայն հպատակել ճակատագրին՝ փոխել իւր տէրը, եթէ կռուի ելքը այդպէս է անօրինում։ Իրենց կոլմից ազնուականները կամ պատերազմիկները անպատուութիւն են համարում երկրագործութեամբ պարապել։ Միակ խաղաղական զբաղմունքը, որ ներելի է այս գերակայ մարդկանց՝ առևտրաբուծութիւնն է։ Բայի հաշուութիւնից դրանց համար միմիայն արժանաւոր զբաղմունք են՝ աւազակութիւնն ու պատերազմը, կատարած կամ իրենց հաշուին, կամ ուրիշի՝ իբրև վարձկան։ Մի քանի գաւառներում

1) Thielmann, Streifzüge in dem Kaukasus.

2) Moritz Wagner, Reise nach Persien und dem Lande der Kurden.

մասը։ Մի քանի խորն զգացուած ժողովրդական երգեր, որ գովաբանում են լեռները, գետերը, դիւցազներին, առանց երկարաբարակ բանաստեղծական քերթուածեան, կազմում են ընիկների միակ գրականութիւնը։ Ամերիկական քարոզիչները աւելացրել են դրա վրայ Աստուածաշունչի թարգմանութիւնը և մի քանի կրօնական երկեր (10)։ Քրդերը չունենալով սեփական գրութիւն՝ գործ են ածում արաբական այբուբենը՝ իրենց հարևան պարսիկների փոփոխած ձևով, իսկ կրթուած քրդերը սովորաբար թողնում են իրենց լեզուն և ընդունում են քաղաքակիրթ իրանցիների և կամ թուրքերի լեզուն։ Նրանց «քուրդ» անունն անգամ պարսկական ծագումից է և նշանակում է «գօրել» կամ «հզօր»։ Այս էլ կայ որ թաթարները այս բառը հանում են գուրդ կամ «գայլ» բառից, այս հեգնական ստուգաբանութեամբ վրէժ առնելով մի ժողովրդից, որի արիւնոտ յաւակնութիւններից շատ անգամ նեղուել են։ Քրդերը յաւակնութեամբ համարում են իրենց արաբական ծագումից և կարելի է կարծել, որ իրապէս՝ նրանց մեծաւորների մի մասը պատահաբար լինի այդ յաղթող ցեղին։

Ոչ Բալոլչները, ոչ Ելդուխները, ոչ Չապաշները և ոչ էլ Պատագոնները գերազանցում են քուրդ պատերազմասէր ցեղերին իրենց աւազակաբարոյութեամբ և այդ բնաղդման բաւականութիւն տալու արուեստով։ Մեծաւորը, որի ամրոցը ինչպես մի արծուի բուն ամրում է կրճի բերանին, պահում է աւազակների մի վոհմակ, որ քրքրում են շրջակայ ճանապարհները և նրան են բերում ստացած աւարը։ Չինուած ձեռքով գողութիւնը համարում է գեթ բազանց պատուաբեր գործ, իսկ մաքսանենգութիւնը արհամարհուած է, թէև այս լեռնային երկրներում, ուր հանդիպում են երեք պետութեանց սահմանները, դիւրին կլինէր նրա գործադրութիւնը։ Այս նենգաշահ տուրևառը թուում է քրդերին իրենց արժանապատուութիւնից ստոր։ Այսուամենայնիւ օգուտ են քաղում նրանք այս սահմանագծերի հանդիպումից իրենց արշաւանքները կատարելերելու համար, երբեմն մի երկրում, երբեմն միւսում, այնպէս որ պատասխանատուութիւնն ընկնի իրենց դրացիների վրայ և սահմանը դնեն իրենց և իրենց հալածող զօրքերի

դրանք որոշում են գուբանների՝ կարմիր կրկնոց ուրելով [1]։ Սրանք գուբանների գաւակզրկին պատկանող քրդերից ազատ են, աւելի ծանր ու խոշոր կազմուածքով, դէմքերը ցցուած սուր անկիւններով, փոքրիկ և խոր ընկած աչքերով, միևնոյնպէս գուբանը ունի աւելի քաղցրաբարոյ, աւելի կանոնաւոր և յունական տիպին մօտեցող դէմք [2]։ Հայերի և քրդերի մէջ ապրում են նաև մի քանի չինգանէ կամ ցիգան—բոշա ընտանիքներ, որ ամեն բանով նման են Եւրոպայում գտնուածներին։ և Թերէ-քամէներ, որոնք համարում են թուրք ծագումից, իրենց խօսած բարբառի պատճառով։ Թերէ-քամէները մօտ հարիւր գիւղ ունին պարսկական սահմանի վրայ։

Քրդերի բարբառները ինչպէս և դէմքի գծագրութիւնը շատ զանազան են միմեանցից։ Հեռաւոր ցեղերի լեզուները սաստիկ տարբերւում են։ Կիլիկիայի սարերի մի քուրդ հաղիւ թէ հասկանայ Կոպէտ-դաղի քրդին։ Նրանց բոլոր բարբառների կազմութիւնը էապէս իրանական է, արևելեան ցեղերի լեզուն հարուստ է պարսիկ բառերով, արևմտեան և հիւսիսային ցեղերինը—սրաբ և թուրքաթաթար բառերով և դարձուածքներով։ Մի քանի գաւառներում շատ բազմաթիւ են ասորի բառերը, իսկ Անդրկովկասում քրդերը գործ են ածում նաև ռուսերէն ասացուածներ(?)։ Զազա լեզուն, որ խօսւում է Մուշ և Բալու՝ում, շատ նմանութիւններ ունի Կովկասի Օսերի բարբառի հետ։ Ըստ Լերխ'ի քրդական լեզուն բաժանւում է հինգ բարբառի, որոնցից միևը, քիր-մանջին, խօսում են Մուսուլից արևմուտք գտնուած բոլոր ցեղերը [3]։

Այս բոլոր բարբառները կոշտ են, հնչում են կարծես պայթիւններով, բայց աւելի պակաս չոր և կոկորդային ձայներ են պարունակում, քան թէ հարևան աղգերի խօսած լեզուների մեծ

1) Millingen, Wild Life among the Koords.

2) Rich, Narrative of a Residence in Koordistan.

3) Forschungen über die Kurden und die Iranischen Nordchaldär.

մինչև։ Երբ գործը գալիս է իրենց դէպի հայերն ունեցած ցեղական և կրօնականատելութեան բաւականութիւն տալուն, այն ժամանակ նրանք ինչպէս ձուկը ջրում են և մեծ ոգևորութեամբ պատրաստում են աւազակային ասպատակութիւնների։ Այս վտանգաւոր դրացիներից խոյս տալու համար էր, որ շատ հայկական գաւառներ անմարդաբնակ դարձան՝ գաղթելով Անդրկովկաս։ Բարձրաբանդակների շատ երկրներ, քաղաքներ, հայկական ամբողջ գիւղախմբեր իրրև թէ պաշարուած լինին այս յափշտակիչներից, ոչ ոք չէ յանդգնում պարսէզների սինուից դուրս գալ։ Սարսափելի պատիժներ, որ գործ են դրւում այս աւազակներին պատժելու համար, մինչև անգամ խարոյկն ու ցցահանութիւնը, չեն վախեցնում այս ցեղերին և յաճախ մինչև անգամ զայրացնում են նրանց և գրգռում ահռելի վրէժխնդրութիւնների(11)։ Այսպէս ընկճուած՝ կռիւն սկսւում է մի ուրիշ տեղ, այնպէս որ շատ անգամ թուրք կառավարութիւնը ստիպուած է լինում զինուորական արշաւանքների դիմելու։ Ըստ Պոլակի կայ մի քրդական աղանդ, որ խոստիւ արգելում է կենդանի մարդկանց վրայից յափշտակելը, բայց թոյլ է տալիս մեռածներին կողոպտել, ուստի և աղանդաւորներն իրենց թալլատուած են համարում նախապէս սպանել այն ամենքին, որոնց ունեցածին ցանկանում են։ Խաղաղ ժամանակ քուրդ աւազակները խնայում են մարդկային կեանքը, երբէք չեն սպանում իրենց կողոպտածներին և մինչև անգամ ուտեստ և զգեստ են թողնում իրենց աւարած գիւղերի աղքատներին։ Սակայն անգլիական հիւպատոս Աբոտը, որը փորձեց իրեն պաշտպանել, բրածեծ եղաւ և մերկ ձգուեց Վիաղինի ճանապարհին իւր սարսափահար ծառաների մէջ 1)։

Քրդերն արիւն են թափում միմիայն անձնական կամ ժառանգական անպատուութեան վրէժը լուծելու համար և այս վրիժառութեան արբշռան պարագը կատարելու համար պատահել է որ նրանք յարձակուել են միմեանց վրայ և իրար կոտորել են մինչև անգամ մկկիթների մէջ։ Մեծաւորները, որոնց կուրծքին հպատակում են

1) James Creagh. Արգէն յիշուած։

ցեղերը, հացով մարդիկ են, սեղանները միշտ բաց, և ստացած ընծաներն ու աւարառութեանց եկամտաբեր ծախսում են խնճոյքներում։ Օտարականը շատ լաւ է ընդունւում եթէ ներկայանում է իրրև հիւր։

Քրդերը խմբովին առած՝ և չնայած նրանց պատերազմական բարքին՝ իրենց շրջապատող այլացեղ դրացիներից աւելի ազնիւ են և աւելի հաւատարիմ։ Նրանք ընդհանրապէս պատւում են իրենց կանանց և աւելի մեծ ազատութիւն են տալիս նրանց, քան թէ թուրքերն ու պարսիկները։ Բայց անընդհատ աշխատանքը գառնացնում է կանանց կեանքը և ասում են, որ շատ յաճախ մայրերը կամենալով աղջիկներին խնայել և ազատել այնպիսի թշուառ կենցաղից, որպիսին իրենցն է, ոչնչացնում են նրանց՝ ծնուելուն պէս։ Սակայն քրդերը երբէք չերքէզների պէս, որոնց այնչափ նմանում են ուրիշ կէտերում, չեն ծախսում իրենց աղջիկներին հարեմի կատաներին։ Չնայած բոլոր բարեմասնութեանց՝ քրդերի էութիւնը վտանգաւած է թէ Պարսկաստանի և թէ Թուրքիայի շատ գաւառներում — նրանք պատառում են և տեղ տեղ էլ ձուլւում են շրջապատող ժողովուրդների հետ։ Ձորա գիւղացին, որ բնակչութեան մեծագոյն մասն է կազմում, ոչ մի շահ չունի պահպանելու այն կապը, որով կապուած է ռազմիկ դասակարգի հետ, իսկ այս վերջինս իւր կենցաղավարութեամբ գատապարտուած է ապառուելու, լինելով պատերազմի մէջ ամեն ժամանակ և ամենքի հետ։ Կրօնական առելութիւնն էլ, գանէ Պարսկաստանում, օժանդակում է ազատման գործին, քանի որ քրդերի երեք քառորդը ջերմեռանդ սիւննի են, իսկ իրանցիք՝ իրրև շիաներ, բարեգործութիւն են համարում հալածել և սպանել հերետիկոսներին։

Այս երկրում, որ իրրև ճանապարհ և անցք է եղել ազգերի համար և ուր այնքան ժողովուրդների մնացորդներ խառնուել են իրար հետ, ամեն տեսակ կրօնքներ թողել են իրենց հետքերը։ Պ. Շանտրին մատնացոյց են եղել մինչև անգամ մի՝ բոլորովին կրօն

չունեցող քուրդ ցեղի վրայ Աղերսի ասնջակում: Հայկական և քրդական բարձրաւանդակների ցեղերի մէջ գանւում են ոչ միայն մահմեդականութեան և քրիստոնէութեան բոլոր աղանդները, այլ և հին մազդեզականութեան անգիտակից ժառանգորդներ: Կզըլ—Բաշերը կամ «կարմրագլուխները»—բաւ որ Աղուանիստանում և Արևելքի միւս երկրներում գործ է անւում պարսկական ցեղի մարդկանց համար,—մեծ մասամբ քուրդ են: 400000 աղանդաւորներից[1]) 15000-ը միայն պատկանում են թուրքմէն ցեղին և երկու երեք ցեղ էլ իրենց արաբ են անուանում: Կարմիր-գլուխները, որոնց գլխաւոր հաստատութիւնները բնակւում են միջին Եփրատի աւազանում՝ Գերմիլիի ափերում և վերին Կզըլ—Իրմաքի հովտում, մուսուլմաններից համարւում են իբրև քրիստոնէական աղանդ, որովհետև նրանք խմում են գինի, չեն քօղարկում իրենց կանանց, կատարում են մկրտութեան և հաղորդութեան ծէսերը[2]): Բոլոր աղանդաւորներից աւելի Կզըլ—բաշերն են բացարձակապէս զատւում իրենց դրացիներից—իրաւամբ թէ անիրաւացի, այդ յայտնի չէ—իբրև գիշերային ոճնախմբութիւններ կատարողներ, ուր տիրում է ամենակատարեալ խառնակութիւն սեռերի, որից և առնուած է Թեհրահ Սոնգերան «Լոյս Մարդոներ» անունը, որով կոչւում են նրանք ընդհանրապէս[3]): Կզըլ—բաշերի կրօնական պետը նստում է Դէրսիմում, Մուրատ գետի (Արածանու) մօտ[4]):

Միւս սաստիկ տոհած աղանդաւորները նրանք են, որոնք իրենց հարևաններից անուանւում են «Սատանայ պաշտողներ»: Եզիդի կամ Շեմսիէ քրդերը, թէև շատ սակաւաթիւ՝ հազիւ յիսուն հազար առ առաւելն, ցրուած են ահագին տարածութեան վրայ: Նրանք բնակւում են գլխաւորապէս Սինջար լեռներում՝ Միջագետքի դաշտերից հիւսիս, բայց կան նրանցից նաև վանի և էրզրումի բարձրաւանդակների վրայ, այլ և Պարսկաստանում և Անգլիական Ինդիայում՝ Լահանի արևելեան ափի մօտ[1]): Սրանց մի գաղութը հասել է մինչ իսկ Կոստանդնուպոլսի գիմաց[2]) (12):

Աստուած, անարգաւած ամեն ցեղի և ամեն կրօնի գրայիներից, երբեմն ստիպուած կռուել պաշտպանուելու համար, երբեմն ստիպուած խառնուիլ իրենց հարևանցիների, պատուելով ոտից և հիւանդութիւններից աւելի քան թէ սրից, այնուամենայնիւ յաջողել են նրանք գարերի ընթացքում պահպանել իրենց ազգաւ հատկութիւնները, առանց ունենալու հրէաների նման հաստատուն նեցուկ, որ մատնակարարում է գրաւոր աւանդութեանց գիրքը և անցեալ երկարատև անկախութեան պատմութիւնը: Նրանք ունին միայն իրենց հաւատը և երեկեան կռիւների յիշատակը վաղորդեան կռուի խրախուսելու համար: Նրանք պնդում են, որ իրենց մեծ սուրբը, Ադի Շեյխը, գրեց վարդապետութեան մի գիրք՝ «Ադատատ» կամ «Ադ» անունով, բայց ոչ մի ապացոյց չկայ դրան հաստատող և այդ հնարուած է հաւանականաբար մուսուլմաններին ստիպելու որ իրենցից ակնածեն[3]): Ոչ մի տեղում չեն պահել նրանք իրենց անկախութիւնը: Սինջարի եզիդները, որ քրդեր են արաբների հետ խառնուած և սերունդից սերունդ ապրում էին ինքնաւար հասարակապետութեամբ իրենց ժայռերի ամրոցներում, մեծ մասամբ ջնջուեցան 1838-ին: Ցուխ ատին քարայրերին, ուր նրանց մեծ մասը ապաստանած էր, կանանց ծախերին իբրև սպառակ և ցեղի թշնամի մնայորդները ստիպուեցան տէր ճանաչել մուսուլմաններին:

Եզիդների սիրուած գաւառները այցելող ճանապարհորդների պատմածները իրար հետ համեմատելիս նկատում է այնպիսի տարաձայնութիւն, որ հարկ եղաւ սատանայ պաշտող ազանդաւորներին համարել զանազան ծագումից սերուած: Հայերի հարե-

1) Տայլորը նրանց հաշւում է 250000-ից ոչ աւելի:
2) Taylor, Journal of the Geographical Society, 1868.
3) Peter Lerch, յիշուած;—A. Vambery, Allgemeine Zeitung. 27 գեկ. 1877;—Millingen, Wild Life among the Koords.
4) Ernest Chantre, Tableau des tribus Kurdes.

1) Moritz Wagner, Reise nach Persien und dem Lande der Kurden.
2) Von Hammer—Purgstall;—Carl Ritter, Asien.
3) Frederick Forbes, Journal of the Geographical Society, 1839.

ամանութեամբ նրանք թուում են միևնոյն ցեղաբանական ընդից ծագած և ճշգրիտ գրաւոր հաւաստիքներ յիշատակում են իննեորդ դարի կէսը և մի գիւղ վանի գաւառում, իբրև ժամանակ և տեղի, ուր ծնունդ առաւ այդ կրօնը, առաջ պարզապէս իբրև մի հերձուած հայկական դաւանութեան։ Սինջարում, ընդհակառակն, եզիդներին տալիս են արաբական ծագումն և նրանց կրօնը համարում են իսլամից ծնած։ Պարսկաստանում համարւում են նրանք Գէբրերի սերունդ, թէև նրանց արուած անունն իսկ կապում է նրանց մեսոպեան աշխարհի հետ, քանի որ եզիդը այն ատուած խալիֆն է, Հիսէյնի մահուան պատճառը, Մարգարէի թոռը, որի անունով կոչւում են եզիդները (13)։ Վերջապէս՝ քուրդ ցեղերը չեն զանազանում դրանց տորին գաշտագետիններում ապրող քրիստոնեայ աղանդաւորներից և պատմում են թէ մէկերի և թէ միւսների մասին շատ անհեթեթ պատմութիւններ։ Չկայ գարշութիւն, որ նրանց չվերագրեն, չկայ ցնորապանութիւն, որ չհեղհեղայեն նրանց մասին։ Նրանց ծիսակատարութիւնները տարբերւում են նայելով երկրին. կան որ միրուում են մանուկներին և հանում են խաչի նշանը 1)։ Մի քանի գաւառներում թլփատւում են, մինչդեռ ուրիշ տեղ այդ արգելուած է։ Հայաստանում ապրող եզիդները խստութեամբ պահում են պատերը, մինչդեռ ուրիշ տեղի Դիւապաշտները ազատ են համարում իրենց ամեն ժամանակ ուտելու։ Մի տեղ սիրում է բազմակնութիւնը, ուրիշ տեղ խիստ միակնութիւնը։ Երբեմն մեծ մասը հագնում էին կապոյտ, այժմ այդ գոյնը գարշելի է նրանց և նուիրուած են սպիտակ գոյնին։ Այս էլ կայ, որ այս հալածուած աղանդաւորները սոփսուած են պարսկական հերձուածի հերետիկոսների նման կեղծել և արտաքուստ կատարել պաշտօնական դաւանութեան ծէսերը, այնպէս որ չկայ մի քրիստոնէական կամ մուսուլմանական սուրբ, կուզէ շիա, կուզէ սիւննի, որ նրանք չընդունեն իրբև իրենց սուրբը և չպաշտեն արտաքին ջերմեռանդութեամբ։

Տարբեր ծագման և զանազան դաւանութեան եզիդիների մէջ

1) Azahel Grant, The Nestorians.

միացման կապն է Մելէ-Թաուսի՝ Սիրամարգ կամ փիւնիկ թագաւորի՝ պաշտամունքը (14)։ Նա է Տէր կենաց, Սուրբ Հոգի, Հուր և Լոյս։ Նրան եզիդները ներկայացնում են մի թռչնի կերպարանքով, աքաղաղի գլխով, բազմած ծրագոիլի (աշտանակի) վրայ։ Իւր առաջին պաշտօնեան է Ադուսեակը — անկեալ հրեշտակը — Լուսաբերը, որին յարգելուց չեն զգաստում եզեդիները, չնայելով նրա անկմանը։ Մենք էլ ընկած լինելով, ասում են նրանք, ի՞նչ իրաւունքով անիծենք ընկած հրեշտակին, և որովհետև իրենք էլ իրենց սեպհական վերկութիւնը սպասում են աստուածայինշնորհից, ինչո՞ւ համար Մեծ կայծակնահարն էլ չպիտի նորից իւր աստիճանին բարձրանայ իբրև պետ երկնային Ջօրքերի։ Թերևս նոյն իսկ Մոլոէս Մարգարէն, Մահմէտը, Յիսուս — Քրիստոսը նրա մարմնաւորութիւններն էին, թերևս նա արդէն նորից բարձրացել է երկինքը վերստին կատարելու իւր բարձրագոյն պաշտօնէութիւնը, օրէնսուտ Աստուծոյ հրամանները։ Եզիդիներին սարսափ է սիրում, երբ որ մուսուլմաններից կամ քրիստոնեաներից լսում են անկեալ Հրեշտակապետի անունը հայհոյուած, և ասում են որ նրանց մեծ մահուան պատիժ է նշանակուած այն մարդու համար, ով գործ կածէ «սատանայ» բառը։ Այդ լսողները պարտական են սպանել հայհոյողին և յետոյ անձնասպանութիւն գործել (1)։ Խոյս են տալիս նրանք մինչև անգամ վանկերի այն զուգաւորութիւնից, որ կարող է հայհոյութեան բառն յիշեցնել։ Ջերմեռանդութեամբ կատարում են իրենց քահանաների հրամանները և շատերը ուխտ են գնում Շէյխ Ադիի սրբավայրը, որ գտնուում է Մուսուլի հիւսիսում, Ամադիայի ճանապարհի վրայ։ Նրանց պապը կամ Շէյխ-խանը նստում է բաազլի բերդում, որ գտնուում է մի սեպացած քարաժայռի վրայ, բայց սրբարանը գտնուում է մի ուրիշ գիւղում՝ Լալէշ անունով, ուր ապրած է եղել մի մարգարէ՝ եզիդիների «Մահմէտը»։ Այստեղ են կատարուում մեծ հանդէսները, այստեղ են դուրս հանւում Մելէք Թաուզի սուրբ պատկերը հաւատացեալների երկրպագութեան համար։

1) Taylor, Journal of the Geographical Society, 1868.

Ադաւօտեան, երբ արևը ծագում է Հորիզոնից, ուխտաւորների ամբոխը ողջունում է լոյսը երիցս երկրպագութեամբ [1]: Բոլոր ճանապարհորդները, մինչև իսկ կաթոլիկ և բողոքական քարոզիչները, որոնք ընդունուած են եղել եզիդիների մօտ և որոնք բնականաբար ձգտած է սարսափելին մնաճելով, որ գտնւում են սատանայ պաշտօղների ներկայութեանը, միաբան վկայում են որ եզիդիները բարոյապէս շատ գերազանց են իրենց բոլոր հարևաններից, նեստորականներից, լուսաւորչականներից, սինննիներից և շիաներից: Նրանք վերին աստիճանի ազնուամիտ են, աւերող և սաստիկ՝ երբ պատերազմ է հրատարակուած, իսկ խաղաղ ժամանակ ծայրայեղ ակնածող ամեն բանից, ինչ որ ուրիշինն է: Անսահման հիւրասիրութիւն են ցոյց տալիս օտարականին, բարեացակամ են միմեանց վերաբերութեամբ, քաղցրաբարոյ և հաւատարիմ ամուսնութեան մէջ, շատ ջանասէր աշխատութեան մէջ: Երեկոյեան հանգստի ժամանակ կամ հոգը մշակելիս նրանց երգած բանաստեղծութիւնները երբեմն դիւցազներգութեան կտորներ են, որով իրենց նախնեաց մեծագործութիւնները գովաբանում, երբեմն սիրոյ երգեր, լի զգացմունքով, երբեմն էլ՝ արտասուջ ու մխիթարիչ. «Բոլորին միայն դիակները է հանում գերեզմանից, ակնածում է կեանքից, իսկ վաշխառուների արիւնն է խմում: Նա անջատում է վեճացող հարևացուից: Անիծեալ լինի ով սիրող արտերն է բաժանում: Անիծուի հզօրը, որ գութ չունի: Գերեզմանը չէ տալիս մեռածներին, բայց գերագոյն Հրեշտակը կլսէ մեր աղաղակը»:

Քուրդիստանի բնակիչների մէջ կան նաև քրիստոնեայ ազանդաւորներ: Գլխաւորը դրանցից Նեստորական կոչուածներն են, թէև այդ կոչումը չեն ընդունում նրանք և իրենք իրենց անուանում են «Մեսիական Նազովրեցի», «Աստրիքի Նազովրեցի» կամ պարզապէս՝ Նազովրեցի, և նրանց լեզուն իսկապէս արամեական մի բարբառ է, որ ծագում է հին ասորերէնից (սիրիաք): Քարոզիչ-

2. Niebur; — Garzoni; — Rich; — Ainsworth: — Rousseau:—Forbes;—Perkins;—Wagner.

ները մնաճեղին երբայական լեզուն աւանդել իրենց աշակերտներին, որոնք զարմանալի դիւրաթեամբ, կարելի է ասել թէ առանց սովորելու, հասկանում են այդ լեզուն [1]: Աւելի բազմաթիւ են քան թէ եզիդիները,—թերևս երկու հարիւր հազար [2], և եզիդիների նման սիւռուած են ընդարձակ տարածութեան վրայ: Հաւանականաբար սրանց ազանդին են պատկանում Զինաստանի նեստորականները, որոնց այժմ միայն յիշատակն է մնացել, նաև Մալաբարի ծովափի Նասրանի—Մոպլահները, որոնք ասորերէնն են գործ ածում իբրև սրբազան լեզու և իրենց պեա են համարում Բաբիլոնի պատրիարքին, որ նստում է Մուսուլում: Յայտնի չէ թէ ւր ժամանակ և ինչ պատճառով Պարսկաստանի և Թուրքական Քուրդիստանի նեստորականները թողին իրենց ասորական հայրենիքը՝ գնալու և հաստատուելու համար այլասեր, այլալեզու և այլակրօն ժողովուրդների մէջ: Այս անցքը անկասկած առաջ է հիջրէթից: Երբ որ մուսուլմանները տիրեցին Միջագետքին՝ իրենց նեղութիւն չտուին յարձակուելու վան և Ուրմիա լճերի միջև գտնուած Զուլամերկ լեռնային գաւառի վրայ, ուր նեստորականներն ունէին ամրոցներ և բազմամարդ հաստատութիւն: Այս իրապէս անկախ քրիստոնեաներն իրենց դրութիւնն համարում էին անվտանգ, սակայն 1843 ին շրջակայքի մուսուլման քրդերը, իրախուսուած թուրքական կառավարութիւնից, թափուեցին նեստորական գիւղերի վրայ, պաշտպանուող այր մարդկանց սրի անցկացրին, կանանց գերեցին, մանուկներին թլփատեցին և բռնութեամբ դարձրին մահմէտական, ապագայ թշնամի՝ իրենց տեսկական ընտանիքին: Այժմ Թուրքիան չունի Զուլամերկի քրիստոնեաներից աւելի հնազանդ ժողովուրդ: Շրջակայ քրդերի նման նրանք էլ բաժանւում են երկու դասակարգի՝ ազնուական կամ «ուէչօ (աշիրէթ) և շինական, որ շատ սակաւ է տարբերւում տորկից: Քահանաների մի ամբողջ նուիրապետութիւն կառավարում է նրանց՝ Մար-Շիմուն կամ «Տէր Սիմոն» կոչուած քահանայ—թա-

1) Ernest Renan, Association scientifique de France, 1878.
2) Millingen, Wild Life Amongs the Koords.

գաւառի պատրիարքութեան ներքոյ։ Պատրիարքութեան յաջորդութեան կարգը անցնում է քեռուց քուերորդուն։ Ապագայ պատրիարքի մայրը, երբ արդէն յղի է՝ պարտական է բանջարակերութեամբ բաւականանալ, ինչպէս որ ապրում է նաև բոլոր բարձր հոգևորականութիւնը։ Եթէ յղացածի յոյսը զուր դուրս գայ և աղջիկ ծնի, այդ աղջիկը դաստապարտւում է կուսակրօնութեան ցմահ[1]։

Նեստորականները շատ չեն հետաքրքրւում այն աստուածաբանական նրբութիւններով Յիսուս—Քրիստոսի մարդկային և աստուածային բնութեան վերաբերութեամբ, որի հետևանքն եղաւ Նեստորի հերձուածը։ Բայց ծիսակատարութեանց տարբերութիւնը բաւական եղաւ ստեղծելու դարաւոր ատելութիւն նրանց և ուրիշ քրիստոնէական աղանդների միջև։ Բաղդէացիք, այն է՝ Միջագետքի և Զագրոսի քրիստոնեաները, որ ապրում են մեծ մասամբ տորին երկրներում, Դիարբէքիրի շուրջը և Բաղդադից հիւսիս, տասնըվեցերորդ դարից Ռոքանուաճ են, գոնէ պաշտօնապէս, Հռոմէական կաթոլիկութեան հետ։ Սակայն պահպանել են իրենց նախկին գաւանութեան զանազան արարողութիւնները և քահանաները ամուսնացած են, բացառութեամբ բարձր հոգևորականութեան։ Բայց կան կաթոլիկ քարոզիչներ, որ աշխատում են քաղդէական արարողութիւնը հետզհետէ մոռեցնել Արևմտեան եկեղեցու արարողութեան։ Իսկ այն նեստորականները, որոնք հաւատարիմ են մնացել Ասորիքի նաղովրէական դաւանութեանը, գլխաւորապէս 1831 թուից սկսած, գտնւում են ամերիկեան քարոզիչների ազդեցութեան տակ։ Այս քարոզիչները մօտ վաթսուն հաստատութիւն ունին այդ երկրներում, օժանդակում են տեղական քահանաներին ռոճկով և ուսումնարանների պահպանութեանը նպաստում։ շատ անգամ էլ ազդու կերպով պաշտպանում են լեռնական քրիստոնեաներին թուրքերից և քրդերից։

1) Eugène Boré, Mémoires d'un voyageur en Orient;—Milinngen, արդէն յիշուած։

Քաղաքները համեմատաբար շատ սակաւաթիւ են այս հայկական և քրդական լեռնային երկրներում, որ այնչափ յաճախ ամայացած են աւարառու յաիշտակութեամբ և մեծամեծ պատերազմական արշաւանքներով։ Շատ անգամ էլ սոքա են վրայ հասնում այս բազմաչարչար աշխարհին։ Երբ որ անձրևի պակասութիւնը կամ ուրիշ որ և է պատճառ զրկում է երկրագործներին սովորական հունձքից, այն ժամանակ մնում է նրանց միմիայն դաշտերի խոտն ուտել, հայ շինել ճառի կեղևներից և խոզկաղինիներից, որովհետև ամենևին միջ չունին որ ցորեն գնեն մերձաւոր նահանգներում, որոնցից անջատուած են դժուարանցանելի կածաններով։ Այն թշուառները, որոնք սովամահ չեն լինում, դիմում են մերձակայ ցեղերի մօտ մուրացկանութեան։ Այդպիսի ժամանակ ճանապարհորդն անցնում է գիւղերով, որոնք ամբողջովին լքուած են և ամայացած, և քաղաքներով, ուր փլատակները աւելի մեծ տեղ են բռնում, քան թէ շէն տները։ Ժողովրդի մի մասը կէս—թափառական կեանք է վարում, անցնելով ձմերոցներից ամառնային արօտատեղերը։ Ձմերոցներում այս հովիւների կանգնեցրած թշուառ հիւղերը շատ շուտով միախառնւում են շրջապատի հողի հետ։ Քուրդ հովուի ամառնային բնակարանը՝ վրանը, անհամեմատ աւելի վատաւոր տեսք ունի քան թէ ձմեռնային թշուառ խրճիթը։ Սև թաղիքի կոնուսը, որ անջատում է մարգագետնի կանաչ տարածութիւնից, կանգնած է 5-6 մէտր բարձրութեամբ և կապկապուած է ձորի երկայն չուաններով շրջանաձև գետինը խրուած ցցերին։ Այն կողմը, որտեղից ամենահեռաւոր տեսարանն է բացւում լեռնային հորիզոնի վրայ, վրանի փեշերը բարձրացած են լինում մարդու կրկին հասակի բարձրութեամբ։ Վրանը յեցուած է լինում շեղ հեծանների վրայ, որոնց սուր ծայրերի մօտ թաղիքը դրսացաձև ծալքեր է ստանում։ Վրանի լայն բացուածքով երևում են ներսում աշխատողները, երբեմն կէս ծածկուած տուների մէջ, երբեմն ամբողջովին լուսաւորուած՝ ներքին մուխ յատակի վրայ։ Թէ հայերի և թէ քրդերի ձմեռնային բնակարանները կէս գետնափոր խրճիթներ են, տանիքը հողածածք, հազիւ որոշուող գետնից։ Նոյն խոտերն են բուսնում թէ տանիքի և թէ

շրջակայ գեղերի վրայ, նոյն ծաղիկներն են բայւում այդ երկու տեղումն էլ գարնանը և ամառը։ Եթէ չոր աթարի կանգուն բարդերը չերևէին տների մօտ, կարելի էր գիւղի վրայով անցնել, առանց իմանալու թէ գիւղ կայ։ Մի քանի քարդ զօրեղ մեծաւորներ քարաշէն մեծ տներ ունին, մինչև անգամ մարմարեայ վառարաններով, բայց միշտ այնպէս բաժանուած շինութիւնը, որ տանտիրոջ աչքի տակը լինին ձիերը՝ նրա վառքն ու ուրախութիւնը։ Մեծ դահլիճը բաժանուած է լինում ախուռից կէս մարդաչափ պատով, որի վրայ հանգչում են տանիքը պահպանող սիւները [1]։

Բաթումի և Ճորոխի գետակից արևմուտք, ռուսաց նոր սիրած հողերից սկսած՝ ծովագնացը 150 քիլոմետր է անցնելու ծովեզերքի երկարութեամբ, մինչև որ Հանդիպի քաղաքի կամ նշանաւոր գիւղաքաղաքի։ Հին յունական մի գաղութ, որ երբեմն կրում էր Ատաիկէի մայրաքաղաք Աթէնքի անունը — Ատինան՝ մի քանի ցրիւ ընկած տներ ունի և մօտն էլ պարիսպների աւերակներ, որին տալիս են Էպի—Տիրաբզոն կամ «Հին Տրաբիզոն» անունը։ Ոիզէն փոքրիկ նաւահանգիստ է, փոքրիկ ամրոցով, յաճախուած նաւերնէր, կազին և «Տրաբիզոնի» մի տեսակ դիմացկուն գործուածք առնող վաճառականներով։ Ա յս կողմը գործում են շրջակայքի լաղ կանայքը։ Օֆ և Սիւրմէնէն խրճիթների խմբեր են, որոնց առաջ կանգ են առնում վարքաներ (բարկաս)։

Տրաբիզոնը, յոյների Տրապէզոսը, Օսմանլիների Տիրաբզոնը, փոքր Ասիայի հին քաղաքներից մէկն է։ Կայ քսան և վեց դարից աւելի, որ Սինոպից մի յոյն գաղութ եկաւ և հաստատուեց այս տեղում։ Տրաբիզոնը Պոնտոսի մայրաքաղաքն էր, միջին դարում էլ կայսրութեան կեդրոնատեղի դարձաւ, երբ որ տասներեքերորդ դարի սկզբում Ալէքսիս Կոմնէնը հիմնեց Բիւզանդիոնից անջատուած իւր թագաւորութիւնը, որ երկու և կէս դարից աւելի կատեցրեց յաղթող մահմետականների ալիքը և որի փառքը այնչափ երկար ժամանակ ձիաւորութեան (ասպետութեան) վիպա-

1) Millingen, Wild Life among the Koords.

սանութեանց մէջ վառաբանուեց։ Արևմուտքի բանաստեղծները սիրում էին կրկնել Տրաբիզոնի պերճահնչիւն անունը։ Կոստանդնուպոլիսը ընկած էր արդէն, մինչդեռ կոմնէնների կայսրութեան մայրաքաղաքը գեռ դիմանում էր։ Իսկ երբ սա էլ ընկաւ՝ դարձաւ մի նահանգական քաղաք, պահպանելով սակայն բաւական կարևորութիւն, իբրև Պարսկաստանի վաճառատեղին Սև ծովի վրայ։ Ա յս քաղաքն է եղել միշտակէս Իրան գնացող վաճառականների և նրանց վաճառքի ընդման նաւահանգիստը, ուր բերուել են նաև Պարսկաստանից Արևմուտք ուղարկուած ապրանքները կարաւաններով։ Քաղաքի նաւակայքը անկասկած շատ փառն է և անյաջող եղանակին նաւերը ստիպուած են գնալ աւելի արևմուտք՝ մրգատաններով շրջապատուած շնորհագեղ Պլատանայի ածլև կանգնելու։ Տրաբիզոնը երկրի ներսերը խոր մտնող հովտի բերանում չէ, իսկ Գէկիրմանի ձորը (Ջալացաձոր), որ Տարաս—արևմտեան կողմում է լեռների պատուարը, մեծ նեղմ չէ տալիս վաճառականութեան։ Հարաւում՝ դէպի սարաւանդը բարձրացող ճանապարհը անցնում է դժուար մատչելի տեղերից, շատ անգամ խափանուում է ձիւնով, ենթակայ է ցուրտ հողմերին, սակայն այդ է ամենակարճ և ամենագիւրին ուղին, որ կապում է Սև ծովը Ատրպատականի բարձրութեանց հետ՝ Բայազիդի լեռնանցքով և Էրզրումի դաշտաւայրով, միանգամայն լինելով բուն պատմական ճանապարհ և Առաջաւոր Ասիայի՝ Ինգոսի և Եփրատեան պանոսի մէջև՝ գլխաւոր առևտրագիծը։ Մեր օրերում՝ Տրաբիզոնն ու Էրզրումը կապող դժուարակոխ շաւիղը փոխանակուեց 310 քիլոմետր կառագնաց ճանապարհով, որի շէղութիւնը մի մետրի վրայ՝ ոչ մի տեղ 10 հարիւրամետրից աւելի չէ, և որտեղով կարող են անցնել նաև թնդանօթաձիգ սայլերը։ Սակայն մի խոստմնալի ճանապարհ՝ Բաթումի և փոթու նաւահանգիստներում սկսուող երկաթուղին, որ գնում է դէպի Բագու և Հասնելու է, ուշ թէ շուտ, Պարսկաստան՝ Կասպիական ծովախոր, արդէն սպառնում էր խլել Տրաբիզոնից տուրևառի մեծագոյն բաժինը։ Ֆրանսիայից ուղարկուած գրեթէ բոլոր շաքարը, Անգլիայի գործած ուաձքներն ու թէյը Էրզրումի ուղին թողին Անդրկովկասի ճանապարհը բռնե-

լու համար։ Պարսկական արտահանութիւնները էլ նշանաւոր կերպով պակասել էին, գլխաւորապէս ապահովութեան պակասութեան և քրդական երկրով անցնող ճանապարհների վատ դրութեան պատճառով[1])։ Սակայն ռուս կառավարութեան կողմից անդրկովկասեան արամանցութեան (տրանզիտ) արգիլելը իբրև հետևանք պիտի ունենայ Էրզրումի ճանապարհը նորից գործնէութեան վերակոչել։ Տրաբիզոնի և Պարսկաստանի միջև բանող կարաւանները ունենում են երբեմն մինչև հազար հինգ հարիւր գրաստ։

Դեռ կանգուն է Տրաբիզոնի պարիսպների տրապէզը (չորեքկողմեան սեղան), որից քաղաքն առաջաւ իւր անունը։ Շատ անգամ վերանորոգուած առաջին պատուարների հետքը դեռ երևում է նախկին պարսպում, որի աշտարակները ծածկուել են բաղեղով։ Սարաւանգի կառարին, երկու խորխորատի միջև, կանգնած է մի ամրոց, որ միանում է մերձակայ սարին՝ Բոզ-Թէփէ կամ «Գորշ բլուրին»-մի քանի մետր լայնութեամբ պարանոցով։ Գորշ բլուրը կազմուած է խաւաքարից (տրաւերտին) և հրաբխային մոխրից։ Կոմնէնների պալատը, որի արևմտեան պատը է միանգամայն և բերդինը, կանգնած է սրածայր բլրի վրայ՝ խոր և կանաչագեղ բլրի գլխին, որտեղով անցնում է պատուարների օձապտոյտ գիծը։ Ծովի կողմից ամրութիւնները վերջանում են մի աւերակ դղեակով, որի քանդակուած քարերը ալիքների առակ խութ են դարձել, և ահա այս բոլորն է մնացորդաբէս, ինչ որ մնում է հին Տրապէզոնից։ Թրքական քաղաքը շինուած է ամիիրթատրոնի ձևով բլուրի լանջքին և բարձրացնում է վեր իւր նկարչին տները, մինարէները, ծառաստունկները, իսկ ներքեւում՝ ծովեզերքում՝ կանգնած են կայքները (մակոյկ) և ծովափի մթերանոցները, որոնց սիւնազարդ ճեմելիքները ծածկուած են ցանցերով և ուռկաններով։ Պարսպից

1) Տրաբիզոնի տուրիստական շարժումը 1881-ին.

Ներածութիւն. 43 329 555 ֆր. որի 16 744 110 Պարսկաստանի համար.
Ելքածութիւն. 24 932 950 » » 3 797 390 Պարսկաստանից.

Գումար. 68 262 505 ֆրանկ 20 537 500 Պարսկ. համար տրանզիտ։
(Querry, Bulletin consulaire fransçais, 1882).

դուրս՝ մի բլրի կատարին, որն արևելքից իշխում է քաղաքին, գտնւում է նոր թաղը՝ Դեաւրը—Մէյդան կամ «Անհաւատների Հրապարակը», որտեղ բնակւում են հայերը, յոյները և եւրոպայի վաճառականները։ Այս տեղումն են կանգ առնում երկրի ներսից եկող կարաւանները և այնպէս է պատահում, որ հարիւրաւոր ուղտեր են խմբուած լինում մեծ հրապարակի վրայ։ Փոստատար շոգենաւերը ամենայն օր այցելում են այս քաղաքը, որ հետզհետէ փոխում է իւր կերպարանքը և ծովափի միւս նաւահանգիստների տեսքն է առնում։ Եւրոպական տարազով մարդիկ կամաց կամաց սիրում են մեծ փողոցներին, յետ մղելով նկարչական զգեստներ հագած տեղացիներին դէպի կողմնական փողոցները։ Խառնիճաղանջ բնակչութեան մէջ պարսկական գաղութը բաւականին մեծ տեղ է բռնում և մատակարարում է քաղաքին գրեթէ բոլոր արուեստաւորները։ Դերձակները հայեր են, իսկ թուրքերը, ինչպէս իրենց տիրած բոլոր երկրներում, բացի ատաճանաւոր (պաշտօնեայ) լինելուց՝ զբաղուած են ամենաստորին գործերով. քաղաքն են ածելում, բեռներ են կրում, որսում են խոշոր ձուկը, անձրևվի (անշա, անշուա) մի տեսակը, որից մեծ քանակութեամբ ուտում է հիւսիսային Անատոլիայում։ Քաղաքը կանաչ գօտով պարփակող պարտէզների մրգերը և մի քանի տեսակ կոպիտ խեցեղէն, ահա Տրաբիզոնի մնացած միւս բերքերը։ Հարաւում՝ մի բարձր դարաւանդի վրայ՝ մի ահագին քարանձաւում, որ բացուած է կոլաս-դաղի լանջքին, ամեն տարի ուխտաւորը հազար յունադաւան ուխտաւոր այցելում են օգոստոս ամսում Սումելասի Պանագիան կամ Մխիթարանան, այն է՝ «Մայր Մարիամը»։ Թուրք կանայքն անգամ գալիս են բազմութեամբ նրա օգնութիւնը խնդրելու ջերմախտի և ամլութեան դէմ։ Նա կարող է հեռացնել ամեն պատուհաս, բայց մանաւանդ զօրաւոր է մորեխի դէմ։ Պափլագոնիայից մինչև կապադովկիա յայտնի է նա «Մորեխների Պանագիա» անուամբ[1])։ Այս վանքն ունի ահագին

1) Fallmerayer, Fragmente aus dem Orient.

կալուածքներ Սև ծովի հարաւային ափամերձ, Տրապիզոնի և կոստանդնուպոլսի միջև։

Հին յունական քաղաքից արևմուտք ուրիշ անուններ յիշեցնում են թէ սրչափ հելլենական ազդեցութիւնը գերակշռող էր Պոնտոսի ծովափում։ Տիրէբոլի կամ Տարաբուզլուսը է մին այն բազմաթիւ Տրիպոլիներից կամ «եռաքաղաքներից», որոնց պարիսպների մէջ ապաստան էին գտնում եռայեղ բնակիչներ։ Նա Տրապիզոնից այն առաւելութիւնն ունի, որ գտնւում է խառնուած առատաջուր գետի բերանում, թէև այս գետը փակուած է նեղ ափամերձների մէջ, այնպէս որ նրա ընթացքով բարձրանալու համար հանապարհ չկայ։ Իսկ Գիւմիշ-խանէով երկրի ներսերը թափանցող ուղին գեռ աւելի էլ լեռնային է և դժուարանցոյց քան Տրապիզոնինը։ Աւելի հեռուն՝ ծովափում երեւում է Կիրասուն փոքրիկ նաւահանգիստը, որ յունական գաղութ է, նախկին Կերասոսը, կիլլոպեան պատերով։ Ա յատեղից էր որ Լուկուլլոսը Հռոմ տարաւ առաջին կեռասենին։ Յատի նախկին անունը՝ Հայերէն կեռաս տպաւորոյց է, որ քաղաքը ծառից է առել իւր անունը[1]։ Տուրնըֆորի ճանապարհորդութեան ժամանակ Կիրէսունը շրջապատուած էր կեռասենու անտառներով, սակայն այս երկրից գլխաւոր արտադրութիւնը կաղինն է։ 1881-ին բնակիչները 3500 տակառաչափ կաղին ծախեցին մէկ և կէս միլիոն ֆրանկի, որի մի երրորդ մասը գնեցին ռուս վաճառականները, որ կրում են կաղինը առագաստաւոր նաւերով։

Տրապիզոնի և Էրզրումի միջև գլխաւոր իջևանատեղին Բաբերդն է (Բայբերդ, Բայբուրտ), շինուած ձորոխի աւազանում, նրա արևելեան վերին ճիւղի վրայ, կոպ-գագի ոտքում։ Սա անակների և վլաուների մի կոյտ է՝ նման Թրքական Հայաստանի միւս քաղաքներին, բացի Էրզրումից։ Մի նշանաւոր բերդ՝ Սելջուկներից շինուած՝ իշխում է քաղաքին։ Աւելի նշանաւոր է Սերճակայ մի ուրիշ բերդ՝ «Գէնիլ-կալէ» կամ «Ջենովայիների ամրոցը», շինուած հին ժամանակ Թալազի վաճառականներից՝ Մարասանի ճանա-

1) Kiepert;—Carl Ritter, Asien, vol. XVIII.

պարհի վրայ[1]։ Բաբերդի շրջակայքի արծաթի հանքերը այլ ևս չեն մշակուում, ինչպէս և Գիւմիշ-խանէի կամ «Արծաթի տան» հանքերը, որ գտնուում են աւելի արևմուտքում՝ Խարշուրտի վերին աւազանում, մի գահավէժ ըղրի վրայ, շրջապատուած Հատաքարի (գրանիտ) կրկէսից։ Դեռ այս դարի կիսում՝ այս արծաթաբեր շերտերը Օսմանեան կայսրութեան ամենից արդիւնաւորն էին, բայց մասամբ ջրի սակաւն եղան[2]։ Գիւմիշ-խանէն ամենալաւ հանքային գաղրոցն էր և կոստանդնուպոլսի ճարտարապետները այստեղ էին գալիս իրենց արուեստը ուսումնասիրելու։ Մի քանի քիլոմետրի չափ Բաբերդից հարաւ-արևելք գտնուող պղնձի հանքերը, որոնց գլխաւոր հորը 400 մետրից աւելի խոր էր, ղբաղեցնում էին 500 բանուոր[3]։ Ձորոխի ամբողջ հովիտը լիքն է ամրոցներով, եկեղեցիներով, քաղաքների աւերակներով։ Նախկին Սպերը (Իսպիր) վլաուակների մի շեղջ է։ Թուրքերի ձեռքը մնացած հովտում ոչ մի քաղաք չկայ, իսկ ոտորին հովտում, որին ոռոգիչ ուռւանները, գտնուում է Արդուին բազմամարդ քաղաքը։ Ա յս ամբողջ երկիրը կարելի էր փոխել մի ահագին պարտէզի, ինչպէս որ են Թորթումի գետի կողմնական հովտի գիւղերը։ Թորթումի գիւղաքաղաքն է մասնակարարում Էրզրումին պտուղներ և բանջարեղէն[4]։ Ա յտեղից մօտ՝ լեռներով շրջապատուած մի բարձրաւանդակի վրայ կանգնած է Լէէք-վանք (Աւազ) եկեղեցին կամ վանքը, որ վրաց արուեստի ամենանշանաւոր յիշատակարանն է։ Դեռ ձորոխին չհասնուած՝ գետի վերնակողմում՝ Թորթումի հովիտը փակուած է մի փղուածքով, որից ջրերը յետ են խոխել և մի լիճ կազմել 105 «կանդուն» խորութեամբ։

Էրզրումը պահպանել է մասամբ իւր նախկին նշանակութիւնը իբրև Թուրքիայի վերջին բերդաքաղաք ընդդէմ ռուսական արշաւանքների և իբրև կարաւանների հանդիպման կէտ Հայաստանի

1) Wagner, արդէն յիշուած։
2) Hommaire de Hell, Voyage en Turquie et en Perse.
3) Hamilton, Researches in Asia Minor.
4) Deyrolle, Voyage dans le Lazistan et l'Arménie, Tour du Monde, 1-er Sem. 1876.

լեռներում։ Ա.յստեղ են հանդիպում՝ միմեանց Տրաբիզոնի, Բաթումի, Սըւազի, Դիարբեքիրի, Խաղդադի, Թէհրանի և Թիֆլիսի ճանապարհները։ Տրամանցական (տրանզիտային) գլխաւոր վաճառականութիւնը՝ Սև ծովի և Պարսկաստանի միջև, անդրկովկասեան երկաթուղու բացումով պակասեց և ռուսական երկու արշաւանքների ժամանակ՝ 1829 ին և 1877-ին՝ ամենաճարտար և արուեստագէտ հայ բանուորները, մասնաւորապէս մետաղագործները, թողին քաղաքը յաղթողներին հեռևելու համար։ Զրկուած իւր վաճառականութեան և աշխատանքի մեծ մասից, վտանգուած նոր արշաւանքների և մօտալուտ քաղաքական փոփոխութիւնների սպառնալիքից՝ Էրզրումը Թուրքական Ասիայի այն քաղաքն է, որ ամենից շատ վնասուեց և ուր աւերակները աւելի մեծ տարածութիւն են բռնած։ Ա.յդ քաղաքում բնակուելը վտանգաւոր է համարուած օտարականների համար, ձմեռնային խստութեան պատճառով, և ով որ կարող է՝ աշխատում է շուտով հեռանալ այդ տեղից, աւելի դուրեկան բնակատեղի ընտրելու համար։ 1960 մետր ծովից բարձր, շինուած մի ճախճախուտ և հովանազուրկ դաշտում՝ Էրզրումի վտղոցները տարուայ կիսից աւելին խափանւում են ձիւնով, որ հողմը փոթորկելով կուտում է բնակութեանց շուրջը, այնպէս որ դռնէ—դուռ յարաբերութիւնը պահպանելու համար մարդ ստիպուած է ամբողջ շաբաթներ թիով բանել։ Ա.րուարձանների քարաշէն կամ հողաշէն խրճիթների մէջ բնակուող թշուառները ծածկում են իրենց որջի միակ երդիկը, որ ցրտից չմեռնեն։ Ձանապարհորդների մեծ մասը ամառը տեսնելով Էրզրումը չեն կարող երևակայել թէ ձրչաի ախուր է նրա տեսքը սառնամանիքների ժամանակ։ Նրանք հիանում են տեսնելով լեռների գեղեցիկ ամիսիթատրոնը, ձիւնապատ հրաբուխների կանոնաւոր կոները, բլուրների ծաղկաւէտ կողերը և առտուան պարարտ արօտները, որտեղ գիրանում են կարաւանների գրաստները։ Դաշտի հողը՝ որ կազմուած է Սիշչիկի խառնարանից դուրս նետուած մոխիրներից՝ խառն գետային և լճային սիկահողի (ալիւվիոն) հետ, չափազանց բերրի է, որով փոխարինւում է ձմեռնային կլիմայի ձախողութիւնը։ Չունչը սովորականից շատ առատ է, այնպէս որ Էրզրումի

դաշտը պէտք է լինի լուսաւորութեան առաջաւոր կայան Թուխառական ժողովուրդների մէջ։

Ա.յն բլուրը՝ որի վրայ կանգնած է դարերից ի վեր Էրզրումի բերդը՝ բացայայտ ցոյց է տալիս թէ ինչ պատճառով այդ տեղն ընտրուեց իբրև ռազմագիտական կեդրոն։ Նախկին հայկական Արզն (Արծն) քաղաքը, ուր դիմում էին կարաւանները իրենց ապրանքները փոխանակելու համար, գտնուում էր աւելի դէպի արևելք։ Թէոդոսի ամրոցը կամ Թէոդոսիոպոլիսը, որ շինուեց հինգերորդ դարի սկզբում նախկին Կարնոյ-քաղաքի տեղը, նոյնպէս կոչուեց Արզն, բայց «Հռոմէացիների» այն է՝ բիւզանդական յոյների Արզն, որ է՝ Արզն-էր-Ռում(15)։ Փոչ քաղաքներ այնչափ անգամ պաշարուել և առնուել են որչափ Էրզրումը։ Երբեմն բիւզանդացիների բերդաքաղաք, երբեմն պարսիկ Սասանեանների, Արաբների, Մոնգոլների, Թուրքերի, Ռուսների ձեռքում, առնուեց և վերառնուեց նա բոլոր ազգերից, որոնք ընդհարուեցին Ա.ռաջաւոր Ասիայի այս բարձրաւանդակում։ Ամենքին պատկանեց այս քաղաքը, բացի այն ազգից, որի հողի վրայ է գտնուում։ Մինչև անգամ ռուսների առաջին արշաւանքից առաջ՝ Էրզրումի հայերը կրում էին ամենադառն անարգանք Օսմանցիներից։ Ա.յժմ նրանք միայն, որոնք վայելում են ռուսական հիւպատոսի հովանաւորութիւնը կարող են անպատիժ կերպով հակառակել Թուրքին, սակայն առանց կարողանալու ակնկալել ուրիշ ւիմակ, բացի տէրը փոխելուց։ Պատերազմների փոփոխումներին նայած այս քաղաքի բնակչութիւնն էլ տարօրինակ կերպով փոփոխուել է։ 1829 պաշարումից առաջ, ասում են, Էրզրումը 130000 բնակիչ է ունեցել, յաջորդ տարին այդ թիւն իջաւ 15000 հոգու։ շներն են եղել շատ անգամ ամայի թաղերում կենդանի շունչ։ Քաղաքը չունի այլ և այնպիսի նշանաւոր յիշատակարաններ, բացի նկարչական, գորշագոյն խանձաքարեայ (բազալտ) միջնաբերդից և «երկու Մինարէ» մզկիթից, որի տանիքը ծածկուած է կիսաւածանկար (մինայ) յախճապակով, պարսկական ոճի համեմատ։ Տելական արհեստներն են միմիայն կաթսայագործութիւն և կաշեգործութիւն, իսկ գինագործութիւնը, որ երբեմն մեծ նշանակութիւն ունէր, այժմ զբաղեցնում է բանուորների մի

փոքրիկ թիւ։ Հանքերը այլ եւս չեն մշակուում, թէև այս երկիրն է ըստ աւանդութեանց երկաթագործների հայրենիքը, այստեղ էին ապրում Տիբարենացիք և Խալիբները, որոնք գիտէին երկաթից և արոյրից (բռոնզ) զէնքեր և գործիքներ պատրաստել, մինչդեռ հարևան ցեղերը դեռ եւս քարի գործիքներով էին բաւականանում[1]։

Էրզրումից դէպի արևմուտք ճանապարհը իջնում է՝ հետևելով վերին Եփրատի կամ Սև ջրի ափին՝ և հասնում է շուտով Կիճա ջերմուկը, որ Հայաստանում ամենից շատ յաճախուածն է։ Ցետոյ կարում է բազմաթիւ և բազմամարդ հովիտներ, մանելով երբեմնակի նեղ կրճերի մէջ, բայց հասնում է քաղաքի միմիայն մօտ 200 քիլոմետր հեռաւորութեան վրայ՝ մի պողպաբեր գաշտում, ուր հոսում են Եփրատի օժանդակ բազմաթիւ վտակները։ Երզնկան կամ Երզնկան (Երիզա) մի հինաւուրց քաղաք է։ Ք.ր.հ.տոսի Թուսկանից առաջ Երէզը (Երիզա) համբաւաւոր էր Հայաստանում իբրև Անահիտ դիցուհու սրբավայր, որին Հելլէնները շփոթում էին Արտեմիսի հետ, որն և գարձաւ Հռոմէացիների Դիանան, և, վերջապէս, քրիստոնեաների Պանագիան։ Անահիտի նախկին տաճարը փոխարկուեց եկեղեցու՝ յանուն կուսին։ Էրզրումից առաջ Երզնկան էր այս Հայք Նահանգի (Բարձր Հայք) գլխաւոր քաղաքը։ Հայքից առան Հայկեանները կամ Հայերը իրենց անունը։ Երզնկայի շրջակայքի վերին հովիտներում գանւում են մի քանի «սրբազան լեռներ», որոնք չափազանց յարգուածեն։ Երբ որ Մարկո Պօլօն այցելեց Երզնկան, սա մի մեծ քաղաք էր, ուր գործւում էին աշխարհի ամենալաւ «bougueran» հաւանականապար՝ ամենալաւ մուշլինը։ Այգ տեղ էին նաև «աշխարհի ամենալաւ ջերմկային բաղանիքները»։ Այգ ջերմուկները չկան այժմ, բայց կարող է պատահել որ երկրաշարժը տեղափոխած լինի նրանց, մանաւանդ որ այս երկիրը շատ է վնասուել շարժերից։ 1667-ին մի ցնցում շրջեց քաղաքը՝ կուլ տալով բնակիչների կէսը։ Երզնկան գանուելով 1366 մետր բարձրութեան վրայ ծ. մ. վայելում է անհամեմատ լաւ կլիմայ քան

1) Carl Ritter, Asien, vol. X; — Fransçois Lenormant, Les Premières Civilisations.

Էրզրումինը և իբր հարուստ գաշտերը բարեխառն գօտու մշակութիւն ունին։ Մրգատուտանիներ, այգիներ, անտառատանիներ շրջապատում են քաղաքը։

Երզնկայիչ ներքև ժայռերը մօտենում են գետի հունին և Եփրատը մտնում է նեղուցի մէջ, այնպէս որ ճանապարհը չէ կարող գետին հետևել։ Նեղուցի պատերը գրեթէ ուղղահայեաց են և երեքհարիւրից մինչև հինգ հարիւր մետր բարձրութեամբ։ Նեղուցի սկզբին՝ սարաւանդի կատարի և կողերի վրայ՝ գտնւում է հին կամախ քաղաքը, որ շրջապատուած է հատուածեալ պարիսպներով և տեպատած քարաժայռերով։ Այս՝ մի ժամանակ յարձակումներից անառիկ քաղաքամն էր, որ հայ թագաւորները ներկայ թուսկանութեան սկզբին ունէին իրենց ամենագեղեցիկ տաճարները, արքունի գանձը, քաղաքական բանտը և արքունի շիրիմները։ Ելուրի տատրատում թմենիների անտառները՝ ձգուած գետի երկարութեամբ՝ գրաւում են գարնանը բիւրաւոր սարեկներ (տարմ), որոնց գալուստը շատ անգամ ընդունւում է իբրև հրաշք։ Կանաչ պարսկերների և լերկ ապառաժների հակադրութիւնը տալիս է կամախին տարօրինակ ազդու տեսք։ Աւելի նշանաւոր է Կիկին կամ Ակին, Սև ջուր—Եփրատի աջ ափին, աւելի ներքև այն խորանիստ հովտից, ուր Զալթաչայը թափւում է Եփրատի մէջ։ Այս տեղ Եփրատը, որ մինչև այժմ հոսում էր դէպի արևմուտք և հարաւ—արևմուտք՝ կարծես թէ գնալու թափուելու լինէր Ալեքսանդրեակի ծոցը, փոխում է իր ընթացքը և մի շարք ապեղնաձև պտոյտներով խուսափում է Հայաստանի լեռներից։ Երբ մարդ հասնում է Ակնի վերևը՝ բարձրաւանդակի եզրը, որ իջնում է քաղաքին արևմտքից, և նայում է քաղաքին որ գտնւում է 1000 մետրից աւելի վհի խորքում՝ այնպէս է թւում թէ նա ամբողջապէս շինուած է հովտում։ Բայց երբ մարդ իջնում է գետափը, ուր ձգուած է մի փայտեայ կամուրջ, այստեղից քաղաքն երևում է ամիսիթատրոնի ձևով բարձրացած՝ բրգաձև, սրածայր ժայռերի շեղջերի մէջ։ Բլրի տատրատը ծածկուած է բարդիներով և ասղիներով։ Տարածուղէշ քնկուզենիները, պարսկենները՝ լի թմենիներով, որի պտուղն է մատակարարում բնակիչների անդեան մի նշանաւոր մասը, բռնած են

ամբողջին քարաժայռերի սպիտակ պատուարներին յեղուած աւերակների պատնէշները։ Ա.կնը Մոլտկէի ասելով «Ասիայում իւր տեսածների ամենահոյակապն և ամենագեղեցիկն է» և ծառայում է իբրև հանգստեան տեղի պաշտօնից յետ քաշուող բաղմաթիւ հայերի համար, որոնք հարստացել են կոստանդնուպոլսում կամ դաշտային միւս քաղաքներում։ Սեղանաւոր, վաճառական, բեռնակիր, բոլորն էլ այստեղ են քաշւում իրենց լաւ թէ վատ ստացած հարստութիւնը վայելելու և հանգստանալու ծանր աշխատութիւնից յետոյ։ Զալթաչայի օժանդակ հովտում նշանաւոր է Տիվրիկ կամ Տիվրիկի քաղաքը, որ կարծւում է թէ շինուած լինի այն տեղում, ուր գտնւում էր Նիկոպոլիսը կամ «Յաղթութեան քաղաքը», որ յիշեցնում է Պոմպէոսի ընդդէմ Միհրդատի տարած յաղթութիւնը 1)։ Խպիպը շատ տարածուած դաւ է այս լեռնագաւառներում, մանաւանդ Ա.կնում։

Էրզրումից արևելք Պարսկաստանի ճանապարհը անցնում է մի դիւրամատոյց լեռնանցքով (2090 մետր), որ հաղիւ 125 մետրով աւելի բարձր է քաղաքից։ Ա.յս անցքը՝ Դէվէ-Բոյնուն,—«Ուղտանցքը»,—երբեմն ամրացրած էր՝ Էրզրումը ռուսների դէմ պաշտպանելու համար։ Լեռնանցքի շեմը բաժանում է Եփրատի և Արաքսի աւազանները։ Ա.յս կողմից էլ մի ամրոց, որ այժմ անդօր է ռուսների դէմ, պաշտպանում էր անցքը։ Ա.յս ամրոցը՝ Հասան-կալէն կամ «Հասանի բերդը» այժմ խրճիթների մի փոքրիկ խումբ է մի բլրի ստորոտում, իսկ բլրի գագաթին երևում են ամրոցի աւերակներ, որ միաձոյն բայց սխալ աւանդութիւնը վերագրում է Ջենովացիներին 2)։ Իտալացի վաճառականները իբրև թէ ամրոցներով պատած լինին Տրաբիզոնից Թաւրիզ գնացող կարաւանների ճանապարհը։ Հասան-կալէի մօտ բղխում են ջերմուկներ, որ Հայաստանի ամե-

1) Von Moltke, Briefe über Zustände und Begebenheiten in der Türkei.

2) Brant, Journal of the Geographical Society, 1836;—Carl Ritter, Asien, vol. X.

նաշատ յաճախուածներից են, Հայաստանի, որ այնչափ հարուստ է բարձր աստիճանի (տաք) հանքային ջրերով։

Հասան-կալէից ներքև՝ անդրկովկասեան սահմանի մօտ՝ ճանապարհը բաժանւում է մի ճիւղը ուղղւում է հիւսիս-արևելք՝ հետևելով Արաքսին մինչև Խորասան գիւղաքաղաքը, յետոյ բարձրանում է սարահարթը կարս բերդաքաղաքը հասնելու համար։ Մինչդեռ միւս ճիւղը՝ Պարսկաստանի ճանապարհը՝ մնալով թրքական հողում՝ անցնում է գեպից «Հոլուի կամուրջով», որ աւանդութիւնը վերագրում է Դարեհ Վշտասպեանին։ Ա.յստեղից էլ բաղմաթիւ ոլորաններով բարձրանում է Դէլի Բաբա կամ «Խելառ Հայր» լեռնանցքի շեմքը, որտեղից և իջնում է վերին Մուրադի կամ Արևելեան Եփրատի (Արածանու) հովիտը։ Ա.յս կողմերում ոչ մի քաղաք չկայ։ Ալաշկերտը (Թովրակ-կալէ)՝ երբեմն հայկական բնակչութեան կեդրոնատեղը՝ գրեթէ ամբողջովին ամայացաւ ռուսաց առաջին արշաւանքից յետոյ և այժմ այնտեղ միայն աւերակներ են մնացել։ Ուչ-քիլիսէն կամ «Երեք խորանը» գտնւում է աւելի բարձրում՝ Եփրատի մի նեղուցում, և լոկ ուխտատեղի է, ուր գիմում են հայերը ամեն կողմից, մինչև անգամ Պարսկաստանի խորերից և Վանի ափերից, համբուրելու սուրբ Յովհաննէսի կամ Յովհաննէս Մկրտչի մասունքները, որն բուռ աւանդութեան նահատակից նահատակ անցնելով հասել են մինչև Գրիգոր Լուսաւորչի ձեռքը(16)։ Դեռ աւելի բարձր է Դիադինը, մի հնադարեան ամրոցի ոտքում շինուած, այն կէտում՝ ուր միանում են Արածանու առաջին աղբիւրները, բղխելով Ալա-գաղից։ Դիադինը այլ և այ քաղաք չէ, այլ մի աւերակ գիւղաքաղաք, ուր կանգ են առնում կարաւանները՝ պարսկական սահմանագլխին։ Ա.յստեղից մօտ էր գտնւում Զարեհաւան մեծ քաղաքը, որ կործանուեց պարսիկներից չորրորդ դարում և որն այն դարում ունեցած է եղել 80000 բնակիչ, որից 50000ը հրէայ։

Ուրմիա լճի և Եփրատի աւազանների ջրբաժան լեռնանցքից և Պարսկաստան տանող ճանապարհից դէպի հարաւ գտնւում է բա-

յաղիդը, որ շինուած է մի ուրիշ անհետացած հայկական քաղաքի՝ Բագաւանի տեղը: Բագաւանը հիմնարկուած էր վրկչական թուականի առաջին դարում: Ա. յժմեան քաղաքը իւր անունը պարսկան է Սուլթան Բայազիդ Ա.-ին՝ իւր հիմնադրին, և Ասիոյ ամենանկարչական աւերակների մի շղթայակապ է: Շինուածների ամփիթատրոնը ծածկում է խիստ զառիթափ լեռնակողերը, որոնցից բարձր՝ կրկին զարտաւիների վրայ՝ կանգնած են մի կիսաւեր պալատ և մի մզկիթ, վայելուչ ոճով շինուած մինարէով: Պալատից վերև՝ նեղ քարափին գանուում է պարսպաւոր միջնաբերդը: Ա.-ելի բարձր՝ երևում է սպիտակ երանիներով կարմիր մարմարիոնի քարաժայռը՝ հաղարաւոր սուր աւամներով, իսկ սրանից էլ վերև՝ բարձրանում է լեռան ձիւնապատ գագաթը: Բայազիդի պալատը, որ պարսիկ ճարտարապետի գործ է, մի ժամանակ ամենագեղեցիկն էր ամբողջ թուրքական տէրութեան մէջ[2]: Սիւնազարդ սրահները, սիւնաշարը, պատերը ամբողջովին մերձակայ լեռան հարուստ կարմիր մարմարիոնից են: Քանդակները՝ որ բաղկանում են արաբանկարներից (արաբէսք) և տերևների հիւսկէններից, հրաշալի կատարելութիւն ունին: Սակայն Բայազիդի պալատը և միւս շինութիւնները զարդարող ճարտարապետը, լինելով աւելի պարզ ճաշակի տէր քան թէ պարսիկ ճարտարապետների մեծամասնութիւնն է, չէ ծածկել զրուագներով բոլոր որմերը: Մզկիթը այժմ զօրանոց է դարձած, մնաի շինութիւնները՝ ցնցուած երկրաշարժից՝ ճաքճաքուել են, քաղաքի մի մասը վայր է գլորուել և կործանուել, սակայն վայելչաշէն մինարէն պահպանել է իւր հաւասարակշռութիւնը[3]: Մի ժամանակ Երևանի ջերմոնտներին ուղարկում էին Բայազիդ, այնտեղի առողջարար օդով բժշկուելու[4]:

Արևելեան Եփրատի վերին ընթացքը՝ Հասան-կալէի և Ալաշկերտի

1) Moritz Wagner, Reise nach Persien und dem Lande der Kurden; Carl Ritter, Asien, vol. VIII.

2) Brant, Journal of the Geographical Society, 1836.

3) Chantre;—Barry, Mission scientifique dans la haute Mésopotamie, le Kourdistan et le Caucase.

4) M. Wagner, *Ibid.*

միջև, այն երբեմն լճային աւազանի հարաւում և հարաւ—արևմուքում՝ ուր միանում են Մուրադ-չայը և Բասենի բարձրաւանդակներից եկած Շարիան-չայը, գեռ և ամբողջովին չէ հետախուզուած, թէև բազմաթիւ ճանապարհորդներ անցել են այդտեղով: Ոչ մի կարաւանների մեծ ճանապարհ չէ գնում այդ գետային բարձր հովտի ուղղութեամբ և այդ տեղերի վայրագ քուրդ ցեղերը աւելի էլ վտանգաւոր են քան թէ ուրիշ տեղերինը, ուստի և մեծ բացեր կան այդ գաւառի մանրամասն քարտէզների վրայ: Միւս կողմից՝ շէնները և գիւղերը շատ հազուագիւտ են այս լեռնային երկրում, որի բնակչութիւնն էլ շատ նուազեց, երբ որ այնչափ հայեր կամաւորապէս աքսորուեցան իրենց հայրենիքից: Մելեզկերտ կամ Մանազկերտ, որ գտնուում է Եփրատի հարաւային օժանդակ՝ մի «ադի գետի» (Տուլլա—սու) ափին, Արմէնիատանի մի մեծ մասին աղ է մատակարարում: Մուշը Արածանու ուռոգած փափաղութեան մայրաքաղաքն է և չէ շինուած գետի վրայ, այլ մի ընդարձակ կոմնական հովտում՝ կարմիր ժայռերի կրճի բերանում, որից վերև բարձրանում են լերկ սարեր, վեց ամիս շարունակ ձիւնով ծածկուած: Մուշը գտնուելով երզրումից 500 մետր աւելի ցած՝ վայելում է աւելի մեղմ կլիմայ և պտղատու ծառեր են աճում նրա պարտէզներում, մինչև իսկ որթը սողսկում է ժայռերի զառիվայրերում և ստորոտներում: Աւերակ միջնաբերդը մի ժամանակ ամրոցանիստն էր այն Մամիկոնեաններին, որոնք ձենաստանից՝ այն է՝ Չինաստանից եկած իշխաններ էին սովորական թուականութեան առաջին դարերում և կառավարում էին այդ երկիրը[1]: Երկու հռչակաւոր հայ ծնուել են Մուշի գաւառում՝ Մեսրոպը, հայկական այբուբենի հնարողը, և պատմաբան Մովսէս Խորենացին:

Մշի դաշտում ընդունելով մի օժանդակ Սև-Ջուր, որ գուրս է ծորում լուսթեամբ դաշտավայրում բացուած մի «անյատակ» խառնարանից, Արածանին մտնում է մի նեղ կիրճ և ջրընկէցներ է կազմում: Ընկնող ջրի աղաղակը արձագանգ տալով ժայռերին՝ ջրվէժի ամենամօտ գիւղին տուել է Գուռգուռ կամ Կուռկուռ

1) Saint—Martin, Mémoire sur l'Arménie.

անունը։ Գետը թէև արդէն շատ մեծացած, սակայն դեռ նաւարկելի չէ։ Ջարնուելով ժայռերին երկար սլաոյտներ է կազմում, յետոյ վազում է արագահոս ընկէցիկներով խութերի միջից։ Իր ընթացքին շեղագնաց լեռները շատ տեղ հազիւ մի նեղ ճեղք են թողնում գետին, սեղմելով նրան ուղղահայեաց որմերի և զառիվայր ափափաների մէջ, որոնք տեղ տեղ բարձրանում են հարիւրաւոր մետրերով։ Ակրակլի գիւղին մօտ Արածանու լայնութիւնը միմիայն «քսան քայլ» է [1]։ Կանոնաւոր հունով գետի կերպարանք է ստանում նա միմիայն Բալուից ներքև, բայց Մոլաքէի և Միւլբախի արած նաւարկութեան փորձերը՝ այս քաղաքից մինչև երկու Եփրատների խառնուրդը՝ անյաջող անցան։ Գետի հոսանքը, որ Բալուի առաջ դեռ 868 մետր բարձրութեան վրայ է գտնւում, այնչափ զառիվայր է, որ վտանգաւոր է նաւակով ճանապարհորդելու փորձ անել։ Ջրկնորսները գործ են դնում *էլէկ*, որ բարակ երկայն սախտակներ են՝ չուաններով կապկապուած և ամրացրած ոչխարի տիկերի վրայ։ Վեց տիկը կարող է չորս մարդ կրել յորձանուտների և ջրապտոյտների վրայով։ Էլէկից բարձր՝ գետի վերջին կամուրջը Բալուինն է, որից վերև հարաւային գարաւափում երևում են քաղաքի տները։ Սրանցից էլ բարձր մի նկարչական ամրոց է կանգնած, որ ըստ աւանդութեան շինուած է ոգիներից և որի մօտ մի քարաժայռի վրայ գտնւում է բևեռագիր արձանագրութիւն։ Քաղաքը շրջապատուած է այգիներով, որ տալիս են Հայաստանի ամենալաւ գինին։ Հարաւ-արևելքում Սիւան-մադէնի նշանաւոր գարբնոցներն են գտնւում, հաստատուած մի երկաթով այնպիսի հարուստ երկրում, որ մինչև անգամ կարօտութիւն չկայ հանքեր փորելու, որովհետև բլուրներն ու հովիտները ծածկուած են սև մետաղի խոշոր կտորներով, որ և բաւական կլինին ամբողջ գարեր գործարանի աշխատութեանը [2]։ Սիւան-Մադէնի մօտ գտնւում է Տիգրիս և Արածանի (Մուրադ) գետերի ջրբաժան շեմքը, հազիւ

1) Mühlbach, Karte von einem Theile des Euphrats bei Palou; Carl Ritter, Asien, vol. X.

2) Von Moltke, Briefe über Zustände und Begebenheiten in der Türkei.

մի քիլոմետր հեռաւորութեամբ Արածանուց, որ խոր է ընկած իր ժայռերի նեղուցի մէջ։ Հիւսիսային գլխաւոր օժանդակն է Մըզուր-սուն, որի խառնուրդի մօտ բարձրանում է Թախտիկի հրային զանգուածը։ Մազկերտ թշուառ գիւղակի անուան մէջ Տայլորը կարծում է գտած լինել իրանական Հիւրմիզ-կերտ կամ «Որմզդի քաղաք» անունը։ Սրա խրճիթները խմբուած են մի մեխային դաշտում՝ խանձաքարային սարաւանդի ստորոտում։ Սարաւանդի վրայ երբեմն կանգուն էր Հրոյ Սեղան, որ երևում էր շատ հեռուից։ Սրբազան շինութիւնների աւերակները համբուրւում են բարեպաշտութեամբ շրջակայքի հայերից և կըզըլբաշներից [1]։

Եփրատի երկու ճիւղերի՝ Արածանու և Սև Ջրի՝ խառնուրդից ներքև տեղացիների բերանում գետը դեռ պահում է Մուրադ անունը, որ տրուած է նրան, ինչպէս ասում են, այն բազմաթիւ ամրոցների պատճառով, որ Սուլթան Մուրադ Ա-ը կանգնեցրեց նրա եզերքների բլուրների վրայ։ Ցրաո կոչումը, որ նաև Սև Ջրի անունն է, գործ է ածւում սովորաբար միայեալ Եփրատի համար, երբ սա արդէն դաշտավայրն է մտնում։ Ոչ մի մեծ քաղաք չկայ գետախառնուրդի մօտ։ Կապան-մադէնը գտնւում է խառնուրդից փոքր ինչ ստորև՝ գետի ձախ ափում և պարզ երևում է որ իր ծագմամբ պարտական է արծաթաբեր արճճային հանքերին, որ գտնւում են շրջակայքի լեռներում և այլևս չեն մշակւում, որովհետև լինելով ժայռերի կրկէսի մէջ, ծառազուրկ, մինչև անգամ առանց մացառների, ոչ մի բնական յարմարութիւն չունին մշակութեան։ Տեղ տեղ գետը սեղմող ափափաններն էլ թոյլ չեն տալիս ճանապարհներ շինելը։ Իսկ կարաւանների ճանապարհը անցնում է աւելի բարձրից՝ բարձրաւանդակների վրայով և կոմնական հովիտներով, ուր և գետեզուրաց են մեծ շէները իրենց ամրոցներով և մզկիթներով։ Երկու Եփրատով սահմանաւորուած եռանկիւնի տարածութեան վրայ գլխաւոր քաղաքն է նախկին Հերապոլիսը այժմ Զմշկածագ կամ «Զմշկիկի Հայրենիքը», որ երեք կողմից շրջապատուած է աւազաքարի ժայռերով,

1) Taylor, Journal of the Geographical Society, 1868.

ծակծկոտուած քարանձաւներով, որ երբեմն իբրև բնակարան են ծառայել: Արևմտեան բարձրաւանդակների վրայ գտնուում է Արբկիր կամ «Արաբական Ցաղիութիւն» մեծ քաղաքը: Արբկիր Մահմէտի հայրենակիցների լեզուում գործ է ածւում ամբողջ Ասիատիկա Թերակղզու համար[1]): Արբկիրը գտնուում է մի «հին քաղաքից» կամ Նաքի Շէհերից 3 քիլոմետր դէպի հարաւ մի գոգաւորութեան յատակում, որ շրջապատուած է սև խանձաքարի քերծերով: Բնակիչների ճարտարութեամբ այդ խաւար վիհը դարձել է պարտէզներ: Հրահոսանքի ահագին պատուարները մեծամեծ ծառերի կանաչութեամբ են ծածկուած: Արբկիրի պարիսպներից ոչ պակաս գործունեայ են այնտեղի ոստայնանկները, որոնք մինչև անգամ Անգլիայից մանած են բերել տալիս իրենց կտաւեղէնի գործուածքների համար: Այս թերակղզային երկրում, որի սահմանն է հիւսիսից Մուրադը, իսկ արևմուտքից և հարաւից այն մեծ արմուկը, որ կազմում է Եփրատը դուրս գալով սարերոսական լեռներից, իշխում է Խարբերդ ամուր քաղաքը, որի ափափայ բլուրը նայում է բարձրից պողաբեր և լաւ մշակուած դաշտին, ուր աճում են բարեխառն գօտու ամեն տեսակ պտուղներ: Այս հարուստ դաշտի մէջտեղն է Մէղէրէ քաղաքը, որ կոչւում է նաև «Նոր Խարբերդ»: Ամերիկական քարոզիչների Խարբերդում հիմնած «Հայկական կոլէժը» Հայաստանի և Փոքր Ասիայի երկրների հասարակաց կրթութեան ամենագլխաւոր հաստատութիւնն է: Իւրաքանչիւր տարի Արբկիրի և Խարբերդի բարձր հողերից պանդուխտների ամբողջ խմբեր իջնում են բազդ որոնելու Կոստանդնուպոլսում, Զմիւռնիայում, Համամօկոսում, Հալէպում, և ծովափնեայ ուրիշ քաղաքներում: Հալէպի գրեթէ բոլոր տների ծառաները Արբկիրից են եկած:

Հայաստանի հարաւ-արևելեան բարձրաւանդակութեանց ամենամեծ քաղաքը իր անունը տուել է վան ծովին: Վան քաղաքը ընդ ամենը 3 քիլոմետր հեռու է ափից և գտնւում է մի տափարակ դաշտում, որ հիւսիսից, արևելքից և հարաւից շրջապատուած է բուսականութիւնից զուրկ կրային բարձրութիւններով: Մի առանձնացած քարաժայռ, անշրջի ինչպէս հրաբխային չեչքարի զանգուած, ամբողջ իւր բարձրութեամբ կարատուած վալուկի (faille) շերտերով, ծակծկոտուած ծերպերով և քարանձաւներով, բարձրացնում է դարատափերի վրայ շարուած տներից վերև իւր սպիտակ և կարմիր, պատնիշաձև պատուարները, որ փայլում են արեգակի տակ կուրացուցիչ լուսով: Բուն քաղաքը դաշտի երեք կողմից պատած է լայն խրամով և կրկնակի առատնաւոր և բուրգաշատ պարիսպներով: Բայց արտաքին քաղաքը, այն է՝ Բաղլար կամ Ա.յգեստանը՝ անհամեմատ աւելի մեծ է, շատ քիլոմետր տարածութեամբ: Ա.յս բերրի հողից է ծնունդ առել այն ասացուածքը թէ «վանն այս աշխարհում, իսկ դրախտը միւսում»: Աւուններ սահում են այս դաշտում ամեն ուղղութեամբ և աճեցնում են պտղատու և զանազան տեսակ տարածուղէշ ծառերի և բարդիների մի հարուստ բուսականութիւն: Ամառը ներքին քաղաքի գրեթէ ամբողջ բնակչութիւնը տեղափոխւում է Ա.յգեստանի թաղը, որի հրաշալիքները անծանօթ են մնում անցնող ճանապարհորդներին, որովհետև տները, ճանապարհը եղերող բարձր պատնէշները, ուռենիների շարքերը ծածկում են ճանապարհորդի աչքից ծաղիկների և կանաչի շեղջերը: Վանի խաղողների ուռած գինին թեթև է և անուշահամ: Տեղական կանայք գործում են մի տեսակ պատատ այծի մաղից, որն անթափանց է ջրից և մեծ իրաւամբ գնահատուած է նոյն իսկ կոստանդնուպոլսում[1]):

Պարսպաւոր քաղաքը շատ անգամ կոչւում է Շամիրանի կամ Շամիրամի անունով, ինչպէս որ ուրիշ շատ տեղեր, գիւղեր, հովիտներ, լեռներ՝ թէ Քուրդիստանում և թէ Պարսկաստանում: Եւ իսկապէս՝ պատմութիւնը մեզ տեղեկացնում է, որ վան կոչուելուց առաջ մի հայ թագաւորի անուամբ, որ իւր երկրորդ հիմնադիրն էր, այդ քաղաքը մանաւանդ անուանւում էր

1) Taylor, Journal of the Geographical Society, 1868; — L. Metchnikoff, ձեռագիր:

1) Millingen, յիշուած:

«Շամիրամի քաղաք» կամ Շամիրամակերտ։ Հին պատմաբան Մովսէս Խորենացին, որ տեսաւ այն հոյակապ պալատները, որոնց հիմնարկութիւնը վերագրում էին հռչակաւոր իշխանուհուն, պատմում է որ Շամիրամ Ասորեստանից բերել տուեց 60 քարտաշներ և 42000 բանուոր և թէ այս որմնադիրների և արուեստագէտների բանակը ամբողջ հինգ տարի աշխատեց շինելու պալատը և այն պարտէզները, որ դարձան «աշխարհի հրաշալիքներից» մէկը։ Այդտեղ հաստատեց Շամիրամ իւր ամառնային աթոռանիստը, լեռնային մաքուր օդ վայելելու համար։ Ոչ մի հետք չէ մնացել ասորական շինուածքներից, բայց Վանի քարաժայռը անհատնելի աղբիւր է հետախուզութեանց համար։ Այդ քարացած խեցիների կրային ահագին զանգուածը, 600 մետր երկարութեամբ և ամենաբարձր կէտում՝ մօտ հարիւր մետր բարձրութեամբ, բաժանւում է երեք գլխաւոր հատուածի, իւրաքանչիւրն իւր առանձին սրահներով, սանդուխներով, գետնափոր գերեզմաններով և արձանագրութիւններով։ Առաջին գիտնականը որ ընդօրինակեց այդ արձանագրութիւնները՝ Շուլցը, որն և փոքր ինչ յետոյ սպանուեց քրդերի երկրում, հարկագրուած էր տեղաւորուել մինարէի գլխին հեռադիտակով այդ գրութիւնները ուսումնասիրելու համար։ Դէյրոլը հասաւ նրանց պարաններով և դասարկութեան վրայ կախած սանդուխներով և կարողացաւ արձանագրութեանց պատկերադրուշմը (estampage) վերցնել։ Արձանագրութիւններից մէկը՝ Բիսուտունեան արձանագրութեանց նման գրուած երեք լեզուով՝ գրեթէ միևնոյն բառերով պատմում է Դարեհի որդի Քսերքսէսի մեծագործութիւնները։ Բայց ասելի հին արձանագրութիւնները երկար ժամանակ անլուծելի մնացին, չնայելով զանազան բացատրութեանց փորձերին։ Դիյարի և ուսուցչապետ Սէյսի համբերատար ջանքերի շնորհիւ այժմ արդէն ունինք ամբողջ մի շարք ընթերցուածների, որոնց ապդնէ կամ հին հայկական լեզուով բնագրերը այլ ևս անվերծանելի չեն, և հետզհետէ յայտնուելու են մեզ մարմարիոնի վրայ գրոշմուած նախկին անցքերը։ Վանի շրջակայքում ուրիշ ժայռեր էլ կան արձանագրութիւն կրող, որոնց մեծագոյն մասը դեռ կարօտ են վերծա-

նողի։ Վանի քարաժայռի ներքին դահլիճներից մինում կուպր է ծորում [1])։ Վանից հարաւ արևելքում՝ նորերս Շանտրի և Բարբիի ձեռքով հետախուզուեց մի ուրիշ ասորական բերդ՝ Թոփրակ—կալէն, որ մի սեպ շինութիւն է խանձաքար վէմերից՝ հիմքը դրած կրային ժայռի վրայ(17)։

Երեք կարգ պատնէշներից և բրգերից կազմուած ամրութիւնների բարձրութիւնից բացւում է նայողի աչքի առաջ լեռների լայնածաւալ ամփիթատրոնը և լճի կապոյտ ափուղը, որի մէջ անդրադառնում է Սիփանի սպիտակ կոնուսը։ Միւս ափին Ախլաթ (Խլաթ) գիւղաքաղաքը փռուած է մի ծովախորշի եղերքին՝ այն իսկ տեղում, ուր Մշի և Եփրատի ճանապարհը վեր է բարձրանում դէպի Նալիկ լճի ջրերով բռնուած լեռնանցքը։ Սա մի նախկին բազմամարդ քաղաքի նուազ մնացորդն է, որի աւերակները ցրուած են պարտէզների մէջ, շրջապատուած աւազաքար ժայռերում փորուած գերեզմաններով։ Վանից արևելք գտնւում է Արջակ (Արչէք) գիւղաքաղաքը, որի շրջակայքում թռչտում են բիւրաւոր սուրբ համարուած ագռաւներ [2])։ Գիւղաքաղաքը իշխում է Արջակ լճի հարաւային ափին, իսկ աւելի հեռուն երեւում է երկու պետութեան սահմանագիծ լեռների շարքը, որոնց «վիզ կտրող» լեռնանցքը շատ լաւ ծանօթ է աւազակ քրդերին։ Այս լեռների իրանական փէշերի վրայ գտնւում է կոտուր գիւղատեղական պատը, որ առաջ պատկանում էր Թուրքիային, իսկ այժմ Բերլինի դաշնագրով միացրած է Պարսկաստանին, իւր մօտ հազար քառակուսի քիլոմետր հողի տարածութեամբ(18)։ Վերջին Թուրքպատական հովիտը, որ ակսւում է Բայազիդի սարերի հարաւային կողերից, Ալաղայի հիանալի դաշտն է, որի կանաչագեղ տափարակութիւնը գեղեցիկ դիմապատկեր է ձիւնապատ լեռների զառիվայրերին։

Վանից հարաւ-արևմուտք երևում է Աղթամար լեռնատ կղզին,

---

1) Loftus, Turko-Persian Frontier.

2) Ernest Chantre, Mission scientifique dans l'Asie occidentale.

որ հնումն եղել է Թերակղզի, բայց լճի աստիճանաբար յորդուԹիւնը բաժանել է նրան ցամաքից, որից և այժմ 4 քիլոմետր հեռու է։ Ա.յտեղ էին նստում երկար ժամանակ Հայոց Թագաւորները (Արծրունիք), որոնց շինածն է կղզու մէջտեղում բարձրացող՝ տասներորդ դարի եկեղեցին, ամենագեղեցիկը, ամենահարուստը՝ ամբողջ Թուրքական Հայաստանում։ Ա.յտեղի պատրիարքները յաւակնեցան անոյեան դուրս գալ իրենց արժանապատուԹեամբ Էջմիածնի պատրիարքներին։ Վանից հարաւ՝ լճի օժանդակ հովիտներից մէկում գտնուում է մի ուրիշ հռչակաւոր մենաստան՝ Վարագը (Ծոփ-քլիսէ), «Ծօմն խորան»։ Հարուստ ընտանիքի որդի երիտասարդ հայերը գաստիարակուում են այստեղ մի գպրոցում, որ մրցում է Վանի վարժապետանոցի հետ և նրա նման հիմնուած է Աբեմուաքի գիտնական հասատասուԹեանց կազապարով[1](19)։ Ա.յս հեռաւոր երկրներում ուսումը անհամեմատ աւելի է տարածուած քան Թէ կարելի էր կարծել։ Յաճախ եւրոպացի ճանապարհորդը ողջունուում է հայ գիւղացուց ֆրանսերէն լեզուով[2])։ Ա.յս կողմի հայերը մեծ ճանապարհորդներ են. նրանցից հաշտարաւորներ այցելած են Բաղդադին, Հալէպին, Կոստանդնուպոլսին, Վիէննային, Պարիզին։ Լճի հարաւային ափի գիւղերը իւրաքանչիւր տարի ուղարկում են հարիւրաւոր բեռնակիր Ատամբոլի ծովափունքը և Սև ծովի ուրիշ քաղաքները։ Քարտաշները, որ շատ ճարտար են իրենց արուեստում, իջնում են նմանապէս իմբերով իրենց բարձրաւանդակից։ Բնական է որ լեռնացիները գրաւուին դէպի հարուստ դաշտերը, որ տարածուում են նրանց լեռների ստորոտում և դէպի որը առաջնորդում են Եփրատեան Պոնտոսը, Տիգրիսը և Եփրատը Թափուղ գետերի ընԹացքը[3])։ 1837-ին Վանի գաւառի ԹԷ բանուոր և ԹԷ վաճառական պան-

1) Deyrolle, Tour du Monde, 1876.

2) Fanshawe Tozer, Turkish Armenia and Eastern Asia Minor.

3) Carl Ritter, Asien, vol. X.

դուխտների Թիւը հաշուում էին երեսուն հազարից աւելի, իսկ տարեկան վերադարձողների միջին Թիւը՝ 3000 հոգի[1])։

ԹՈՒՐՔՄԱՆՉԻ ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՆԵՐԸ

1) Ա.յս և սրա նման գատողուԹիւնները, որ տեղ տեղ հանդիպում են այս գրուածքում, պէտք է համարել Էլիզէի անձնական կարծիքները, որ իբրև ֆրանսիացի ազատ չէ նախապաշարումից՝ անգլիական արտաքին քաղաքականուԹեան վերաբերուԹեամբ։

1) Թուրքական Հայաստանի և Պոնտոսի գլխաւոր քաղաքները, իրենց բնակիչների մեծաւոր Թուով։

ՏՐԱԲԻԶՈՆԻ ՎԻԼԱՅԷԹ։

Տրաբիզոն, ըստ Տոզերի	. .	32000 բնակիչ
Կերասոնդ, ըստ դը Հելլի	. .	4000 »
Տիրեբոլի, » » »	. .	3000 »
Գիւմիշ-խանէ	. . . .	3000 »
Պլատանա	. . . .	2500 »
Ռիզէ	. . . .	2500 »

ՎԱՆԻ ՎԻԼԱՅԷԹ։

Վան, Մուշ } ըստ Տոզերի	. . .	30000 բնակիչ 15000 »

ԷՐԶՐՈՒՄԻ ՎԻԼԱՅԷԹ։

Էրզրում, ըստ Տոզերի	. .	20000 բնակիչ
Երզնկա, ըստ Բռանդի	. .	15000 »
Բաբերդ, ըստ Տոզերի	. .	10000 »
Բայազիդ	. . . . .	2000 »

ԽԱՐԲԵՐԴԻ ՎԻԼԱՅԷԹ։

Արաբկիր, ըստ Տայլորի	. .	35000 բնակիչ
Խարբերդ, ըստ Տոզերի	. .	25000 »
Տիվրիկ	. . . . .	10000 »
Ակն, ըստ Հ. դը Հելլի	. .	8500 »
Բալու, ըստ Տոզերի	. . .	7500 »
Զմշկածագ, ըստ Տայլորի	. .	4000 »
Արգանա (Արզնի) ըստ Բռանդի	.	3500 »
Կապան—Մադէն, ըստ Բռանդի	.	2500 »

2) Մասիսը իբրև բնական սահման իսկ—որ ունի մեծ յարմարութիւններ, բայց ազգագրական տեսակէտից բոլորովին անյարմար է քաղաքական սահմանագլուխ լինելու, քանի որ բաժանում է մի և նոյն ցեղին պատկանող և մի և նոյն լեզուն խօսող արիւնակից ժողովուրդները։

3) Այս նշանաւոր սարը մեր պատմութեան մէջ յայտնի է Ծ ա ղ կ ի, Ծ ա ղ կ է ոյ, Ծ ա ղ կ ա ն ց կ ա մ Ծ ա ղ կ ա ւ է տ լ ե ա ռ ն անուններով։ Ալա-գաղը թարգմանութիւն է հայկական հին անուանակոչութեանը։ Ցատուկ անունների թարգմանութեան դէպքեր՝ հայերէնից թուրքերէն՝ շատ և շատ են Հայաստանում։

4) Վան լճի երբեմնակի ածելն ու նուազելը, մեր կարծիքով, առանց որ և է տարակոյսի պէտք է պարբերական երևոյթ համարել, ուրեմն և կապուած հաստատուն կլիմայաբանական պատճառների հետ։ Դժբաղդաբար ճիշտ հետազօտութիւնները պակասում են, որոնցով միայն հնարաւոր էր ածման և նուազման պարբերական շրջանի տևականութիւնը որոշել։ Մեր հին մատենագրութեան մէջ բաւական շատ յիշատակութիւններ կան այդ նշանաւոր երևոյթի վերաբերութեամբ, զանազան մտացածին, նախապաշարեալ մեկնութիւններով։ Այդ տեղեկութիւնները մի տեղ հաւաքելը բաւական մեծ լոյս կարող էր սփռել սոյն խնդրի վրայ։ Ինձ ծանօթ ամենահին յիշատակութիւնը Վան ծովի ջրերի ածման և նուազման վերաբերութեամբ Խորենացու առաջ բերածն է (Գ. 7), պատահած չորրորդ դարում Յ. Ք։ կարճատև երաշտից յետոյ՝ ծովի ջրերը բարձրանում և ծածկում են մշակուած դաշտերը, մեծամեծ վնասներ տալով, մասնաւորապէս Ուշտունեաց նահանգին։ Տարիներ անցած ջրերը նորից իջնում են, յետ են քաշւում։— «Եւ պղտութիւն գետոյն ջրոյ տարաւ զարձաւ յ ա ղ տ ա ղ տ ո ւ կ, եղեալ իւրեայ նոցա երկինք պղնձի ըստ գրոց, և ծով հակառակեալ (կամ ըստ ուրիշ ձեռագիր օրինակի՝ հ ա կ ա ռ ա կ ե լ ե ա լ՝ այսինքն է՝ ափերից դուրս գալով) յինքն ընդունի զսահմանս անդաստանաց»։ Տարիներ յետոյ ջրերն իջնում են. «գտեալ բժշկութիւն ինքեան և գ ա ւ ա ռ ի ն»։ Վերջին տարիներս կատարուած կլիմայաբանական լուրջ աշխատութիւնները աւելի ևս հաւանական են կացուցանում այս կարծիքը։ Կլիմայի և նորա հետ յարակից ջրերի պարբերական տատանումների մասին տե՛ս ի Թիւս այլոց նաև 1891-ին Բերնում հրատարակուած ուսումնասիրական Բրիւկների մեծ աշխատութիւնը (Prof. Brückner: K l i m a s c h w a n z u n g e n seit 1700)։ Այս աշխատութիւնից երևում է, որ միջին թուով 35 տարուայ միջոցում խոնաւ և երաշտ տարիները յաջորդում են միմեանց։ Լճերի մակերևոյթի տատանումները (ինչպէս նաև Կասպից ծովի), գետերի և առուցարանների ածելն ու նուազելը պէտք է ունենան մօտաւորապէս 25—40 տարուայ պարբերական շրջան։ Այս հաշուով եթէ քառասուն թուականներին Վանի ջրերը իրենց ածման գագաթնակէտին էին հասած, նմանապէս և ուրմիայի ջրերը, ուրեմն այժմ նրանք գտնուելու են նուազման շրջանում։ Ցայտնի է որ Սևանն ու Ուրմիան էլ ենթարկուած են նման տատանումների։

5) Աւելի ճիշտ կլիներ ասել՝ Ախալքալաքի բարձրաւանդակութեան։

6) Էլիզէն կատարելապէս սխալւում է, Ոչ թէ ռուս վարչութեան բռնադատութեան երկիւղն էր հայերին իրենց բնակավայրում հաստատ պահողը, այլ խմբովին գաղթականութեան մեծամեծ վնասները, որոնց փորձն արդէն առել էր տաճկահայ ժողովուրդը։ Այս բանն էլ թերևս բաւական չլիներ մեծ հայ գաղթականութեան արգելքի լինելու, եթէ չլիներ մեծ շարժառիթ, Սան—Ստեփանոյի 16 և Բերլինի 61-րդ յօդուածները էին այն բարերար պատճառները, որոնք յոյս տալով այդ նահանգների քրիստոնեայ բնակիչներին մօտալուտ բարենորոգութեան, հաստատ պահեցին նրանց իրենց ծննդավայրում։ Առանց այդ յօդուածների՝ ամենայն հաւանականութեամբ մեր տէրութեան սահմանակից տաճկահայ նահանգները բոլորովին գատարկուած կլինէին իրենց հայ բնակիչներից։

7) Կան Կէսկէսներ և Հայ ծագումից։ Ինչպէս հաւատացրին ինձ մի քանի Տրաբիզոնցիներ՝ հայ ծագումից Կէսկէսները մինչև այսօր էլ խնամութիւն չեն անում ո՛չ միայն ուրիշ ցեղի մուսուլմանների, այլ և յոյն Մեցցօ-մեցցօ-ների հետ։ Արժէր Կէսկէսների մասին աւելի ճիշտ և մանրամասն տեղեկութիւն ունենալ։

8) Հայ ազգի թիւը մինչև այսօր էլ մի գիտնական առեղծուած է։ Ըստ ոմանց բոլոր հայերի թիւը չէ անցնում 2½ միլիոնից, ըստ ուրիշների այդ թիւը պակաս չէ 5 միլիոնից։ Էլիզէն արդէն չափազանց քչացնում է տաճկահայերի թիւը, դնելով 800 հազար։ Ըստ իմ կարծեաց այժմեան Արևմտահայերի թիւը մօտաւորապէս հաւասար է Արևելեան հայերի թուին, մեռան հայերի թիւը մօտաւորապէս հաւասար է Արևելեան հայերի թուին, ուղիղ կէս առ կէս։ Արևմտեան ասելով պէտք է հասկանալ բոլոր տաճկահայերին, Եւրոպայում և Ամերիկայում ցրուած հայերի հետ, իսկ Արևելեան ասելով—ռուսահայերին, պարսկահայերին և Հնդկահայերին։ Պոլսի հայոց պատրիարքարանը կարող էր տալ այս մասին թանկագին և մօտաւորապէս ճիշտ տեղեկութիւններ, եթէ կամենար։ Աւելորդ չենք համարում դնել այստեղ վերջին ժամանակներս արտասահմանեան լրագրութեան մէջ հրատարակուած մի վիճակագրութիւն ամբողջ Թուրքիայի համար, որի մէջ տաճկահայերի թիւը նշանակուած է ե ր կ ու ս ու կ է ս մ ի լ ի ո ն։ Ահա այդ հաշիւը։

Ամբողջ Թիւրքիա . .	22½ միլիոն
Եւրոպ. Թուրքիա . .	4½ »

Ափրիկէ	1	միլիոն
Ասիական Թուրքիա . .	17	»
Թուրք	8,	950 000
Թուրքմէն		250 000
Ցոյն	2,	477 000
Քուրդ վլահ		250 000
Առնաուտ		900 000
Բուլգար		350 000
Սերբ		50 000
Չերքէզ		550 000
Լազ		50 000
Չինկանէ		50 000
Արաբ	3,	800 000
Տիւրզի (Դրուզ) . . .		280 000
Մարոնի		312 000
Քոզաք		30 000
Հրէայ		158 000
Սիրիացի		73 000
Կըզըլբաշ		335 000
Եզիդի		20 000
Քաղդէացի		233 000
Քիւրդ		850 000
Հայ	2,	520 000
Համագումար	22,	488000

Այս հաշուով Հայերը Օսմանցիների տէրութեան մէջ Թուրքերից յետոյ առաջին բազմամարդ ազգն են։ Զենք հաշուում արաբներին, որովհետև նրանք բոլորովին անջատ են թէ Թուրքերից և թէ Հայերից, գտնուելով մեծ մասամբ Եփրատից հարաւ և Ափրիկէում։ Հայերը և Ցոյները միացած՝ ուշ թէ շուտ կարող են յոյս ունենալ հաւասարակշռել իրենց թուով Օսմանցիներին։

9) Քթի օղ գործածելու սովորութիւնը կար հին ժամանակ և Հայերի մէջ։ Այժմ էլ շատ հաւանական է որ այդ բարբարոսական սովորութիւնը գործածութեան մէջ լինի տաճկահայ նահանգների խուլ անկիւններում։ Գոնէ մի օրինակ, մի Հայ կին, որ մի ուռնգում արծաթի օղ—խզմա ուներ, ես տեսել եմ 13-14 տարեկան հասակում։ Աւելորդ չեմ համարում այս բանին մի վկայութիւն բերել և մեր հին մատենագրութիւնից։

16-րդ դարում Սիմէօն Ապարանցին նկարագրելով Մեծոփայ վանքի աւերումը նմանեցնում է նրան մի նորահարս թագուհու, գործ դնելով իւր գեղեցկագիտական բոլոր արուեստը։

«Առ քեզ են բանքս սրտաբորոփ,
Ո՛վ հրաշալի սուրբըդ Մեծոփ . . .
Դըշխոյ անմահ փեսային զոյգ,
Գըրկախառնեալ յանախտն անջոկ . . .
Զըմբռնալից հանգերձ մարմնոյդ,
Քըրքըմացան խոյրըն գըլխոյդ,
Իսկ ի տըտուն ոտացդ ծածկոյթ,
Ընդելուզեալ բոլոր զգեստոյդ
Շարս մարգարտաց զարդ ունելոյդ
Եւ վարսակալ մաքուր գեղոյդ,
Նիւթ կոնքուլաց՝ ներկ ծիրանոյդ,
Հիր և կարմիր՝ գոյն անկողնոյդ.
Ծանիք փըղաց՝ կազմ աթոռոյդ,
Ոսկեպաղպաջ տեղ թագուհոյդ։
Գորշապահանկ 1) քում լըսելոյն,
Քառամանեակ յըղկեալ ուսոյդ,
Անուր աղնիւ հոտոտելոյդ,
Ապարանջան ի ձեռն աջոյդ . . »

(Ս. Ապարանցի, Վիպասանութիւն, 1870, Վաղարշապատ, եր. 142—144)։

Մեր նախնիք, ինչպէս և այժմեան քուրդ ցեղերը, չէին բաւականանում այսչափով միայն իրենց աղջիկներին և կիներին գեղեցկացնելու համար, այլ քթի օղի հետ միասին պինչի մէջ բացուած ծակում խրում էին և անուշահոտութիւններ, շատ անգամ՝ մեխակ։ Երեսի զանազան մասերում, ճակատի, կզակի, թշերի վրայ արուեստական խալեր էին չինում՝ սեղի ծայրով և սև ներկով, ճիշտ այնպէս, ինչպէս այժմ Երուսաղէմի ուխտաւորները իրենց մարմնի զանազան մասերի վրայ «Հաջ» են խփել տալիս «Հաջի» դառնալու համար։

10) Բիբլիական ընկերութիւնը ունի հրատարակած քրդերէն Աւետարան թէ արաբական և թէ հայկական տառերով։ Այս վերջինները անհամեմատ աւելի յարմար են քրդական բարբառները գրի անցնելու համար։ Կան հայերէն տառերով և մի քանի ուրիշ կրօնական տետրակներ։ Ոչ մի ազգ այնչափ յարմարութիւններ չունի քրդերի մէջ լուսաւորութիւն և

1) Գուշապահանկ, ականջի զարդ. օղամանեակ։

առաւոր։ Այսպիսով Արհմնը դառնում է արարչակից լոյսի։ Մի այլ անգամ Արհմնը ուղում է ցոյց տալ որ ինքը բարի չէ գործում ո՛չ այն պատճառով որ չէ կարողանում, այլ որ չէ կամենում։ Եւ իբրև ապացոյց՝ որ կարող է եթէ ուզենայ բարի և գեղեցիկ բան անել՝ ստեղծում է ամենագեղեցիկ արարածը—սիրամարգը։

Այսպիսով Արհմնի պաշտամունքը կապուած էր անբաժան կերպով Լոյսի, Արեգակի և Սիրամարգի պաշտամանն հետ։ Այս նոյն գլխաւոր հիմունքները մինչև այսօր էլ պահպանուած են եզիդների կրօնքի մէջ։ Եզնիկի վկայութեամբ հինգերորդ դարում, ինչպէս և այժմ, դիւապաշտների քէշշը չուներ ոչ մի կրօնական գիրք, այլ աւանդում էր իւր հաւատալիքները բերանացի։ Այս աղանդի վերաբերութեամբ ենք համարում մենք ասուած Եզնիկի հետևեալ խօսքերը. «Եւ քանզի ընդ գրով չեն կրօնք ն, երբեմն զայն ասեն, և այնու խաբեն, և երբեմն զայս՝ և սովին պատրեն զխմարս։» (տե՛ս Եզնիկ Կողբացի, գիրք երկրորդ. Ը—Թ)։

15) Կարնոյ—քաղաքի շինութիւնը Ե-դ դարում շատ գեղեցիկ կերպով նկարագրում է Խորենացին իբրև ժամանակակից։ Այդ ժամանակ շինուեցան և ջերմուկների (Իլիճա) վրայ վիմատաշ քարերով լոգարաններ (Խոր. գ. 59)։ Ընթերցողին խորհուրդ տալով նորից աչքից անցնել Խորենացու այդ ճշգրիտ և յաջող նկարագրութիւնը՝ մենք առաջ կբերենք մի ուրիշ անտիպ աղբիւրից մի այլ հետաքրքրական նկարագրութիւն այդ քաղաքի շինութեան կամ վերաշինութեան կատարուած հաւանականաբար Ե-դ դարում. Անատոն զօրավարի ձեռքով կանգնեցրած աշտարակները, որ Ե-դ դարում ի պատիւ կայսեր կոչւում էին «Թէոդոս» և «Աւգոստիոն» այս նկարագրութեան մէջ կոչւումեն «Խոսրովային», անշուշտ ի պատիւ ամիրապետի։ Ըստ այդ զրոյցի քաղաքի շինողն է Դաւիթ անյաղթ փիլիսոփան, որ անուան շփոթութիւն պէտք է համարել։ Այդ շինող Դաւիթը թերևս Ե-դ դարի Դաւիթ Սիւրապաղատն է, ժամանակակից Իբն Խոսրով Ամիրապետի։ Այս զրոյցը մեր կարծիքով ժողովրդական վէպի հերոս Սասունցի Դաւիթ քաղաք շինելու աւանդութեան պատմական հիմքն է։ Այսպիսի անուան շփոթութիւն կամ միաձուլումն կայ և Սուրբ Սարգսի ու Կաղզուանցի Սարգսի պատմական զրոյցների մէջ, որոնց մասին առիթ կունենանք ուրիշ տեղում խօսելու։ Ահա մեր ակնարկած նկարագրութիւնը «. . . Իսկ թագաւորն խորհուրդ ի մէջ առեալ կամեցաւ շինել քաղաքս երկուս, և զնոսա 1) կացուցանել վերակացու շինուածոյ քաղաքին, զի տեսանէր զնոսա յոյժ իմաստունս և հանճարեղս։ Եւ առաքեաց զնոսա ի Հայք շինել զԿարնոյ քաղաք, և

1) Դաւիթ Անյաղթին եւ Մով. Խորենացուն։

քրիստոնէութիւն տարածելու, որչափ հայերը, եթէ միայն քրդաբնակ գաւառների քաղաքական պայմանները քիչ թէ շատ բարեփոխուէին։

11) Վերջին ռուս-թուրքական պատերազմից յետոյ Թուրք կառավարութեան քաղաքականութիւնը բոլորովին փոխուեց քրդերի վերաբերութեամբ։ Այժմ Թուրք կառավարութիւնն ինքն է զէնք տալիս քրդերին և պատիժների մասին այլ ևս ոչինչ չէ լսւում։

12) Եզիդների մի փոքրիկ գաղութ կայ և Ապարանում, Արագածի վրայ։ Մի աւելի մեծ գաղութ՝ գիւղերի ամբողջ մի խումբ՝ կայ Սինակ լեռներում Թուրք—ռուսական սահմանի վրայ։

13) «Եզիդի» կոչումը զանազան տեսակ մեկնութիւններ է ստացել, որոնցից և ո՛չ մեկը հաստատուն հիմունք չունի, նամանաւանդ Էլիզէի առաջ բերածը։ Վերջերս առաջարկեցին և հետևեալ բացատրութիւնը, իբր թէ եզըդի նշանակիլիս լինի Եզդ քաղաքի (Պարսկաստանում) բնակիչ—Եզդում մինչև այսօր էլ կան արևապաշտ ֆարսեր,—բայց այս բացատրութիւնն էլ չափազանց տարակուսելի է և ո՛չ մի պատմական հիմունք չունի։ Այսչափը միայն անտարակուսելի է ըստ մեզ, որ եզըդիութիւնը շատ հին է և հին մազդեզական կրօնի աղանդներից մեկն է, ինչպէս այդ կտեսնենք հետևեալ ծանօթութեան մէջ։

14) Մելէք—Թաուզի կամ Սիրամարգի պաշտամունքը, ինչպէս երևում է, եզիդիների աղանդի վաղեմի և բնորոշ յատկանիշներից մեկն է եղել։ Այդ մասին միակ և ամենահետաքրքրական տեղեկութիւնը, որ կարելի է գտնել բոլոր արևելեան հին ազգերի պահպանուած գրաւոր յիշատակարանների մէջ հասցրել է մեզ նշանաւոր Եզնիկ Կողբացին, մեր հինգերորդ դարի ամենաիմաստուն գրողներից մեկը, իւր Եղծ Աղանդոց գրքում։ Բանից դուրս է գալիս, որ Մազդեզականութեան մի աղանդ, որ այն ժամանակին էլ, ինչպէս և այսօր, կոչւումէր դիւապաշտների քէշշ կամ աղանդ, Լոյս ստեղծելու առաջին միտքը և Սիրամարգի ստեղծումը վերագրում էր ո՛չ թէ բարի Աստծուն՝ Որմըզդին, այլ Արհմնին—չար աստծուն։ Որմիզդն ըստեղծել էր բոլոր բարի և գեղեցիկ արարածները, բայց լոյս չկար։ Արհմնը ծաղրում էր Որմըզդին իւր արբանեակների մօտ և ասում էր՝ թէ ինչ օգուտ Որմզդին, որ գեղեցիկ արարածները ստեղծեց և բոլորը խաւարումն են, ու լոյս չիմացաւ ստեղծել։ Մահմի գալը այս լսելով իսկոյն լուրն հասցնում է Որմզդին։ Այսպիսով Արհմն է լինում Լոյսի սկզբնապատճառ, առաջին գաղափար տուողը։ Մի ուրիշ անգամ Արհմնը Որմըզդին ճաշի է կանչում։ Որմիզդը չէ կամենում ճաշ ուտել, մինչև որ իւր և Արհմնի որդիքը կռուին։ Արհմնի որդին յաղթում է Որմզդի որդուն։ Վէճ է բարձրանում և դատաւոր են որոնում դատ անելու համար։ Այն ժամանակ Արհմնը և Որմիզդը միասին ստեղծում են արեգակը իբրև դա-

յիւրոց պաշտօնէիցն՝ ի կողմն Հայոց աշխարհին՝ յԱմիթ, զոր էր շինեալ
զնա Հօրն Աբգարու Թագաւորին Հայոց։ Իսկ Դաւիթ և Մովսէս որպէս
զարս քաջս անդադար սկիզբն արարին շինել զքաղաքն Կարնոյ։ Եւ հրա-
ման Թագաւորին սպառնայր և խրատ նոցա զօրանայր, և ահաւոր շինուա-
ծով երթայր քաղաքն և զօրանայր։ Եւ կանգնեցին բուրգն խոսրովային և
անակ ի մէջ նայից։ Եւ պարիսպս երիս ի վերայ մերոյ հիման, քերեալ
և պեղեալ ղհող երից պարսպին, զոր ի միջին և ելեր կայր։ Պեղել հրամայեցին
մինչև ի պօրտ քաղաքին և վէմս անտաշս խորագոյնս կրով զերեսս ան-
դընդոց փակեցին։ Եւ ի վերայ մերոյ հիման կանգնեցին երիս պարիսպս
և ի ներքս ի կողմ քաղաքին աստիճանս երկերիւրս մի առ միով յետս
յետս, զի մի գայթակղեսցի պարիսպն ի փորոգացն։ Նոյնպէս և ի դրուց
կուսէ պարսպին աստիճանս երկերիւր մի առ միով յետս յետս, զի ան-
ակ լիցի ի փորոգաց թշնամեաց քաղաքին։ Եւ այլ հնարս հնարեցան, զի
թէ գուցէ գայցեն թշնամիք և նեղեսցեն զքաղաքն՝ և մուտ և ել ոչ
տան առնել։ Արարին ներքնափոր ի մէջ քաղաքին։ Արարին հնարս փորել
ներքոյ գետնոյ խորագոյն, և գնացեալ ի մէջ դաշտին ճաշոյ միոյ գնաց
ճանապարհ՝ ի տեղին ուր ժողով ջրոցն է և շամր յոյժ, զի եթէ նեղես-
ցի քաղաքն՝ կարող են բերել անասնոց խոտ և այրելոյ եղէգն, և թշնա-
միքն զայս ոչ կարասցեն իմանալ։ Եւ ի միւս կողմն քաղաքին նոյնպէս
գետնափոր՝ փակած մեծամեծ վիմօք մինչև ի լեառն, որ կոչի Այծու-
պըտկունք։ Եթէ կարիք հասանիցեն հեծելոյ՝ կարող են բերել՝ ձիօք և
հեծելօք մտանել ի քաղաքն, առանց գիտելոյ թշնամեացն։ Եւ վասն ջրո-
ցըն կարի գեղեցիկ է և վայելուչ, զի ոչ ոք է ի քաղաքին, ոչ
հարուստ և ոչ աղքատ, որ ոչ ունի ջուրս անոյշս բերեալ զերեսօք
անդընդոց։ Ապարանք և աշտարակք գեղեցկաշէնս և սրբագործս, փո-
զոցք և հրապարակք, սպանդանոցք և վաճառանոցք սրբատեսիլս։ Եկե-
ղեցիք հրաշալիք տեսողացն և գրուներ քաղաքին բարձրասեմս և լայնա-
նիստս, և կատարեալ պարսպաւ վայելուչս, և բուրգքն ամենայն խոսրովա-
յինք։ Եւ պարապեալ յամենայն գործոյ քաղաքին՝ խաղացին գնացին
(Դաւիթ և Մովսէս) յաշխարհն յոյնց՝ առ Թագաւորն Թէոդոս։ Եւ
լուեալ վասն քաղաքին, առաւել քան զառաջինն մեծարեր զնոսա։»։

(Այս հատուածն հանեցինք «Սրբոց վարդապետացն Հայոց Մովսէսի և
Դաւթի հարցմունք ընդ երկարնակ չարափառն» յայտնի գրուածքից, որի
շատ օրինակներ կան այլ և այլ մատենադարաններում։ Դա Էակ գրքի թարգ-
մանութիւնն է պատմական յաւելուածներով և զրոյցներով լերիւրուած։
Թարգմանութեան նշանաւոր յիշատակարանն է. «Եւ արդ՝ յետ բազում
ժամանակաց գրեաց զգիրս զայս, իրրև Աստուած հասոյց մեզ ի ժամանակս
այս, յորում .Ե. և .Զ. էր Թուականն Հայոց։ Ես Գուրգէն քարտու-
ղարս Հայոց մեծաց և սուրբ Թագաւորացն Պռատոյ սպաթար ստացող եղէ

գրոցս այսմ։ Բայց զարմանալի է, ի նախկին յիշատակի գրոցս այսմիկ եթէ՝
գրեցաւ գիրքս այս Էակքս հրամանաւ Թարգմանեալ ի յունաց ի հայս
տեառն Յոհաննիսի Հայոց Կաթուղիկոսի Գաբեղենացւոյ ի ԺԵ. Թուական-
ութեանն Հայոց։ Վկայէ այսմիկ Սարգիս արաբացի եպիսկոպոս Ճշմարիտ
վկայութեամբ։ Իմ գիտեցածով՝ մեր հին մատենագրութեան մէջ այս
գրքումն է առաջին անգամ յիշուում Դաւիթ Անյաղթի անունը (Զ—Ի
դար)։ Մեր մէջ բերած հատուածը մեզ թուում է թէ ժամանակով շատ ա-
ւելի ուշ է յերիւրուած, քան բուն գրքի թարգմանութիւնը։)

16) Ինձ թուում է թէ Էլիզէն շփոթում է այստեղ Ս. Յովհաննէս (Ի—
Քիլիսէ) և Մշու Ս. Կարապետ համանուն վանքերը։ Յայտնի է, որ ուխ-
տաւորների աւելի մեծ բազմութիւն գրաւում է Ս. Կարապետը։

17) Խորենացին չնայած իւր մանրակրկիտ և ճիշտ նկարագրութեանը,
այսուամենայնիւ Վանը աչքովչէ տեսել, այլ պատմել է լսածը։ Այս
կարծիքը անպայման կերպով հաստատուում է նրա գործ գրած «որպէս ասեն»,
«որպէս լսեմք», «որպէս լուաք» և սրանց նման գարձուածքներից, իւր
Ա. գիրք 16-դ գլխում։ Այդ միևնոյն գլխումն է առաջին անգամ յիշա-
տակութիւն լինում բևեռագիր կամ սեպաձև արձանագրութեանց մասին.
«Իսկ զամենայն երեսս քարին իրր գրչաւ զմամ Հարթեալ, բազում գիրս
ի նմա գրեաց, որոյ հայեցուածն միայն զամենայն ոք ի զարմանս ածէ։
Եւ ոչ միայն այս, այլ և ի բազում տեղիս յաշխարհին Հայոց արձանս
հաստատեալ, նովին գրով յիշատակ ինչ իւր հրամայէ գրել։ և ի
բազում տեղիս սահմանս նովին գրով հաստատէր»։ Վան—Տոսպի
վրայ բանող վարպետների և հասարակ բանուորների թիւը, որ Խորենա-
ցին անկասկած առել էր ժողովրդական զրոյցից, զանազան ընթերցուած-
ներով է մեզ հասել։ Բանուորների թիւն էր 42000=Հորից բիւրուց և եր-
կու հազար արանց, իսկ վարպետները ոչ թէ 60, այլ 600 կամ 6000։
Ուրեմն մի վարպետին 7-ը կամ 70 գործաւոր։

18) Կոտուրի գաւառակը 17 քրդարնակ գիւղ ունի։ Դրանց հետ խառն
բնակւում են նաև 60 տան չափ Հայեր, Սաթմանիս, Գերնաւուկ, Հապա-
շան և Կոտուր կամ Կոտոլ գիւղերում։ Բերլինի վերջաժողովին Պարսկաս-
տանի կողմից ներկայացաւ Կոտուրը պահանջելու Հայազգի Մելքոն խանը։

19) Դժբաղդաբար այժմ ոչ Վարագի գպրոցը և ոչ Վանի վարժապե-
տանոցը այլ ևս գոյութիւն չունին։ Թուրք կառավարութիւնը փակեց
այդ գպրոցները։

ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏ ԵՒ ԲԱԳԻՇ

Արեւմտեան Տիգրիսի վերին աւազանում ամենաբարձրանիստ քաղաքն է Հանքային Խապուրը (Մադէն-խապուր), որ շինուած է ծովից 1039 մետր բարձրութեան վրայ, կամ 250 մետր բարձր մերձակայ Հեղեղատից: Մօտակայ Մաղարատ սարը առատութեամբ տալիս է պղնձի քրայական հիւթ, որը յոյն, հայ և թուրք գործաւորները մաստամբ հալում են տեղն ու տեղը, իսկ ամենամեծ մասը ուղարկում են Ասիական Թուրքիայի շահաստան քաղաքները՝ Դիարբէքիր (Տիգրանակերտ), Էրզրում, Տրաբիզոն: կար ժամանակ որ բոլոր Արեւելքիք, Կոստանդնուպոլսից մինչեւ Սպահան, պղնձի ամեն ամանեղէնն ստանում էին Մադէն-խապուրից: Դարից սկզբին՝ վերին Տիգրիսից Բաղդադ արտահանուած սարեկան քրայական հիւթը հասնում էր 100 տակառատալիի[1]): Բայց այդ ժամանակից ի վեր պղնձի արտադրութիւնը շատ նուազել է: Հազիւ թէ արդիւնագործւում են արծաթաթաթ արձանի շերտերը, իսկ ոսկին և արծաթը այլ եւս չեն հանւում: Արղանա (Արղնի) քաղաքը, որ գտնւում է խապուրից հարաւ-արեւմուտք՝ հեղեղատին իշխող մի սարաւանդակի վրայ իր Արղանա-Մադէն կամ Արղնի—Հանք մականունը պարտական է մերձակայ հանքային հարերին:

Դիարբէքիր կամ Դիարբէքրը, այսինքն է «Բէքրի երկիրը» այսպէս կոչուած արաբական Բէքր ցեղի անունից որ սիրեց նրան եօթներորդ դարում, նախկին Ամիդ կամ Ամիդան է և յաճախակի էլ կոչւում է Կարա-Ամիդ, «Սև Ամիդ», Քանձաքարի գոյնից առնուած, որից շինուած է քաղաքը: Դիարբէքիրը ամենայարդ աշխարհագրական դիրք ունի: Ծովից 626 մետր բարձր շինուած, 38-գ աստիճանի տակ, ունի հարաւային Ֆրանսայի կլիման և շատ մօտ է գտնւում երկու մեծ գետերը միմեանցից բաժանող պատնոցին, այնպէս որ այդ երկու աւազանների գլխաւոր ճանապարհների միացման կեդրոնումն է, Միջագետքի «կղզու» վերին ծայրում: Բայի այս, զանազան ցեղերի շփման կեդրոնատեղի է

1) Olivier, Voyage en Perse fait dans les années 1807, 1808 et. 1809.

նա, այդ տեղումն են հանդիպում միմեանց թուրքերը, հայերը, քրդերը, արաբները: Ա յատեղից փոքր ինչ հարաւ արաբական լեզուի հիւսիսային սահմանագիծն է անցնում և սկսւում է թրքական բարբառի գօտին: Դիարբէքիրն ունի նաև այն առաւելութիւնը, որ մի ընդարձակ, սիկտհոդային և շատ բերրի դաշտ ունի: Ամենահին ժամանակներից Ամիդի դաշտերը եղել են Ասորեստան Ասիայի «ամբարներից» մէկը և այս տեղական առանձնաշնորհը միացած յաջողակ դրքի հետ տուել են Դիարբէքիրին՝ խաղաղութեան տարիներում, առաջին կարգի կարեւորութիւն: Նա ունեցել է իւր պատմութեան մէջ հարիւրաւոր հազար բնակիչ և շատ պաշարումներ այն տեղից աւելի բազմաթիւ զոհեր են տարել, քան թէ նորանց այս օրուայ բնակիչների թիւն է:

Քաղաքը կանգնած է նկարչական դիրքում՝ նախկին հրաբուխ կատարեալ—գաղից իջած խանձաքարեան հրահոսանքի ծայրում: Ա յդ կամ արեւմտեան ափի պատէզներին իշխող վերջնական քարաժայռը 30 մետր բարձրութիւն ունի Տիգրիսից: Այս տեսարանին աւելի եւս վեհութիւն են տալիս բոլորշի աշտարակներով առատ նաւոր պարիսպները: Դեռ լաւ պահպանուած սեւ պատնէշը ձգւում է ութ քիլոմետր տարածութեամբ, կպչելով մի կողմից մի աւերակ բերդի քառանկիւնի զանգուածին, միւս կողմից՝ մի տատնակատար կամրջի, որ վերջինն է գետի վերայ ձգուած այժմեան կամուրջներից: Ներքուստ քաղաքը խառար է, տխուր, խոնաւ և վատառողջ, փողոցները նեղ և ցեխոտ, գլխաւոր պողոտան, այն է՝ բազարի փողոցը որտեղ կատարւում է բոլոր շարժողութիւնը, հազիւ 3—4 մետր լայնութիւն ունի: Դիարբէքիրի տարեկերքը դեռ աւելի էլ վտանգաւոր է քան թէ Հալէպինը[1]): Խանութները ոչ պակաս Բաղդադի խանութներից լինն են թէ տեղական և թէ եւրոպական ապրանքներով: Վախուս առարկաների մէջ շատը տեղական արդիւնագործութիւն են, ինչպէս օրինակ՝ պղնձի անօթներ, ցանցաշէն (չիթիչի) զարգեղէն, աստիներ (շալեղէն), տեղեկեղէն, ծխամորճ (չիբուխ), մետաքսի և բամբակի պատուաստներ:

1) Ernest chantre, ձեռագիր:

քաղաքում բանող ոսոսյնանկիների տներքի թիւը մօտ հազար հինգ հարիւր է։ Հրապարակում խառնուած ամբոխը Առաջաւոր Ասիայի ամենախառնիճաղանճներից է։ Քրդեր, Հայեր, Թուրքեր և Թուրքմէններ, Քաղդէացիք, Նեստորականներ, Յակոբիկներ, Եզիդիներ, և Հրէաներ, Ասորիներ և Յոյներ կազմում են բնակչութիւնը, որոնց վրայ նորերս աւելցան բաւականաչափ բուլղարներ, Թուրք կառավարութեան ձեռքով աքսորուած Եւրոպացիք [1]։ Բնակիչների գրեթէ կէսը քրիստոնեաներ են և մզկիթները եկեղեցիներից աւելի բազմաթիւ չեն։ Եկեղեցիներից մէկը կանգնած է երրորդ կամ չորրորդ դարի մի հռովմէական շինութեան տեղում։ Հին շինութիւնից մնացել է ճակատը, սորին յարկի թեթեւակի — ձուաձև կամարներով և վերին յարկի վայելչաշէն սիւներով, որոնց իւրաքանչիւրի խոյակների արաբանկարներն և սիւնագլուխների քանդակները տարբեր տարբեր են։

Տիգրիսի վերին հովիտները և օժանդակները հարուստ են աւերակներով և նոր գիւղաքաղաքներն էլ շինուած են նախկին քաղաքների տեղը։ Հին շինութեանց ամենահոյակապ աւերակներն են մի կամրջի մնացորդները, որի կոտրած կամարները կախ են ընկած Տիգրիսի վրայ 25 մետր բարձրութեամբ, Բասման-Յուի և Տիգրիսի խառնուրդից ոչ հեռու։ Աւազաքարի ահագին կտորներ ցրիւ են ընկած մերձակայ գետաձորում և սրանց մէջ այրեր են փորուած բնակութեան համար։ Փուլքը ամբողջ մի գիւղ է դարձել, մինչև անգամ բազար էլ ունի [2]։ Մայա-Ֆարքէին կամ Ֆարքէյնը գտնում է Դիարբէքիրից հիւսիս արևելք՝ փուլ եկած քարակարկառների մէջ [3], որի շուրջն է պատում Բասման-Յուի ժայռակոփ վտակներից մէկը, ճիւղաւորուելով պարտէզներում։ Այս Ֆարքէյնն է Բիւզանդացիների Մարտիրոպոլիսը, ուր մինչև օրս էլ կանգուն են հինգերորդ դարում շինուած մի հոյակապ մատրան

1) Cernik und Schweiger—Lerchenfeld, Ergänzungsheft zu Petermanns Mittheillungen, n. 44, 45.

2) Von Moltke, Zustände und Begebenheiten in der Turkei;—Carl Ritter, Asien.

3) Ernest Chantre, ձեռագիր։

աւերակները։ Այդ բաւականին հիշատակարանը շինուած էր այն հազարաւոր նահատակների ոսկորների վրայ, որոնց կատարեց Շապուհը։ Աւելի արևելք՝ Բասման-Յուի վրայ կայ մի պարսկական կամուրջ, որի կամարանկիւնը 50 մետր բարձր է Տիգրիսից։ Կիսաչական Հուզուն (խուզաս, խազու) իրար վրայ շինուած նորաշէն տներով կանգնած է մի աւերակ ամրոցի վրայ, իսկ շրջակայքի ձորերից մէկում գտնում է մի հայկական եկեղեցի՝ հինգերորդ դարից մնացած, ուր ամեն տարի ուխտաւորներ՝ Ասորիքից, Հայաստանից և Ուռհայաստանից ուխտ են գալիս «իսկական խաչափայտի» մի մեծ մասունքին։ Սղերդը (Սերտ կամ Սաերտ) Բասման-Յուի վրայ է և նմանապէս աւերակների վրայ է շինուած։ Դ'Ահուիլը և ուրիշ պատմական աշխարհագիրներ կարծում են թէ այդ (հին) Տիգրանակերտը լինի։ Սեպագիր (բևեռագիր) արձանագրութիւններ՝ գրուած արմէնիաք — հին հայկական լեզուով, երևում են այս երկրի զանազան վայրերում, փորագրուած քարաժայռերի կոկած երեսների վրայ։ Մշակուած դաշտում, սեհեռտաններում և վարունգանոցների մէջ, փորրիկ, բարձր աշտարակները տալիս են Սղերդին բերդակներով շրջապատուած ռազմավայրի կերպարանք։ Դիարբէքիրից յետոյ վերին Տիգրիսի ամենամեծ քաղաքն է սիրուն Բիթլիսը — Բաղէշը, ծովից 1500 մետր բարձր, վան լճի հարաւ — արևմտեան անկիւնից ոչ հեռու։ Կարմիր և գորշ հրահոտանքը նիմրուդ — գաղից իջնելով կազմել է գահավէժ սարաւանդներ՝ կտրտուած խոխոմներով, որոնց յատակում թաւալում են աղմկաձայն հեղեղային ջրերը՝ մասամբ Տանքային և Ջերմկային, և սրանցից է կազմւում Բիթլիսի գետը։ Մի հին ամրոց բարձրանում է գետախոռանուրդի մօտ, գետափները միացած են սրանկիւն (ogivale) կամարներով, իսկ լայնանիստ մինարէների յոլորշի աշտարակները վեր են բարձրացնում իրենց շրջանաձև աշտարակները միահարթ տանիքաւոր շինութիւններից, պարսպներից և ծառատունկներից [1]։ Բաղէշում, որի բնակիչների մի մասը Հայեր են, գործւում և ներկւում են պատառաներ։ Իրրև գլխաւոր կայան

1) Hommaire de Hell; Ainsworth; Deyrolle; Chantre; Barry.

Տիգրիսի և վերին Եփրատի հովիտների միջև բաժին ունի միայն հանակութեան սահմին առևտուր։

ՈՒՌՀԱ, ՄԾԲԻՆ, ԹԻԼ-ԷՐՄԷՆ

Եփրատը Տիգրիսի չափ առատաջուր չէ և ոչ էլ նրա չափ մօտիկ է լեռների բերրի հովիտներին։ Իր ալ ափը ապահովափակուած է անապատի աւազներով և կաւերով, ուստի և աւելի քիչ քաղաքներ և գիւղաքաղաքներ ունի իր եզերքներին, մանաւանդ կրճերից դուրս գալուց յետոյ մինչև բուն Բաբելոնիան։ Թէև իր ընթացքն է կազմում Աւագ Ասիայի մեծ անկիւնագիծը՝ Աղեքսանդրեակի և Պարսից ծոցերի միջև, այսուամենայնիւ Եփրատը մի մեռեալ գետ է համեմատած արևելեան միջագետքի չրհոսանքներին։ Հնում այդպէս չէր։ Աղբերի պատմութեան մէջ մի զարմանալի աշխարհագրական հակադրութիւն է տեղի ունենում գետային երկու հոսանքների միջև։ Կրճերից դուրս գալուց յետոյ մինչև Շոշտատան (Սուզիան) մեծամեծ քաղաքներ շարուած էին Տիգրիսի՝ այդ Ասորական գետի՝ ափերին, մինդեռ ստորին Միջագետքում՝ ոռոգ Մարական պարսպից, գրեթէ բոլոր քաղաքները դասաւորուած էին կարգով Եփրատին մօտիկ կամ նրա ափերին[1]։ Երկու սէրութեան՝ Ասորեստանի և Բաբելոնիայի հակառակութիւնը համապատասխանում էր երկու գետերի հակադրութեանը։

Եփրատի երկու ճիւղերի խառնուրդից ներքև՝ մինչև նրա ստորոտական կրճերից դուրս գալը, միմիայն աղքատիկ գիւղաքաղաքներ են գանուում գետի ափերին, բայց Թումա-Յուի կոմմնական հովտում կան երկու կետրոնատեղի՝ Մալաթիան և Աղբուզուն, որոնց միջև երթևեկում էր մի ժամանակ՝ վեց ամսից վեց ամիս՝ քաղաքի գրեթէ ամբողջ բնակչութիւնը։ Մալաթիան, Հուլմէացիների Մելիտէնը, Յմերանոց քաղաք էր, բայց շրջապատուելով ոռոգման ջրանցքներով և ողողուած դաշտերով վաստակոյ դարձաւ, ուստի

1) Ménant, Babylone et Chaldée; — Hommel, Vorsemitische Kulturen.

և հէնց որ շոգերն սկսում են՝ բնակիչները թողնում են նրան Աղբուզուս գնալու համար, որ ամառանոց քաղաք է, շինուած հարաւում՝ մի սեղի բարձր հովտի մէջ[1]։ Բայց այս անընդհատ երթևեկութիւնները մեծ մասամբ դադարել են, որովհետև ժողովրդեան մեծամասնութիւնը մշտական բնակութիւն հաստատեց Խարսալիին քաղաքում, որ հիանալի բնակավայր է, ուր իւրաքանչիւր տուն իր աղբիւրն ունի, իր պարտէզը, իր ծառատունը։ Թոքմայի վերին հովտի երկու քաղաք՝ Կիւրին և Տէրէնտէ (Դաւռուն և Դերէնդէ) Մալաթիայի նման ամառը գրեթէ ամայի են մնում։ Բոլոր ժողովուրդը գաղթում է դէպի շրջակայքի փոքրիկ ամարանոցները։ Կիւրինցի պանդոխտները, որ ցրուած են պետութեան բոլոր մասերում, նշանաւոր են իրենց նախաձեռնող ոգով։

Դամմագէնի նախկին մայրաքաղաք Ամմասատը, Լուկիանի Հայրենիքը, որ մի ժամանակ այնչափ նշանաւոր էր իրրև անցատեղի և իրրև հեռվմէական լեգէոնների բերդաքաղաք, շինուած Եփրատի կրճերի բերանում, այժմ մի սոսկ սեղական գիւղաքաղաք է, սեղի նուազ բնակչութեամբ, քան թէ փոքրիկ Սուլեբէկը, որ շինուած է մի կոմմնական հովտում, Դիարբէքիրի ճանապարհի վրայ։ Այս երկու քաղաքներում մնացել են միայն արուեստական վիթխարի հողաթմբեր, որոնց վրայ շինուած էին միջնաբերդեր, բայց շրջակայքում՝ գետի արևմտեան կողմը բարձրացող մի լերան վրայ, ծովի մակերևոյթից 1800 մետր բարձր, նստեր գտել են Դամմագէնի թագաւորների փառահեղ դամբարանները, զարդարուած արձաններով, որ մինչև 17 մետր բարձրութիւն ունին[2]։ Բնիկները այդ համարում են Ներոմոդի Միջագետքի առասպելական դիւցազնի՝ գերեզմանը, որից և Նիմրուդ-դաղ անունը, որ տրւում է այդ լեռներին։

1) Von Moltke, Das Nördliche Vorland Klein — Asiens; — Carl Ritter, Asien.

2) Sester und Puchstein, Verhandlungen der Gesellschaft für Erdkunde zu Berlin, 1882.

Սամոսատից ներքև Եփրատն ընդունում է մի հեղեղատ, որ իջնում է մի նեղ հովտից, շրջապատուած կրային լեռներով և ուր գանւում է թուրքական Բեհենդի քաղաքը։ Աւելի ներքև Հռոմկլան, «Հռոմէացիների բերդը», Այաստանի կաթուղիկոս—Պատրիարքների նախկին աթոռանիստը, Սամոսատի նման մի ժամանակ շատ յառաջացած անցատեղի էր, մինչդեռ այժմ Բիր, Ալբիրատ կամ Բիրէջիկն է այն քաղաքը, ուր կատարւում է կարաւանների ամենօրեայ անցուդարձը։ Ա յս տեղումն էր, ըստ յունական աւանդութեան, որ Բագասը ձգեց առաջին կամուրջը Եփրատի վրայ, որպէս զի գնայ Հնդկաստանին տիրելու [1]։ Ա.ջ ափում մի կղզիացած քարաժայռ կրում է իւր վրայ մի լայնածաւալ ամրոցի նկարչական վերատակները, որ հնումն իշխում էր անցքին։ Ա յս քարաժայռը ձգւում է գետի հարաւ բլուրներով, որոնցից շինութիւնները ամիխիթատրոնի ձեւով իջնում են գետի Եփրատի ափը։ Ատիճանաբար ցածացող անների եռակում երեւում են ապիտակ մինարէները, իսկ գետի եզերքներում շարք շարք կանգնած են, երկու քիլոմետր երկայնութեամբ, մզկիթներ։ Բիրէջիկը գլխաւորապէս բնակուած է թուրքերով, բայց ունի նաև Հայերի գաղութ, որ պատկանում են մասնաւորապէս պրոտեստանտական (տրանզիտա) վարդապետութեամբ։ Իսկ բերդի մօտ բազմաթիւ քուրդ ընտանիքներ որջացել են աւերակների և կրային քարաժայռի անձաւների մէջ։ Բիրէջիկի շուրջը սփռուած են գարու արտեր, ուր անց ու դարձ անող բազմաթիւ կարաւանները իրենց ուղտերի պաշարն են տեղնում։ Աւելմնքում՝ Եփրատի մի պտոյտի մօտ կանգնած է Բալկիս Տղաբլուրը, ուր գտնուել են Հռոմէական թանկագին նկարներ և միւսիան (մոզայիք), բայց գրեթէ բոլոր արժէքաւոր առարկաները յարդարուած են եղել, իսկ բլուրը Բիրէջիկի բնակիչներին ծառայում է իբրև քարհանք [2]։ Բիրէջիկի հիւսիսում՝ գետի Տաւրոսի առաջաւոր լեռնաշղթաները տարածուած լերկ դաշտը նշանաւոր է իւր խանձարոյային անհամար վերատակ-

1) Oppert, Expédition scientifigue en Mésopotamie.

2) Cernik und Schweiger-Lerchenfeld, արդէն յիշուած։

ներով, որ ցրիւ են ընկած աւազաբար ժայռերի վրայ [1]։

Բիրէջիկից Ադեքսանդրեակ գնացող ճանապարհը, որի տեղը ուշ թէ շուտ բռնելու է երկաթուղին, անցնում է նիղիք փոքրիկ քաղաքով և նրա Ֆիլենիների ծառաստաններով, ուր 1839 ին տրուած ճակատամարտը բացեց Իբրահիմ-փաշայի եգիպտական զօրքերի առաջ Հիւսիսի ճանապարհը և պատճառ եղաւ Եւրոպայի միջամտութեան։ Ա յդտեղ և կամ այդտեղից ոչ շատ հեռու, փոքր-Ասիայից և Ասորքից դէպի Եփրատը տանող ճանապարհի վրայ, արդէն ուրիշ շատ անգամ Հանդիպել են միմեանց յունական, բիւզանդական, պարսկական բանակներ։ Ա յս կողմերի գլխաւոր քաղաքն է Ա.նթաքը, որ նմանապէս պատկանում է Եփրատի աւազանին և շինուած է ամիխիթատրոնի ձեւով Ասլուրի հովտին իշխող հիւսիսային զառիվայրերի վրայ։ Քաղաքի և գետի միջտեղում կայ մի արուեստական հողաբլուր՝ ասլերով ծածկուած՝ ինչպէս որ լինում են Միջագետքի և Ասորիքի հողաբլուրների մեծ մասը, և կրում է իւր վրայ մի լքուած ամրոցի վերատակները, որի շուրջը ճախրում են թռչունները երամներով։ Քաղաքը բնակուած է գլխաւորապէս թուրքմաններով և ուրիշ արհեստ չունի բացի բրդի լուացումից և կաշեգործութիւնից, բայց իբրև գլխաւոր կայան Բիրէջիկի և Ծոլի միջև՝ ունի գրամանցային մեծ առուտուր։ Ա.նթաքից հարաւ-արեւելք Ասլուրը երկարձգւում է. մի արուեստական ջրանցք անցնելով 250 մետր երկայնութեամբ ներքնահովիտ՝ գնում միանում է Գէօկ-սու-ի առատ ջրերին, որ հոսում է հարաւ՝ դէպի Հալէպի գաշտերը։ Ա յս ջրանցքը, որ սահներեքերորդ գարից է և նորերս նորոգուած, միացնում է Եփրատի աւազանը այն պարփակեալ գոգաւորութեան հետ, որի յատակումն է Հալէպը [2]։

Ա յս երկրում, որ չորս գար շարունակ կայսերութեան սահմանագիծն էր, բազմաթիւ են հռոմէական աւերակները։ Եփրատի ա.ջ ափին՝ ոչ հեռու Ասլուրի գետախառնուրդից, Ջարաբիոսում

1) Von Moltke, Das Nördliche Vorland Klein—Asiens.

2) Rousseau; Carl Ritter, Asien, Vol. X;-Cernik, յիշուած։

(կամ Ջերաբլուս) երևում են մի տաճարի փլատակներ, որ կարծ-ւում էր երբեմն թէ նախկին Եւրօպաս'ի (Europus) տաճարը լինի: Անգլիայի Հենգերսոն և կոնգեր հետախոյզների վորոշածքները հաստատեցին, որ այս՝ խորհրդաւոր և անճանաչ Հիտիտ ժողովրդի այնչափ երկար ժամանակ որոնուած կարքեմիշ մայրաքաղաքի աւերակներն են եղել: Խանձարքարային և կրային սալերի վրայ փորագրուած քանդակները մի ոճ ունին, որ թէև ինքնուրոյն, բայց յիշեցնում է ասորեստանականը, իսկ արձանագրութիւնները դրոշմուած են նշանագրերով—հերոգլիֆներով [1]: Յայտնի հարաւ, որ արաբական և թրքական լեզուների սահմանագիծն է, կայ մի ուրիշ աւերակ քաղաք, յաճախուած հնախօսներից—Բամբիւկիան, այժմեան Մամբիջը, որ միևն է այն բազմաթիւ ներազոլիաներից (Արեգ քաղաք), որ երբեմն նուիրուած էին արեգակին և «մեծ դիցուհուն»: Այս քաղաքը կոչւում էր նաև Մագոգ:

Բերէջիկից արևելք՝ Մուսուլի ճանապարհին՝ կարաւանների առաջին մեծ իջևանն է Օրֆան, Ուրֆան, հին Ուռհան (Ռոհաս), խաչակիրների Եդեսիան: Այս քաղաքը շինուած է Եփրատի նահրբելիքով անցնող օժանդակ կարա-չայի արևմտեան ափին և յենուած է Թոփ-գաղի առաջաւոր բլուրների վրայ: Թոփ-գաղը միջին դարերում անուանւում էր «Սուրբ լեառն», իր կողերի վրայ շինուած բազմաթիւ վենաստանների պատճառով: Օրֆայի դղեակը, ինչպէս և սահմանի վրայ գտնուող բոլոր ամրութիւնները, շինուած է Յուստինիանոսից, որ երբ և իցէ գոյութիւն ունեցող մեծ շինողներից մէկն է [2]: Դղեակը հանգչում է մի գահավէժ հանդիսագօտու վրայ, որ շրջապատուած է չորս կողմից կարծր ժայռում փորուած 12 մետր խորութեամբ խրամով [3]: Մի եռանկիւնի պարիսպ՝ քառակուսի աշտարակներով, միանում է դղեակի

1) Sachau, Reise in Syrien und Mesopotamien.

2) E. Desjardins, ձեռագիր:

3) G. Rey, Les Colonies franques de Syrie aux douziéme et treiziéme siécles.

ամրութիւններին և անջատում է քաղաքը կանաչագեղ ծառատանններից և պտղատատ պարտէզներից, ուր ճիւղաւորւում են կարա-չայի ջրերը: Ամրութիւնների տափարակից երևում է ամբողջ քաղաքը՝ փռուած բերդի ոտքում իր գմբէթներով, մինարէներով, մզգատաններով, իսկ հեռուն՝ շրջակայքի բլուրների լանջերը, պատած այգիներով: Դղեակի պատուանդանից դուրս է ցայտում մի ակն՝ նախկին Կալլիրհօէն, և լցնում է մի արբազան աւազան, ուր լողում են կիրաճկներ (cyprin), որ հաւատարատէս յարգուած են թէ հրէաներից, թէ քրիստոնեաներից և թէ մուսուլմաններից: Խալիլ կամ «Աստուծու բարեկամ» Աբրահամին նուիրուած մի մզկիթ անգրագարձնում է իւր սրմերը խաղալ ջրին մէջ, իսկ նռենիներ, կիպարիսներ, ասոխներ հպանձատորում են աւազանի եզերքի աստիճանները, ուր գալիս են հանգչելու ուխտաւորները: Երկու սիւն, որ աւանդաբիւնը վերագրում է Եբրայեցիների նախահօրը, կանգուն են բերդի մօտ իսկ ամրոցի ժայռի տակ՝ ինչպէս և շրջակայքի գահավէժների վրայ՝ բացուած կան առնուազն երկու հարիւր անձաւ, որ ձեռքով են գործուած և որոնցից մի քանիսը դարաւորով միմեանց վրայ յարկաձև՝ երկայն ձգուած են ներքնաշրիներով: Այս բոլորը նախկին դամբարաններ են, վերափոխուած բնակարանների [1]: Քաղաքն ունի նաև միջնադարեան շէնքերի մնացորդներ, ինչպէս են, օրինակ՝ Կուբաբնէյ իշխանների՝ խաչակիրների ժամանակ Եդեսիայի վեհապետների՝ պալատի մի քանի նշխարները: Օրֆայի տները շինուած են կրային և բազալտեան քարից, փոփոխակի շերտերով դարաուած իրար վրայ, որ տալիս է նրանց շատ գուրեկան տեսք, և քիչ քաղաք՝ Առաջաւոր Ասիայում կարող է համեմատուել Օրֆային տների և փողոցների մաքրութեամբ: Քաղաքի արդիւնաբերութիւնն է միմիայն բամբակեղէն և խեցի ամանեղէն, բայց դրամանդային վաճառականութիւնը շատ գործօն է: Յորենի արտահանութիւնը ամագին չափեր է առացել և Հարիւրաւոր կէս-առնակաց բէդուին և քուրդ բնակութիւն են հաս-

1) Olivier, Voyage dans l'empire ottoman.

տառել մերձակայքում և ֆրանսիական հիվպատի համար մշակում են Մէջէրի-խան ընդարձակ կալուածքը։ Բայի հացահատիկներից, այդտեղից առաջանում է կինճիթ (քինճիթ), կանեփ, բամբակ և չինական եղինճ (ramie) [1]։

Վերին Միջագետքի բոլոր քաղաքներն էլ անուանի են իրենց պատմութեան մէջ։ «Աստուծոյ բարեկամի» քաղաքից՝ Օրֆայից հետո Հառանը, նախկին Խառանը, յիշուած է Ծննդոց գրքում իբրև Աբրահամի հայրենիք և առաջնորդաշխարհը երկար ատում էր այդ տեղում։ Արևելքում՝ Մարդինը համբաւաւոր է իբրև կենդրոնական դէպի լեռները հալածուած ազանդաւորների։ Առաջ հալածողները օրթոդոքս քրիստոնեաներն էին և յետոյ մուսուլմանները։ Քաղաքի բնակիչների մերձաւորապէս կէսը բաղկացած է քրիստոնեաներից, որ պատկանում են զանազան ազանդների [2]։ Մարդինում խօսակցական լեզուն գլխաւորապէս արաբերէնն է, մինչդեռ Օրֆայում պիտի լեզուն թուրքերէնն է։ Մարդինը մզկիթների, մատուռների, մեդրեսէների և ուսումնարանների քաղաք է։ Այստեղ բնակւում են մահմետական քրդեր, «քաղդէացիք», Սիւրիացիք (ասորի), յակոբիկներ, հայեր, և կաթոլիկ ու բողոքական գարձածներ, որոնք ուրոյն ուրոյն թաղերում չեն, այլ խառն են բնակուած։ Մարդինի կանայք հետաքրքրուած են գեղեցկութեամբ։ Քաղաքը շատ նկարչական է, շինուած է 1190 մետր բարձրութեան՝ փողոցներով և ծերպերով լեցուն կրային քարաժայռի վրայ և պատկուած է մի սպիտակ ամրոցով, որ անառիկ է համարուում։ Ամրոցից հարիւր մետր աւելի բարձր՝ մի սրածայր ժայռի գլխին դեռ մինչև օրս էլ մնացել է մի մարտկոց, դիտարանի նման բարձրացած երկրի վերևում։ Մարդինը շինուած լինելով մի լերանցամէջքի մերձակայքում, որով Դիարբեքիրը ուղղակի հարաւում է Միջագետքի դաշտավայրերի հետ և որտեղից անցնում է մի «գրեթէ կաւընթաց» ճանապարհ, կարևորութիւն ունի ռազմագիտական տեսակէտից, բայց շատ դը-

1) Ernest Chantre, ձեռագիր։

2) Grattan Geary, Through Asiatic Turkey.

ժուարամատոյց լինելով մեծ վաճառականութիւն չունի։ Կարաւանները անցնում են նրա լեռների ստորոտով և ուղղակի գնում են արևելք՝ դէպի Մծբին և Մուսուլ։ Մարդինից 25 քիլոմետր հարաւ—արևելք ճանապարհն անցնում է մի կրճի մօտով, որով պաշտպանուում էր բիւզանդական Կարա քաղաքը։ Աւամնատոր աշտարակներ, աստիճաններ, կամարներ, ժայռում փորուած սիւնաշարեր պահպանուել են անաղարտ։ Մարդ փիտուում է այդքան այն ամբոխը, որ պէտք է խանուէր տաճարների դռանը և ստորերկրեայ մեծ քաղաքի սանդուխների վրայ, բայց ամբողջ բնակչութիւնը բաղկացած է մի քանի թուրքմէն ընտանիքից, որ որջացել են այստեղ այնտեղ, այրերի և վիրատակների մէջ։ Տուռ Աբդին լեռներից արևելք՝ Միդիատը Յակոբիկների մայրաքաղաքն է։ Նիզիբին, Նիզիբիս (այն է՝ Մծբինը), որ Տիգրանի ամենիսան էր և որը Հռոմէացիները բերդաքաղաք դարձրին ընդգէմ Պարթևների, այս «Երկրորդ Անտիոքը», որ, ասում են, Հարիւր Հազարներով բնակիչներ է ունեցել, այժմ բռնած ունի նախկին խոշոր տարածութեան մի շատ փոքրիկ մասը։ Մի տաճարի սիւները մնացել են, նաև մի հռոմէական կամուրջ, որ ձգուած է Ջաղջաղ ողմկալից գետի վրայ։ Ջաղջաղը Խաբուր գետի օժանդակն է։ Այս խաբուրի հովտում՝ Մարդինից հարաւ-արևմուտք Ջահատ Հեռահոգը կարծում է գտած լինել Տիգրանակերտի այնչափ երկար որոնուած տեղը, այդ լինելու է Թէլ-Ուրմէնը կամ «Հայկական Թիլը» (Տողարլուբ), Դիւնայզիր գիւղի մօտ, բայց այդ տեղում ոչ մի աւերակի հետք չէ նշմարուում։ Ռաս-էլ-Այն կամ «Ջրի գլուխը» Խաբուրի առագած դաշտում մի ժամանակ կոկիսեան չէչէնների գաղթավայր էր, բայց շրջակայքի արաբ ցեղերը հալածեցին այդ չէչէններին, մեղադրելով նրանց ձիերի և մանուկների գողութեան մէջ։ Մատամբ էլ իրենք չէչէնները հեռացան գնացին, դինուոր մնալով թուրքական ժանդարմերիայի մէջ։) Երեմն այնչափ բազմամարդ և այժմ գրեթէ անապատ դաշտի խորքում ուր սողոսկում է Խաբուր գետը, ձգուում է արևելքից

1) Sachau, արգէն յիշուած;—Grattan Geary, Through Asiatic Turkey.

դէպի արեւմուտք Սինջարի ընդհատուած լեղնաշղթան։ Այստեղի կեդրոնատեղին է Սինջարը, քրդերի Սինգալին, արաբների Բէլէդը, և եզիդիների գլխաւոր վաճառատեղին է։ Պատմում են որ Ջէբէլ-Աղիզի ժայռերում՝ Սինջարից արեւմուտք, մի «անյատակ» վիհ կայ բացուած, ուր իւրաքանչիւր տարի եզիդիները պատարագ են մատուցանում Սատանային, ձգելով վիհի մէջ թանկագին զարդեր, արծաթ և ոսկի փող [1]։

ԱԳԱՆԱՅԻ ՎԻԼԱՅԷԹԸ

ԿԱՄ

ԿԻԼԻԿԻԱ

Կոնիէից (Իկոնիան) արեւմուտք՝ հիւղերի և խրճիթների նօսր խմբերը, որոնց քաղաք անունն են տալիս, յաջորդաբար շարուած են Տաւրոսի հիւսիսային սոսկոտում, ուր լեռներից իջնող մաքուր ջրերի առուակները դեռ չեն ցամաքել և տենդերի եղանակին բնիկները՝ սահմանակից լինելով բարձր արօտատեղերին, ամառը սարը բարձրանալու դիւրութիւնն ունին։ Երբեմն կարամանեան նահանգի մայրաքաղաք Կարամանը գտնւում է արդէն գրեթէ լեռների սրտում՝ 1900 մետր բարձրութեան վրայ ծովի մակերեւոյթից։ Աւակլին (Լէկլի, Հերակլիա) հազիւ 1000 մետր բարձրութեան վրայ գտնուի, բայց իւր տները խմբուած են մի բլրի վրայ, որ ճահճային սահմանագծից բարձր է։ Կարաբաւնար կամ Սև-Աղբիւրը բոլորովին անբնակ է մնում ամառը,

1) Kinneir, Voyage en Arménie, etc.

բնակիչները թողնում են լճային փոսորակի ափի և բարակի շահագործութիւնը, բարձրանալով կարաջա-դաղի ենթլանները։ Վերջապէս Նիգդէ'ն (Նիկոէ), աւազանի արեւելեան ծայրում մօտ 1500 մետր բարձրութիւն ունի և գտնւում է Ալա-դաղի (Ալլահ-դաղ) հանդիպագօտու սարում։ Ոչ հեռու կանգնած է Կըզ-Հիսար, «Աղջկայ ամրոցը» կամ Քըլիսէ-Հիսար, «Եկեղեցու ամրոցը» Շամիրամի խճուղու վրայ, ուր շինուած էր նախկին Տիանան, Ապոլոնիոս մոգի հայրենիքը։ Չամիլեան հետաքննին ճանապարհորդը կարողացաւ որոշել Տիանայի գիրքը գտնելով այն ցայտող ապրիւրը, որը հին հեղինակները նկարագրում են Ասմաքէոս անունով։ Այս ակը, որ նուիրուած էր Արամազդին, մի սառնորակ, աղտաղի, թեթեւակի ծծմբային ջրաւազան է, որի կեդրոնական շառաւանը ձգւում է մօտ 50 հարիւրամետր մակերեւոյթից բարձր, առանց երբէք աւազանից դուրս գեղանալու։ Անտարակոյս այս ջրաւազանը նոյն կազմուածքն ունի, ինչ որ մեր ասիսրական շառաւանները. հեղուկը դուրս է ցայտում կեդրոնական մի բացուածքից և դուրս ծորում յատակի ճեղքուածքով։ Հին ժամանակներից ի վեր Իկոնիոնից Տիանա ձգուող առևտրական և ռազմական ճանապարհը կրանում է ապեղնաձև՝ անցնելով լեռների սառոյտից՝ Լարանգայով և Կիբրիսարայով, այն է Կարամանով և Աւակլի'ով։ Աւելի վեր՝ հիւսիսում՝ ապի ճահիճները, պաշարելէնի և մաքուր ջրի պակասութիւնը ճանապարհը սաժանելի են գարձնում և գրեթէ անկարելի գարձնում մեծ բազմութեամբ և այդտեղով ճանապարհորդելը։ Այսպիսով կատարելապէս զուգահեռական են գտնում միմեանց ծովափի գծագրութիւնը, եղերական լեռների կատարները և վերին բարձրաւանդակների գլխաւոր ճանապարհը։ Այս գաւառներում անգլիացի ճանապարհորդ Դէվիսը (Davis) նորերս գտել է հետաքրքրական արձանագրութիւններ։

Կիլիկիայի փոքրիկ նահանգը կրը չունին առաջուայ գործնեութիւնը, երբ բազմամարդ Կիպրոսի վաճառականութեամբ էին փարթամացած։ Այսպէս, նախկին կորակեսիոնը մի կուչ եկած գիւղ է կղզային ժայռ ի ստորոտում և մայրցամաքի հետ միա-

նում է մի աւազային պարանոցով։ Սելինոէ՚ն, յոյների Սելինոսը, մի խիղճ գիւղակ է։ Անեմուրիոնը, որ գտնում է փոքր Ասիայի ամենահարաւային հրուանդանի վրայ, մի ընդարձակ գերեզմանոց է միայն, իսկ Անամուռ (Անեմուռ) գիւղաքաղաքը՝ ուերահիներից փոքր ինչ հեռուն՝ շինուած է մի հեղեղատի բերանում։ Աւելի Չալինարէ փոքրիկ ծովածոցը, հների Կելենդրիսը, կիպրոս կղզին հետուն գնալու սովորական նաւահանգիստն է։ Պրոմանոսլ նաւահանգստի քարաժայռի վրայ, որ երբեմն ամրացրած էր Հռոդոսի ասպետներից, այլևս ոչ ոք չէ բնակւում։ Նախկին Սիլիկիան (Սելևկէ)՝ Գեօկ-Սուի կալիկադնոսի գետաբերանում, տնակների մի կոյտ է միայն։

Աւելորական շարժումն սահմանած էր տեղափոխուիլ դէպի արևելք՝ Դաշտային Կիլիկիայի ծովափունքը, ուր գալիս հանգչում է փոքր Ասիայի անկիւնագծային ճանապարհը և ուր բերրի դաշտեր և հովիտներ մշակութեան յարմար ընդարձակ գօտի ունին։ Այս գաւառի վաճառաշահ նաւահանգիստը՝ Մերսինա՚ն այս գարի կիսին իրթիթներէ մի փոքրիկ խումբ էր, շրջապատուած մրտենիներով, որից և ստացաւ իւր անունը, իսկ այժմ մի վաճառաշահ քաղաք է և իւր նաւահանգիստը՝ որ չափազանց հնթարկուած է ծովամիջի քամիներին, պաշտպանուած է արուեստական քարափներով (quai) և թումբերով [1]։ Քաղաքը մասամբ շինուած է մարմարի կտորներով, որ ընկած էին հողի երեսին հին յունական քաղաքի վայրակներից։ Մի քանի քիլոմետր արևմուտք ուրիշ աւերակներ ցոյց են տալիս Արգիւրիների Սոլի քաղաքի տեղը, ուր խօսւում էր այն աղճատ լեզուն, որից առնուած՝ խօսքի սխալ և անկանոն գարձուածները կոչւում են «Սոլէսիզմ»—Սոլացանութիւն։ Աւելի հետուն երևում են Պոմպէոպոլսի հռոմէական սիւնաշարերը, որ առաջնորդում էին դէպի մի ձուաձև նաւահանգիստ, որի պատնէշները շատ լաւ պահպանուել են, բայց ներսը լցրել է նաւահանգիստը և ծովափի հո-

1) Մերսինա նաւահանգստի առևտրական շարժումը 1880 ին=110 000 տակառաչափ։

զակոյտերը երկարել փակել են խորշի մուտքը։ Շատ կէտերից հեռադիտական յիշատակարան է Վերէկկի դաշտը կամ Կանգուն քարը, որ մի ահագին կոթող է, թերևս անդրպատմական դարերում կանգնեցրած։ Լանգլուայի ասելով՝ այս վէմը, որի ստորին մասը մաշուել է ուղտերի քսուելով և քորուելով, 15 մետր բարձրութիւն ունի, իսկ գանգուածի ծաւալը՝ 120 խորանարդ մետր [1]), կշռում է առնուազն 300 տակառաչափ և կարող է համեմատուիլ Բրիտանիայի վիմխարի մեծալէմերին (մեգալիթ)։ Արդեօք սա մի մենհիր է կամ գուցէ այն միապատիկ կոթողներից, որ սովորաբար կանգնեցնում էին փիւնիկեցիները զոյգ զոյգ երենց տաճարների մուտքի առաջ [2])։

Մի նոր փառաւոր ճանապարհ միացնում է Մերսինան Տարսոն և Ադանա քաղաքներին։ Տարսոնը գտնում է Կիւդնոսի կամ Տարսոնի գետի ալ ափում, Բուլգար-դաղի հանդիպագօտու վերջին սպառուող զառիվայրերի վրայ, փոքր Ասիայի համբաւաւոր քաղաքներից մէկն է, ամենամեծ հնութեամբ պարծեցող։ Արևելեան մի աւանդութեան նայած, այս քաղաքի բունած տեղը առաջին գաշտն էր, որ ցամաքեց երբ որ Ջրհեղեղի ջրերը չեզ քաշուեցան։ Քանի որ սիկահոլը չէր լցրել նաւահանգիստը և Կիւդնոսը դեռ նաւարկիլ էր՝ Տարսոնը հիանալի դիրք ունէր վաճառականութեան կեդրոնավայր դառնալու համար, Ասորիքի և փոքր Ասիայի միջև՝ Կիլիկիայի նաւահանգիստներով, որոնց մուտքն էր պաշտպանում։ Կեսարի և Օգոստոսի ժամանակ նա գիմացը ծովի միւս կողմում գտնուող Ալէքսանդրիայի տեսակետն էր։ Իւր գպրոցները աշխարհի ամենալաւերն էին համարւում, մինչև անգամ Աթէնքի գպրոցներից բարձր։ Իւր իմաստասէրները գնում էին Արևմուտքում իրենց գիտութիւն տարածելու [3])։ Քաղաքը շատ ճոխացաւ և շքեղացաւ, Մարկոս Անտոնիոսը նրան իւր սիրական կայսերութեան մայրաքաղաքը գարձրեց, ուր և տեղա-

1) Victor Langlois, Voyage dans la Cilicie.

2) G. Perrot, Հետագիր։

3) Heuzy, Académie des Inseriptions et Belles-lettres, 7 juillet, 1876.

նացաւ կէօրլաասրայի հետ։ Յուլիոսը թաղուեց Տարսոնում։ Բայց պատերազմները աւերակ դարձրին այս քաղաքը, որի միջով հոսող գետը հեռացաւ դէպի արևելք և դադարեց նաւարկելի լինելուց, նաւահանգիստը լցուեց տղմով և Տարսոնը անջատուեց ծովից։ Իր նախկին փառքից ոչ մի հետք չէ մնացել, հապա երբեմն բոյի տակ գտնուում են հնադարեան մնացորդներ։ Ամենահետաքրքրական շինուածքը մի մզկիթ է, որ ըստ աւանդութեան շինուած է հին այնտեղում ուր ծնուել էր «Հեթանոսների առաքեալը» Պօղոսը։ Պարսպների մօտ գտնուել է մի ահագին մթերանոց կաւաշէն, թրծուն, փոքրիկ, ուխտանուէր արձանների—թերաւիների, հատանականաքար այդտեղում գտնուում էր այս արբազան առարկաների մի գործարան [1]։ Մեկքայից և երուսաղէմից յետոյ մուսուլմանների ամենագլխաւոր ուխտատեղիներից մէկը Տարսոնի շրջակայքում մի քարայր է, այն բազմաթիւ քարանձաւներից մին, ուր ըստ աւանդութեան բնակուել էին «եօթը ննջողները» [2]։

Ամառը քաղաքը շատ վատառողջ է դառնում և կարողաւոր բնակիչները խոյս են տալիս դէպի Բուլգար-դաղի Հովիտները, Իշմէ՛ի ջերմուկները, Կոզնէ, Նեմրուն, Գիւլէկ-բաղար, Կիլիկեան Դռների մօտ։ Տարսոնի գեղեցկութիւնը իր ընդարձակ պարտէզներն է՝ կանաչագեղ գօտին, որով շրջապատուած է և ուր ցրիւ են ընկած փշրուած կամարներ, կիսակործան սիւներ, որ հռոմէական չքմուղի մնացորդներն են։ Բայց այս բոլոր աւերակները չնչին են երևում, երբ որ մի ստուերախիտ շաւիղի դարձուածքում յանկարծ մի ահագին քարի՝ «Թաւալուած վէմի» Դէօնիւկ-տաշի դիմացն ես գալիս։ Այս լայնածաւալ քառանկիւն քարաշէնքը, որի մէջը դատարկ է, թուում է մի վիթխարի միապաղաղ զանգուած։ Կիւղնոսի ափից նայած՝ կիպարիսների և պղպատու ծառերի ճիւղերի միջից այս «քարը» նման է ուղտաքարի ժայռի, կարծես բնութեան գործը լինի, ինչպէս այդ յաճախ պատա-

1) Lion Heuzy;—Burckhardt Barker, Lares and Penates.

2) V. Langlais, Հիշուած։

հում է երկրաբանական ուժերից յեղաշրջուած երկրներում։ Այս տարօրինակ շինուածքը՝ ասկներև է՝ որ շատ հին է և մերձաւոր չափ 90 մետր երկարութիւն ունի, առանց հաշուելու կողմնակի շինուածքները, լայնութիւնը 42 մետր է և բարձրութիւնը՝ 8 մետր։ Սպիտակ մարմարի սալերը, որ ծածկում էին պատերի երեսը, ցրուած են գետնի վրայ։ Ինչպէս որ հին դրամներից երևում է այդ ահագին զանգուածը իբրև պատուանդան է ծառայել մի թագաւորի արձանին, որ ունեցել է ալեզ և կապարճ և կանգնած է եղել մի խորհրդաւոր և եղջիւրաւոր կենդանու վրայ։ Փորուածքներ կատարուեցան, բայց չյայտնուեց ոչ գարեթիւը և ոչ այդ շինուածքի ինչ բանի համար նշանակուած լինելը։ Ոմանք գիտնականներից համարում են այդ պատգամախօսութեան տեղ։ Հնաբան Լանգլուան հիմնուելով Պարաբոնի մի տաղտուածի վրայ կարծում է թէ այդ առաջին Սարգանաբալի, որ Կիլիկիա փախաւ իր պետութիւնը կորցնելուց յետոյ, շիրիմը լինի։ Նոյնպէս այդ շինուածքի կատարին դրուած էր այն վիթխարի, աստուածանական ոճով արձանը, ինչպէս որ այդ նկարուած է տարսոնական բազմաթիւ դրամների վրայ [1]։

Պռանան հին Տարսոնից խլեց նրա առևտրական կարևորութեան մի մասը։ Տարսոնի պէս գտնուելով ամենաբերրի երկրում, շրջապատուած պարտէզներով, բամբակի և շաքարեղէգնի արտերով՝ սա էլ նմանապէս շինուած է փոքր Ասիայի անկիւնագծային մեծ ճանապարհի վրայ։ Այստեղում Սարոսը կամ Միհոնը, որ հոսում է դէպի արևելք, դուրս է գալիս դարձանգներից և վտանգում է ընդարձակ սիկահողային դաշտը, որ ստէպստերի ամում է, թէև ոչ մեծ չափով, Կիպրոսի և Ասորիքի ուղղութեամբ։ Իր և իր ժամանակների վերին հովիտները մի մի ճանապարհ և անցք են դէպի Կեսարիա և Կղզը-Իրմակ։ Միւս կողմից՝ Պիւռամիս կամ Ջիհոն գետը այնչափ մօտենում է Պռանային, որ այս քաղաքը կարող է համարուել բնական կեդրոնատեղը և հրապարակ այդ

1) G. Perrot, Métmoires d'Archiologie, d'Epigrahie et d'Histore.

գետերի ամբողջ աւազանին։ Այսօր է վերջանում Եփրատի վերին աւազանի և Միջին Ասիայի ծովակների պատմական ճանապարհը։ Բացի այս՝ Սիհունը փոքր Ասիայի գրեթէ բոլոր գետերից այն առաւելութիւնն ունի, որ նաւարկելի է իր ստորին հոսանքում և Կիպրոսում ու ստորիքում բարձած նաւերը կանգ են առնում քաղաքի գետափի առաջ։ Իր դաշտերի պտղաբերութեամբ և ճանապարհների կեդրոնացման շնորհիւ Ադանան դարձել է մեծ առևտրական կեդրոն և մնում է միակ նեղագիծ երկաթուղի ունենալ, 60 քիլոմետր երկարութեամբ, նրան Տարսոնով Մերսինայի նաւահանգստի հետ կապելու համար։ Ադանան թէև աւելի առողջ կլիմայ ունի քան թէ Տարսոնը, այսուամենայնիւ վտանգաւոր է այդտեղ մնալը տենդային եղանակին, ուստի և շրջակայ լեռների գիւղերը ամառը լցւում են հկաւորներով։

Սարոսի վերին հովտում հայկական Հաջին քաղաքից դէպի հիւսիս, Սըւազ (Սեբաստիա) և Ադանա նահանգների սահմանագծի վրայ, ոչ հեռու նոր Աղիզիէ քաղաքից, Սար կամ Սարսիրէ փոքրիկ գիւղաքաղաքը, շինուած է նախկին կոմանայի տեղում։ Կոմանան կոչւում էր նաև Հերապոլիս կամ «Սուրբ քաղաք»։ Աւերակներին իշխող սարը մինչև այժմ էլ անուանւում է կոմենէ-թեփէ, բայց կոմանայի բուն անունը դեռ ևս չէ գտնուել յիշատակարանների վրայ։ Բոլոր շինութիւնները, տաճարները, թատրոնները, ասպարէզները, մրցարանները (գիմնազիոնները) Հելլէն-Հռոմէական ժամանակից են մնացած, սակայն սրբարանները, երևի սրբազան սովորութեանց աւանդապահ մնալով, աւելի եգիպտական քան թէ յունական կերպարանք ունին։ Բուն տաճարը ոչ մի սիւն չունի և քրմերի բնակարանները շրջապատում են նրան առանց ճարտարապետական որևէ ամբողջութիւն կազմելու։ Քաղաքին նայող լեռների ուղղաձիգ զառիխայրերի վրայ բացուած կան քարանձաւներ, իսկ ներքևում հարուստ դաշտն է փռուած, որ Սարաբոնի ժամանակ մշակւում էր մի հազար սորուկներով 1)։

1) Korolidis, Ադանան և իր աւերակները (նոր յունարէն)։

Սարոսի և Փիւռամոսի վերին հովիտներում կազմակերպուած թուրքմանական Ղոզան-օղլու և Մենեմենդ-օղլու իշխանութիւնները կորցրին իրենց անկախութիւնը։ Դեռ այս դարի կիսին նրանք ենթարկուում էին թուրք սերուծեան գերիշխանութեանը միմիայն աւանդական հպատակութեամբ։

Ջիհունի վերին աւազանի գլխաւոր քաղաքն է Ալբիստանը, որ յաճախակի անուանւում է բառախաղով նաև Էլ-Բոստան, այն է՝ «Պարտէզ»։ Մակ որ նա թաղուած է վանաչութեան մէջ։ Ընդարձակ և լաւ ոռոգուած դաշտը, ուր մեռնում—վերջանում են շրջակայ լեռների գարատափների վերջին մեղմ ալիքները, թուում է նախասահմանուած մի մեծ քաղաքատեղ լինելու վերին Եփրատի և ծովի առևտրի համար։ Այս գաշտումն են միանում Ջիհունի բոլոր վերին ժամանգակները, որ յետոյ սեղմուելով անթիւ կրճերում անցնում են Աղիր-գապի ահագին խորաձորով։ Բայց բնիկների համար այս հեղեղատներից և ոչ մին բուն գետը չէ։ Նրանք, ինչպէս և ամեն ժողովուրդ, բնազդմամբ նախապատուելով միշտաբուխ ակբիւրները, Ջիհունի բուն ակն են համարում մի փոքրիկ ջրաւազան, ուր գեռում են խորին ձեղքաձաքներից դուրս ցայտող ջրերը, առանց ուժգնանալու կամ նուազելու, և գալիս ջրում են պարտէզները։ Ալբիստանում կան մի քանի հայ ընտանիք, իսկ հարաւ-արևմտեան դաշնակցութիւն՝ բազկացած մէկ փոքրիկ հասարակապետական հասարակութիւններից պահպանուել է գրեթէ մինչև մեր օրերը Զէյթունի կամ «Զիթենիների» բարձր հովտում։ Թէև այդ լեռնային երկրում որ առնուազն 1500 մետր բարձրութիւն ունի, Զիթենիներ չեն բուսնում։ Գրեթէ գլխովին վատթարացած—ստրկացած հայկական աշխարհում այս ազատ լեռնացիների հասարակութիւնը մի բացառիկ երևոյթ է, լեռնացիները, որ դարերով պահպանել են իրենց անկախութիւնը։ Մերձաւորապէս տասն հազար հոգու չափ այս կատարելապէս ամուրժ հայկեանները ամրացրել են իրենց երկիրը կրճերում շինուած մի քանի բերդերով և կար ժամանակ որ ոչ մի մուսուլմանի չէին թոյլ տալիս իրենց մեծ ներս մտնելու։ Ս. Յրիստոսի փաշային ոչ մի հարկ

չէին տալիս բայի գաշտամերայում մշակած արտերի վարձից 1)։

Մարաշը՝ որի բնակիչների կէս մասը հայեր են, յենուած է Ամբը-դաղի հանդիպագծաոտն, որ իշխում է Ա.դ-սաի և Ջիհունի գետահովտներին, հիշատ այն տեղում, ուր Ջիհունը դուրս է պրծնում իւր մեծ խորաձորից։ Մարաշը արուեստաշատ քաղաք է, այդտեղի կանայք կտաւեղէններ են գործում և արծաթի ու ոսկով բանուած կօտրներ։ Ա.մանը փիլոյէթի ժամանակաւոր մայրաքաղաքն է դառնում։ Ա.յատեղ է գալիս վաշտան եա.յլա, երբ որ շոգերից սախտուած թողնում է Ադանան՝ դէշ տղը։ Հարաւ-արեւմուտքում՝ Ջիհունի հովտի արեւմտեան կողերի վրայ գտնուում է Սիսը, որ մի փոքրիկ քաղաք է. շինուած զառիթափը ապառաժի լանջին և ամրոցում։ Սա էլ մի ժամանակ մայրաքաղաք էր, այստեղ էր Հայոց-ձորի (Կիլիկիայի) թագաւորների նիստը երկու դար շարունակ՝ 1182-ից մինչև 1371-ը, ուր և երևում են մինչև այսօր Գաբբաոի, այն է՝ թագաւորների պալատի մնացորդները։ Սիսը գտնուելով թագաւորանիստ լինելուց՝ մնաց կրօնական կեդրոնակայր. նրա մենաստաններում գտնւում է մի պատրիարք (կաթուղիկոս), որին թուրք կառավարութիւնը կամեցաւ անոյեան կացուցանել Էջմիածնի առաջնորդական կաթուղիկոսին։ Շրջակայքի բոլոր եպիսկոպոսները ուղարկում են Սիս եպիսկոպոսապետին իրենց գիւղացիների վճարած տասանորդները։ Դէպի Ջիհուն իջնող ճանապարհին մի բլրի վրայ կանգնած է Անազարբա ամուր բերդը, մուսուլմաններին Հային Զարբան, որ Սիից առաջ նայնպէս հայ թագաւորների աթոռանիստն էր և իւր հռոմէական աւերակներով համբաւաւոր։ Երկու հնապարեան չրմուղներ, թէև տեղ տեղ կործանուած, իրենց քանդակներից և արձանագրութիւններից, ուսումնասիրու հոյակապ յիշատակարաններ են և երևում են ձգուած մօտաւորապէս 12—20 քիլոմետր երկայնութեամբ, մինչև դաշտի վերևի լեռները հիւսիսում և հիւսիս-արեւմուտքում։ Ներքին բանդ բերդամերձ չրերը շրջակայքի անապատը դարձրել էին անտառնման ծառաստան, այնպէս որ տասներորդ դարում Էդրիսին կարողանում էր Անազարբայի դաշտերը համեմատել Դամասկի «Դրախտի» հետ։

Ադանայից արևելք՝ նախկին Մոպսուեստը, խաչակիրների Մամիստան, հայերի և թուրքերի Մսիսը հակում է Պիւռամիոսի անդքին, ուր ձգուած է մի բնական կամուրջ։ Ա.յստեղից արդէն մօտ է Թերակղզու հիմքը և Ջերեբ-Նաւր'ի կամ «Ղոյսի լեռների» գահավէժները գծում են երկու աշխարհների՝ փոքր Ասիայի և Ասորիքի՝ բնական սահմանը։ Ա.յս միջավայրում խմբուած են ամեն ազգերից՝ թուրք, յոյն, հայ, քուրդ, արաբ, չերքէզ, անասարի, խալիշիկ և բոշա։ Մոպսուեստը յունական աշխարհի վերջին ծայրն է և իւր կրօնների խառնուրդով պատկանում էր միանգամայն Թէ Ասորիքին և Թէ ներքին Ասիային։ Իւր Պողոնը աւելի Արևելեան բահալ էր քան Թէ յունական առասածութիւն։ Ա.յս քաղաքը բոլոր առասածների համար մի որբարան ունէր և պաշտոներ։ Սրա նման էր և Էգէա'ն (Ա.յաս, Լայացցո), «Ալիքների քաղաքը», որ շինուած էր Ալեքսանդրեակի ծոցի (Հայոց ծոց) հիւսիսում և միախմբել էր Միջերկրականի աւազանի բոլոր կրօնները։ Խաչակիրների պատերազմների ժամանակ, երբ որ Իտալիայի ծովագնացները Ա.յսաը գարձրին իրենց գլխաւոր մթերանոցը, նա քրիստոնէական քաղաք դարձաւ։ Կիլիկեան Նաւահանգիստը՝ որ յաջորդեց նրան, գտնւում է մի քանի քիլոմետր դէպի արևմուտք, ոչ հեռու Պիւռամոսի բերանից, որ և այժմեան Նեմուրթալիկ գիւղաքաղաքն է և որն ուղում են կապել Ադանայի հետ երկաթուղու մի ճիւղաուղութեամբ, որը տակաւին Հարկ կլինի պատրաստարել գետի ակումբից, մինչև գետի ընթացքը դէպի արևմուտք 1)։ Ա.յսաը և Նեմուրթալիկը այն նաւահանգիստներն են, որտեղից ենթադրում է սկսել Միջերկրականից մինչև Պարսկական ծոցը ձգուող երկաթուղին։ Ա.յստեղով ճանապարհը կերկարի փոքր ինչ, բայց շինողներին աւելի հեշտ կլինի Ամանոսի

1) Carl Ritter, Asien, vol. XIX.
2) Texier, Revue Française, 2838;—Carl Ritter, Asien, XIX.

1) Ed. Dutemple, En Turquie d'Asie.

զաւիթայրերից երկաթագիծն անցկացնել աւելի դաւթան տեղերով։

Ջէբէլ-Նուրի արևելեան կողերում ծովածոցից հիւսիս դէպի երկրի ներսերը առաջացող ջրային կամարի ամենաւերին ծայրի մօտ երկու ժայռ՝ միացած սև հատաքարի (գրանիտ) դեղեցիկ կամարակապով սեղմում են ճանապարհը նման փիլլէկ բողաղին։ Սա էլ մի ուրիշ «Կիլիկիայի Դուռն» է, որ կոչում է նաև «Վանկ-թամուրի դուռ», «երկաթի դուռ», «Սև դուռ» կամ կարա-կափու։ Ո՞րչափ մարդիկ են կոտորուել այս նեղ անցքին՝ որ Ասիայի ճանապարհների դուռն է, տիրելու համար։ Նախապատմական ժամանակներից սկսած մի՛ մի գար չէ եղել, որ այստեղ ճակատամարտներ տեղի չունենային 1)։

ՓՈՔՐ ԱՍԻԱՅԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԸ.

Փոքր Ասիայի բնակիչները շատ զանազան ծագումից են։ Այս թերակղզին՝ մայրցամաքի առաջաւոր մասի արևմտեան ծայրը, արևելքի հարաւից և հիւսիս-արևելքից եկած ժամանակական և թափառական այլ և այլ պատերազմասէր ցեղերի համար ընդհարման և միացման բնական կեդրոնատեղը էր։ Սեմական ցեղեր տարածուած էին Անատոլիայի հարաւային մասերում և նրանց արիւնը, նրանց բարբառները, նրանց անունները սիրատեսած են երևում շատ ժողովուրդների մէջ երկրի ներսերում։ Հարաւ-արևմտքում նրանք խառնուած են երևում ևս գոյնի մարդկանց՝ թերևս Քուշեանների հետ։ Արևելեան նահանգներում ցեղաբանական

1) Ադանայի վիլայէթի քաղաքները իրենց բնակիչների մօտաւորական թուերով.

Ադանա, ըստ Փաբ և Մանգրոյ'ի	45 000	բնակիչ։
Մարաշ	24 000	»
Տարսոն, ըստ Geary-ի	12 000	»
Հաջին	10 000	»
Մերսինա, ըստ Geary-ի	6 000	»
Սիս	5 000	»
Ալբիստան	3 000	»

գլխաւոր տարրերը ազգակից էին պարսիկներին և խօսում էին զենդին մերձաւոր լեզուներ։ Կային և հիւսիսից եկաւորներ, թուրանական անուանով կոչուած։ Արևմտքում կատարուեցան գաղթականութիւններ, Հայաստանի բարձրաւանդակներից իջնող գաղթականութեանց հակադարձ ուղղութեամբ։ Թրակացիները առևտրական և քաղաքակրթական յարաբերութեանց մէջ էին դէպի Պրոպոնտիդը (առաջածովը) խոնարհած Ասիայի և Եւրոպայի ափերի հետ։ Այս երկու աշխարհամասի միջև յոյները միշտ շարժման մէջ էին Եգէեան ծովով։ Մինչև իսկ Եւրոպայի հեռաւոր երկիրներից գալլականներ՝ գալլիացիք եկան և հաստատուեցան Ասիայում ու գարեր շարունակ անխառն մնացին շրջապատող ժողովուրդներից։ Բայց այ մի շրջանում թերակղզին չպատկանեց մի համասեր ազգի, որ միևնոյն լեզուն, միևնոյն քաղաքակրթութիւնը ունենար։ Հեգեմոնիան երբէք չանցաւ այս ցեղերից որ և է մէկի ձեռքը։ Յունիացիք, Լէլեգներ, Փռիւգացիք, Պափլագոնացիք, Լիկիացիք, Կիլիկեցիք, այս բոլոր տարբեր տարբեր ժողովուրդները աշխատում էին պահպանել իրենց ինքնավարութիւնը։ Շատ քաղաքներ յաջողեցան իրենց անկախութիւնը պահել և միանգամայն ձեռք բերել հզօրութիւն և փառք, բայց երբէք միմեանց հետ համախմբութեամբ — ֆեդերացիայով միութիւն չկազմեցին։ Այդ միութիւնը կատարուեց, և այն աւերածութիւն միմիայն օտարականների տիրապետութեամբ, որ ազատ քաղաքացիներին գարձրին հպատակ և ստրուկ 1)։

Փոքր Ասիայի ամբողջ բոլոր հին ազգերի մեծամասնութիւնը կորցրեց իւր անունը, մինչև անգամ իւր ծագման աւանդութիւնը։ Ո՞ւր են խալիբները, որ մի ժամանակ իրենց հարևաններին ուսուցին մետաղներ հալելու և երկաթ կռելու արհեստը։ Ո՞ւր են Գալատները (Գաղատացիք), Արևմուտքի գալլիացիների եղբայրները, որ իրենց անունը տուին Ասիայի մեծ նահանգներից մէկին։ Այս ազգերը և բոլոր նրանք, որոնց մասին խօսում

1) Renan, Histoire des langues sémitiques;—Vivien de Saint-Martin, Asie Mineure.

են նախնիք իրրև թերակղզու ներքում բնակուածների վրայ չկան այլ և ս ինքնուրոյնաբար, այլ հետզհետէ ձուլուել են շրջակայ ժողովուրդների հետ։ Արևմտեան յոյները, արևելքում Հայերը և քրդերը միակն են, որ կարող են իրենց ծագումը հասցնել մինչև պատմական առաջին դարերը։ Ան էլ իրենց յոյն անուանակոչներից սրբավիը պատկանում են երկրի նախկին ցեղերին, որ լեզուով և «օրիոդոքս» դաւանութեամբ միայն կապուած են ծովափի տիրող ազգութեան հետ։

- Երկրի ներքում՝ մի կողմից լեռնային Հայաստանի և միւս կողմից Արխիպելագի ծովով ողողուած, առատ նաճև կարաւուած ծովափի միջև՝ բնակիչների մեծագոյն մասը թուրքական ցեղից է։ Այս՝ աղային ցանուցիր լճերով՝ բարձրաւանդակների վրայ Արալի և Բալկաշի տափաստանների գաղթականները գոան մի նոր Հայրենիք, որ շատ քիչ էր զանազանւում հինից և ուր կարող էին նրանք միևնոյն կենցաղավարութեամբ ապրել։ Նախկին բնակիչների տեղը բռնող այս օտարականներից շատերը դեռ մինչև օրս էլ առաջին եկաւորութեան ժամանակուայ առօրոյթները չեն փոխել, մնալով կենդանի օրինակ մի այնպիսի կենցաղավարութեան, որ այլ և ս գոյութիւն չունի քաղաքակիրթ կոչուած աշխարհի երկիրներում։ Այսպէս օրինակ Եուրուկ'ները, այս երկրին եկող առաջին թուրք ցեղերից սերուած, Սելջուկեանների նման պատկանում են «Ույ Ուխար» վ.ազկատանեբին (օրդու) և մինչև այսօր էլ թափառականներ են, տարին երկու անգամ տեղափոխուելով իրենց հօտերի հետ միասին ձմերոցներից ամառանոցները և հակադարձաբար։ Մի քանիսը քաղաքակիրթ թուրքերի նման կանոնաւոր տներ ունին[1]), բայց մեծամասնութիւնը միայն այծի մազից սև վրաններով են բաւականանում կամ ծառի ճիւղերից շինուած հիւղերով, ուր կարելի է մտնել ծռուելով գլխիկոր, և որը գրեթէ միշտ լցուած է լինում ծխով։ Եուրուկները մահմեդական են միայն անունով։ Եուրուկ կինը չէ քօղարկում ինչպէս քաղաքացի թրքուհին.

1) G. Perrot, Souvenirs d'un voyage en Asie Mineure.

բայց բնաւ գլուխը չէ բարձրացնում օտարական անցնելիս։ Սակայն եթէ անցորդը ջուր կամ կամ խնդրէ, խոյն պատրաստ է նա լինելու ընդրուած գաւառը։ Հիւղերը սովորաբար դասաւած են լինում շրջապատոր, գոները դէպի ընդհանուր հրապարակը դարձած, ուր կատարւում են խաղող աշխատութիւնները և ցեղի շահերի մասին խորհրդակցութիւնները։ Հիւղերի շուրջը գերում են կծոտող շները։ Վրանների իրաքանչիւր խումբը — բանակը մի փակուած աշխարհ է, որ օտարականին չէ հրաւիրում բայց եկածին ընդունում է։ Շարիւրներով են հաշւում փոքր Ասիայում ցրուած Եուրուկների ցեղերին. միակ Բրուսայի նահանգը նրանցից ունի երեսունից աւելի, որ բաժանուած են խմբերի, առանց որ և է աշխարհագրական յարակցութեան։

«Թուրքման» սեռական անունը գործ է ածւում սովորաբար այս թափառաշրջիկ պատակարգերը ցոյց տալու համար։ Այդ մի անորոշ անուանակոչութիւն է, որ արւում է անխտրաբար ամեն ցեղի թափառաշրջիկ հովիւներին, և որը չէ ցոյց տալիս ամենևին կեդրոնական Ասիայի թուրքմէնների հետ ցեղակցութիւն։ Թէև կան շատ գրողներ, որոնք տարբերութիւն են դնում Եուրուկների և Թուրքմանների միջև։ Առաջինները պէտք է լինին վրանաբնակ, ոչ մի հաստատուն նստավայր չունեցող, երկրորդները՝ կիսով չափ արդէն հաստատարնակ դարձած; գլխաւորապէս կեդրոնական բարձրաւանդակի վրայ և արևելեան գաւառների լեռներում[1]։ Այս էլ կայ, որ մի տեսակ կենցաղավարութիւնից միւսին անցնելը շատ աւելի սովորական է, քան թէ կարծւում է։ Անատոլիայում ինչպէս նաև պարսկաստանում երկրագործ ժողովրդի առումը կամ նուաղումը կախուած է ընդհանուր ապահովութիւնից։ Մանաւանդ թուրքմանները դիւրութեամբ հովութիւնից երկրագործ են դառնում։ բաւական է մի քանի տարի խաղաղութիւն և վրանների բանակները փոխարկ-

1) Hamilton, Researches in Asia Minor;—De Moustier, Tour du Monde, 1-er semestre 1864;—G. Palgrave, Essays on Eastern Questions.

ւում են գիւղերի: Շատ անգամ Ցիգան կամ Չինգանեները, որ Ձիավաճառ, պայտառ, կլայեկոզ կամ մաղագործ են և թափառում են մեծ բազմութեամբ փոքր Ասիայում՝ վրան դնելով տվորաբար քաղաքների մերձակայքում, շփոթւում են Եուրուկների հետ՝ Թուրքման անորոշ կոչումով: Լիկիայում գնչու ցեղեր պարապում են անասնապահութեամբ և հաստատուն գիւղեր ունին [1]): Միևնոյն գաւառում գիւղերը և վրանաբնակները պատկանում են ամենատարբեր ժողովուրդների: Այստեղ ապրում են յոյներ, քիչ Հեռուն չերքէզներ, մի ուրիշ տեղ Թուրքեր և Եուրուկներ: Քաղաքներում իւրաքանչիւր ցեղ իւր թաղն ունի: Ոչ մի ընդհանուր քարաէզ չէ կարող գաղափար տալ այս բոլոր իրար խառնուած, սակայն որոշ ժողովուրդների մասին: Մինչև անգամ այն տեղերում, ուր բնակիչները միևնոյն ցեղին են պատկանում, էլի յաճախ բաժանուած են զարմերի, որ առանձին առանձին են ապրում և երբեմն էլ թշնամացած են լինում միմեանց: Կան, օրինակ, ալիշար կամ Թուրքման տոհմեր, որ թափառում են Թուրք գիւղերի շրջակայքում և նստակեացներից զանազանւում են միայն իրենց կենցաղավարական ձևով և աւանդական անկախութեամբ, սակայն մի բոլորովին զատ աշխարհ են կազմում իրենց համար և ջանում են զգեստով և զէնքերով չորհնուիլ նստակեացներից: Այս բանում ամենալաւ յաջողուածները Միսոգիս լեռների Չէրքէզներն են: Այս Թուրքերը, որ սերուած են երկիրն եկող առաջին յայլող չոկերից, պահպանել են իրենց նախահայրերի փառքի կատարեալ գիտակցութիւն: Բացի ծերունիներից, որոնք Թուրք գիւղացու Հասարակ շորն են հագնում, մնացածները չանք են գործ դնում իրենց զգեստների փայլով աչք շլացնել: Գրեթէ բոլորն էլ բարձրահասակ են և ուժեղ, բացի այս, ամբոխին զարմացնում են իրենց ասեղնագործ զգեստների ճոխութեամբ, գօտու լիքութեամբ, զանազան կտորներով փաթաթուած գլխարկների բարձրութեամբ և զէնքերի հարստութեամբ ու մեծ չափերով: Անիրաւացի է որ նրանք ժողովրդեան երևակայութեան մէջ համարուած են սրիկայ

1) Felloues, Travels and Researches in Asia Minor.

աւազակներ: Մարգիկների սրտիք են նրանք, պահպանած ունենալով արժանապատուութեան և ասպնջականութեան աւանդութիւնները, միանգամայն լի հպարտութեամբ, ինչպէս իրենց անունն էլ ցոյց է տալիս՝ «իրենց անձին տէրն իրենք են» և ամբողջ աշխարհը իրենցն են կարծում: Ի զուր Թուրքական կառավարութիւնը կամեցաւ արգիլել նրանց կրել իրենց տարազը, որպէս զի մնացած ժողովրդի հետ հաւասարեցնէ նրանց: Լաւ համարեցին նրանք խուսափել — աւազակ դառնալ: Ուրիշ հնարքի դիմեցին նրանց կարգի բերելու համար. գրեթէ բոլոր երիտասարդներին վեր առան զինուոր և հազարաւորներ նրանցից մեռան Բուլգարիայի պատերազմների դաշտերում:

«Թուրք» են կոչւում սովորական լեզուում փոքր Ասիայի բոլոր հաստատաբնակ մուսուլմանները, ինչ ծագումից կուզէ լինին: Բազմաթիւ ալբանացիներ գինուորական ծառայութեամբ հակառակ իրենց կամքին գառնալով Թերակղզու բնակիչ համարուել են Թուրք, չնայելով որ իրենց պելազգ նախնիների կողմից յոյների հետ են եղբայր — ազգակից: Մահմետական բոսնիացիներ և բուլգարներ, որոնց վերջին պատերազմները կամայ թէ ակամայ աքսորեցին և հարիւր հազարներով վտարորի միւս ափը ձգեցին, նոյնպէս Թուրք են կոչւում թէև պատկանելիս լինին նոյն ցեղին, ինչ ցեղի որ պատկանում են նրանց հալածող ռուսները, սերբերը, խուռաստները: Խրիմից եկած Նողայ Թաթարներ աւելի իրաւամբ ստանում են այս Թուրք կոչումը, որին իրաւունք ունին նրանք թէ իրենց ծագումով և թէ լեզուով: Բայց Թուրք են նաև աստիճանաւորները, վրացիների և չերքէզների որդիքը, որոնք սերուած են այն բոլոր ազգերից, որոնց գերիներով լցուում էին հարեմները — կանանոցները: Վերջապէս՝ օսմանցիների թուրմն են համարուում ամեն ծագումից արաբների և սև ափրիկեցիների սերունդները, որ ներածուել են երբեմն գերատճառութեամբ: Փոքր Ասիայի շատ քաղաքներում բնակիչների մեծամասնութիւնը, ակներև է որ խառնուած են խափշիկների հետ: Ջերէլ-Միսխուում Ադանայի մօտ [1]),

1) Favre et Maudrot, Bulletin de la Société de Géographie de Paris, 1-er semestre, 1878.

կան ամբողջ գիւղեր խաչիւիկներով բնակուած։ Իսկ քրիստոնեաները, որչափ և մահմետական լինին, չափազանց են պաշտում օսմանցիներից թէ իրենց բարքով և թէ արտաքինով, ուստի և երբէք նրանց թուրք անունը չէ արտում։ Ցագրոսի և Տիգրիս ու Եփրատի վերին աւազանների քրդերի նման այստեղի քրդերն էլ, ակնյայտնի է որ, մեծ մասամբ իրանական ծագումից են։ Կըզըլբաշները շատ բազմաթիւ են փոքր Ասիայի քրդերի մէջ։ Նուն թուրքը, այն է՝ թուրքմանն ծագումով ազգութեան այն մասը, որ վարժուել է նստակեաց կենցաղավարութեան և հետևում է խալամի պատուէրներին, իր աւելի լաւ կողմերով է տեսնում Անատոլիայում, քան թէ եւրոպական Թուրքիայում։ Թուրքերն ունին ընդհանրապէս թուխ գոյն, սև աչքեր, մութ մազեր, այտերը փոքր ինչ ցցուած, ֆիզիքական մեծ ուժ, բայց սակաւ ճարպիկութիւն, ծանր և դանդաղ քայլուածք, աւելի էլ ծանրացած չափազանց լայն զգեստներով։ Նրանք բնաւ չունին իրանց վայելչութիւնն ու արագաշարժութիւնը։ Հազիւ են պատահում նրանց մէջ անդամալուծներ, սակաւապէտ լինելով շատ մաքուր արիւն ունին։ Մեծամասնութեան գլուխը տափակացած է գէպի ետևը, որ բացատրւում է օրօրոցի մէջ նրան տրուած դիրքով [2])։ Վոսփորի ափերան եղերքում՝ մանաւանդ Օլիմպոսի շուրջը, ուր ցեղը աւելի անխառն է մնացել՝ օսմանցիները աչքի են ընկնում իրենց բնական բարեմասնութիւններով։ Այդ տեղում իրենք իրենց աւելի տանն են զգում քան թէ Թրակիայում, ուր խառն են ապրում այնչափ օտար ժողովուրդների՝ յոյների, բուլգարների, ալբանացիների հետ։ Իշխանութիւն բանեցնելուց չկշտացած թուրքը, կամ հարստահարուելուց չանարգացածը այն մարդկանցից է անշուշտ, որ իր բարեմասնութիւնների ամբողջութեամբ ամենագութեկանն է։ Նա երբէք չէ խաբում, ազնիւ է, ուղղամիտ, ճշմարտախօս, և այս ինչ պատճառով ծաղրուած և արհամարհուած է իր հարևան յոյներից, սաորիներից, պարսիկներից, հայերից։ Չափազանց համերաշխ է իւրայիններ հետ, ունեցածը սիրով

2) Richard Battus, ձեռագիր։

բաժանում է, բայց երբէք չէ խնդրում։ Ինչ կուզեն ասեն, սակայն բակշիշի չարաչար գործածութիւնը աւելի շատ է Եւրոպայում, քան թէ Արևելքի երկիրներում, բացի այն քաղաքներից, ուր խառնուած են Լևանտացիների ամբոխը։ Կայ կամ եղել է արգելք ճանապարհորդ, որքան և գոռոզ ու կասկածոտ կուզէ լինէր, որ սրտի խորքից յուզուած չլինի թուրք գիւղացու անշահասէր և սրտաբուխ ընդունելութիւնից։ Չէնց որ օտարականը երևում է՝ տան մեծը, որի պարտքն է նրան ընդունելը, շտապով մօտենում է նրան օգնելու ձիուց ցած իջնել, ողջունում է մի դուրեկան ժպիտով և վայելուչ շարժուածքով, վառում է պատուաւոր տեղում իր ամենաթանկագին գորգը, հրաւիրում է նրան այնտեղ հանգիստ առնելու և չափազանց ուրախ որ կարող է օգտակար լինել՝ իսկոյն սկսում է կերակուր պատրաստել։ Ակնածող, բայց առանց ստորութեան, ինչպէս վայել է մի մարդու որ գիտէ իր արժանապատուութիւնը, երբէք չէ անում անպատշաճ հարցումներ, անսահման ներողամիտ կրօնականում՝ միշտ զգոյշ է կրօնական վէճ բանալուց, ինչպէս այդ չափազանց տրամադիր են անել պարսիկները։ Ինքն իր հաւատից գոհ է, ուստի և անվայել է թուում նրան հիւրին հարցափորձել խղճմտանքի գաղտնիքների մասին։

Ընտանիքում թուրքի բարեմիտ և արդարակորով բնութիւնը նոյնն է մնում ինչպէս և դրսում։ Չնայած Ղուրանի թոյլատութեանը և վաշխառների օրինակին, Ասիայի օսմանցիների մեծ մասը կընութիւնը կանոնն է և ամբողջ քաղաքներ են յիշուում ինչպէս օրինակ Ֆոսէ քաղաքը, ուր բազմակնութեան մի դէպք անգամ չկայ։ Գիւղերում ճշմարիտ է, թուրքերն առնում են երկրորդ կին՝ մի ազախին աւելի ունենալու համար [1]), ինչպէս և մի քանի արուեստաշատ քաղաքներում ամուսնութեամբ աւելացնում են նրանք իրենց գործաւորուհիների թիւը։ Բայց մի կին ունենայ թուրքը թէ երկուս, անհամեմատ աւելի հաւատարիմ է նա ամուսնական կապերին քան թէ եւրոպացիք։ Ինչ կուզէ սովորա-

1) G. Perrot, ձեռագիր։

քար թ՛ող ասեն, սակայն մեռելների օմանցու ընտանիքը քրիստոնեայ եւրոպացիների ընտանիքից պակաս միաբան չէ։ Կինը բացարձակ տիրուհի է տան ներսում, նրան հետ վարում են միշտ քաղցրութեամբ։ Մանուկները որչափ և փոքր լինին՝ համարում են իրեւ հաւասար իրաւունք ունեցող և տանց շաղակրատութեան, բնական ճանրաբարոյութեամբ, որ բարձր է երեւում նրանց հասակից, մասնակցում են մեծերի խօսակցութեանը։ Բայց հասաւ խաղի ժամը՝ վազվզում են նրանք, գօտեմարտում, յաղթում, ատոսոսում, ոչ պակաս աշխուժով քան եւրոպացի մանուկները։ Թուրքի բնական բարութիւնը տարածւում է մինչև անգամ ընտանիքի կենդանիների վրայ և շատ գաւառներում մինչև օրս էլ երբեմն շաբաթական երկու օր պարապ մնալու իրաւունքն են վայելում։ Հաւանօցն էլ մի երջանիկ ընտանիքի պատկերն է ներկայացնում։ Ա. ինաեզ նախագահում է «բարեպաշտ» արագիլը, որ թառում է սօսու ճիւղին կամ կտրանը։ Ա. ին գիւղերում« ուր երկու տիրող ազգից էլ կան՝ թէ թուրք և թէ յոյն, հարկ չկայ տուն ներս մտնելու՝ ընակիչների ազգութիւնն իմանալու համար, արագիլն անպատճառ ընտրում է միշտ թուրքի տանիքը 1)։

Թէև յաղթող ցեղի սերունդ, որի մէջից են գրեթէ գալիս կառավարութեան պաշտօնեաների մեծ մասը, այսուամենայնիւ թուրքը տերութեան միւս ազգութիւններից պակաս հարստահարուած չէ։ Դեպանատներում ոչ ոք չէ միջամտում նրանց օգտին։ Հարկը սովորաբար կապալով է տրւում հայերին, որոնք իրապէս գարձել են երկրի վատթարագոյն հարստահարիչները։ Հարկը ծանրանում է իւր բոլոր բեռով խեղճ օսմանլիների վրայ, որոնք ընկճուած են նաև ուրիշ ծառայութիւններով։ Երբ անցնում են պաշտօնեաները կամ զինուորները գիւղացիք պարտական են ձրիաբար հոգալ այդ այցելուների բոլոր կարիքները և յաճախ այդ բռնի ասպնջականութիւնը նրանց նոյնչափ ազքատացնում է, որչափ մի կանոնաւոր աւարառութիւն։ Երբ որ

1) Sprattand farbs, Travels in Lycia.

ժողովրդական շշուկը ազգարարում է պաշտօնեաների (ատոիճանաւորների, կամ զինուորների վերադաս գալուստը, գիւղերի բնակիչները լքանում են իրենց բնակարանները և փախչում են անտառներում և լեռների կիրճերում ապաստան գտնելու 1)։ Զինուորագրութիւնը ծանրանում է միմիայն թուրքերի վրայ, կարծես թէ Սուլթանը կամենալիս լինի իւր ցեղակիցները նուազեցնել յօգուտ միւս ազգութեանց։ Ա. նպիսի մի ժողովրդի մէջ, ուր ընտանեկան զգացմունքները այնչափ զարգացած են, այս՝ արեան հարկը առելով առաւած է։ Իրենց յաղթութեանց ժամանակ թուրքերը տեղափոխւում էին խմբով և ընտանիքով։ Ներ, կին, մանուկ, քոյր հետևում էին մարդիկներին, անբաժան պատերազմի դաշտից, յաղթող կամ յաղթուած բոլոր ընտանիքը նոյն վիճակին էր ենթարկւում։ Ա. յժմ զինուորագրութիւնը խլում է ընտանիքից երիտասարդներին, ոչ թէ մի քանի ամսուայ կամ երեք և կամ հինգ տարուայ համար, ինչպէս այդ կատարւում է արեմտեան եւրոպայում, այլ երկար տարիների համար և յաճախ ցմահ։ Թուրքը նոր զինուորը, մինչև անգամ ջէ յբէկը չէ տեսնում իւր զինուորագրութիւնը երգերով և հայկերոյթներով։ Գրեթէ բոլոր զինուորագրուածները երկու կամ երեք տարուայ պահուածներ են լինում երբ զօրաժողով յիսնապետը վրայ է հասնում նրանց անձին տիրանալու։ Ազգական, կին, զաւակներ են թողնելու նրանք տանը և ընտանեկան բոլոր կապերը միանգամից խզելու։ Եւ այս պատճառով որչափ և մեծ լինի նրանց հոգու զօրութիւնը, հեռանում են նրանք տանից լուռ ու մունջ, կարծես ճակատագրից հարուածուած։ Ա նատոլիայի արեմտեան մասում, ուր հասել են Զմիւռնիայի գծի երկաթուղիները՝ տեղափոխում են նրանց հարիւրներով, ամեն իրկնամուտ նրանց խումբը կանգ է առնում նոր զինուորագրուածներ ընդունելու համար։ Մայրերի, կանանց, քոյրերի ամբոխը խռնուում է դռների առաջ մի վերջին համբոյր առանալու, մի վերջին անգամ ձեռք սեղմելու համար։ Հեկեկանքն ու լացի ձայնն ընկնում է

1) Georges Perrot, արգէն յիշուած։

երբ շարժւում է մեքենան և թշուառ կանայք ի զուր են վազվզում կառքերի եռևից ծաղիկներ և ձիթենու ճիւղեր ձգելով դէպի իրենց սիրելի դէմքերը, որ շուտով կորչելու են հեռաւորութեան մէջ։

Ուժասպառ, վտանգուած մինչև իսկ իրենց ազգային գոյութեան մէջ անընդհատ և կանոնաւորուած գաղանի դաւադրութիւններով, օժտուած բաղդին անտրտունջ հպատակելու յատկութեամբ, որ իրենց այդ վիճակում աւելի մի պակասութիւն է քան թէ առաւելութիւն՝ թուրքերը գտնւում են ծայրայեղ վտանգի մէջ, չկարողանալով մրցել կեանքի և մահուան կռւում աւելի հզօր նախաձեռնութեամբ օժտուած մի ցեղի հետ։ Նրանք չեն կարողանում դիմադրել յոյներին, որոնք խաղաղ գործառնութեան կերպարանքի տակ վրէժ են լուծում այն բնաջինջ կոտորածների վրէժը, որի հետքերը մնացել են Սիգանիայում և Ֆիոյում։ Թուրքերը չեն կռւում հաւասար զէնքով, նրանց մեծամասնութիւնը բացի իւր լեզուից ուրիշը չգիտէ, մինչդեռ յոյնը խօսում է շատ լեզուներ։ Նրանք տգէտ են և պարզամիտ, հակառակորդը ճարպիկ և խորամանկ։ Թուրքը ծոյլ է բայց չէ սիրում աճապարել. «շուտափիլը սատանայից է», համբերութիւնը Աստծուց», կրկնում է նա համոզմամբ։ Նա չէ կարող անցնել իւր էֆֆէկտ, որ անորոշ մի երազ է, որի մէջ ապրում է նա բուսական կեանքով, առանց կամենալու, առանց մտածելու, առանց յոգնելու, մինչդեռ իւր ախոյեանը միշտ մխրճոյն հաստատուն կամքի տէրն է, գիտէ օգուտ քաղել մինչև անգամ հանգրտութեան ժամերից։ Թուրքի բարեմասնութիւններն անգամ իրեն ընդդէմ են դառնում։ Նա աղնիւ է, հաւատարիմ տուած խօսքին, մինչև մահը կաշխատի իւր պարտքը վճարելու, իսկ վաճառականը օգտւում է այդ յատկութիւններից, երկարաւոր փոխատուութեամբ նրան ընդ միշտ գերի դարձնելով իրեն։ Փորր Ասիայում վաճառականական մի սկզբունք է այս. «Եթէ կամենում ես հարստանալ՝ քրիստոնեային փոխ տուր նրա կարողութեան մի տասներորդի չափ միայն, մնացուկնին — նրա կարողութեան տասնապատիկը»։ Ա.յսպիսով Թուրքը վոխատուութեամբ պարտքի

մէջ խրուած, չունի այլ ևս մի բան որ իրենը լինէր։ Իւր աշխատանքի բոլոր վաստակը վաշխառուին է անցնելու, իւր գործերը, պարենեղէնը, հօտերը, մինչև անգամ վարելահողը յաջորդաբար ընկնելու են օտարականի ձեռքը։ Տեղական գրեթէ բոլոր արհեստները, բացի ոստայնանկութիւնից և թամբագործութիւնից՝ խլուել են նրա ձեռքից։ Ջրկուած ծովային վաճառականութեան որ և է մասնակցութիւնից, ձեռագործական (manufacture) աշխատանքից, աստիճանաբար քշուում է նա ծովափից դէպի ներսերը, ստիպուած վերադառնալ նախնական ժամանակի թափառաշրջիկ կեանքին։ Նրան թողել են երկրագործութիւնը, որպէս զի իբրև վարձկանի մշակել տան նրան իւր սեպհական հողը։ Շուտով նրան կմնայ միմիայն կարաւաններին առաջնորդել և հօտեր արածացնել արօտատեղիներում։ Թուրքերը գրեթէ ամբողջովին արտաքսուած են յոնիական ափի կղզիներից։ Ծովափի մեծ քաղաքներում ուր երբեմն նրանք մեծամասնութիւնն էին, այժմ երկրորդ տեղն են բռնել։ Զմիւռնիայում այդ թերակղզու ամենամեծ քաղաքում նրանք թուում են աւելի թոյլ ու թափթփած քան թէ տէրեր։ Մինչև անգամ ներսի մի քանի քաղաքներում արդէն յունական տարրը հաւասարակշռում է թուրքականին։ Շարժումն երևում է անդիմադրելի նման բարձրացող մակընթացութեան, և այդ թուրքերը իրենք էլ են հասկանում ինչպէս նաև յոյները։ Շատուն է որ «Դուրս Եւրոպայից» աղաղակը բարձրացաւ ոչ միայն օսմանլի կառավարիչների, այլ և թուրքական ազգի դէմ, և յայտնի է որ այդ անգութ բաղձանքը արդէն մեծ մասամբ իրագործուած է։ Հարիւրաւոր հազարներով յունական Թեսալիայից, Մակեդոնիայից, Թրակիայից, Բուլղարիայից թուրք գաղթականներ դիմեցին փոքր Ասիայ ապաստանուելու, և այս վախստականները մնացորդներն են միայն այն թշուառների, որոնք ստիպուեցին թողնել հայրական տները։ Ելքը շարունակւում է և երբէք չէ դադարելու, մինչև որ ամբողջ ստորին Ռումելիան լեզուով, բարքով, սովորութիւններով եւրոպական չդառնայ։ Բայց ահա թուրքերը վտանգուած են նաև Ասիայում։ Մի նոր աղաղակ է բարձ-

բանում՝ «Դուրս գէպի դափառականները» և մարդ սարսափելով հարցնում է թէ արդեօք այս աղաղակն էլ է իրագործուելու։ Ջկայ արդեօք հաշտարարութիւն կռուող ցեղերի միջև և անհրաժեշտ է մեզ որ քաղաքակրթութեան միութիւնը ձեռք բերուի ամբողջ ժողովուրդների զոհաբերութեամբ, այն էլ այնպիսի ժողովուրդների, որ նշանաւոր են իրենց բարձր բարոյական արժանաւորութիւններով, շիտակութեամբ, արժանապատուութեամբ, քաջութեամբ և համբերողութեամբ կրօնականում։

Ցոյները, այս հարստահարուած ռայաների որդիքը, որ արդէն իրենք իրենց համարում են Թերակղզու ապագայ տէրը, շատ հաւանականաբար մեծամասնութեամբ յոնիացիների և ծովափի միւս յոյների սերունդն են, թէև խմբուին աւած չեն կարող մաքրարիւն լինելու յատկութիւնն ունենալ։ Ջանազան ցեղ ժողովուրդներ, որ մնան յունական փոքրիկ տէրութիւնների ձգտողութեան շրջանը և ուրիշները որ աւելի ուշ՝ հելլենացան բիւզանդական ազդեցութեան տակ, Թուրին բոլորն էլ հին յոյների հետ խառնուած սերունդ, և դրանց միաձուլումը կատարեալ եղաւ։ Փոքր Ասիայում եղած յունական ազգութեան որոշիչ նշանը ոչ ցեղն է, ոչ լեզուն, այլ կրօնը իւր արտաքին ձևերով։ Մի միլիոն հոգու չափ այս ազգութեան սահմանները նոյնն են օրթոդոքս հասարակութեան սահմանների հետ։ Ինչպէս որ Ֆիօ կղզում և Էրիթրական Թերակղզում շատ գիւղեր բնակուած են Պելոպոնէսից փախած օսմանցիների սերունդով, որ միայն յունարէն են խօսում, նոյնպէս էլ շատ և շատ յոյն հասարակութիւններ Թուրք բարբառն են գործ ածում և հին յունարէն գրերով Թուրքերէն են գրում [1]։ Ա. յոպէս՝ Չերմուս և Կայիսարայի հովիտների բազմաթիւ գիւղերում յունարէնը նոր է սկսում խօսուիլ դպրոցների հաստատուելու շնորհիւ։ Մըտնելով աւելի խորը, նաւահանգիստներից մի քանի ժամ ճանապարհ հեռու, բազմաթիւ յոյն ժողովուրդներ կան, որ մի-

1) Th. Kotchy, Petermaun's Mittheilungen, IV, 1863. G. Perrot, արդէն յիշուած։

միայն Թուրքերէն գիտեն։ Գիւղերի անունները կարծեցնել է տալիս թէ մարդ Թուրքմէնների մէջ լինի. սակայն գտնում ես բուն «Ասիական յունաստանում»։ Միւս կողմից՝ կան հելլենական ժողովուրդներ, որ հազիւ են փոխոխուել երկու հազար տարուց ի վեր։ Ա. յոպէս են կարպիոտ, Չոռդէս կղզիների բնակիչները, նաև մերձակայ կղզեակների և կարիայի ծովափի բնիկները, ուր նախկին դորիական բարբառը Թողել է բազմաթիւ բառեր։ Արխիպելակի կղզիներում կան մինչև անգամ նախահելլենական հետքեր, այսպէս օրինակ՝ կոս'ի և Մեսիլինի'ի ներսերում միայն ալբիկներն իրաւունք ունին ծնողաց ժառանգութեան վրայ և ամուսնութեան առաջարկութիւնը կանանց կողմից է լինում, և երբ որ աւագ դուստրը ընտրել է արդէն իրեն ամուսին՝ ծնողները նրան են տալիս իրենց տունը [1]։

Թերակղզու արմատում՝ Հայաստան սահմանների վրայ, պահպանուել են յոյների մի քանի խմբեր, որ չեն անդամատուել ոչ քրդերից, ոչ հայերից և ոչ օսմանլիներից և խօսում են հին հելլենական լեզուով, լի այնպիսի հնաբանութիւններով, որ կորել են ծովափի այժմեան գործածական յունարէնի միջից։ Ա. յոպէս՝ Ֆարասը կամ Ֆարազա'ն, որ մի արծուի բուն է Զամանտիա—Ջրի ընթացքի վերևում՝ կապադովկիայի և Կիլիկիայի սահմանագծում, մնացել է յունական, թէև շրջապատուած Թուրքման ցեղերով։ Ֆարազիոտները հպարտ են որ խօսում են ռոմայիք—ուռումական (նոր-յունական) լեզուից աւելի մաքուր բարբառով և համարում են իրենց պելոպոնեսից սերուած։ Սակայն կարելի է ենթադրել որ հելլենական գաղութներին խառնուած լինին նախկին կապադովկացիների սերունդները՝ լինելով ենթարկուած յունական քաղաքակրթութեան, բայց ոչ մի ժողովրդական երգ, ոչ մի վիշնջական զրոյց հնարաւորութիւն չէ տալիս լուսաբանելու այս ծագման խնդիրները [2]։

1) Michaud et Poujoulat, Correspondace d'Orient.

2) Karolidis, Ճանապարհորդութիւն Կոմայում (նոր-յունբէն)։

Քանի որ Ֆարազիոանները քրդերի և աֆշարների ասազակութիւններից ստիպուած մնացին իրրև պաշարուած իրենց բարձր ամրոցում՝ անաղարտ պահպանեցին իրենց լեզուի ժառանգութիւնը, բայց այսուհետև ազատ լինելով երկրի ամեն կողմերում երթևեկել և կամ գաղթել ուրիշ գիւղեր, ցրուեցան նրանք կեդրոնական Անատոլիայում։ Եթէ դպրոցները չվերականգնեն հասարակշռութիւնը՝ յունական լեզուին սպառնում է կորուստ թերակղզու այս մասում։ Կան գիւղեր որ երբեմն հելլենախօս էին, բայց ուր այժմ յունական երգերը կրկնւում են միայն ծերունիներից, շատ ընտանիքներում մանուկներն այլ և այլ չեն իմանում ազգային լեզուն [1])։ Մինչև անգամ դարիս սկզբին եղան յունական գիւղեր, որ կորցնելով լեզուն կորցրին նաև իրենց կրօնը։ Պ. Կարոլիդեսը անցել է գիւղերով, որ երբեմն հելլենական բարբառին և դաւանութեանն էին պատկանում, իսկ այժմ մահմեդական են դարձել։ Հասանական է որ այդպիսի կրօնափոխութիւններ տեղի են ունեցել և առաջ, թուրքական արշաւանքների ժամանակից սկսած։ Պ. Կարոլիդիսը հեռու չէ հաւատալուց, որ Կապադովկիայի աֆշարները, որ շատ են տարբերւում պարսկաստանի աֆշարներից, լինին սերուած երբեմն հելլենացած բնիկներից։ Սրանք թէև միւս մահմետականներից չեն զանազանւում լեզուով, բայց իրենց բարքով և հազար ու մի մանրամասնութիւններով յիշեցնում են նախկին յոյներին։ Երկրի ներսի գիւղերում հելլենականութեան քայքայումը հասանականաբար իւր վախճանին է հասել։ Որովհետև այն յոյները՝ որոնք պահպանել են իրենց անունը, պահել են նաև իրենց իրական կամ ենթադրական ծագման գիտակցութիւնը և պարծենում են դրանով։ Մանաւանդ որ այժմ էլ գտնւում են ուղղակի յարաբերութեան մէջ իրենց դրսի եղբայրների հետ, որ օգնութեան ձեռք են կարկառում նրանց՝ գոյութեան պատերազմում։

1) G. Perrot, Svuvenirs d'un voyage dans l'Asie Mineure;—Karolidis, յիշուած։

Այսպէս կամ այնպէս, յունական ազգութեան յառաջադիմութիւնը ծովափում այնպէս արագ է, որ քիչ է մնում մարդ հաշուէ յարաբերական կանոնով թէ քանի՞ տասնեակ տարիներում նախկին յունական Ասիան՝ մինչև բարձրաւանդակի սահմանները՝ վերստին տիրապետուած կլինի յոյներից, առանց արենհեղութեան, այլ աստիճանաբար մի ցեղի տեղը միւսը բռնելով։ Կրօնի անունը յառաջախաղաց յոյն հասարակութեան համար միայն արտաքին շրջանակն է և դաւանաբանական խնդիրների ծաւալումը չէ այս տիրապետութեանց շարժառիթը։ Ընդհակառակն՝ փոքր Ասիայի յոյները, որ հին ժամանակները կրում էին «քրիստոնեայ» ընդհանուր անունը, շատ սակաւ են յայտնի իրենց օրթոդոքսական ջերմեռանդութեամբ։ Քահանաները շատ քիչ ազդեցութիւն ունին և՝ բացի գիւղերից, նրանցից խորհուրդ չեն հարցնում հասարակական քաղաքացիական խնդիրներում։ Հելլենական հասարակութեանց միացնող կապը հայրենասիրութիւնն է։ Նրանք իրենց համերաշխ են զգում Միջերկրականի աւազանի միւս յոյների հետ, առանց ուշք դարձնելու պայմանագրական սահմանների վրայ։ Թէև աւելի Աթէնքին են յարուած նրանք քան թէ Կոստանդնուպոլսին, բայց պէտք է ասած որ նրանք հայրենիք են համարում ոչ թէ որ և է քաղաք, այլ այն շարժուն կոհակները, որ լուանում են Արխիպելակի կղզիները և Ալէքսանդրիայից մինչև Օդեսսա թրջում են յունական այնչափ գաղթատեղերի ծովափունքը։ Անատոլիայի բոլոր հելլեններն էլ ներշնչուած են «մեծ գաղափարով». և ամենքն էլ գիտեն այդ գլուխ բերելու հնարը։ Ո՛չ մի ժողովուրդ սրանցից լաւ չգիտէ ապահովել ապագան մանուկների կրթութեամբ. այս մասում սրանց նախաձեռնութիւնը հասասարւում է մինչև անգամ հայերի նախաձեռնութեանը։ Իւրաքանչիւր քաղաքում մեծ գործը, ուսումնարանների գործն է։ Վաճառականները ապրանքների արտածութեան գների վրայ խորհրդակցելուց յետոյ վիճում են մանկավարժական մեթոդների վրայ, գնահատում են վարժապետների արժանիքը, խրախուսում են աշակերտների եռանդը։ Երբ մի օտարական այցելում է նրանց, ամաչարում են նրանք պատուել օտա-

բականին ուսումնարանական հաստատութիւնների և մանկական ապաստանարանների այցելութեամբ, խնդրում են նրան հարցաքննել մանուկներին, յայտնել իւր կարծիքը դաստիարակութեան ամեն խնդիրների վրայ, որոնցից կախուած է իրենց ցեղի ապագան: Մի կէտ որին բոլոր յոյները համաձայն են, այդ այն է որ ամենից առաջ հարկաւոր է զարգացնել երիտասարդութեան մէջ ազգասիրութիւն և ազգային նախապատուութեան փառասիրութիւն: Բոլոր աշակերտներն էլ սովորում են հին յունարէնը և կարդում են դասական մատենագրերը՝ ծանօթանալու համար այն փառքի և մեծութեան ժամանակներին, երբ իրենց նախնիքը աշխարհի դաստիարակիչներն էին: Բոլորեքեանն էլ ուսումնասիրում են իրենց նոր պատմութիւնը և մանաւանդ Անկախութեան պատերազմների սիրագործութիւնները: Կառավարող թուրքերի հաճոյակատար աչքի առաջ՝ վառւում բորբոքում են նրանք մի օր նոյն իսկ այդ թուրքին արտաքսելու մըտքով: Հայրենիքը վերստին ձեռք բերելու գործը պատրաստում է ուսումնարանների նստարանների վրայ: Ախտիսով կամաց կամաց, խաղաղ ճանապարհով կատարում է քաղաքական յեղափոխութիւնը: Ուսումնարանները պահպանելու և ապահովելու համար, ուսումնարանները, որ ազգի յոյսն են, ոչ մի զոհողութեան առաջ չեն կանգ առնում հասարակութիւնները: Շատ հարուստներ իրենց կենդանութեան ժամանակ իրենց ծախսով շինում են միջնակարգ վարժարաններ և հայրենասէրների կտակում մատաղահաս հելլենների կրթութեան գործը երբէք մոռացութեան չէ տրւում:

Ահա աստիճանաբար կերպարանափոխութեան շարժումով յոյները արդէն սիրացել են՝ իւ ոչնաս թուրքերի՝ բազմաթիւ արհեստների և ազատական կոչուած բոլոր արուեստներին: Քաղաքներում նրանք են բժիշկները, վարսապանները, ուսուցիչները: Իբրև թարգման և հրապարակախօս միակ նրանք են Եւրոպացիներին տեղեկութիւն հաղորդողները և Արևմուտքի հասարակական կարծիքը կազմողները: Ամեն մեծ առևտուր լաւագոյն գործաւորները նրանց ազգից են, իսկ նրանց բնակարաններում

հենց առաջին հայեացքից կարելի է նկատել, որ պահպանել են նրանք իրենց նախնիներից աւանդուած ձևերի կատարեալ չափակցութիւնն ու ներդաշնակութիւնը: Ջնայած բարբարոսութեանց և հարստահարութեանց դարերին, որով անցել է այս ցեղը, նրանց արուեստագործութեան շատ արգիւնքները իրաւ օրինակ կարող են ծառայել Եւրոպայի նոյնանման առարկաներին: Ցունական տներում՝ որմերի, առաստաղի, յատակի տախտակամածները յարմարեցրած են զարմանալի ճշդութեամբ և շոյում են մարդիս աչքը գոյների չափաւոր, ընտրողական հակադրութեամբ և գրուագների ճաշակով: Ջմիւռնիայի նաւահանգստում ամենանուաստ թիավարի նաւակը մի գլուխ — գործոց է շինքի ամրութեամբ, ձևերի վայելչութենամբ և ամբողջ շինուածքի յաջողակ բաժանումով: Միմիայն նաւացուկի շուրջը ճոպանի պատուածքին նայելով իմացւում է, որ նաւավարը գեղարուեստագէտ ազգից է: Պահենալու է միայն որ վափխութեան սիրուց դրդուած՝ ընդօրինակելով Արևմուտցիներին՝ չչեղուեն նրանք լաւ ճաշակից, ընդունելով օտար գործարանաշէն առարկաներ, որ շատ ստոր են իրենց ունեցածից: Այսպէս օրինակ՝ Ասիայի քաղաքներում յոյների մեծամասնութիւնը հագնում է, ֆրանսիական ձևով» այն աննշան, անճաշակ, անշնորհ զգեստները, որ պատրաստւում են Եւրոպայի արուեստանոցներում արտահանութեան համար: կկարմրէին ամեն թից եթէ հագնէին ասեղնագործ թեկնոցակը (զպունը), անդրավարտիքն ու գօտին, որ սակայն այնչափ շնորհք ու ազնւութիւն են տալիս քայլուածքին, կար ժամանակ որ յոյները գաւառապատուած էին կրելու միմիայն սև շորեր:

Բարձրագոյն կրթութեամբ, արհեստների և ազատական արուեստների իրենց ձեռքում ամփոփելով, հարստութեան տիրանալով՝ յոյները հզօրապէս զինուած են իրենց նախկին հարստահարիչների դէմ: Նրանք սպառնում են թուրքին նաև իրենց ամենուրեքութեամբ: Ծովագնաց և ճանապարհորդող ինչպէս հերոսական ժամանակ՝ մեր օրուայ հելլէնը ամեն տեղ է, իւր գործունէութեամբ արժէ ամբո նստակեաց թուրք, որ իւր ծննդավայրից

դուրս է գալիս միայն ամառանոց՝ սարի յստակ օդը ծծելու։ Ասիայում բնակուող յոյներից շատերը եկած են Պէլոպոնէսից, մայր ցամաքի (եւրոպական) ցունաստանից և կղզիներից։ Հակադարձաբար բազմաթիւ հելլեններ ասիական ցոնիայից, Սև ծովի ափերից և կապադովկիայից գնում են բնակուելու իրենց Եւրոպայի եղբայրների մօտ։ Այս յաճախակի ճանապարհորդութեանց, մայր ցամաքից մայր ցամաք ընտանեկան կապակցութեանց, խնամութեանց շնորհիւ, նաև թղթերի կեղծումով, որ հեշտութեամբ են կատարում թուրք պաշտօնեաները կաշառք առնելով, շատ դիւրին է ասիական յոյնին դառնալ հելլենական հպատակ։ Ժոտուած այդ միջոցով, որ իրեն և իւրայիններին ազատ է կացուցանում թուրքիայի ուղղակի վարչութիւնից, նա վերադառնում է բարձրաւիզ իւր ծննդեան հայրենիքը։ Այսպիսով Զմիւռնիայում և ասիական ծովափի միւս քաղաքներում յունական հիւպատոը իւր իրաւասութեան տակ ամբողջ ժողովուրդներ ունի։ Բուն Թուրքական հողում հաստատուում են յունական գաղութներ, ունենալով անձնական ձեռներէցութեան հզօրութեան հետ միասին նաև քաղաքական անկախութեան անգնահատելի առաւելութիւնները։

Եւրոպայից փոքր Ասիայ եկած գաղթականներից մի մեծ թիւ կրօնով կապուած են յունական աշխարհի հետ և կամաց կամաց ձուլուում են նրա մէջ։ Այսպէս են բուլղարները և վալախները, որ շատ շուտ սովորում են յունական լեզուն և գրեթէ բոլորն էլ երկրորդ սերնդում հելլեն են դարձած լինում իրենց բարքով։ Այս նոր յոյներին աւելանում են մի ուրիշ ցեղի ներկայացուցիչներ, որոնց սպասելի չէր Անատոլիայում հանդիպել։ Սրանք՝ մի քանի հարիւր ընտանիք ձկնորս կոզաքներն են, որ հաստատուած են Կըզըլ-Իրմաքի և Եշիլ-Իրմաքի գետայում, Մանիսա լճի մօտ և ստորին կայիսդրայի վրայ, մերձ Եփեսոսին։ Այս կոզաքները Դանուբի կոզաքների նման «հին հաւատացեալներ» են, որ ԺԷ. դարի վերջերում խոյս տուին Թագուհու հանած հալածանքներից։ Բայց վերջին տասնեակ տարիներում եկաւոր գաղթականութեան մեծ հեղեղը չերքեզներինն էր։ Չերքէզ ընդհանուր անուամբ հաս-

կացուում են Կովկասից եկած բոլոր գաղթականները։ Անշուշտ այս գաղթականները այնպիսիներից չեն, որոնց հետ յոյները կարողանային դիւրութեամբ հաշտուել։ Բնական կլիմեր այս լեռնացիներին բնակեցնել այնպիսի երկրում, որ շատ չտարբերուէր նրանց ծննդավայրից։ Պոնտական լեռների, Կիլիկեան Տաւրոսի, Լիկիայի Ա.կ-դագի վերին հովիտները շատ յարմար կգային իրենց կլիմայով բերքերով։ Այս տեղերում նրանք աւելի լաւ կզգային իրենց քան թէ դաշտավայրում, և այնչափ թշնամի էլ չէին վաստակել։ Բայց թուրք կառավարութիւնը երկնչում էր նրանց չափազանց անկախ մնալուց, ուստի և զետեղեց նրանց ցրուած խմբերով։ Տեղաւորուելով մեծ մասամբ նախկին տէրերից՝ հելլեններից և թուրքերից խլուած հողերի վրայ, մինչև իսկ ընդհակայ հաստարակութեանց հաշուով թոշակաւորուած՝ չերքէզները ընդունուեցին ինչպէս յարիշտակիչներ և նրանց չներուեց այդ ինքնամիւս սպրդումը ուրիշի հողերի մէջ։ Տգէտ երկրի լեզուին, արհամարհելով և չվաստենալով գոնէ սովորել, միշտ գոռոզ լռակեաց՝ այս նորեկները չփոխեցին նաև իրենց աւազակային բարքը վերահաստատուելով այս իրենց ասպնջականութիւն տուող երկրում։

Ջիւերի գողութիւնները, մինչև անգամ մատաղահաս աղջիկների առևանգութիւնները շատացան նրանց գալստեամբ, ուստի և նրանց վրայ էլ կասկածեցին։ «Չերքէզը աղքատից էլ է գողանում» այս է ընդհանուր ազգակը փոքր Ասիայում։ Բոլորեքեան միացան նրանց դէմ։ Պատերազմն սկսուեց այդ օտարամուտների դէմ մանաւանդ յոյն գիւղերում, որոնց գանգատները լսելի լինելու նոյն բանտը չունէին ինչ որ թուրքերինը։ Շատ գաւառներում արեան օրէնքն է տիրում սահմանակից հասարակութեանց միջև։ Երբ պատահում է որ մի չերքէզ մոլորւում է թշնամու հողի սահմաններում, նա անհետանում է ոտով գլխով, առանց որ հնար լինի որ և է տեղեկութիւն կամ բացատրութիւն ստանալ։ Կովկասի այս գաղթականները լինելով սակաւաթիւ շատ տեղերում ստիպուեցան անհաւասար կռուից յետ քաշուել և որոնել ապաստարան մի այլ՝ նուազ բնակուած տեղում։ Մի քանի տեղերում էլ, մասնաւորապէս Նիկոմիդիայի մօտերում, յաջողեցրին նրանք իրենց հա-

բևանները արտաքսել։ Սակայն կան և այնպիսի չերքէզ գիւղեր, որոնց բնակիչները ունենալով բաւարար հող և անասուն խաղաղութեամբ են ապրում իրենց դրացիների հետ և կամաց կամաց յարմարւում են այս նոր միջավայրին։ Մէանգրի վերին հովտում մի քանի կովկասեան գաղութներ կարող էին իրենց օրինակ ծառայել շրջակայքի թուրքերին իրենց գաշտերի լաւ մշակութեամբ և ոռոգման ջրանցքներով։ Բնիկները Աբխազներից միայն այնչափ գանգատուելու տեղիք չունին։

Կար ժամանակ որ Փոքր Ասիայի վաճառականութիւնը մեծ մասամբ օտարականների ձեռքումն էր։ Այդ օտարականները գրեթէ բոլորն էլ յատին կաթոլիկներ էին, հաստատուած Զմիւռնիայում և ծովափի միւս քաղաքներում։ Դրանք հաւաքական անունով կոչւում են Լևանդացիք։ Դեռ քանի որ յունաց ազգութիւնը չէր արթնացած նրանք էին միակ միջնորդը Անատոլիայի թուրքերի և Արևմուտքի նաւահանգիստների միջև, բայց հելլենների հետզհետէ յաջող գործունէութիւնը և շոգենաւերի ուղղակի վաճառականութեանը տուած դիւրութիւնները նշանաւոր կերպով նուազեցրին Լևանդացիների ազդեցութիւնը։ Դրանց մեծամասնութիւնը այս երկրում հաստատուած են բաղմաթիւ սերունդներից իվեր, մի խառնարիւն ցեղ են, նրանցից շատերը կիսատ-պռատ գիտեն այն ազգի լեզուն, որին պատկանում են իրենց վիպայթղթերով։ Բայց միշտ դիմում են հիւպատոսի իրաւասութեանը և արտօնութիւն ունին թուրքական իրաւասութեան չենթարկուելու։ Սրանցից են գրեթէ մշտապէս ընարւում հիւպատոսների գործակալները և օտար դեսպանների պաշտօնեաները։ Անկասկած դրանք ուշ թէ շուտ անհետանալու են իրենց առանձին դասակարգ, ոմանք ձուլուելով տեղական ժողովրդի հետ ուրիշները վերադառնալով այն ազգի ծոցը որից ծագել են։ Դասակարգի կորչելուց շատ առաջ անհետանալու է նրա ազգատ բարբառը «Ֆրանկական լեզուն», որ ծնունդ է առել Լևանդացիների Արևելքի նաւահանգիստների բազմազեղ բնիկների հետ ունեցած առևտրական յարաբերութիւններից։ Այս գռեհիկ բարբառը բաղկացած է մի քանի հարիւր բառից, որ առանց հոլովման և խո-

նարհման գործածում են միմեանց վրայ։ Ծագումով իտալական է, որովհետև այս բարբառով խօսողների մեծամասնութիւնը իտալական ծագումն ունին, բայց պարունակում է նաև Պրովանսալ, սպանական ֆրանսական բառեր, այլ և տեղական՝ յունական և թուրքական առևտրական առարկաների անուններ։ Կարելի է ասել որ այդ կոպտատաշ բառերի իմաստաւորութիւնը, որ կոչւում է ֆրանկ լեզու, գոյութիւն չունի այլ և։ Նրան փոխարինել են արդէն իտալական մի գաւառաբարբառ և ֆրանսերէն լեզուն։ Մի ուրիշ Լևանդական բարբառ էլ կորչելու վրայ է։ Այդ՝ սպանիոլ կոչուած կամ հին սպանական բարբառն է, որ գործ են ածում Սպանիայից արտաքսուած հրէաների սերունդը, խառնեալ նրա հետ եբրայական բառեր և որ գէաւարութեամբ կիսակացուի կաստելացիներից։ Կամաց կամաց կրթութիւնը ամէն բարբառները փոխարինում է քաղաքակիրթ լեզուներով։ Զարմանքով և բերկրութեամբ Զմիւռնիա իջնող ֆրանսիացին կլսէ ամեն տեղ իւր լեզուի հնչիւնները, որ ընդունուած է կրթուած մարդկանցից իբրև հասարակաց լեզու և որը արտասանում են նրանք զարմանալի պարզութեամբ։ Գրական ֆրանսերէնն է գարձել թէ հայերի և թէ հրէաների, այլ և յոյների և Լևանդացիների համար ներկայիս «Ֆրանկ լեզուն»։

Իւր աշխարհագրութեամբ, իւր բնակիչներով, իւր պատմութեամբ լինելով միանգամայն թէ ասիական և թէ եւրոպական երկիր՝ Անատոլիան իւր սոցիալական և քաղաքական վիճակով ներկայացնում է կրկին շարժում՝ քայքայման և յառաջադիմութեան, որ և անխուսափելի յեղափոխութեան նախերգանքն են։ Ցոյները աճում են, թուրքերը նուազում։ Ծովափի քաղաքները լցւում են բնակիչներով, ներսինները ամայանում։ Արդի արուեստագիտութիւնը ներկայացուած է Զմիւռնիայում իւր ամենահոյակապ երկերով, մինչդեռ այդ քաղաքի նոյն իսկ մերձակայքում վրանները խափած բնակւում են կեդրոնական Ասիայի ամենախեղճ կիրգիզներից ոչ պակաս աղքատ և ամեն յարմարութիւններից—կոնֆորտից զուրկ ցեղեր։ Ծովեզերքում կան գաւառներ որ մշակուած են նոյն հոգատարութեամբ ինչպէս արևմտեան

Եւրոպայի դաշտերը, մինչդեռ ոչ հեռուն աւազակների երկիրից թափուր և անմշակ են մնում ամբողջ հողեր և գիւղեր։ Կայ այնպիսի քաղաք՝ նոյն իսկ ծովափի մօտ, որ կարծես պաշարուած լինի աւազակներից և մեծատուններ — քաղաքի երևելիքը հազիւ համարձակւում են դուրսը ոտք դնել բազմաթիւ զինուած պահապանների ուղեկցութեամբ։ Կազմակերպւում են ահագին կալուածքներ վերածելով ամբողջ ժողովուրդներ աքօղուած ճորտութեան։ Սարսափելի սովեր, ինչպէս այդ պատահեց 1874-ին և 1878-ին, անմարդաբնակ են դարձնում ամբողջ գաւառներ։ Երկրի ներսում կարելի է ամբողջ օրեր արշաւել առանց հանդիպելու մարդկային որ և է հետքի, բացի գերեզմանների հողակոյտերից և հռոմէական համ հելլենական աւերակներից։ Սակայն վաճառականութիւնը՝ արուեստագիտութեան և երկրագործութեան գործունէութեան այդ նշանացոյցը, տարէցտարի աճում է։ Եթէ Ասիական Թուրքիան կորցրեց իւր տորոնի արտահանութիւնը, եթէ շերամի բոժոժի հիւանդութիւնը պակասացրեց հռոմ ապրեշումի արդիւնաբերութիւնը, սակայն նա առաջուանից աւելի բամբակ, օպիում և խաղող է արտահանում։ Միայն Զմիւռնիայի հրապարակը այժմ աւելի մեծ արտածութեան առևտուր ունի, քան թէ ամբողջ Անատոլիան դարիս սկզբին։ Հասանական է որ ամբողջովին առած յառաջադիմութիւն կայ։ Բոլոր ընդհարուող տարրերի ընդհանուր արտադրեալը ցոյց է տալիս թէ ժողովրդի և թէ նրա բարեկեցութեան աճումը։

Անատոլիայի երկու կիսի, այն է՝ ծովափի, որ ձգտում է եւրոպական գաղնալ և բարձրաւանդակի՝ որ դեռ ևս պատկանում է կեդրոնական Ասիային, միջև եղած հակադրութիւնը կամաց կամաց մեղմանալու է անշուշտ մօտակայ ապագայում։ Թերակղզին չունի բնաւ աշխարհագրական միութիւն, որ հնուած լինելով խոտորագնաց հոլիոների, որ խոնարհուած են դէպի տարբեր ծովեր և անջատուած են միմեանցից արտահոսութիւնից զուրկ գոգաւորութիւններով։ Բայց բնութեան պայման այս միութիւնը մարդն է սկսում տալ նրան։ Չաղորդակցութեանց

ճանապարհներով դիւրացած վաճառականութիւնը հարթում է նահանգական խոչընդոտները, ջնջում է ջրբաժան կատարների, լեռների գահավէժների հնումը պատմութեան ընթացքի մէջ ունեցած վճռական ազդեցութիւնը և թուլացնում է կամաց կամաց այն կապերը, որով անբաժան կապուած էին ժողովուրդները իրենց ծննդավայրի հողի հետ։ Երկաթուղիների կառքերը արշէն մրցում են փոքր Ասիայում կարաւանների ճանապարհն անցնող 160000 բեռնակիր ուղտերի հետ։ Չէնց որ Անատոլիայի ներքը այնպէս դիւրամատոյց դառնայ ինչպէս եւրոպայի և Ամերիկայի երկաթուղի ունեցող երկիրները, այն ժամանակ իրերանայ միաձև բարձրաւանդակները աստիճանաձև ծովափից բաժանել անչրպետը։ Ասիաճանաբար պրսի ազդեցութիւնը կդադարի մինչև անգամ Եւրասիների թափառած բարձրանիստ արօտատեղիներում։ Փոքր Ասիայի նայն իսկ ձևը ենթարկելու է նրան եւրոպական ձեռնարկութեանց։ Երեք կողմից նա ողողում է ծովով. ռուսական գարձած Բաթումից մինչև անգլիական գարձած կղզու (Կիպրոս) Հանդիպակաց Մերսինա քաղաքը բոլոր նաւահանգիստները մի մի յարձակման կէտեր են։ Վերջապէս՝ Անատոլիան իւր մայրցամաքային կոմմի, որ երբեմն ազատ յարաբերութեան մէջ էր մարական լեռների քարդ, թուրք, թուրքմէն ցեղերի հետ, այժմ ահմանակից է մի եւրոպական տէրութեան, որ պաշարել է նրան քամակից։ Այս կողմից էլ ճանապարհների ցանցը աճելու է արագութեամբ։

Ասիաճանաբար կերպարանափոխութեան գործում ձեռնարկութիւնը պատկանում է «Անհատաս» Զմիւռնիային (գեաուր Իզմիր) և ոչ թէ Սամբուլին։ Բնական է որ կառավարութեան օսմանցիները ակամայ են պրպտում այն հասարակական շինութիւններով, որ օտարներին են մնալու ժառանգութիւն։ Անթաքն ճարտարապետներ առաջարկեցին Սիվասարում ակաւոտ երկաթուղին երկարացնել և հասցնել մինչև Բաղդադ, սակայն գեռ մինչև այսօր էլ նա մինչև անգամ չէ մտած Եփրատիայի հովիտը, որ վաղարշ գրեթէ արուարձանների մասն է կազմում՝ օրական պաշարեղէնի մատակարարութեամբ։ Բայց ասիական ճո-

նիայի մայրաքաղաքը, ուր չնայած քաղաքական կեղծիք են (ֆեկցիա) հեգեմոնիան պատկանում է իրապէս յոյներին և Արևմուտքներին, ունի արդէն երկաթուղիների ամբողջ մի ցանց, որ ձգւում է մինչև Չերմուսի, Կայիստրայի և Մէանդրի հովիտները։ Մի կողմից էլ աշխատանքը շարունակւում է դէպի բարձրաւանդակը, ուր հասնելը դժուար չէ դառիվայրերի փոքր շեղութեան պատճառով։ Նոյն իսկ բարձր տափաստաններում, ուր հազիւ են պատահում քաղաքներ, երկաթուղու համար առևտրի նիւթ կայ։ Փռիւգիայի և Լիկաոնիայի լճերի ափերում բազմաթիւ են քիմիական գոյացութիւնները, ազեր, ազոտաթթուներ և բորակներ։ Սակայն այս գծերը, որ շատ օգտակար են ներսի առևտրագիտութեան զարգացմանը, միայն երկրորդական նշանակութիւն կարող են ունենալ միջազգային վաճառականութեան համար։ Եւրոպան և Հնդկաստանը միացնող մեծ անկիւնագծային ճանապարհը անպատճառ պէտք է կոստանդնուպոլսով անցնի։

Արաբուստ ինչպէս էլ թուի, սակայն անգլիացիք՝ Հնդկաստանի տէրերը, ոչ մի շահ չունին շինելու այս ուղղաձիգ դիծը, որ անցնելու է հրեաստրոցներով դինուած մի նեղուցով, որին իրենք չեն տիրում։ Այս ճանապարհի բացումը իրրև անմիջական հետևանք ունենալու է այն՝ որ Միջին Եւրոպայի ազգերը ձեռք են բերելու աւազնութիւն Արևելքի վաճառականութեան մէջ։ Մեծ բրիտանիան լինելով ծովային ճանապարհների իշխող ո՛չ մի օգուտ չունէը բարելաւուց հրատանգանից զատ ուրիշ ճանապարհ բանալուց։ Ասած և նա դիմադրեց Սուէզեան ջրանցքի բացմանը, որովհետև այդ միմիայն իրեն չէր ծառայելու։ Ընմանապէս էլ նա խանգարելու է կոստանդնուպոլսից դէպի բաղդադ երկաթուղու շինութեան ամեն մի ձեռնարկութեանը։ Առաջուց նա նպատակ ունի գծի շինութեանը, որ ձգւելու է Կիպրոսին հանդիպակաց Միջերկրականի նաւահանգիստներից մէկից մինչև Պարսկաստանի ծոցը, որ մի վտակաձև ծով է իր նաւատորմիղի իշխողութեան տակ։ Նա աշխատելու է նոյնպէս, որ այդ գիծը ընժանուած լինի հայկական բարձրաւանդակներից եփրատի ընթացքով,

որովհետև Կովկասի և Անդի-Կովկասի տիրապետողների դինուորական գերակշռութիւնը այնչափ հաստատուն է, որ օսմանցիները այսուհետև նոյն իսկ Անգլիայի օգնականութեամբ չպիտի կարողանան վտակել Ճանապարհը Ռուսների առաջ, եթէ սրանք բարեհաճեն մի օր իրենց ունեցածին աւելացնել նաև Տաւրոսն ու Անտի-Տաւրոսն։

Ա՛յսպէս ուրեմն՝ փոքր Ասիայի առևտրական և արուեստագիտական տիրապետումը մեծամեծ հետևանքներ է ունենալու աշխարհի քաղաքագիտական հաւասարակշռութեան վերաբերութեամբ։ Բայց կարելի՛ է արդեօք գուշակել թէ այդ ինչ հետևանքներ է ունենալու նաև թերակղզու բնակիչների համար։ Կարելի է ասել որ կառավարչական տեսակէտից Անատոլիայի քաղաքական միութիւնը արդէն իրողութիւն է։ Սուլթանի իշխանութիւնը այդ տեղում աւելի լաւ է հաստատուած քան երբ և իցէ։ Ամենուրեք աւատական կամ գրեթէ անկախ ԴԷՐԷ ԲԷՅԷՐՔ — «Հովտապետների» իշխանութիւնը ջնջուած է արդէն։ Մնացել են միմիայն տեղ տեղ լեռների բարձրութեանց վրայ պահպանուած ինքնավար հաւատարակապետութեանց հետքերը։ Բոլոր վիլայէթներում վարչական կազմակերպութիւնը նոյնն է, բայց այս միաձևութիւնը մի արտաքին երևոյթ է միայն, անատոլական «ազգերը» այսուամենայնիւ մնում են միշտ բաժան բաժան։ Դեռ աւելի էլ՝ հաղորդակցութեանց աճող դիւրութիւնները աւելացնելու են նաև միմեանց ընդհատ կամ կատարեալ չհաշտ ունեցող ժողովուրդների ընդհարումը։ Ծովափի գործունեայ և ձեռնարկող յոյները այլ և միմիայն խեղճացած թուրքերի դրկեցները չեն։ Նրանք ընդհարւում են արդէն նաև ներսի թուրքմանների հետ, որ երիտասարդական եռանդով լի են, քուրդերի հետ, որ իրանական յատկութեանց տէր են, ունին բանիմացութիւն և ճկունութիւն, հայերի հետ որ աշխատասէր են և տոկուն։ Փոքր Ասիայում չկայ մի քաղաք որ չորս, հինգ «ազգութիւն» չունենայ։ Դան այնպիսիները, որ տասներկուսը, տասնեհինգը ունին և իւրաքանչիւրը այս ազգութիւններից իրենց ծննդավայր քաղաքից դուրս են վճռուած Հայրենակիցներ և կրօնակիցներ։ Միևնոյն քաղաքի բնակիչները՝

իրենց սարբեր ծագմանը գիտակից, անջատած են միմեանցից ազգութեամբ և աւանդական ոսխութեամբ իրար չեն հանդուրժեր երբեք համաքաղաքացի։ Ի՞նչպէս է կատարուելու արդեօք այս սարբեր տարրերի միացումը եւրոպական աշխարհի հետ։ Անշուշտ փոքր Ասիայում պակաս չեն լսոն հայեցակէտով մարդիկ, որ հաւանում են արևելեան ազգութիւնների հաւասար իրաւունքներ ունենալը և որանց ցանկանում են Տաւրոսի և Անթատաի ժողովուրդների ապագայ դաշնակցութիւնը, սակայն անցդպական պատմութիւնը շատ դաժանելի է լինելու։ Նախկին եւրոպական Թուրքիայի կերպարանափոխութեան ընթերականերս կարդ ենք արդեօք յուսալ որ գոնէ Ասիական Թուրքիայի կերպարանափոխութիւնը կատարուի առանց արիւնհեղութեանց և աշխարհաւեր գաղթականութեանց։

ԱՍՈՐԻՔԻ ԵՒ ՊԱԼԵՍՏԻՆԻ ԲՆԱԿԻՉՆԵՐՆ ՈՒ ԿՐՕՆՆԵՐԸ.

Ասորիքի և Պալեստինի «սրսր» կոչուած ժողովուրդը սրժանի է այդ անուան միմիայն իւր բարքերով, նա սերուած է երկրի նախկին բնակիչներից։ Արաբիայից եկող սիրատեները սմենևին չջնջեցին բնիկներին, այլ անձեռնմխելի թողին նրանց դաշտերն ու տները՝ պահանջելով միմիայն հարկ. միևնոյն ժամանակ չսահմանեցին նրանց իսլամութիւնն ընդունել։ Ասորիների մեծամասնութիւնը շատպեցին մահմետական դաւանալ, ինչպէս որ առաջ էլ՝ Բիւզանդական սիրատեսութեան տակ՝ քրիստոնեայ էին գարձել։ Բայց ինչպէս մի քանի դար առաջ կատարաշտութեան վերադրին նոյն քրիստոնէութիւնը, այսպէս և՝ մահմետականութիւնը իսր արմատներ չձգեցին։ Նախ և առաջ խնդիրը հողը պահպանելու մէն էր, իսկ նոր կրօնի արտաքին ձևերը շատ քիչ նեղութիւն էին պատճառում Ֆելլահին, քանի որ նախնական՝ նոյն իսկ յուդայականութիւնից առաջ եղած՝ կրօնների հիմունքը միշտպէս մնացել են Ֆելլահի սրտում անկպոտելի։ Նման այն ժամանակներին, երբ երբեմնական մարգարէները թափում էին իրենց առնէձքները բարձր տեղերի—«բարձունքների» երկրպագունների վրայ,

մինչև այսօր էլ նրանց պաշտելի առարկաները ձէտիշներ են՝ մեծ ծառեր և ժայռերի շեղջակոյտներ։ Սակայն նրանք ստիպուել են ծպտել կռապաշտական պաշտամունքը խիստ մուսուլմանի ձևերի տակ։ Սրբավայրերը, որ կոչւում են «Կայան» կամ «Մաքամ», — գրեթէ միևնոյն Մաքոմը որ անիծուած էր Մովսիսական օրէնքով,— զարդարուած են պորրիկ, սպիտակ գմբէթներով, որոնց տակը՝ նրանց ասելով՝ ամիսվուած են առաջնորդների և մարգարէների շիրիմները։ Բայց այս շէյխ ու նէբի'ները սրիշ բան չեն, եթէ ոչ նախկին տեղական աստուածութիւնները, թէև շատերը ստացել են նոր՝ միևնոյն իսկ քրիստոնէական՝ անուններ, ինչպէս՝ Պօղոս, Պետրոս, Մատթէոս։ Այս ենթադրեալ մուսուլման սրբերը յաճախակի ընկերացած են զոյգ զոյգ, ինչպէս որ փիւնիկեցիների առաջնածներն էին, որոնց նոր կրօնական միջավայրին յարմարեցնելու համար բաւական է եղել կին ամուսիններին քոյր անուանել։ Պաշտամունքի ծէսերը նոյնն են, ինչ որ երեք հազար սարի առաջ. մինչև այսօր էլ գառներ են մորթւում՝ մատուռների դիմաց, սուրբ վէմը կամ դամբարանի մուտքի դրան վերին քարը նմանապէս ներկուած է լինում հինայով։ Դիւղի ծերերը հանդիսաւոր պար են բռնում «Կայանի» առաջ, պատառաքի կտորներ ուխտագրութեամբ փաթաթւում են մացառներին։ Սրբի գլխի վերևը բարձրացող սրբազան ծառից ընկած ամեն մի ճիւղ ժողովուրդի համար է ինչպէս թանգագին իր, մոքամների մէջ լսպաներներ են փառւում և բոլոր շրջակայ բլուրների ծայրին, որտեղից սուրբն երևում է, փոքրիկ բրգաձև նշաններ են անկուած։ Սրբավայրի պարտպատի մէջ ասղնջականութիւնը անբնաբարելի է մինչև անգամ անհատների համար։ Տեղական աստուածութեան անունը երբէք այնպիսի թեթևութեամբ չէ արտասանուում, ինչպէս որ Ալլահի անունը։ Ո՛չ մի բան այնպէս հաղուագիւտ չէ ինչպէս տեղական սրբարանի վերայ դրուած սուտ երդումը [1]) այդպիսի յանցանքի անխուսափելի հետևանքն է լինում մահսպանութիւն։

---

1) Clermont Gonneau, Palestine inconnua;—Conder, Tent—work in Palestine.

Քանանական նախկին կրօնները էլ կանգնեցնում էին դոլմէններ, մենհիրներ և քարի շրջաններ: Յուդայի երկրում դրանցից չեն գտնուում այլ և այ, որովհետև Մովսիսական օրէնքի խստապահ հետևողները կործանել են դրանց մնացանալով որ՝ թէ Մովսէսը և թէ Յեսուն էլ կանգնեցրին այդպիսի արձաններ: Սամարիայում կարծում են գտած լինել այս նախնական յիշատակարաններից մէկի հետքերը: Անգլիացի հետախոյզներ նշմարել են դրանցից մի քանիսը Գալիլիայում «կռապաշտների երկրում»: Մի ուրիշը երևում է Տիբրոսի մօտ, իսկ հարիւրներով գտնուել են Անդր-Յորդանանի լեռներում [1]) և Սինայեան թերակղզում: Միմիայն 1881 թուին դրանցից գտնուեցին եօթն հարիւրից աւելի Մովաբի երկրում: Իւրաքանչիւր բլրի գլուխ ունէր եթէ ոչ իւր տաճարը գոնէ իւր քարերի շեղջը: Յիշատակարանների մեծ մասը կազմուած են անտաշ քարից, թէև կան և այնպիսիները որոնց երկաթ դիպել է: Արաբները մինչև այսօր էլ Դոլմէնները համարում են իբրև սեղան և գալիս են այդտեղից ազնուելու արեգակի ծագումը: Այս մեծաքարերի (մեգալիթ) շուրջը գըտնուել են նետերի շատ սլաքներ և բազմաթիւ բանուած—սրուած գայլախաղ [2]):

Պալեստինի և Անդր-Յորդանանի բնակիչները փոքր Ասիայի բնակիչների նման բաղկացած են երկու բոլորովին տարբեր՝ թէև գրեթէ ամբողջ երկրում միմեանց կողք կողքի ապրող՝ տարրերից: Դրանք են՝ թափառաշրջիկ բեդուինները և գիւղերում ու քաղաքների արուարձաններում բնակուող ֆէլլահները: Մի քանի քաղաքներում, որոնք աւելի բազարների և պարէզների խմբեր են քան քաղաքներ, ինչպէս է օրինակ՝ Դաղա'ն, կողք կողքի են գտնուում քաղաքացու տունը, ֆէլլահի հիւղը և արաբի վրանը: Այսր-Յորդանանում բեդուինները պակասում են, հազիւ թէ նրանցից մի քանիսին հանդիպի մարդ Սարոնի կազմնական հովտում՝ Կարմելի և Եաֆֆայի միջև, բայց շատ չէ անցած այն ժամանակներից, երբ աւազակներն անցնում էին Յորդանանը և ապրելիս էին Յորդանանի արևելեան լեռներում: Ներկայումս նրանք ապրում են Պալեստինի հարաւային մասում, Սինայեան թերակղզում և Սիրիայի անապատներում: Նրանք ունին իրենց ցեղապետները, որոնց հնազանդում են և որոնց հրամանով տեղափոխում են իրենց վրանները: Նրանք ունին իրենց ձիերը, ուղտերը, էշերը, ոչխարները և այծերը: Նրանք ապրում են ամառը ջրի մօտ, ձմեռը՝ անապատում: Նրանք ունին իրենց սովորութիւնները, իրենց հագուստը, իրենց զէնքերը, իրենց երգերը, իրենց պարերը, իրենց խրախճանքները, իրենց սգերը, իրենց հարսանիքները, իրենց կռիւները, իրենց հաշտութիւնները, իրենց դատաստանները, իրենց պատիժները, իրենց ուխտերը, իրենց երդումները, իրենց նզովքները, իրենց օրհնութիւնները, իրենց աղօթքները, իրենց պատարագները, իրենց զոհերը, իրենց տաճարները, իրենց քահանաները, իրենց մարգարէները, իրենց աստուածները: Նրանք ունին իրենց լեզուն, որ նման է հին եբրայերէնին, բայց շատ տարբեր է նրանից: Նրանք ունին իրենց գրերը, որ նման են հին եբրայերէն գրերին, բայց շատ տարբեր են նրանից: Նրանք ունին իրենց թուականները, որ նման են հին եբրայերէն թուականներին, բայց շատ տարբեր են նրանից: Նրանք ունին իրենց չափերը, որ նման են հին եբրայերէն չափերին, բայց շատ տարբեր են նրանից: Նրանք ունին իրենց կշիռները, որ նման են հին եբրայերէն կշիռներին, բայց շատ տարբեր են նրանից: Նրանք ունին իրենց դրամները, որ նման են հին եբրայերէն դրամներին, բայց շատ տարբեր են նրանից: Նրանք ունին իրենց ոսկերչական իրերը, որ նման են հին եբրայերէն ոսկերչական իրերին, բայց շատ տարբեր են նրանից: Նրանք ունին իրենց արուեստները, որ նման են հին եբրայերէն արուեստներին, բայց շատ տարբեր են նրանից: Նրանք ունին իրենց գիտութիւնները, որ նման են հին եբրայերէն գիտութիւններին, բայց շատ տարբեր են նրանից: Նրանք ունին իրենց փիլիսոփայութիւնը, որ նման է հին եբրայերէն փիլիսոփայութեան, բայց շատ տարբեր է նրանից: Նրանք ունին իրենց կրօնը, որ նման է հին եբրայերէն կրօնին, բայց շատ տարբեր է նրանից: Նրանք ունին իրենց աստուածները, որ նման են հին եբրայերէն աստուածներին, բայց շատ տարբեր են նրանից: Նրանք ունին իրենց տաճարները, որ նման են հին եբրայերէն տաճարներին, բայց շատ տարբեր են նրանից: Նրանք ունին իրենց քահանաները, որ նման են հին եբրայերէն քահանաներին, բայց շատ տարբեր են նրանից: Նրանք ունին իրենց մարգարէները, որ նման են հին եբրայերէն մարգարէներին, բայց շատ տարբեր են

մարդների մէջ հազիւ է պատահում խնամոթիւն։ Սակայն գիւղացիների մեծամասնութիւնը բարեկամ են և գութեկան դէմքով։ Նաղարէթի և Բէթլէհէմի կանայք հռչակաւոր են գեղեցկութեամբ, որ և բացատրւում է՝ սիրալ թէ ուղիղ, եւրոպական ասրբի հետ արեւնախառնութեամբ։ Ասորիքի և Պալեստինի գիւղերում շատ հազիւ են պատահում աձև, խեղ անձինք, բայց ոչ-կութիւնը մինչև այժմ էլ տարածուած է գիւղացիների մէջ և իւրաքանչիւր մեծ քաղաք իւր արուարձանն ունի այդ տարատեսակ հիւանդութիւնից կերուած թշուառականների համար։ Պալեստինի մի քանի կողմերում պռունկի կանայք քարկոծում են՝ ինչպէս երկու հազար տարի առաջ, և դոյց են տալիս այն վիհերը, ուր դեռ նոր ժամանակներում նետուել են այդ դժբաղդները գիւղի ծերերից [1]։

Գիւղերի բնակիչները շատ չեն փոխուել, բայց քաղաքներինը շատ շատ։ Յաղթական արաբները, յետոյ թուրք անուանուածները, որ իսկապէս քրդեր են, հայեր և չերքէզներ հաստատուել— բնակուել են քաղաքներում։ Սորկութիւնը վերացուած չէ։ Դամասկոսը միշտ ունեցել է և ունի իւր վաճառականոյները, ուր ափրիկեցիներ են ծախւում, և այս բոլորը նպաստում է բնակչութեան արեւնախառնութեան։ Այս երկրի ժողովուրդը՝ թէև գեղով շատ խառնուած, ունի սակայն իւր յատուկ գծագրութիւնը։ Ասորիները սովորաբար ունին՝ կանոնաւոր, թէև փոքր ինչ լայն կերպարանք, լաւ գծուած քիթ՝ թէև աւանց նրբութեան թեթևակի գուրս ցցուած շրթունքներ, նշաձև աչքեր, որ միշտ գեղեցիկ են, և չափազանց շարժուն դէմք։ Բոլոր ճանապարհորդները միաբան վկայում են, որ ասորիները իսկապէս արժանի ժառանգ են իրենց նախնիներին՝ փիւնիկեցիներին և ամեն բանում ընդունակ ժողովուրդ են։ Բիբլիան ն ասում է, որ նրանք «աշխարհի ամենալաւ օժտուած ցեղն են»։ Չնայած կրած տարուքութեան երկար դարերին, նրանք հիանալի նախաձեռնութիւն ունին և միանգամայն չափազանց պիւրին լեզուաստեղծութիւն։ Նրանց ընդունակութիւնները բնականաբար հակուած են դէպի վաճառակա-

1) Gonder, Tent—work in Palestine.

նութիւնը և արդէն բազմաթիւ տարի վաճառականներ հաստատուած են Մարսէլում, Լիվրպուլում, Մանչեստրում, մինչև անգամ՝ Ամերիկայում և Ավանդինաւիայում։ Ի ծնէ վաճառական՝ նրանց խօսակցութիւնը մշտապէս փոքի վրայ է։ Բացի այս՝ Ասորիքի «արարներին» մեղադրում են ճշմարտախօսութեան համար քիչ հոգածութիւն ունենալում։ «Ասուր մարգս ասն է, ասում է նրանց մի առածը, 1) արդարացնելով խաբեբայութեան մոլութիւնը, որ այնչափ սովորական է հալածուած ընկճուած մարդկանց։ Ասորիների մի ուրիշ գլխաւոր պակասութիւնն է նրանց անյաստելի անապարծութիւնը։ Նրանք շատ շուտով գոռոզանում են իրենց գիտութեամբ, այնպէս որ՝ ցանկութիւն չեն ունենում աւելի սովորելու։ Նրանք կանգ են առնում հպարտացած, որ արդէն շատ հեռու են գնացել։ Այս էլ կայ, որ իւրաքանչիւր քաղաք իւր բնորոշ առանձնայատկութիւններն ունի, որ ծագում է միջավայրի և խառնուրդի զանազանութիւնից։ Տեղական առածները նկարագրում են այս տարբերութիւնները չափազանց չափազանցօրէն. «Հալէբի՛, Զէլէբի՛! Շո՛ի, Շո—ի՛»։

Հալէբցի — ապուպարի, Շամցի — ընուպարի։ Այսպէս են միմեանց պատում այլ և այլ քաղաքների բնակիչները։ Դամասկոսի (Շամի) բնակիչները Ասորիքի ամէն՝ ապրանքէն են, որ և բացատրում է նրանց մշտական յարաբերութեամբ Մեկքայի հետ։ Արաբական բարբառը այստեղում աւելի մաքուր է քան թէ մնացած Ասորիքում, բայց հին տարերկինը (սիրիաք) պահպանուել է Հարևան մի քանի գիւղաքաղաքներում։ Հալէբը թրքախօս երկրին մօտիկ է, իսկ Անտիոքը արդէն փոքր Ասիային է վերաբերում իւր լեզուախօսութեամբ։

Ասորիքի հիւսիսային ծովեղրի երկարութեամբ՝ Ալէքսանդրեակի (Հայոց Ծոց) ծոցից մինչև նահր էլ կեբիր, լեռնաբլուրների մեծ մասը պատկանում է նուսայիրի (փոքր Քրիստոնիայ [2]) կամ Անսարի ժողովրդին, որ համարւում է 120000 մինչև 180000 հոգի։ Սրանք լեռներում հովիւներ են, դաշտահայրում՝ պատ-

1) Conder Tenk—work in Palestine.

2) Ernest Renan, Mission de Phénicie.

ուական հոլովագործ, բայց արձակ գիւղերում ապրողները իրենց հեռու են պահում դրացիներից և բնաւ չեն խնամենում նորանց հետ, թէև խօսում են արաբերէն։ Սրանց մէջ բաւական շատ կան խարտեաշ մազերով և կապոյտ աչքերով մարդիկ 1)։ Քալաքացի անասարինները իրենց մահմետական են անուանում, որ զերծ մնան հալածանքից, թլփատում են մանուկներին և կատարում են արտաքին ցոյցերով պաշտօնական կրօնի ծէսերը, բոլոր պատուիրուած լուացումները և պահում են ծոմերը։ Բայց ունին աւանդին կրօնք, սաբէականութեան և քրիստոնէութեան մի խառնուրդ, որով կապակցւում են Մանիքեցիների հետ։ Նրանց կրօնի հիմնական գաղտնիքը, որ բերանացի աւանդւում է աշակերտողներին, կոչւում է «Երկուսի խորհուրդ» 2)։ Այս էլ կայ՝ որ զանազան ցեղերի համ աչքի՛ն ընկնէ դաւանութիւնը ճշմարիտ մի և նոյնը չէ և ճանապարհորդ գրողների պատմածները շատ են տարբերւում միմեանցից, նայելով թէ ով ինչ անասրինների խմբի հետ յարաբերութիւն է ունեցել։ Ասում են որ մեծամանութիւնը պաշտում են մի աստուած հինգ անձնաւորութեամբ, երկրպագութիւն են անում ծառերին և մանաւանդ արևին և լուսնին, որ «մեղուների» կամ աստղերի երկու «իշխանն» են։ Նրանց աչքում կին մարդը չափազանց պիղծ արարած է։ «Աստուած, ասում են նրանք, ստեղծեց սատանաներին մարդու մեղքերից, իսկ կնոջը՝ սատանաների մեղքերից»։ Կին մարդը՝ որ աւելի վատթար է քան՝ չունի իրաւունք մինչև իսկ աղօթելու։ Այս էլ պէտք է ասած՝ որ Ասորիքի միւս բնակիչներից էլ կինարամատը այնչափ քիչ է ակնածուած, որ վայելուչ է համարւում նեղոլութիւն հնդրել նախապէս, երբ մարդ սոխպատած է այդ անմաքուր արարածներից մէկի անունը յիշել։ Փաթաթանով մանուկների գլուխը ածխացնելու սոխորութիւնը հասարակաց է անասրինների մօտ 3)։

1) Blanche;—Conder, Heth and Moab.

2) Victor Langlois, La Cilicie.

3) Ernest Chantre, Rapport sur und Mission scient, fique dons l'Asie occidentale.

Դրուզ'ները, որոնց թիւը կարծւում է լինել 80000-ից մինչև 130000, բնակւում են Հարաւային Լիբանանի (լիբան) Հովիտներում և Հերմոնի վրայ։ Նրանք իրենց ժայռերի բերդերի ստորոտում՝ դաշտավայրում՝ խառնւում են ուրիշ հասարակութեանց հետ։ Դրուզ ժողովուրդը աստիճանաբար տեղափոխւում է դէպի արևելք։ Լիբանանի շատ գաւառներում, ուր նրանք երբեմն շատ և բազմաթիւ էին, այժմ երևում են կըզիլբաշ ընտանիքներ միայն, մինչդեռ Ջէբել-Հաուրան'ը կամաց կամաց լցւում է նրանցով, որ հասել են արդէն տասհազարների սահմանին, ուր և դաշնակցել են Անազէների և Շամմար'ների հետ 1)։ Հարիւր չորս տարի առաջ այս հրաբխային բարձրութիւնը միմիայն բեդուինների ապաստանատեղի էր, մինչդեռ այժմ մեծ մասամբ բնակուած է դրուզներով։ Այս մեկուսացած երկրում սէգ լեռնականները, անուամբ և եթէ հպատակ թուրքիային, գերասին ձեռք են բերում իրենց համար սոյնչափ թանկագին անկախութիւնը։ Նրանք ունին այստեղում արօտներ, բերրի վարելահող, առատ ջուր, առատաբար օդ և նախկին լքուած քաղաքները տալիս են նրանց առատաբար տնակներ շինելու հարկաւոր քարը։ Անասրինների նման անուանւում են մեռուլմանն, բայց միւս մահմետականները իրաւամբ նրանց դուրս ձգուած են համարում Իսլամից, որովհետև նրանց կրօնական վարդապետութիւնները բնաւ չեն համաձայնում Ղուրանի հետ։ Էգ-Դրուզ'ները կամ Մոհամմէդ Էլ-Դերազի մարգարէի ալանդաւորները դաւանում են մի կրօն, որը մեծամասնութիւնը չէ կարող մինչև իսկ ուսումնասիրել, այնչափ բարդ է նրա աստուածաբանութիւնը, այնչափ նրա հիմնադիրները՝ վարժ բնաղանցական նրբութիւններին՝ խառնել են իրենց շփա'կան վարդապետութիւնները Գնոստիկեան և Մազդեզական չիշողութիւններում։ Մի Պարսիկ մոգ հիմնեց այս աղանդը Հիջրէթի երրորդ դարի վերջերում։ Մի ուրիշ իրանցի մոգ՝ Համզա'ն ամփոփեց և փոխեց վարդապետութեան գլխաւոր մասը։ Դրուզները իրենք

1) Conder, fortnigtly Revieue, aug. 1863.

իրենց անուանում են «Մխանեական», և նրանց առաջին հաւատալիքը իսկապէս աստուածու միութիւնն է, բայց այս աստուածը բազմիցս յայտնուել է մարդկային կերպարանքով։ Ալին նրա մարմնաւորութիւններից մինն էր, ինչպէս և առակալի խալիֆ Հաքիմը, որի կատարելութիւնը և անգթութիւնը առակ են դարձել մուսուլմանների մէջ։ Համզան «շրջանի կեդրոնն» է և վերջինը աստուածային մարմնաւորութիւններից, նա լոյսն էր, իսկ Մահոմէդը խաւարը։ Զարի ամեն մի աշակերտի հակառակ ծնուել էր մի բարու աշակերտ։ Երկու սկզբունքի միջև կռիւը յարատև է, պատերազմն անվերջ, որի մէջ Դրուզները և հեռուստ ձիհատանի խորքերում «Գոգ ու Մագոգի» անհամար ամբոխը ներկայանում են Աստուծոյ բանակը։ Հոգիների թիւը նախապատճառան ժամանակից որոշուած լինելով, նրանք անցնում են անընդհատ բար մարմնից մարմին, վերսկսելով պատերազմը ամեն մի նոր գոյացութեամբ։ Հոգին հեզուկի է նման, որ մի ամանից լցւում է միւսի մէջ»։ Նրա վիճակը որոշուած է նախապէս և ընտրեալների դաշնագրութիւնը Աստուծոյ հետ գրուած է եգիպտոսի բուրգերից մինում։ Վերջին օրը Հաքիմը իւր սուրը յանձնելու է Համզային, որ նա յաղթանակը տայ ճշմարիտ հրոնին և բաժանէ պատիժներն ու վարձատրութիւնները։ Վարդապետութեան մեծ մասը ներքին է և պարագծակեալ (էզոտերիք), քօղարկուած ոգէների համար բանաձևերով, նշաններով և թուերով, որոնց բանալին յայտնի է միմիայն ընտրեալներին՝ ներընծայուածներին (initiés) կամ օկկուլտներին։ Մահաման պատիժ է նշանակուած նրան, ով որ երևան կհանէ այն խորհրդաւոր ծիսակատարութիւնները, որ կատարում են «բարձունքների» վրայ մի սրբազան հորթի առաջ։

Դրուզներին դրուած բարոյականութեան առաջին խրատներն են ճշմարտասիրութիւն և համերաշխութիւն։ Նրանք պարտական են վերաբերուել միմեանց անկեղծութեամբ և բարեացակամութեամբ։ Դէպի օտարականները չունին նրանք միևնոյն պարտականութիւնը՝ կարող են մինչև անգամ օտարականին սպանել առանց յանցանք գործած լինելու, եթէ այդ մահը անհրաժեշտ է ազգային գործի

համար։ Սակայն նրանք չօկնում են իրենց բոլոր հարևան ազգերից աւելի մեծ շիտակութեամբ, աւելի մեծ արժանապատուութեամբ իրենց վարք ու բարքում, աւելի անաչառ բարեկամութեամբ, աւելի անսկրնելի խոստակցութեամբ։ Նրանք ընդհանրապէս շատ սակաւախօս են, ճաշակով հագնուած, բայց առանց ցուցամոլութեան, զգուշաւոր խոստակցութեան մէջ և միմեանց տալիս են ակնածալար շէյխ տիտղոսը։ Նրանք պարտականութիւն են համարում մարդկանցից ամենալաւը լինել, որովհետև ընտրեալներ են։ Ոչ մի տեղ Արևելքում կանայք այնչափ չեն յարգուած որչափ այս տեղում։ Նրանց իրաւունքները ամուսնութեան մէջ և իրրև տնտիկնամայրի հաւասար են այր մարդկանց իրաւունքներին։ Իսկ կրթութեամբ նրանք ընդհանրապէս աւելի բարձր են այր մարդկանցից, որովհետև գրեթէ ամենքն էլ գիտեն գոնէ կարդալ-գրել և «գիտնականների» կամ ներընծայուածների դասակարգին են պատկանում։ Ընտանիքները առանց բացառութեան միակին են, մանուկների թիւն էլ սահմանափակուած է։ Սովորութիւնը չէ տալիս փարթամ մարդուն չորս աղջկանից աւելի ունենալ, ազգասին՝ երիսւնից աւելի։ Պէտք չէ որ ընտանեկան հոգսերը այդչափ կին մարդուն զբաղեցնել իր քաղաքացիական պարտականութիւններով և ազօթքներով։ Դրուզների քաղաքական ազգեցութիւնը անցնում է իրենց ցեղի սահմաններից՝ աւելի հեռուն տարածուելով։ Այս «Մխանեակների» նախնիները իրենց հպատակների թուում ունին նաև զանազան ազգի գիւղացիներ, որոնց հետ սակայն քաղցրութեամբ են վարուում։ Դրուզները շատ քաջ են և չկայ թշնամի՝ հաւասար թուով որին յաղթելուն առաջուց հաւատաք չլինեն 1)։

Աստիճան ոչ-քրիստոնեայ ազանդների մէջ Մեռուալիները, որ բնակուում են Տիբեռուսի Սիդոնում, կեսէ-Ասորիքի դաշ-

---

1) Silvestre de Secy, Exposé de la réligion des Druses;—Guys, La nation druse, son histoire, sa réligion;—H. Petermann, Reisen in Orient;—Wolff, Die Drusen und ihre Vorläufer.

տում և շրջակայ հովիտներում՝ մի առանձին տեղ են բռնում իրենց անհամբերողութեամբ։ Սրանք շիա'ներ են և Իրանցի մուսուլմանների նման մի առանձին յարգանք ունին դէպի Ալի խալիֆը, որին դասում են Մարգարէին հաւասար և կամ դեռ նրանից էլ բարձր և ուր որ գնան տանում են իրենց հետ մի քիչ պարսկական հող [1]։ Սրանք իրենց պղծուած կհամարեն եթէ հերետիկոսի՝ սիւննու կամ քրիստոնէի կպչին և կտրում են օտարականից գործածուած ամանը։ Աւելի հիւսիսում՝ Հոմսը Տրիպոլի'ից անջատող լեռներում՝ մի ուրիշ ազանդ— Խաթենացիների կամ Համայիլայիներինը պահպանել է Հաշիշիմների կամ Հասասների, այն է՝ Էլբուրզի կեդրոնում իւր Ալամուտ ամրոցում գահակալող Լերան Ծերի, Սէիդների աւանդութիւնները։ Ասորիքի լեռները, ինչպէս նաև Թուրդիստանի և Հայաստանինները, ապաստանի տեղ են եղել հալածուած կրօնների համար։ Դաշտավայրի և բարձրաւանդակութեան հարթհաւասար տարածութեանց վրայ հաւասի միութիւնն է թագաւորում՝ մինչդեռ լեռնային գաւառներում մակերևոյթի անհաւասարութիւնը պաշտպանել է կրօնների այլազանութիւնը։

Մարոնի'ները, որ այժմ յարած են լատին եկեղեցուն՝ չնայած իրենց ծէսերի և հաւատալեաց սկզբնական տարբերութեանցը, այն քրիստոնեաներից են, որոնք զերծ են մնացել ջնջուելուց լեռների գահավէժների շնորհիւ։ Ամրապինդ խմբուած իրրև մի ազգային մարմին՝ նրանք բնակւում են գլխաւորապէս Լիբանանի արևմտեան կողերի վրայ, Նահր-էլ կելբ կամ «Շան գետի» որ թափւում է ծովը Բէյրութից վոքր ինչ հիւսիսում; և Նահր-էլ-Բարիդ կամ «Սառն գետի» միջև։ Այս վերջինը հոսում է Լիբանանի հիւսիսային հանդիպագօտիներից։ Մարոնի'ների մի քանի խումբ բնակւում են նաև Անտարիների երկրում և դաշտի քաղաքներում, ուր յենւում են կաթոլիկ հաւատարկութեանց վրայ։ Վերջապէս՝ կիպրոս կղզում դեռ մնացել է նրանց նախկին գաղութի տակները։ Մարոնիները իրենց անունն

1) Conder, fortnightly Revieue, aog. 1883.

ստացել են Մարոն պատրիարքից, որ կազմակերպեց նրանց եկեղեցին եօթներորդ դարում։ Մարոնիները խաչակիրների ժամանակ Արևմուտքցիների բնական դաշնակիցներն էին ընդդէմ մահմէդականների և կամաց կամաց փոխեցին իրենց վարդապետութիւնը՝ Արևմուտքցիների վարդապետութեան հետ համաձայնեցնելու համար։ Արևմուտքցիներն ընկերակցում էին նրանք պատերազմների դաշտերում։ 1215-ին ընդունեցին պապի հեգեմոնութիւնը և այդ ժամանակից ի վեր համարւում են Արևմուտքի կաթոլիկների առանձնապէս պաշտպանեալները։ Լեռնային մի քանի ընտանիք եւրոպական անուններ են կրում՝ որ թոյլ է տալիս կարծելու թէ խաչակիրների ժամանակուայ ֆրանկները խառնուել են Լիբանանի ժողովուրդներին հետ [1]։ Մարոնիները հպարտութեամբ ցոյց են տալիս Լուգովիկոս ԺԴ-ի և Լուգովիկոս ԺԵ-ի երկու նամակը, որով խոստացում է նրանց ֆրանսիայի յարատև օգնականութիւնը, և այս դարի ընթացքում նրանք նկատուած են եղել մշտապէս իրրև «Լիբանանի ֆրանսիացիներ»։ Այստեղից ծագից այն մեծ կարևորութիւնը, որ ստացաւ Մարոնական խնդիրը դիւանագիտական ազդեցութեանց պայքարում Արևելքում։ Դաշնագիրների զօրութեամբ Լիբանանի փաշան պէտք է գաւանէ քրիստոնէական՝ այն է՝ լեռնացիների մեծամասնութեան կրօնը։ Որովհետև Ֆրանսիան պաշտպանում է Մարոնիներին՝ Մեծ Բրիտանիան էլ իւր հովանաւորութեան տակ առաւ Դրուզներին, որով տեղական անհամաձայնութիւնները՝ բորբոքուած օտարական պատուիրակներից և նոյն իսկ մուսուլման վաշաներից, որոնք ուրախ են բաժանել որ սիրեն՝ փոխուեցան բացարձակ կռուի և կոտորածների։ 1860-ին տասներեք հազար քրիստոնեայ մարթուեցան Լիբանանում և Հարևան երկիրներում։ Դրուզներին մեղադրեցին իրրև հեղինակ այս մեծամեծ արհաւիրքների, բայց նրանք իսկապէս շատ քիչ էին մասնակցել և գլխաւոր յանցաւորներն էին թուրք կառավարչ և անկանոն զինուորները [2]։

1) Michaud et Poujoulat, Correspondance d'Orient.

2) Lortet, La Syrie d'aujourd'hui.

Մարոնիները թէև բազմաթիւ են և պաշտպանուած բնական ամրութիւնների զառիվայրերով, սակայն չկամարձակեցան բնաւ դիմադրել և խաղաղութիւնը վերահաստատուեց միմիայն երբ ֆրանսիական զօրագունդ ուղարկուեց։ Այս թագուած դիակները և կատորուածների արիւնազանգ տեղերը դրաւեցին զբօսի իրենց վայրենի գաղաններ՝ քաւթառ (once), բորենի, գայլ, որոնք սիրեցին երկրին և երկար ժամանակ՝ կոտորածից յետոյ էլ՝ առանց պահնորդների ճանապարհորդելը վտանգաւոր էր [1]։

Մարոնական երկրում հոգևորականութիւնը չափազանց հզօր է։ Հոդերի քաւորդից աւելին պատկանում է եկեղեցուն։ Առ նուազն երկու հարիւր վանք՝ առլորաբար զոյգ զոյգ շինուած, մինը սրանց միւսը կանանց համար, ցրուած են Լիբանանի Հովիտներում և շրջապատուած ընկուզենիներով և ուրիշ տեսակ-տեսակ ծառերով, կանգնած բերրի դաշտերի և այգիների գարաւասիների գլխին։ Քահանաները ամուսնացած են, բայց այրիանալիս չեն կարող նորից ամուսնանալ, ընտրում են վանականների ձեռքով ինչպէս և եպիսկոպոսները, որոնք իրենց կարգին ընտրում են պատրիարքին կամ Քաթողիկէն միայն թէ անհրաժեշտ է որ պատկն էլ իր հաւանութիւնը տայ։ Պատարագն տարում է հին ասորերէն (սիրիաք) լեզուով, որ անհասկանալի է թէ ժողովրդին և թէ քահանաներին։ Շատ մարոնիներ սովորում են ֆրանսերէն և խոստում են այդ լեզուն դիւրութեամբ, բայց շատ հազիւ է պատահում որ նրա գրականութիւնն էլ ուսումնասիրեն։ Նրանց միաւորութիւնը բաւականանում է սովորաբար՝ թարգման կամ գրագիր դառնալով։ Վաճառականութեամբ պարապողները մեծ մասամբ ձեռնարկող ոգի չունին և զբաղուում են միայն մանրավաճառութեամբ։ Ժողովրդի մեծ մասը մինչև այսօր էլ զբաղուում է ժառանգական նախնական ձևով այգիների, արտերի և մրգատեսների մշակութեամբ. սրանք էլ նախաձեռնութիւնից զուրկ են։ Օտար, մեծ մասամբ յոյն արշեւասուղներ շինում և զբաղ-

1) Van Lennep, Bible Lands.

դարում են նրանց շինուածքները, իսկ Մարոնիի շինածը լինում է թանձր ու խոշոր և անշնորհ։ Նրա ղեկտը այնչափ վայելուչ չէ որչափ հարևանների՝ արաբների և դրուզներինը [1]։ Սակայն միջնադարեան մարոնական արուեստը թողել է մի քանի շինութիւններ ինքնուրոյն ոճով, զարդարուած գամկանկարներով (ֆրէսք)։ Ջուկ Միքայիլի մարոնի ոստայնանկները գործում են մեսաքսի գեղեցիկ օթոցներ, իսկ երկրի ոսկերիչները, որ պահպանել են փիւնիկեցիների և յոյների ոսկերչական եղանակները, պատրաստում են շատ գնահատուած թանկագին զարգեր, գեղարուեստական մեծ ճաշակով։ [2])

Ուրիշ միայեալ—կաթոլիկներ բնակւում են անապատի սահմաններում, Դամասկոսից հարաւ և արևմուտք. սրանք զուտ արաբական ծագումից են։ Քրիստոնէական թուականութիւնից շատ առաջ գաղթելով Եմենից և ստուարացած Հեջազից և Նեջեդից գաղութներով այս «Արաբ Արաբները», ինչպէս որ իրենք իրենց անուանում են իրենց անարատ ծագումը ցոյց տալու համար, քրիստոնեայ դարձան չորրորդ դարի վերջերում և նոր կրօնի պատճառով արժանացան «յոյն» անուանը։ Արաբական տիրապետութիւնից յետոյ՝ եղան որ պահպանեցին իրենց կրօնը, բայց օրթոդոքսների տիրապետութիւնը սկսաւ ծանրանալ նրանց վերայ։ Ուստի և անկախութեան սիրուն համար՝ կապուեցին նրանք մի հեռաւոր տիրոջ՝ պապի հետ, որ թոյլ տուեց նրանց ունենալ իրենց սեպհական նուիրապետութիւնը և ծիսակատարութեան մէջ յունական լեզուն փոխանակել արաբականով։ Նրանց տալիս են «միացեալ յոյն» անունը թէև նրանք հելլէնների հետ կապուած չեն ոչ ծագումով, ոչ կրօնով։ Նրանք կոչւում են նաև Մելքեան'ներ (Մելքիդ), այնէ՝ «արքայականներ»։ Նրանց հոգևոր գլուխը նստում է Դամասկոսում և կրում է պատրիարք Անտիոքի, Ալեքսանդրիայի և Երուսաղէմի տիտղոսը։ Ասիայի բոլոր քրիստոնիաներից՝ յոյներից և լատիններից՝ աւելի յարգուած են մելքեան արաբները։ Նրանց քաջա-

1) G. Palgrave, Essage en Eostern Quistions.

2) G. Rey, ձեռագիր։

սրտաբիւնը ամեն վարչիկ բարձր է, նրանց բնական խելացիութիւնը զարգացած է կրթութեամբ, նրանք հիանալի կերպով համեմատ են իրենց լեզուին: Մինչև անգամ նրանցից այնպիսիները, որ չեն ուսումնասիրել գրականութիւնը, խօսում են վայելուչ և մաքուր արտաբերէն: Լի իրաւացի անձնավստահութեամբ՝ նրանք յետ չեն ընկրկում ոչ մի ձեռնարկութիւնից և զարմանալի է թէ ինչ մեծ մտանակցութիւն ունի այս փոքրիկ ժողովուրդը, որ անտարակոյս 100 000 հոգուս չէ հասնում, մեծամեծ գործառնութեանց մէջ[1]:

Հրէաները օտարականներ են իրենց նախահայրերի երկրում, որը սակայն իրենց հայրենիքն են համարում: Մի միայն Դամասկոսում ունին նրանք մի հաստատութիւն, որ թէև մ է սերուած լինել ուղղակի նախնական գաղթականութիւնից: Վեց միլիոն Եբրայեցուց հաղիւ թէ 40 000-ը, այնէ մօտ մի հարիւր յիսուներորդը ամբողջ ազգութեան բնակւում են իրենց նախնական հայրենիքում: Լիհաստանն ու Գալիցիան են գարձել այժմեան յուդայականութեան կեդրոնավայրը: Մի ժամանակ Պալեստինի հրէաները բոլորն էլ Մօգրաբին'ներ և «Սպանիօլ»ներ էին, սերուած Հաւատաքննութեան ձեռքով Սպանիայից արտաքսուած հրէաներից: Սրանք անուանւում են Սեֆարդիմ կամ «Դրքի մարդիկ»: Պալեստինում ապրում են նաև մի քանի Կարաիմ: Բայց այս գարի կիսից իվեր հրէայ գաղթականները բազմութեամբ գիմում են դէպի «Աւետեաց երկիրը» և այս գաղթականները գրեթէ ամբողջովին պատկանում են մի ուրիշ՝ այնէ՝ Աշկինազիմ կամ արևելեան Եւրոպայի հրէաների խմբին: Արդէն 1840 թուականներին մօտ հարիւր հոգի էին հաշւում այն հրէաների թիւը, որոնք զգալով մահի մերձենալը թողնում էին Ռուսաստանը և գնում Պալեստին այն տեղ հանգչելու համար: Ան ժամանակ ընդհանուր հաւատք էր, որ դատաստանի օրը «Սուրբ Երկրում» թաղուած մեռեալները իսկոյն են յարութիւն առնելու, մինչդեռ միւսները հարկադրուած են լինելու խլուրդի նման սողերկրեայ ճանապարհ բանալ մինչև սուրբ տեղերը, ուր աստուածային ձայնը կ'յարուցա-

1) G. Palgrave, *Հիշուած:*

նէ նրանց[1]): Թալմուտական աւանդութեան համաձայն, որ ընդունել են գերմանական, լեհական, ռուսական և ռումինական հրէաները, Սաֆէդ'ումն է հաստատելու Մեսիան գահը իւր գալստեանը, և այս է պատճառը, որ Պալեստինի երբայական գըլխաւոր գաղութը խմբուել է այդ նախկին հրաբխի ստորոտում[2]): Տիբերիադ'ումն էլ, ուր ծնուելու է Մեսիան, հաստատուել են բազմաթիւ գաղութներ, որոնք միշտ իրենց հրագները լուսեալ են պահում. նոյնպէս Հաղարաւորներ խմբուել են Երուսաղէմի տաճարի շուրջը: Արևելեան Եւրոպայի հրէաների նորագոյն հրած հալածանքները արագացրին գաղթականութեան շարժումը դէպի Ցուդայաստան և բազմաթիւ երկրագործական գաղութներ հաստատուեցան այդ երկրում մանաւանդ կարմել'ի ստորոտում, Նագրէլոն'ի գաշտում: Անգլիացի մարդասէրները ջանացին ձեռք բերել երբայեցի գաղթականների համար Գալաադի պատուական հողերը Անդր-Յորդանանում[3]): Այս ձեռնարկութեանց ակզբնաւորութիւնը ողբալի էր. սակայն, ազքատութիւնը, հիւանդութիւնները կոտորեցին թշուառ փախստականներին: Շատ տեղերում ստիպուեցան նրանք ցրուել, որ մուրացկանութեամբ կարողանան իրենց թշուառ կեանքը ապրեցնել: Այս թշուառներից մի քանի խումբ էլ Տարկադրուեցան թուրք կառավարութեան հրամանով նաև նահել և վերադառնալ՝ որտեղից որ եկել էին: Այսուամենայնիւ՝ այսպիսի խմբովին ներգաղթականութեան հեռևանքն է լինելու անշուշտ՝ երբայական տարրի աճելը Պալեստինում: Սեֆարդիմները, որ երբեմն գատապարտուած էին սև փոքիկներ կրելու գլխին, աչքի են ընկնում իրենց ազնիւ նիստ ու կացով, կերպարանքի գեղեցկութեամբ, բայց աշկինազիմներից աւելի նախապաշարուած են, ոչ նոյնչափ գործունեայ, աւելի ագէտ, ուսոի և գատապարտուած

1) I. G. Kohl, Reisen in Süd — Russland. — տես նա և Voyages de Chardin.

2] De Vogüe, Revue Deu Monds' février 1875

3) Laurence Oliphant, The Land of Gilaad.

են հրէայ ազգութեան սինէդրոնը — սրոդեսարիատը դառնալու։

Հին հրէաների երկիրը, որ պատերազմի դաշտ է դարձել Յիսուս — Քրիստոսի անուանը նուիրուած զանազան կրօնական դաւանութեանց միջև, որ աշխատում են տիրել Նրա գերեզմանին, ունի ոչ միայն բազմաթիւ քարոզիչներ դրսից եկած, այլ և եւրոպացի երկրագործական գաղութներ։ Ամենահարուստը դրանցից են բողոքական Շուաբներինը՝ հաստատուած Եափայի մօտ և Խաիֆայ'ում կարմելսարի սարոտում։ Այս գաղութները պատկանում են «տաճարականների» աղանդին և սպասում են Մեսիայի գալստեանը և ցանկանում են առաջինը լինել նորա կոչելուն պատասխանող Դատաստանի օրը։ Շատ տարուբերումներից յետոյ նրանց հաստատութիւնները, որ կամաւոր նպաստ են ստանում մայր — Հայրենիքից, բաւական կարևորութիւն ստացան իբրև արհեստաշահ և առևտրական կեդրոններ, որտեղից ճանապարհները տարածւում են դէպի չորս — բոլորը։ Կամաց կամաց այդ գաղութները կորցնում են կրօնական բնաւորութիւնը և դառնում են տնտեսական ձեռնարկութիւն և բազմաթիւ գաղթականների խմբեր արդէն իրենց անձնական հաշուին են աշխատում։ Հասարակութիւններից դուրս։ Յոյն և եւրոպացի ձեռնարկողներ ձեռք են բերում կառավարութիւնից ընդարձակ հողեր ամենաաբերրի գաւառներում։ Միայն մի վաճառական իբրև բաժին ստացաւ Էսդրէլոնի դաշտի կէսը, քանի գիւղում։ Հողերի սեպհականութիւնը ձեռքից ձեռք է անցնում ի մեծ վնաս գիւղացիների։ Հին հասարակութիւնները, որոնց մէջ իւրաքանչիւր ոք առնուազն անհերքելի իրաւունք ունէր հողատիրութեան և ուր շաաոպա՝ անկարողի կամ անգամալոյծի հողը՝ մշակւում էր գիւղացիներից[1]), այլ ևս գոյութիւն չունին։ Աղքատութիւնը աճում է գիւղերում, շէնները դատարկւում են բնիկ բնակիչներից, մինչդեռ քաղաքները լցւում են օտարական գաղթականներով։ Սոլը յաճախակի աւերում է երկիրը։ Քանի՛ քանի՛ անգամ գիւղացիները հաց չունենալով ստիպուած են եղել իբրև կերակուր գործ ածել

1) Conder, Tent—work in Palestine.

կուտատուկի (mauve) հատիկները, եփուած կաթի կամ ձիթի մէջ[1])։

1) Ասորիքի և Պալեստինի բնակիչները, դասաւորուած ըստ կրօնների, մօտաւորական թուերով։

Մուսուլման	Սիւննի	650 000
	Մետուալի	40 000
Դրուզ		120 000
Անսարի		150 000
Յոյն օրթոդոքս		100 000
Լատին կաթոլիկ	Մարոն	200 000
	Մելքեան	80 000
	Միացեալ Ասորիներ և այլք	40 000
Հայ		20 000
Հրեայ և Սամարացի		40 000
Բողոքական և այլ և այլ աղանդներ		10 000

ՄԻՋԱԳԵՏՔԻ ԲՆԱԿԻՉՆԵՐՆ ՈՒ ԿՐՕՆՆԵՐԸ։

Դրաւոր պատմութեան սկզբից իվեր Միջագետքի բնակիչները մշտապէս եղել են խառն ծագումից։ Հիւսիսի և Արևելքի իրանցիները, Հարաւի և արևմուտքի սեմականները հանդիպել են միմեանց Տիգրիսի և Եփրատի գաշտավայրերում ուր և կազմակերպուել են նոր ազգութիւններ, որոնք տարբեր են եղել իրենց սկզբնական ցեղերից և ունեցել են ինքնուրոյն յատկութիւններ՝ նման մեռալական խառնուրդի, որի յատկութիւնները երբէք այն չեն, ինչ որ սկզբնական մեռալներինը։ Ասորեստանցիք և Քաղդէացիք ունեցել են իրենց ինքնուրոյն հանճարը, որ տարբեր է եղել դրացիների՝ Պարսիկների, Մարերի, Արաբների, Ասորիների (Ասորիքի բնակիչների) և Հրէաների հանճարից, բայց առաջինները նոյնպէս երկարատև կեանք չեն ունեցել, որչափ վերջինները։ Առաջինները հէնց որ թուլացան, ջնջուեցին և խառնուեցին իրենց յաղթողների հետ, կորցնելով իրենց անունը, լեզուն, ազգային գիտակցութիւնը։ Սակայն մինչև այսօր էլ քրդերի մէջ կայ մի ցեղ, որ կրում է Ա.յսորի (Ասորի) անունը և իրեն սեբուած է համարում ուղղակի նախկին Ասորեստանցիներից։ Բաբելոնի և Նինուէի քաղաքակրթութեանց կործանումը հնարաւոր կացրեց նախնական տարրերին նորից գլուխ բարձրացնել և այսօր մեր օրով Միջագետքը ամբողջովին բաժանուած է՝ ինչպէս

մի յաղթուած երկիր՝ դաշտավայրի Արաբների և լեռնական Քուրդ ու Թուրքման ցեղաբանական տիրապետութեանց միջև 1)։ Տասնեօթներորդ դարի կիսում, երբ Օսմանեան կայսերութիւնը կռուի էր բռնուած Աւստրիայի հետ, Նէջեդի Շամմար կամ Շոմեր արաբները օգտուեցին Թուրքական զօրքերի հեռաւորութիւնից՝ Եփրատի ափի մի քանի քաղաքներին տիրելու համար և յաղթական կերպով սկսան թափառել դաշտավայրում, մինչև Մարաին'ի սարերը։ Մի ուրիշ արաբ ցեղ՝ Անազէ՝ հեռևեց նոքանց աւարից բաժին ստանալու համար և երկարաւոր ու արիւնահեղ պատերազմներից յետոյ բոլոր այն երկիրը, որ տարածւում է Աւորիքի լեռներից մինչև Խրանի սարերի վեղերը՝ բաժանուեց այդ երկու մեծ ցեղերի և նրանց դաշնակիցների միջև։ Անազէները տիրեցին հիւսիս-արևմտեան տափաստաններին, մինչև Հալէբի դռները, Շամմարները—Միջագետքին։ Բուն պատերազմը գագարել է Շամմարների և Անազէների միջև։ Բայց խաղաղութիւնը չէ հաստատուած և յաճախ են պատահում արշաւանքներ մի երկրից դէպի միւսը 2)։

Խրիմի պատերազմից յետոյ Եփրատի եզերական քաղաքները նորից յետ առնուեցան Թուրքերի ձեռքով, փաշաները դինուորական կայաններ հաստատեցին կարաւանների ճանապարհին, և մի քանի ցեղեր թափառաշրջիկ կեանքը թողին երկրագործութեամբ պարապելու համար ու այլ ևս նիզակ չեն կրում։ Այսպէս՝ օրինակ Մոնտէֆիկ կամ «Միացեալ» հզօր ցեղը, որ մի ժամանակ առնուազն երեսուն հազար վրան ունէր, այժմ հեղաշրջուել է դարձել և հաստատուել է բնակարաններում Սորին Եփրատի և Տիգրիսի վրայ։ Բէնի Լամամ'ները, որ չորս հազար ընտանիքից են բաղկացած, Բասսար'ները, Զիգրիս'ները, Աբու Մոհամէտ'ները, սորին կարուն Շաբ'երը, որ չափազանց խառնուած են իրանական տարրերի հետ 3), այս բո-

1) Anne Blunt, The Bedouins of the Euphrates.

2) Անազէ և դաշնակից ցեղեր· 30000 վրան կամ 120000 հոգի։
Շամմար և » » 28000 » » 112000 »
(Anne Blunt, The Bedouins of the Euphrates).

3) Layard, Nineve and Babylon.

լորն էլ երկրագործ արաբների թւումն են և բնակւում են քաղաքների մերձակայքում, հնազանդելով այսպէս ասած՝ վաճառականութեան հրաւէրին, որովհետև թուրք կառավարութեան վոգին՝ նրանց վերայ բռնութեամբ ներգործելու, իզուր անցաւ։ Թափառաշրջիկ բեդուինների ցեղեր յանկարծակի շրջապատելով զօրքերից հրամանատար հիւղեր չինել և մշակել շրջակայ հողերը զինուորների հսկողութեան տակ, բայց հէնց որ պահապանները հեռանում էին, նրանք նորից բռնում էին տափաստանների ճանապարհը։ Միայն այն ցեղերն են դիւրութեամբ թափառական կեանքից հաստատաբնակ կենցաղավարութեան անցնում, որոնք զբաղուած են ոչխարների հօտեր և գոմէշների նախիրներ պահելով։ Նիզակի գործածութեան սովոր ձիաւորները չեն կարող հաշտուել անապատը թողնելուն հետ։ Կան ցեղեր էլ որ վարժուել են ճահիճների մէջ ապրել, եղէգնի հիւղերում։ Այսպէս են Թոզայիլ և Մադան ցեղերը, որոնց ոչ մի աշխարակալ չիսրձեց հեռևել նրանց մերուաններում 1)։ բաւական էր որ Ջրանգբի պատուարը քանդէին և արդէն պաշտպանուած կլինէին ամեն հալածողից։ Արաբական ուրիշ խմբեր, ինչպէս են Զոբէյր'ները, բազկացած են միմիայն նաւաստիներից։ Միջագետքը այս ուժեղ նաւաստիներից աւելի գեղեցիկ մարգիկ չունի։ Արանցից և ոչ մի հրիտասարդ նաւաստի չէ կարող ամբանութեան վրայ մնած, եթէ գոնէ երեք անգամ չէ բարձրացել Տիգրիսով, Շատ—էլ—Արաբից մինչև Բազդատ։

Միջագետքի առաջաւորների քրդերը հատանականաբար Պարսկաստանի և Հայաստանի քրդերի նման տարբեր ծագումն ունին, բայց նմանում են միմեանց իրենց սովորութիւններով և կենցաղավարութեամբ։ Նրանց մեծամասնութիւնը մահմետական է, բայց նեստորականներ էլ կան մեծամեծ խմբերով, մասնաւորապէս Մեծ Զարբ'ի հովտում՝ Զուլամերկի շրջանը։ Քաղդէացիները Մոսուլ'ում և նրա շրջակայքում աւելի հարուստ հասարակութիւններ ունին, քան թէ Ուրմիայի բարձրավանդակի վերայ։ Սուրիանի կամ

1) Baillie fraser, Travels in Mesopotamia.

քրիստոնեայ Յակոբիկները, մօտաւորապէս 30000 հոգի, ապրում են Տուր Աբդին[1]) լեռներում Միդիատ'ի և Դեր Ամեր վանքի շուրջը։ Եօթանասուն ընդարձակ վենաստաններից աւերակները վկայում են այս աղանդի մի ժամանակ ունեցած հզօրութեանը։ Շեմմիէ, Եզիդի կամ «Սատանայ պաշտողները» նոյնպէս ունեն իրենց ապաստանատեղիները Սինջարում՝ վերին Միջագետքում, ուր երկար ժամանակ վայելում էին նրանք գրեթէ կատարեալ անկախութիւն։ Ուրիշ աղանդաւորներ, որ հալածուած գնոստիկեանների մնայորդներն են՝ խուսափել են գէպի Միջագետքի կըղզիացած բարձրութիւնները։ Խօսւում է նաև Մարտինի սարերի մի հատարակութեան մասին, որ կարծւում է սերուած լինել այն արևապաշտներից, որոնց հալածեցին Աբրահամի քաղաքից՝ Խառանից։ Խալիֆ Ալ—Մամունը մեզ ասում է նրանց, որովհետև քրիստոնեաների և հրէաների նման իրենց սեպհական «Գիրքը» չունէին, ուստի և նրանք հարկադրուեցան պաշտօնապէս ընդունել Թոյլատրուած կրօններից մէկը։ Մեծամասնութիւնը երեսանց միայն քրիստոնեայ յակոբիների աղանդին, բնակուելով նրանց հետ միասին՝ մօտ վաթսուն գիւղում Մարտինի և Տուր'ի լեռներում։ Նրանք կատարում են ճշտութեամբ պատրիարքի կանոնադրած ծէսերը, այն կեղծելու հարատարութեամբ, որի մէջ վարպետ են Արևելեցիք, բայց ծածուկ մինչև այսօր էլ աղօթում են նրանք արևին, լուսնին, աստղերի բանակներին և վարում են իրանց կեանքը մոլորակների շարժումների, հանդիսապատութեան և մոգական կախարդութեանց համեմատ[2])։

Սատրին Եփրատի վրայ և Կարուն գետի հովտում ապրում են ուրիշ քրիստոնեայ գնոստիկեաններ, որ կարծւում են թէ պահպանած ունին աստղերի պաշտամունքի մի քանի ծիսակատարութիւններ։ Դրանք կոչւում են Հաւանացիք կամ Սաբիացիներ (տպէտք է շփոթել Սաբեացիների հետ)։ Սաբիացի կոչումն ստա-

1) Soein, Zur Geographie des Tur Abdin, Zeitschrift der deutschen Morgenländischen Gesellschoft, 1881.

2) Nicbuhr;—Cerl Ritter, Asien, vol. XI.

ցել են իրենց մարգարէների մէկի անունից, իսկ իրենք իրենց կոչում են Մանդայէ, այն է՝ «Գանի (խօսքի) աշակերտ»։ Կամթոլիկ քարոզիչները անուանում են նրանց ընդհանրապէս Սուրբ Յովհաննու—Մկրտչի», քրիստոնեայ Յորդանանի Մկրտչի անունով, որին այդ աղանդաւորները համարում են իրենց կրօնի հիմնադիրը։ Երևում է որ հնումը Սաբիացիները շատ բազմամարդ են եղել։ Թէբընայ'ի քարտէզի համեմատ երեսուն և վեց խումբ Մանդայէների բնակուած են եղել Բասրայի (Բասսորա) գաւառում որոնցից մի քանիսը բաղկացած երկու հազար ընտանիքից[1])։ 1875-ին հաշւում էին միմիայն հազար Սաբիացի Տիգրիսի ափերում և մօտ ութ հազար՝ ամբողջ Միջագետքում։ Նրանց կեդրոնատեղին է Սուկ-էշ-Շիոկ գիւղը Եփրատի վրայ, Մոնտէֆիկների երկրում[2])։ Այս գաւառի կիսից առաջ ժանտախտը կոտորեց Բասրայի շրջակայքի Մանդայէների բոլոր քահանաներին, և նրանց յաջորդողները կատարում են միայն արտաքին ծէսերը։ Ծէսերից ամենագլխաւորն է հաւատացեալների յաճախ մկրտութիւնը, որ մեղքերի թողութեան առաջին պայմանն է[3])։ Սաբիացիներին թոյլ չէ արուած գնալ ուրիշ՝ «Յորդանաններից» հեռու բնակուել։ Հազիւ ջրում են կատարում նրանք իրենց ծէսերի մեծագոյն մասը, մինչև անգամ ամուսնութիւնը[4])։ Նրանք պաշտում են խաչը, որովհետև չորս մասի բաժանուած աշխարհս էլ կազմում է կատարեալ խաչ։ Նրանց կրօնը, որ հրէութեան, քրիստոնէութեան և մահմետականութեան թշնամի գոյն է, հիմնուած է գնոստիկական երկու սկզբունքի գաղափարի վերայ, որ քարոզւում էր մի ժամանակ նրանց աստուածապաշտներից և իմաստասէրներից։ Սաբիացիներն էլ են ունեցել գրական գործնէութեան դարաշրջան։ Քրիստոնեաներին,

1) Recueil de divers voyages Curieux, Paris, 1863.

2) Anne Blund, *Տիշուած։*

3) H. Petermann, Reisen in der Orient; Euting. Ausland, 1876;—Sioffi, Etudes sur la réligion des Soubbas ou Sobéens.

4) Damien de Saint-Joseph, Annales de le Propagation de la foi, 1875.

հրէաների և մուսուլմանների նման նրանք էլ «գրքի մարդիկ են» ունին մի «գանձարան» որ կոչւում է նաև «Ադամայ գիրք» — թէև Մահոմէտից աւելի ուշ ժամանակով—1), որ գրուած է մի առանձին սեմական լեզուով, ինչպէս որ այդ պատշաճ է մի առանձին կրօնի: Սակայն այս լեզուն գոյութիւն ունի մի միայն սրբազան հաւաքածուներում, իսկ հասարակ ժողովուրդը խօսում են արաբերէն, ինչպէս Միջագետքի բոլոր բնակիչները: Բազմակնութիւնը արգելուած չէ նրանց, բայց կարող են ամուսնանալ մի միայն իրենց հասարակութեան շրջանում: Սոլորական առօրեայ կեանքում նրանք որոշւում են մահմեդականներից միմիայն իրենց աւելի մեծ աղնուամտութեամբ, և այլապէս էլ չէր կարող լինել, քանի որ սոխպուած են նրանք վաստակել հարևանների ակնածութիւնը, որ թոյլատուութիւն ունենան իրենց կրօնը պաշտելու:

Քրիստոնէութեան նման մահմեդականութիւնն էլ ծնունդ է տուել բազմաթիւ աղանդների այս երկրում, որ այնչափ կրօնական աւանդութիւններ խառնուել են միմեանց: Արևելքի բոլոր աղանդները իրենց ներկայացուցիչներն ունին Միջագետքում: Բաբիայի վահաբի'ները այստեղում ամբողջ հասարակութիւններ ունին, նախանձախնդիր իրենց աղանդին: Պարսկաստանի Բաբի'ները այս երկրումն են կազմում իրենց ծածուկ ժողովները: Տիգրիսի ափերին հազարաւոր մուսուլմաններ համարում են իրենց Ախունդի, Ազուանիստանի Սուսա Հոլմի նուաստ և ապքատ վարդապետի՝ աշակերտ 2): Մոնոէֆիկ'ների և Սորին Եփրատի ու Շատ-էլ-Արաբի միջև արաբների մէջ կան մինչև անգամ Անեստորիոս կրօնական միաբանութեանը հետևողներ: Այս ազանդը ծնունդ առաւ Ալժիրիայում, ուր և բաւական մեծ դժուարութիւններ պատճառեց Ֆրանսիացիներին 3): Բացի հալածուած աղանդներից, որ սոխպուած են հրապարակաւ մի այլ թոյլատրուած կրօն կեղծել և ներքուստ իրենցին հետևել, կան նաև և

1) Carl Ritter, Asien, Vol. XI.

2) Grattan Geary, Through Asiatic Turkey.

3) H. Duveyrier, ձեռագիր:

այնպիսի գիւղեր, ուր երկու հաւատոն էլ միևնոյն պատիւն են վայելում: Մուսուլի բնակիչները՝ թէ մուսուլման և թէ քրիստոնեայ միևնոյն պաշտպան սուրբ ունին, որ է Ջերջիս կամ սուրբ Գէորգը: Միջագետքի շատ տեղերում մանաւանդ Օրֆայում մուսուլմանները ընծայաբերութիւններ են անում Տիրամօրը զատակ ստանալու համար: Եթէ ուխտերը կատարւում է՝ ետ չեն մնում նրանք եկեղեցի գնալուց և այնտեղ շնորհակալութիւն ու գոհութիւն մատուցանելուց և կատարում են ամենայն մանրամասնութեամբ քրիստոնէական սովորութեան բոլոր ծէսերը 1): Միւս կողմից՝ շատ բեդուինները կդժուարանան ասել թէ ինչ կրօնի են պատկանում: Նրանք վախում են չար աչքից և նրա առաջն առնելու համար կախարդական շարժումներ են գործ դնում նապոլիտանցիների նման, բայց իրենց նեղութիւն չեն տալիս անգամ աղօթք անելու համար և մահմեդական են լոկ անունով 2): Քաղաքներում թուրքական և քաղդէական տարրերի հետ խառնուած արաբ ժողովուրդը սիւննի դաւանութեանն է, սակայն բաբելաստանում են Շիաների ամենասրբազան վայրերը Մեկքայից յետոյ, ինչպէս են՝ Քերբելա'ն, ուր գտնւում է Հուսէյնի գերեզմանը, Նէջէֆ, ուր բարձրանում են Ալու մզկիթի գմբէթները: Այն շիա հաւատացեալները, որոնք բախտ ունին ապրելու և մեռնելու այս սրբավայրերում բնաւ երկնչելու չեն այլ ևս դժոխքից և մինչև անգամ պատասխանատու չեն լինելու այս աշխարհում —աստուածում գործած մեղքերի համար: Ուսոի և հազարաւոր պարսիկներ և հարիւրաւոր շիա մեծատուն հնդիկներ բնակութիւն են հաստատել Բաղդադում կամ Գադեմ'ում սուրբ գեօրեզմանների շուրջը, կամ մինչև իսկ Նէջէֆ'ում և կամ Քերբելայում: Շատ բազմաթիւ են այն հարուստ իրանցիները, որ այս օրհնուած հողի վրայ ապրելու բաղդը չունենալով կտակում են

1) De Gobineau, Les Réligions et les Philosophie dans l'Asie Centrale;—Guardiagrele, Annales de la Propagation de la foi, 1875.

2) Anne Blunt, Bedouin Tribes ot the Euphrates.

մեռնելիս, որ իրենց մարմինը փոխադրուի և թաղուի այս սրբաւայրերում։ Դիակների փոխադրութիւնը դէպի Քերբելա և Նէջէֆ, թէև երբեմնակի արգելուած, սակայն մինչև այսօր էլ պարտական և Ասիական Թուրքիայի մէջ առևտրական ամենագլխաւոր տարրերից մին է։ Մի նոր վիճակագրութեան համաձայն՝ ներածուած պարսկական մարմինների տարեկան միջին թիւն է 4000։ Իսկ 1874-ին, սուից և սուին հետևող մեծ մահացութիւնից յետոյ պարսկաստանից Միջագետք ուղարկուած դիակների թիւը հասաւ 12202-ի։ Բացի այս՝ արաբական շատ ցեղեր վարակուելով օրինակից սովորութիւն են դարձրել իրենց մեռելներին ուղարկել չիաների սրբազան քաղաքները, որ դարձել են լայնածաւալ գերեզմանատներ։ Փոխադրութեան երկար ճանապարհին՝ դիակները վաթսաթուած են լինում միմիայն գորգով կամ փսխաթով, առանց նեխայինջ դեղերի։ Մինչև տեղ հասնելը այդ դիակներից մնում է միմիայն ոչ անկերպարան կտորներ։ Հարիւրաւոր մեռը հետու ճանապարհորդները խեղդուած են զգում իրենց այդ յուղակաւորական կարաւանների տարածած գարշահոտութիւնից։ Այդ կարաւանները տեղափոխում են դիակների հետ նաև ժանտախտ [1]։ Իրաք—Արաբ'ին այս տարատեսիլ հիւանդութեան օջախներից մինն է։ Վերջին քառասուն և երկու հարիւրամեակներից քսան և երկուսը այստեղումն են ծնունդ առել, կամ այստեղ էլ են տարածուել [2]։

1) Léonard Arnaud, Peste en Mésopodamie;—Mahé, Ճեռագիր։

2) Alf. von Kremer, Kulturgeschichte des Orients.